

~~Handwritten scribble~~

Proprietary

Copyright

A 13.

1

Գիրքը կարգադրված է

17  
Ա-30



Կ Շ Ի Ռ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹԵԱՆՑ

ԿԱՄ

ՍՏՈՒԳՎԱՍ Է 1961 թ.

ԳՐԹՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆ Բ  
ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ



ՅՕՐԻՆԵԱԼ

Ի ԿԱՐԱՊԵՏԷ ԱԹՈՒՆԵԱՆ ԱԿՆԵՑԻՈՑ

3976



ՌԻՍՈՒՄՆԵՏԵՆՔ ԲԱՐԵՐԵՐԵՑ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԻՐԲԱՅԵԱՆ

— 1866 —



Ի ԿՄԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԻԱՅ**

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԵՒ ԵՐԱՆԱԵՆՈՐՀ

ՀԱՅՐԱՊԵՏԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

**ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԵՍԱՅԵԱՅ**

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ

**ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՊՕՂՈՍԻ**

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ

A  $\frac{\pi}{5347}$



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Ընթերցեալ մեր 'ի պատմութիւնս ազգաց հնոց  
ևւ նորոց, ևւ անձամբ ևւս հմուտ ևւ ականատես  
լեալ բաղմազիմի վնասուց որ դիպեալ են ևւ դի-  
պին իսկ հանապազօր բազմաց, մտադիւր ևւ խնա-  
մով դմտաւ ամեալ քննէաք զպատճառս նոցա: Ար-  
դարեւ զարմանք են տեսանել զարագ արագ ևւ  
զյանկարծադէս անկումն մեծամեծ տանց ազնուա-  
կանաց, զաղքատանալ մեծատանց, զկորուստ վա-  
ճառականաց ևւ սեղանաւորաց, զդձձել իշխանաց,  
նա մանաւանդ զախոս ևւ զհիւանդութիւնս ևւ ըզ  
մահս տարածան: Այլ եթէ միտ դիցուք հաւաս-  
տեաւ սկզբան ևւ պատճառաց այնր ամենայնի,  
դտանեմք զի բազում անդամ ևւ գրեթէ հանապազ  
իսկ տգիտութիւն ևւ անբարոյականութիւն են որ  
նրթեն ևւ պատրաստեն ևւ ամեն 'ի վերայ չա-  
րիս ևւ աղէտս անհնարինս: Վասն այսորիկ մտա-  
խորհ լեալ ամս բազումս ևւ 'ի փորձ իրանցն ևւս  
մատուցեալ՝ ջան յանձին կալաք ամել յայտ զօրէնս  
ևւ սկզբունս ճշմարտի բարոյականութեան: Վախ-  
ճան բազմամեայ քննութեան մերոյ եղև բովան-  
դակեալ ամել յարդիւնս զգրութիւնս զայս զորոյ  
զհամառօտն պատկեր ընծայեցաք 'ի լոյս ամօք ինչ  
յառաջ որում եղաք անուն Աշիռ մարդկային իրո-  
ղութեանց: Յորդորեալ ապա 'ի խնդրանաց արանց

ումանց նշանաւորաց ազգիս յորոց մի էր բարեաց յիշատակաց արժանի առաքելաշնորհ հայր ազգիս Յակոբոս Պատրիարք, որ եւ իւրուրոյն նամակաւ քաջալերեաց զմեզ, ձեռն արկաք յօրինել զընդարձակ մեկնութիւն գրութեան մերոյ զոր եւ աւասիկ ընծայեմք 'ի լոյս առատաձեռն եւ յօժարակամ նպաստիւք ուսումնասէր բարեկամաց որոց բարեխորժ կամացն չբաւեմք յայտնել զշնորհակալու միտս մեր :

Աստ արժանի է մեզ համառօտիւ յանդիման կացուցանել զուրուագիծ գրութեան մերոյ, Չհաւատ, զոյս եւ զսէր որ են աստուածաբանական առաքինութիւնք՝ զնեմք մեք իբր հիմն եւ խարխիս ամենայն իրողութեանց մարդոյ այնու զի է բանաւոր օժտեալ հոգւով, որոյ բանական կարողութիւնք են միտք եւ կամք, իբրեւ սկզբունք բնական, բարոյական կենաց նորա : Նա որ զուրկ է 'ի հաւատոյ, 'ի յուսոյ եւ 'ի սիրոյ՝ խաբի, Ֆեսսի եւ 'ի դերեւ ելանէ յամենայն ձեռնարկութիւնս իւր, եթէ իցէ ձեռնարկութիւնն 'ի բնականս, եթէ յիմացականս կամ 'ի բարոյականս եւ եթէ 'ի քաղաքականս կամ յընկերականս, Երեքին այնքիկ՝ հաւատք, յոյս եւ սէր՝ պարտին կից ընթանալ զի յաջողեցի մարդ յամենայնի : Սէր առանց յուսոյ է յարուժն ինչ կամ բերուժն որ եւ յանշունչս եւ յանզգայս, որպէս 'ի բոյսս եւ 'ի մնտաղս, գտանի . այլ սէր բանաւոր մարդոյ, եւս եւ զգայուն կենդանեաց, է միշտ խառն ընդ յուսոյ . այն է՝ ծագէ եւ գայ յառաջ յակնկալութենէ վայելելոյ ինչ : Ազգս յայտ է զի եթէ ակընկալութիւնն իցէ ընդունայն եւ սին առանց հաստատութեան, սէրն որ առ իրն ակնկալեալ է նոյն-

պէս անհաստատ եւ յողողող , զի 'ի զերեւ ելանել  
 ակնկալութեանն եւ յուսոյ՝ ցնդի եւ անհետ լինի  
 սէրն՝ կամ փոխի յատելութիւն եւ 'ի գարշանս :  
 Այլ վրիպումն յակնկալութենէ եւ ցնդումն կամ  
 փոփոխումն այն սիրոյ՝ չլինի առանց մեծի փնասու  
 եւ կորստեան : Արդ զի զերծ գացի մարդն 'ի փնա-  
 սուց աստի եւ 'ի կորստենէ , հարկ է զի ակնկալու-  
 թիւն նորա եւ յոյս իցէ աներկեւան , յորմէ եւ սէրն  
 լինի ճշմարիտ եւ անյողողող : Իսկ աներկեւանու-  
 թիւն յուսոյ կամ հաստատութիւն ակնկալութեան  
 ոչ այլով իւրիք լինի եթէ ոչ հաւատով , Հաւատով  
 իմանալք մեք զգիտութիւն իրաց եթէ բնականաց ,  
 եթէ իմացականաց կամ բարոյականաց եւ եթէ քա-  
 ղաքականաց . այնպէս զի յայս միտս , այնչափ կա-  
 տարեալ են հաւատք մարդոյ , որչափ ընդարձակ  
 եւ կատարեալ է գիտութիւն նորա : Ար ունի զայս  
 հաւատս՝ ապաքէն հաստատուն լինի ակնկալու-  
 թիւն նորա , կամ որպէս սովոր եմք ասել յընթացս  
 գործոյս , աներկեւան լինի յոյս նորա : Եւ զի հա-  
 ւատք , այն է՝ գիտութիւն , մարդոյ միայն որ բա-  
 նաւորն է՝ է սեպհական եւ ոչ զգայուն կենդան-  
 եաց , ապա հաւատով մանաւանդ քան յուսով եւ  
 սիրով ընտրեալ որոշի մարդն 'ի զգայականաց եւ  
 յանշնչոց , ընդ որս իբրեւ զգայուն եւ մարմնաւոր  
 ունի ինչ նմանութիւն , այլ ոչ հաւասարութիւն ,  
 այնու զի է բանաւոր եւ ընդունակ հաւատոյ . ա-  
 պա թէ ոչ հաւասարէ նոցա : Ապաքէն լինի զգա-  
 յուն կենդանի՝ եթէ յոյս նորա իցէ առանց հաւա-  
 տոյ . լինի անշունչ բնութիւն ինչ՝ եթէ սէր նորա  
 իցէ առանց յուսոյ :


Հաւատք , յոյս եւ սէր որ պարտին բխել կամ ծագել 'ի միմեանց , զի մին է ծնունդ միւսոյն , պարտին ունել կից թէութիւնս ինչ , նշանս եւ յատկութիւնս . զի 'ի սոցունց կախեալ կայ ճշմարտութիւն եւ ստուգութիւն նոցա , Եւ լինել հաւատոյ , յուսոյ եւ սիրոյ միացեալ եւ կից ընդ այսց հանդամանաց , առարկայ նոցա մարդն բանական՝ վայելէ զարդասիս երեցունցն , Չայս ամենայն տեսանէ ընթերցողն 'ի ցուցակին զոր Աշխ մարդկային իրողութեանց կոչեցաք եւ գտանէ զհամառօտ մեկնութիւն նորա 'ի բանական լուծման , խակ զընդարձակն մեկնութիւն սորա կամ զբուն զբութիւն մեր պարզեալ եւ ցուցեալ 'ի չորս գիրս որ զկնի :

Ձէ մեզ անկ կալ եւ գովել զօգուտ եւ զծառայութիւն զոր մարթի քաղել ամենայն այր հանճարեղ եւ զդաստ 'ի մատենէ աստի . եւ կէտ նպատակի մերոյ ոչ այլ ինչ էր , եթէ ոչ ցուցանել զկարեւորութիւն զհետ լինելոյ միջոցաց որ կարեն , որչափ ինչ հնար է , զերժ պահել զմարդ բանաւոր 'ի փաստոց եւ 'ի շարեաց մեծամեծաց յորս գահազէժ արկանէ զնոսա սէր առանց յուսոյ , այն է՝ յարումն կամ բերումն կոյր , եւ սէր եւ յոյս առանց հաւատոյ , այն է՝ զիմումն անխորհուրդ 'ի զորժ որոյ վախճան է անկանել 'ի խարս եւ լինել նշաւակ ամբաւ փաստոց եւ ազէտից :

Գիտե՛ք զի մթին իմն , եւ իբր այն թէ չնչին ինչ եւ ոչինչ խակ թուիցի աշխատութիւն եւ զորժ մեր ոմանց , Այլ այս զիպեսցի այնպիսեաց ոմանց որ են նշաւակ երից այսոցիկ . ազխաութեան , անձնահաճ գոռողութեան եւ խարէութեան : Չեն ինչ

զարմանք եթէ տղէտք եւ սամիկք չհամարիցին ինչ զայս մեր վաստակ, զի չեն կիրթ միտք նոցա 'ի քննութիւն եւ յընտրութիւն սկզբանց եւ ճշմարտութեան : Անձնահաճք եւ դուռղք սովոր են արհամարհանօք հայել յայն ամենայն որ նոր ինչ է վասն նոցա . զի այսպիսիք ըստ հին իմաստակաց ոմանց սովոր են սուտ կամ ոչինչ համարել զոր ինչ ինքեանք ոչ գիտեն , եւ նախատինս եւ ամօթ անձանց համարել ուսանել ինչ յայլմէ : Իսկ խարերայք եւ խարդախք որոց զործ է զճրագ ընդ գրուանաւ զնել՝ շնաս անձանց եւ խափանումն շահուց իւրեանց համարին զտարածել եւ ունել մուտ ճշմարիտ սկզբանց 'ի միտս , 'ի բարս եւ 'ի վարս հասարակաց : Ասան երկուց կարգացս այսոցիկ , ամբարտաւանից եւ խարերայից , ասէ Տէրն թէ Լնքեանք ոչ մտանեն եւ որոց մտանելն կամին շտան թոյլ մտանել :

Մեք ոչ առ այսպիսիս ուղղեմք զմատեանս , այլ առ անձինս լուսխորհուրդս եւ լուսկամս որ պատրաստ եւ յօժար լեալ ընդունել զճշմարտութիւն , 'ի նոյն ինքն 'ի ճշմարտութիւն հային , եւ չէ ինչ փոյթ նոցա , յումմէ եւ զայցէ այն , եթէ աւաղ ոք իցէ եւ եթէ դուզնաքեայ , եթէ նշանաւոր ոք եւ եթէ աննշան , եթէ հրապարակածանօթ ոք եւ քարոզեալ յատեանս եւ 'ի ժողովս , եւ եթէ յանկեան ուրեք առանձնացեալ 'ի խոկումն բարւոյն եւ ճշմարտի :





ԲԱՆԱԿԱՆ ԼՈՒՆՈՒՄՆ ՅՈՒՑԱԿԻ

ՈՐ ԿՈՁԻ

ԿՇԻՌ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹԵԱՆՑ

ՀԱՆԳԵՐՁԵԱԼ, եմք ընդարձակագոյնս ճառել ՚ի չորս գիրս զերից մարդկային իրողութեանց, զբնականէն, զբարոյականէն և զքաղաքականէն, աստ բովանդակեսցուք զամենայն ՚ի համառօտ յօդուածս, որ և լիցի իբրև բուժումն կամ՝ մեկնութիւն ցուցակին որպէս տեսանես զկնի, ՚ի պէտս և ՚ի դիւրութիւն ուրոց համառօտիւ և ամփոփ իմն կամիցին հասու լինել մտաց և նպատակի նորա .

Որպէս յայտ է ՚ի ցուցակէն, բովանդակ կշիռ մարդկային իրողութեանց ամփոփեալ բովանդակի ՚ի մէջ ուղղանկիւն երեքանկեան, յորոց ՚ի ծայրն ուր միանան երկօքին կողմանք երեքանկեան՝ է իբրև միջավայր կամ՝ կեդրոն, ուր կայ նշանագիրն Կ .

Աստ շատ լիցի ասել թէ Կ տառն ՚ի կեդրոնի անդ երեքանկեան նշանակէ կենդանի և է սկզբնագիր նորա .

## ՅՕԴՈՒԱԾ Ա .

Յաղագս կենդանի մարդոյ եւ բանական յատկութեանց նորա .

Կենդանի մարդն է բանական , ապա ունի հոգի որոյ գլխաւոր կարողութիւնք են միտք եւ կամք , ուստի եւ կարէ տեսանել , այսինքն՝ իմանալ , գատել , կշռել . եւ զի կարող է դարձեալ՝ առնել , կրել , ունել , այսինքն ըմբռնել , ապա պարտի ունել հաւատս , 'ի հաւատոյ անտի կրել յոյս , զորոց , այսինքն՝ զհաւատոյ եւ զյուսոյ զհետ գայ առնել սէր . Այնպէս զի որ ոք ոչ սիրէ՝ ոչ յուսայ . եւ որ ոչն յուսայ՝ չունի հաւատս . եւ որ ոչն ունի հաւատս՝ չէ մարդ բանական , այլ կամ մոլեգնեալ ոք է եւ կամ կենդանի ինչ զգայուն .

## ՅՕԴՈՒԱԾ Բ .

Յաղագս որպիսութեան հաւատոյ , յուսոյ եւ սիրոյ , թէ որպիսի պարտին լինել սոքա 'ի մեզ .

Որպէս տեսանես 'ի ցուցակին , հաւատք պարտին լինել հաստատուն առ ճշմարիտն , յոյս՝ աներկեւան ըստ չափոյն , սէր՝ կատարեալ 'ի բարին . Որ ոչն ունիցի այսպիսի հա-

ւատս , զյոյս և զսէր՝ ոչ է նա մարդ բանական  
ճշմարիտ , ուղիղ և կատարեալ .



ՅՕԳՈՒԱՆԾ Գ .

Յաղագս բաժանման հաւատոյ , յուսոյ եւ սիրոյ :

Գործք կամ ներդործութիւնք հաւատոյ ,  
յուսոյ և սիրոյ մի ըստ ինքեան այլ յառար-  
կայից իւրեանց բաժանին իւրաքանչիւրն յե-  
րիս ազգս , այն է ՚ի բնական , յիմացական կամ  
՚ի Բարոյական և ՚ի Քաղաքական :

Բնական հաւատս կոչեմք զժանօթութիւն  
բնական իրաց զոր ՚ի ձեռն գիտութեանց և  
արուեստից ստանամք , գիտողութեամբք ,  
զննութեամբ և բանիւ , այն է՝ իմաստասիրու-  
թեամբ : Այս հաւատք ոչ այլ ինչ են եթէ ոչ  
հմտութիւն կամ տեղեկութիւն : Եթէ գիտու-  
թիւնս այս իցէ զքաղաքական իրաց՝ կոչի ըստ  
մեզ քաղաքական հաւատք որ ոչ այլ ինչ է ե-  
թէ ոչ վստահութիւն ըստ սովորական լեզուի ,  
եթէ գիտութիւնն իցէ զվերացեալ կամ զի-  
մացական և զբարոյական իրաց , ըստ մեզ  
կոչի իմացական կամ բարոյական հաւատք :  
Իսկ եթէ իցէ գիտութիւն զբնական իրաց՝  
կոչի ըստ մեզ բնական հաւատք , ջնոյն  
պարտ է իմանալ զյուսոյ և զսիրոյ , քանզի  
յայտ է թէ ՚ի բնական հաւատոց կրեմք բը-

նական յոյս և սէր, 'ի քաղաքականէն՝ քաղաքական, և յիմացականէն կամ 'ի բարոյականէն՝ իմացական կամ բարոյական. նոյնպէս յունել մեր բնական հաւատս և 'ի կրել մեր բնական յոյս՝ սէրն զոր առնեմք լինի բնական. յունել մեր քաղաքական հաւատս և 'ի կրել մեր քաղաքական յոյս՝ սէրն զոր առնեմք՝ լինի քաղաքական, յունել մեր իմացական կամ բարոյական հաւատս և 'ի կրել մեր իմացական և բարոյական յոյս՝ սէրն զոր առնեմք լինի իմացական կամ բարոյական:



ՅՕԴՈՒԱՆԾ Գ.

Յաղագս շարագուգութեան հաւատոյ, յուսոյ և սիրոյ:



Նախ՝ շարագուգութիւն է կարգ թուոյ շարելոց ըստ թուաբանական յառաջատուութեան, որպէս 1 2 3 4 5 . . .

Իսկ վասն շարագուգութեան հաւատոյ յուսոյ և սիրոյ պարտ է գիտել զի, որպէս աստանես 'ի ցուցակի անդ, սէրն ունի զթուանշանն 1. քանզի հասարակ է բանտականաց և զգայնոց, և ս և անշունչ և անզգ այ իրաց. Յոյսն ունի զթուանշանն 2. քանզի է սա միջին իմն

՚ի մէջ սիրոյ և հաւատոյ . և է հասարակ բանականաց և զգայնոց , այլ ոչ անշնչոց և անըզգայից . Հաւատք ունին զթուանշանն 3 . զի զմիւս երկոսին , զսէր և զյոյս , բովանդակեն յինքեանս . ոչ են հասարակ ամենայն արտազրեւոյ , և ոչ իսկ զգայնոց , այլ յատուկ են միայն բանականաց :



ՅՕԴՈՒԱԾ Ե .

Յազագս նոցին իսկ շարազոյգ թուանշանաց որ եղեալ կան ՚ի ներքոյ թէութեանց հաւատոյ , յուսոյ և սիրոյ , և Ընդէր :



Որպէս տեսանես ՚ի ցուցակի՝ նոյն շարազոյգ թուանշանք եղեալ են ՚ի ներքոյ թէութեանց հաւատոյ , յուսոյ և սիրոյ . Զոր օրինակ՝ ՚ի ներքոյ ճշմարտութեան որ է մին ՚ի թէութեանց սիրոյ՝ եղեալ կայ թուանշանն 1 . ՚ի ներքոյ սրբութեան որ է միւս թէութիւն սիրոյ՝ եղեալ է թուանշանն 2 . և ՚ի ներքոյ արդարութեան որ է վերջին թէութիւն սիրոյ՝ եղեալ է թուանշանն 3 . ուստի և երեքին թէութիւնքս՝ ճշմարտութիւն , սրբութիւն և արդարութիւն են շարազոյգ , այն է՝ 1 2 3 . և պատճառ այսր շարազուգութեան այն է՝ զի

ճշմարտութիւնն է թէութիւն բարոյական սիրոյ , վասն այնորիկ ունի զթուանշանն 1 . զի է առաջին 'ի կարգի . սրբութիւնն է թէութիւն բնական սիրոյ , վասն որոյ է միջին 'ի կարգի . իսկ արդարութիւնն է թէութիւն քաղաքական սիրոյ որ է վերջին 'ի կարգի .

Եթէ զմի մի 'ի թէութեանց սիրոյ համեմատեսցուք ընդ նոյնատեսակ թէութեանց յուսոյ և հաւատոյ , յայնժամ լինին տարազոյց ընդ միմեանս , այսինքն՝ լինին 111 , 222 , 333 . այսպէս են՝ ճշմարտութիւն , հոլովումն ժամանակաց և արիութիւն . երեքին ևս են տարազոյցք , այն է՝ ունին զթուանշանն 1 . զի երեքին ևս են բարոյական կարգի թէութիւնք . ճշմարտութիւնն՝ սիրոյ . հոլովումն ժամանակաց՝ յուսոյ , և արիութիւնն՝ հաւատոյ . Չնոյն իմա և զայլոց , այն է՝ զթէութեանց բնական և քաղաքական կարգի սիրոյ , յուսոյ և հաւատոյ , որպէս տեսանես 'ի ցուցակի .

ՅՕԳՈՒԱՆԾ Զ .

Թէ զինչ պարգեւեն հաւատք , յոյս և սէր .

Քաղաքական հաւատք ընդ իւրոց համանուանց , այն է՝ քաղաքական յուսոյ և սիրոյ

պարզեւէ յաջողութիւն ստորին . և ստորին  
ասի յաջողութիւնս այս զի է յաջողութիւն  
մարմնաւոր պիտոյից մարդոյ , որ են՝ կերա-  
կուր , հանդերձ , բնակութիւն , այլովքն հան-  
դերձ , լի ու լի և անպակաս մինչև ցմահ :

Բնական հաւատք ընդ իւրոց համանուանց ,  
այն է՝ բնական յուսոյ և սիրոյ , պարզեւէ յա-  
ջողութիւն միջին : Յաջողութիւնս այս կոչի  
միջին , զի է յաջողութիւն իրաց որ ՚ի վեր և  
պատուական համարին առ բանական մարդիկ ,  
որպիսի են փառք , պատիւ , իշխանութիւն ,  
այլովքն հանդերձ , հանդերձ բնական պի-  
տոյիւք , մինչև ցմահ , և յետ մահուան մար-  
դոյ յորդուոց յորդիս :

Իմացականն կամ բարոյական հաւատք ,  
ընդ իւրոց համանուանց , այն է՝ բարոյական  
յուսոյ և սիրոյ , պարզեւէ յաջողութիւն վերին .  
և յաջողութիւնս այս կոչի վերին , քանզի է  
փառաւոր և սքանչելի , վասն զի է յաւերժա-  
կան և անտի կենաց , զոր մարդն աստէն իսկ  
սկսեալ վայելել մինչև ցմահ , և յետ մահ-  
ուանն ևս վայելէ փառաւորագոյնս և վայել-  
չագոյնս և լի բովանդակ :



30763

Թէ՛ սրբախի թէ՛ութեամբք մարթ իցէ ստանալ  
զրարիսն որ 'ի վերոյն նշանակեցան .

Նախ՝ ժրութեամբ . և ժրութիւնն պարտի  
լինել 'ի միտս , 'ի գործս և 'ի բանս .

Երկրորդ՝ խոհեմութեամբ . և սա եւս պարտի  
լինել 'ի միտս , 'ի գործս և 'ի բանս . խոհեմութիւնն  
պարտի լինել դարձեալ կից ընդ  
ժրութեան .

Երրորդ՝ արիութեամբ . սա պարտի լինել  
'ի սրտի , 'ի գործս և 'ի բանս . Արիութիւն  
պարտի լինել զոյգ ընդ ժրութեան և ընդ  
խոհեմութեան .

Չորրորդ՝ զհամակիրն իւր ճանաչելով . և  
զինչ ինչ պարտ իցէ մեզ ճանաչել 'ի համակիրին . նախ զմիտսն , այսինքն՝ թէ իցէ՞ համակիր  
միտ ընդ մեզ . երկրորդ անգամ՝ զկամսն , այն  
է՝ թէ իցէ՞ համակամ ընդ մեզ . երրորդ անգամ՝  
զխորհուրդս նորա , թէ իցէ՞ համախորհուրդ  
ընդ մեզ , եթէ համակիրն գտանիցի  
այսպէս համամիտ , համակամ և համախորհուրդ ,  
պարտ է հսկել 'ի նա և ընդելնուլ կամ  
յարել ժրութեամբ , խոհեմութեամբ և արիութեամբ .

Հինգերորդ՝ գտանելով զյարմարութիւն

երկրին . նախ՝ բնարանասյէս՝ (Ֆիլիպիւս) զկլեմայն , զգրութիւն և զհայեցողութիւն երկրին . երկրորդ՝ բարոյասյէս՝ զբարս և զվարս մարդկան տեղւոյն . երրորդ՝ զբերս և զվաճառս երկրին . Ի գտանել զյարմարութիւն երկրին պարտ է կից լինել ժրութիւն , խոհեմութիւն , արիութիւն և հանգամանք ճանաչելոյ զհամակիրն .

Վեցերորդ՝ որոշելով զհոլովումն ժամանակաց . զի հոլովումն ժամանակաց է որ փոփոխէ զանասնոց շնչաւորաց , մանաւանդ ըզմարդկան բանաւորաց զբարս և զվարս , և զամենայն արդեանց և ծննդոց զառատութիւն և զնուազութիւն , զխաղաղութիւն և զխուփութիւն այլովքն հանդերձ . Յորոշել զհոլովումն ժամանակաց պիտոյ են՝ ժրութիւն , խոհեմութիւն , արիութիւն , գիտել զհանգամանս ճանաչելոյ զհամակիրն և գտանելոյ զյարմարութիւն երկրին .


Եօթներորդ՝ արդարութեամբ . և արդարութեան պարտի երեւել ՚ի դատել , ՚ի կշռել և յառնել մերում , և ընդ սմա պարտի կից լինել ժրութիւն , խոհեմութիւն , արիութիւն , ճանաչել զհամակիրն ըստ անձին , գտանել զյարմարութիւն երկրին ըստ տեղւոյն և որոշել զհոլովումն ժամանակին ըստ քանակութեան .

Ութերորդ՝ սրբութեամբ . և սրբութեան

պարտ է լինել 'ի սրտի , 'ի բանս և 'ի գործս , և ընդ սմա եւս պարտին կից լինել ժրութիւն , խոհեմութիւն , արիութիւն , ճանաչումն համակրի , գտանել զյարմարութիւն երկրին , որոշել զհոլովումն ժամանակին և արդարութիւն :


Իններորդ՝ ճշմարտութեամբ , և ճշմարտութեան պարտի լինել 'ի միտս , 'ի կամս , 'ի գործս և 'ի բանս : Եւ ընդ ճշմարտութեան ևս պարտին կից գտանել նախընթաց ութ թէութիւնք , ժրութիւն , խոհեմութիւն , այլովքն հանդերձ , որպէս վասն միոյ միոյ 'ի թէութեանց ասացաւ թէ պարտի զոյգ լինել ընդ նախորդին :

Ահաւասիկ թէութիւնքս այսոքիկ են միջոցք վայելելոյ յերեսին յաջողութիւնս , այն է՝ 'ի ստորնումն , 'ի միջնում և 'ի վերնում :




ՅՕԴՈՒԱԾ Ը .

Յաղագս առարկայի ընդհանուր հաւատոյ , յուսոյ եւ սիրոյ :



Ամենայն ինչ յառարկայէ անտի իւրմէ ճանաչի , նոյնպէս և հաւատք , յոյս և սէր ճանաչին յառարկայէ իւրեանց : Արդ առարկայն

հաւատոյ է մարդն բանական որ ունի ժրու-  
թիւն, խոհեմութիւն, արիութիւն. սոքօք ճա-  
նաչին հաւատք : Առարկայ յուսոյ յաջողելոյ  
'ի հաւատոց է նոյնպէս մարդն բանական որ գի-  
տէ ճանաչել զհամակիր իւր, գտանել զյար-  
մարութիւն երկրին և որոշել զհոլովումն ժա-  
մանակին. սոքօք ճանաչի յոյսն որ 'ի հաւա-  
տոց : Առարկայ սիրոյ յաջողելոյ 'ի հաւատոց  
է նոյնպէս մարդն բանական որ ունի արդա-  
րութիւն, սրբութիւն և ճշմարտութիւն, և 'ի  
սոցունց ճանաչի սէր :



### ՅՕԴՈՒԱԾ Թ .


Յաղագս նշանաց ընդհանուր հաւատոյ, յուսոյ և  
սիրոյ :



Հաւատք, յոյս, սէր ոչ միայն 'ի թէու-  
թեանց, այլ և 'ի նշանաց եւս ճանաչին : Արդ  
նշան ընդհանուր հաւատոյ է հաւատարմու-  
թիւն հանդերձ բերկրութեամբ և գթութեամբ :

Նշան ընդհանուր յուսոյ է՝ բերկրութիւն  
հանդերձ գթութեամբ և հաւատարմութեամբ :

Նշան ընդհանուր սիրոյ է՝ գթութիւն հան-  
դերձ հաւատարմութեամբ և բերկրութեամբ :



ՅՕԴՈՒԱԾ Ժ .

Յազազս ճանաչման ընդհանուր հաւատոյ , յուսոյ  
և սիրոյ :

Միւս եւս միջոց ճանաչելոյ զհաւատս ,  
զյոյս և զսէր , է ճանաչումն նոցա : ճանաչ-  
մունս հաւատոյ , յուսոյ և սիրոյ սովոր եմք  
կոչել մեք զյատկութիւնս ինչ . որպէս :

Ճանաչումն ընդհանուր հաւատոյ է՝ ողջա-  
խոհութիւն կամ ողջմտութիւն հանդերձ համ-  
բերութեամբ և թողութեամբ :

Ճանաչումն ընդհանուր յուսոյ է համբե-  
րութիւն հանդերձ թողութեամբ և ողջախո-  
հութեամբ :

Ճանաչումն ընդհանուր սիրոյ է՝ թողու-  
թիւն հանդերձ ողջախոհութեամբ և համբե-  
րութեամբ :



ՅՕԴՈՒԱԾ ԺԱ .

Յազազս յատկութեանց ընդհանուր հաւատոյ , յու-  
սոյ և սիրոյ :

Բայ ՚ի թէութեանց , ՚ի նշանաց և ՚ի ճա-  
նաչմանց զորոց ասացաք , հաւատք , յոյս և

սէր ունին և առանձին հանդամանս ինչ զորս մեք մասնաւոր ինչ մտօք յատկութիւնս կոչել ՚ի դէպ համարեցաք :

Արդ յատկութիւն ընդհանուր հաւատոյ է՝ մեծանձնութիւն հանդերձ պատրաստութեամբ և ողորմութեամբ :

Յատկութիւն ընդհանուր յուսոյ է՝ պատրաստութիւն հանդերձ ողորմութեամբ և մեծանձնութեամբ :

Յատկութիւն ընդհանուր սիրոյ է՝ ողորմութիւն հանդերձ մեծանձնութեամբ և պատրաստութեամբ :



### ՅՕԴՈՒԱՆԾ ԺԲ .

Յաղագս արդասեաց ընդհանուր հաւատոյ , յուսոյ  
և սիրոյ :

Զիք ինչ ճշմարիտ և իրական որ ոչ ունիցի արդիւնս ինչ կամ արդասիս . ասպա հաւատք , յոյս և սէր եւս , եթէ իցեն ճշմարիտք , պարտին ունել զիւրեանց արդասիս : Արդ իւրաքանչիւրն ունի զիւր առանձին արդասիս :

Արդասիք քաղաքական հաւատոյ , յուսոյ և սիրոյ են՝ անդորրութիւն մտաց , երկարու-

թիւն կենաց , և ստացուած արդար դարուց  
'ի դարս :

Արդասիք բնական հաւատոյ և սիրոյ են՝  
արիութիւն և հանձար , բերկրութիւն սրտի ,  
և իշխանութիւն երկրի ազգէ յազգ :

Արդասիք իմացական կամ բարոյական հա-  
ւատոյ , յուսոյ եւ սիրոյ են՝ ձայն երանաւէտ ,  
տեսութիւն աստուածային և վայելումն ան-  
զրաւ փառաց :

Ձայս ամենայն զոր յերկոտասան յողուածս  
համառօտիւ ամփոփեցաք , և զոր տեսանես 'ի  
յուշակի անդ՝ գտցես լայնագոյնս և ընդար-  
ձակագոյնս մեկնեալ և յայտ արարեալ 'ի չո-  
րեսին գիրս որ զկնի :







# Գ Ի Ր Ք Ա Ռ Ա Զ Ի Ն

## Գ Լ ՈՒ Խ Ա .

Յաղագս թէ զինչ իցէ կենդանին :

**Ա**ՄԵՆԱՅՆ գոյացութիւն աճուն , շարժուն և զգայուն յինքենէ՝ է կենդանի : Այսու մտօք առեալ՝ կենդանին բաժանի յերիս . 'ի Տնկականս , 'ի Զգայականս և 'ի Բանականս :

Տնկական կենդանիք են տնկականք և բուսականք : Սոքա կոչին կենդանիք , զի ունին զօրութիւն կամ կենդանութիւն տնկական , և նովին զօրութեամբ աճին , և շարժին տարածական շարժմամբ , այլ ոչ զգան և ոչ իմանան :

Զգայուն կենդանիք են բուն կենդանիք որ և շնչաւորք կոչին , որպէս սողունք , թռչունք , չորքոտանիք և այլք որ 'ի կարգին : Սոքա ոչ միայն աճին տնկական զօրութեամբ և շարժին տարածական շարժմամբ ըստ օրինակի բուսոց և տնկոց , այլ և շարժին ևս տեղափոխ շարժմամբ , և ունին ոգի զգայական որով զգան , և 'ի զգալոյ անտի է զի ցանկան և ցաննուն : Սոքա որպէս աճմամբ կամ տարածական շարժմամբ հանդոյն են տնկակա-

նաց , նոյնպէս տեղափոխ շարժմամբ և զգալով նման են բանականաց , այլ ոչ բանականութեամբ որով տարբերին 'ի նոցանէ , որպէս տեսցուք :

Բանական կենդանիք եմք մեք մարդիկ որ նախ ըստ նմանութեան անկականաց ունիմք ոգի անկական որով և աճիմք և տարածիմք . և ըստ օրինակի զգայականաց ունիմք զգայական ոգի՝ որով ցանկամք և ցաննումք , այն է՝ ախորժանս կամ չախորժութիւն իմանամք . այլ 'ի վեր քան զնոսա ունիմք հոգի բանական , զոր նոքա ոչ ունին , և որով տարբերիմք մեք 'ի նոցանէ և նոքա 'ի մէնջ :

Բանական հոգիս այս ունի կարողութիւնս որ ինն են թուով և ընդհանուր բանիւ միտք կոչին . այն է՝ Ազգումն , իմացումն , Բմբռնումն , Գաղափար , Հանճար , Ճանաչումն , Ընտրութիւն , Գատեւ , կշռեւ զորոյ զհետ զան ազատ կամք : Եւ զի բանականն հոգի և կարողութիւնք նորա մարդոյ միայն սեպհական են , վասն այնորիկ մարդ 'ի մէջ ամենայն կենդանեաց կատարելագոյն և ազնուագոյն է . նա մանաւանդ նոքիմք է զի մարդ կոչի պատկեր Աստուծոյ , և 'ի մէջ ամենայն կենդանեաց է միայն ընդունակ վարձուց և պատժոց , փառաց և անարգութեան :

Այժմ տեսցուք առանձինն թէ զինչ իցէ մարդ և սահման նորա , և յորում կայանայցէ

բանականութիւն նորա , Զանկականս և զզգայականս թողեալ որ արտաքոյ են նպատակի մերոյ , առցուք խօսել զբանական կենդանոյ :

## ԳԼՈՒԽ Բ.

Թէ զինչ իցէ սահման մարդոյ և յորում կայանայցէ բանականութիւն նորա :

Նախնի և արդի վիլիստոխայք սահմանեն զմարդ ինչպէս Բանաստեղծս : Սահմանս այս է տրամաբանական բաղկացեալ ՚ի սեռէ և ՚ի տարբերութենէ , կենդանին է սեռ , և բանականութիւնն է տարբերութիւն մարդոյ :

Գարձեալ սահմանի մարդ կենդանի բանական և ծիծաղական , յաւելեալ ՚ի վերայ և զծիծաղականութիւնն որ չիք յայլս ՚ի կենդանեաց , այլ է յատկութիւն մարդոյ :

Կենդանին անուն ունի և այլ միտս . զի նշանակէ և զայն որ չէ մեռեալ , Պարտ է գիտել զի միայն կենդանի մարդն է բանական , զի հոգին բանական ՚ի կենդանուջ միայն է և ոչ ՚ի մեռեալն որ մարմին լոկ է և գի կոչի :

Այլ յորում կայանայցէ բանականութիւն մարդոյ , Յայտ է թէ բանական ասելով խմանամք զայն որ բանիւ վարի , այսինքն զխոր-

Հուրդս մտացն առ մերձաւորս իւր բանիւ և ձայնիւ յայտ առնէ : Եւ զի բանականութիւնն սեպհականն է հոգւոյ մարդոյն , և հոգին է հոգի իննեքումք կարողութեամբքն զորոց վերագոյն առացաք , ապա յայտ է թէ բանականութիւնն կայանայ ՚ի կարողութիւնսն յայնտսիկ , կարողութեամբքն այնտքիւք մարդն կամ հոգին վարի այսպէս . նախ ՚ի ձեռն արտաքին զգայարանաց առնու աղղումն , զաղղեալն իմանայ , զիմացեալն ըմբռնէ , ըմբռեալն լինի գաղափար , զգաղափարս բաղդատէ հոգին ընդ միմեանս . այս բաղդատումն գաղափարաց հանճար կոչի որ է լոյս մտաց և կամ տրամաբանութիւն . հանճարովն ճանաչէ և սկսանի ընտրել , զինի ընտրութեան դատէ , և յետ դատելոյն կշռէ . սոյն այս կշռելն է կամք :

Այս ինն կարողութեամբք իմանամք զառարկայս , եթէ բանք իցեն , եթէ իրք և եթէ գործք . զճշմարիտն , զբարին և զչահաւէտն ընդունիմք , այսինքն՝ հաւատամք , զսուտն , զչարն և զվստասկար մերժեմք :

Ասացաք եթէ սովին բանականութեամբ տարբերի մարդ յայլոց կենդանեաց , Գտանի և յայլ կենդանիս ինչ ճանաչումն և ընտրութիւն . այլ այն չէ ՚ի բանականութենէ : Մարդ խորհի և դատէ , զճշմարիտն , զբարին և զոգտակարն որոչէ՝ ներքին ճանաչմամբ :

նաև մակարերէ 'ի փոքունց զմեծամեծս , և 'ի մեծամեծաց զփոքունս . յընդհանրոյ զմասնաւորն , և 'ի մասնաւորէ զընդհանուրն . զոր օրինակ՝ 'ի փոքր ինչ հրդեհէ , հայեցեալ 'ի նիւթս որ ենթակայ են հրոյն , գուշակէ եթէ մեծ ինչ արդեօք լինելոյ իցէ հրդեհն եթէ փոքր . 'ի դոյզն ինչ սերմանէ , հայեցեալ 'ի թէական պայմանս , այն է՝ 'ի հողն , յերանակն , և յայլս որ սոցին սակի են , իմանայ թէ լինիցի՞ ծառ մեծ թէ թուփ , տացէ՞ ծաղիկս և պլտուղս թէ ոչ , Գոյ և յանասունս ինչ մակարերութիւն , որպէս շուն 'ի նուազագոյն ինչ հոտոյ , և դայլ 'ի սակաւ ինչ լուսոյ լինին հասու և դտակ իրաց որ թագուն կամ հեռի են . այլ այս զգացումն իմանալոյ յանասունս ոչ է 'ի բանականութենէ , և ոչ ընդհանուր յամենեւսին , այլ յոմանս 'ի նոցանէ , և պէս պէս յիւրաքանչիւրումն :

## ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս հոգւոյ թէ զինչ իցէ եւ քանի՞ն :

Հոգի կոչի առ հասարակ գոյացութիւն ինչ հոգեղէն , այն է՝ պարզ և աննիւթ . Սովին մտօք՝ հոգին բաժանի 'ի Զգայական որ Ոգի կամ Շունչ անուանի , և 'ի Բանական հոգի որ է բուն Հոգի ըստ մերում՝ լեզուի :

Զգայականն հոգի կամ ոգին՝ ունի կարողութիւնս հինգ . 1. անել, 2. շարժել, 3. զգալ, 4. ցաննուլ, 5. ցանկալ, իսկ բանական հոգւոյ կարողութիւնք ինն են, որպէս վերագոյն ասացաւ :

Ասացուք նախ զզգայական հոգւոյ թէ զինչ իցէ : Ոմանք ասացին թէ իբրեւ զհուր ինչ կամ իբրեւ զօդ է : Այլ հուր կամ օդ չէ պատշաճ ասել զհոգւոյ . զի ոգին ոչ է շօշափելի, հուր և օդ շօշափին կամ զննին մարմնոյ :

Զգայական ոգին որ միեւնոյն է ՚ի մարդ և յանասունս, է ջերմութիւն զգալի ոգեղէն, Այս ոգի շուրջ գայ յերակս կենդանեաց, և է ՚ի սրտի նոցա իբրեւ ՚ի կեդրոնի, և տայ նոցա զկենդանութիւն . այն է՝ զաճումն, զշարժումն և զզգացումն ցաննլոյ և ցանկանալոյ . նովին ոգւով է զի ներքին չորեքին խառնուածք կենդանեաց, ՚ի բնական կազմութեան, հաւասարակչիւն են միմեանց յորակութիւնան բնականս : իբրեւ չորեքին խառնուածքն կորուսանիցեն զիւրեանց հաւասարակչութիւն, բնական որակութիւնք նոցա փոփոխին, և անդէն տկարանայ կենդանին, նաև մեռանի իսկ, այսինքն՝ ոգին հրաժարի ՚ի մարմնոյն, և երթայ ՚ի կեդրոն իւր ուստի եկեալն էր :

Բանական հոգին ևս է պարզ էութիւն աննիւթ, այլ ստեղծեալ և հեղեալ յԱստուծոյ

ի պատկեր և ՚ի նմանութիւն իւրոյ պարզն և անհուն էութեան : Որպէս էութիւն Աստուծոյ է իմանալի , նոյնպէս և բանական հոգի մարդոյ է էութիւն իմանալի . այլ նա անհուն է ըստ զօրութեանն և ըստ ներգործութեան , սասանմանաւոր է եթէ ըստ զօրութեան և եթէ ըստ ներգործութեան : Զօրութիւն հոգւոյն են միտք , և ներգործութիւն նորա են կամք , Դարձեալ հոգին է ՚ի մարդն որպէս զլոյս , և հանգոյն լուսոյ տարածեալ է ՚ի ջիղս , և կեդրոն նորա է ուղեղն , ի վեց ազգ որպիսութեանէ ուղղոյն բանական հոգին լինի զօրաւոր կամ տկար և թոյլ : Զորպիսութեանց ուղղոյն ճառեալ եմք յուրոյն գիրս հոգեբանութեան որ չէ տակաւին ՚ի լոյս ընծայեալ :

Բանական հոգին ՚ի ձեռն բարեխառնութեան պահոյ և անչլիթն և սուրբ աղօթից զօրանայ . թէպէտ սոքօք զգայական ոգին տըկարանայ յերակս , ըստ առաքելոյն թէ « Յորժամ տկարանամ , յայնժամ զօրանամ » : Իսաստկանալ բորբոքման և ջերմութեան հրոյ՝ տկարանայ լոյս և պայծառութիւն նորա . և ՚ի խարոյկ կրակի եթէ մերձեցուցանիցեմք զճրագ , խարոյկ հրոյն շիջուցանէ զճրագն կամ գէթ նուազեցուցանէ զլոյս նորա , նոյնպէս ոգին զգայական է խարոյկ , իսկ բանական հոգին լոյս և ճրագ . ՚ի զօրանալ զգայականին տկարանայ բանականն , և ՚ի խարուկեալ կրակէ նորա շի-

Նանի կամ գէթ նուազի լոյս սորա . և 'ի նուազել կամ 'ի մթաղնել լուսոյ բանական հոգւոյ սկսանիմք անդէն և անդ մերկանալ զպատկերն Աստուծոյ , և մոլեղնիմք և լինիմք այլք ընդ այլոց : Արդ զի այս այսպէս է , պարտ և պատշաճ է մեզ որ բանաւորքս եմք՝ տկարացուցանել զզգայականն ոգի 'ի ձեռն պահոյ պնդութեան և ստէպն և սուրբ աղօթից . զի նովին զօրացեալ բանականն հոգւոյ և արծարծեալ լուսոյ նորա՝ տեսանիցեմք զարարիչ մեր զԱստուած մտաց աչօք և ծանուցեալ զճշմարիտն էութիւն նորա՝ հաւատասցուք 'ինա և յուսասցուք ուղղութեամբ , ճշմարտութեամբ և կատարեալ սրտիւ , և սիրեսցուք հանապազ 'ի բոլոր սրտէ նախ զնա , և ապա զընկերս մեր իբրեւ զանձինս մեր . զի եմք իսկ ամենեքին պատկեր Աստուծոյ : Այլ զպահոց և զաղօթից ընդարձակագոյնս ճառեալ եմք յայլումմատենի որ չէ տակաւին 'ի լոյս ընծայեալ :

## ԳԼՈՒԽ Դ .

Թէ զինչ իցեն միտք եւ զինչ պաշտօն նորա :

Միտք մարդոյ է զօրութիւն բանականն հոգւոյ որպէս ասացաք : Զի զորօրինակ զօրութիւն արեգական է լոյս նորա , և զօրու-

թիւն ճրագի՛ լուսաւորութիւն ճրագին ,  
 նոյնպէս և բանական հոգւոյ զօրութիւն միտք  
 են , Դարձեալ միտք նման են լուսանկարի ,  
 զի առնուն յինքեանս զպատկերս իրաց և պա-  
 հեն ՚ի յիշողութեան և յերեւակայութեան որ-  
 պէս յարկեղ , Արդ ընդունել բանս ինչ կամ  
 իրս կամ գործ և պահել զնոսս՝ է ըմբռնումն  
 և գաղափար , Յետ առնլոյ մտաց զգաղափարս ,  
 սկիզբն առնէ տեսանել և բազդատել զնոսս  
 ընդ միմեանս բնական լուսով . յետ բազդա-  
 տելոյ՝ ճանաչէ զնոսս և ընտրէ . ընտրելովն  
 դատէ , և դատելովն կշռէ . և յետ կշռելոյ՝  
 ազատ կամօք ընդունի այսինքն՝ հաւատայ  
 զբարին իբրեւ զբարի , և զճշմարիտն՝ իբրեւ  
 զճշմարիտ . նոյնպէս ընդունի կամ հաւատայ  
 զչարն որպէս զչար , և զսուտն իբրեւ զսուտ .

Զորօրինակ՝ դիցուք թէ իցեն մետաղք  
 երկու , քանակութեամբ և որպիսութեամբ ու-  
 բոշք ՚ի միմեանց , որպէս՝ մասն ինչ ոսկւոյ և  
 մասն ինչ արծաթոյ կամ այլոյ իրիք նիւթոյ ,  
 կամ այլ ինչ որ չիցէ գոյացութիւն ինչ , զոր  
 օրինակ՝ բան ինչ կամ գործ . Ի տեսանել մեր  
 զնոսս կամ ՚ի լսել իսկոյն ազդիմք , և ազ-  
 դումն այն անդէն հաղորդի ՚ի միտս մեր . Ի-  
 մանամք և ըմբռնեմք , և լինի այն գաղափար .  
 վաղվաղակի սկսանի միտք բնական լուսով ,  
 այն է՝ հանճարով , բազդատել զնոսս ընդ միմ-  
 եանս , և ՚ի բազդատելն ճանաչէ և ընտրէ թէ

սա ոսկի է և նա արծաթ , Ապա սկիզբն առնէ դատել թէ անխաճն արդեօք իցեն ոսկին և արծաթն եթէ ոչ , Յայնժամ սկսանի 'ի ձեռքն արուեստի , զորօրինակ՝ փորձաքարիւ փորձել , և ասել թէ աստիճան ( ար ) ոսկւոյն քսան և մի է , և արծաթոյն՝ ութսուն : Սակայն չդիտէ տակաւին թէ զի՞նչ իցէ չափ նոցա . յայնժամ ապա կչռէ , 'ի կիր արկեալ կըչռորդս , և լինի տեղեակ եթէ ծանրութիւն ոսկւոյն է ունկիս երկուս և կէս , և ծանրութիւն արծաթոյն՝ ունկիս քսան և հինգ :

Ապա յայտ եղեւ թէ զի՞նչ իցեն միտք և զինչ պաշտօն նորա . Արդ քանզի զօրութիւնն այն է միշտ 'ի մեզ պարգեւեալ յԱստուծոյ , պարտ է մեզ 'ի կիր արկանել զնա 'ի տեսանել , 'ի դատել և 'ի կչռել . խոստովանել իբրեւ սուտ զայն որ սուտն է , մերժելով զնա և հեռանալով անտի . իսկ զայն ինչ որ ճշմարիտն և ուղիղ է՝ ընդունելով հաւատալ և հանապազ կալ հաստատուն 'ի նմա . Զոր ինչ և առնիցեն մարդիկ առանց այնց գործողութեանց մտաց զորոց ասացաք , զզջացին ընդ այն յաւուրն յերտնում . այլ 'ի զուր է այնպիսի զզջումն , զի յանդիմանեցին 'ի դատաւորէն թէ ընդէր ոչ վարեցայք կարողութեամբք բանականն հողւոյ , այսինքն՝ մտօք որ տուեալն էր ձեզ յինէն . այլ գնացէք ըստ ցանկութեանց ( տենջանաց ) մարմնոյ և ըստ կրից և ցանկութեանց զգայա-

կան ոգւոյ , եւ զի ոչ վարեցայք մտօք , յայտ է  
 թէ և ոչ ճանաչէիք զիս . ասպա չէք յինէն , և  
 որոյ էքդ՝ նա իշխեսցէ 'ի վերայ ձեր , Ոչ գի-  
 տեմ զձեզ ամենայն մշակքդ անհաւատութեան  
 և անիրաւութեան , թշնամիք իմոյ էութեանս  
 և անձանց ձերոյ :

## ԳԼՈՒԽ Ե .

Թէ զինչ իցեն կամք :

Կամք են հաճութիւն և յօժարութիւն  
 հոգւոյ , կամ որպէս 'ի վեր անդր ասացաւ ,  
 ներդործութիւն նորա , բղխէ 'ի մտաց , և է  
 սկիզբն ամենայն բանից և գործոց . կամք ,  
 այսինքն՝ հաճութիւն և յօժարութիւն կամ  
 ահաճութիւն , որ չիցէ 'ի մտաց , ոչ ասի կամք ,  
 այլ զգայական բաղձանք կամ կիրք . եւ զի  
 այս այսպէս է , պարտ է մեզ որ բանաւորքս  
 եմք՝ հանապաղ 'ի բանս և 'ի գործս մեր 'ի  
 կիր արկանել զաստուածապարզեւն զօրու-  
 թիւն բանական հոգւոյ , զմիտս , զի ամենայն  
 գործք մեր լիցին յազատ կամաց , և մի 'ի  
 զգայական բաղձանաց և 'ի կրից :

Եւ զի առարկայ կամաց է բարին , օգտա-  
 կարն և մնայուն , որպէս առարկայ մտաց է

ճշմարիտն և ուղիղ և հաստատուն , ամենայն բան կամ գործ որ չիցէ բարի , շահաւէտ և մնայուն՝ չէ յազատ կամաց , այլ է 'ի զգայական բաղձանաց կամ 'ի կրից զգայական ոգւոյ . Ապա զորօրինակ պարտ է մեզ միշտ զճշմարիտն և զուղիղ և զհաստատուն խնդրել և քննել և գտանել . իսկ զսուտն , զթիւր և զյողդողդուն մերժել կարողութեամբք հոգւոյ , նոյնպէս արժան է մեզ զբարին , զօգտակարն և զմնայուն առնել ազատ կամօք , զի գործովք բարեաց և առաքինութեան եղիցուք արդարեւ պատկեր Աստուծոյ և մարդ կատարեալ , և մի կերպարանօք միայն և բանիւ մարդ , իսկ գործովք և արդեամբք իբրեւ զմոլեղներալս , և կամ իբրեւ զայլս 'ի զգայուն կենդանեաց , մեռեալ բանական հոգւով : Այս ներգործութիւն հոգւոյն յօժարելոյ 'ի բարին , յօգտակարն և 'ի մնայուն՝ է առաջին գործ հանճարոյ կամ բնական լուսոյ . Այլ վասն ազատ կամաց ընդարձակագոյնս ճառեալ եմք յուրոյն գիրս :

## ԳԼՈՒԽ Զ .

Յաղագս թէ զինչ իցէ ճանաչումն , և քանիօն :

Ճանաչումն որ է տեսութիւն հոգւոյն՝ է նկատել նորայայն ինչ որ առաջի կայ նմա ,

և որոշել թէ զինչ կամ որպիսի իցէ : Մարմնոյ աչաց տեսութեամբ հաւասար է մարդ ընդ զգայուն շնչաւորս , և տեսութիւն մարմնոյ լինի 'ի ձեռն տարրական լուսոյ , վասն այնորիկ ասի տեսութիւն զգալի աչաց կամ աչօք տեսանել :

Մտաւորն տեսութիւն որ է ճանաչումն մտաց՝ սեպհական է միայն մարդոյ որ բանաւորն է , և ոչ այլոց կենդանեաց որ զգայուն եւթ են , եւ միջնորդ այսր մտաւորն տեսութեան է բնական լոյսն որ հանճարն կոչի :

Ասացաք եթէ մարմնաւորն տեսութիւն որ լինի մարմնոյ աչօք և 'ի ձեռն լուսոյ , հասարակ է մարդոյ և անասնոց , իսկ մտաւորն տեսութիւն որ լինի մտօք 'ի ձեռն հանճարոյ՝ մարդոյ միայն սեպհական է . զի մարդ միայն որ բանականն է՝ իմանայ և ըմբռնեալ դաղափարէ զանցեալն , զաներեւոյթն , զանզգալին և զապառնին . և իմանալովն երեւակայէ , և երեւակայելովն յիշէ , և այնպէս իմանալն և երեւակայել և յիշել ասի տեսանել մըտաւոր աչօք զանցեալն , զաներեւոյթն , զանզգալին և զապառնի . և տեսանելովն հաւատայ :

Վասն այսորիկ ասեն զիրք արարչութեան եթէ իբրև կերաւ Ադամ զպտուղն , նոյնժամայն բացան աչք նորա . Ոչ եթէ կոյր ինչ արարաւ Ադամ յԱստուծոյ , և յորժամ կերաւն 'ի

պտղոյն , յայնժամ բացան աչք նորա , ապա թէ ոչ զիարդ տեսանէր զԵւա զկին իւր , և զամենայն գազանս և զանասունս որոց գնէր անուանս : Ապա յայտ է թէ վասն հոգւոյն աչաց ասեն գիրք . և արդարեւ յետ ուտելոյ զպտուղն իբրեւ յանդիմանեցաւ յԱստուծոյ և ընկալաւ զպատիժ պատուհասին , ծագեաց լոյս հանճարոյն ՚ի խիղճ մտաց նորա , և առ ՚ի միտ եթէ արար չար . և ծնան ՚ի նմա հակառակ գաղափարք բարւոյ և չարի . վասն այնորիկ և ծառն այն կոչեցաւ ծառ գիտելոյ զբարի և զչար : Ապա յաւելուն գիրք թէ Եւասէ Աստուած . ահա եղև Ադամ իբրեւ զմի ՚ի մէնջ . Ապա քէն վասն տեսանելոյ հոգւոյ նորա կամ հանճարոյ ասէր Աստուած . թէ պէտ ոմանք ասացին թէ հեգնելոյ վասն ասացեալ իցէ Աստուծոյ . Այլ մեզ չթուի պատշաճ զայդ ասել՝ նախ զի հեգնել չէ օրէն ասել զԱստուծոյ . երկրորդ՝ կամէր Աստուած յայտ առնել եթէ Ադամ՝ որոյ բացան աչք հոգւոյն և առ անձամբ զիորձ զընտրութեան բարւոյ և չարի , կարող է այնուհետեւ , եթէ վարիցի լուսով բանականն հոգւոյ , զբարին , զօգտակարն և զմնայունն միայն առնել :

Այս ներգործութիւն մտաց տեսանելոյ հոգւոյն աչօք , այն է՝ իմանալոյ , երեւակայելոյ և յիշելոյ զանցեալն , զաներեւոյթն , զանըզգալին և զապառնին , է գործ հանճարոյ :

## ԳԼՈՒԽ Է.

Թէ զինչ դասերն իցէ եւ ոյք գործք նորա :

Գատերն է առնել վճիռ 'ի մէջ ճշմարտին և ստոյ , 'ի մէջ ուղղոյն և թիւրոյ , 'ի մէջ բարւոյն և չարի . և է դարձեալ սեպհական բանական մարդոյ . Գատերն այլ է 'ի ճանաչելոյ և յընտրելոյ . զի ճանաչմամբ տեսանեն միտք զգոյութիւն իրիք , այլ դատողութեամբ զպէս պէս հանգամանս իրաց , բանից և գործոց . Այսպէս դատելով գտանեմք նաև զպատճառս և զնշանակութիւն նոցա . իմանամք դարձեալ եթէ այս ինչ գործ որով օրինակաւ գործիցի կամ գործեալ իցէ և գործելոյ իցէ .

Գատողութիւն է սկիզբն կամ պատճառ ուսմանց և գիտութեանց և արուեստից , և առանց դատողութեան չէ հնար հմուտ և տեղեակ լինել նոցա . քանզի ամենայն ուսումն և գիտութիւն և արուեստ 'ի դատողութենէ ծնանի .

Այս ներգործութիւն մտաց դատելոյ 'ի մէջ ճշմարտին և ստոյ , 'ի մէջ ուղղոյն և թիւրոյ , 'ի մէջ բարւոյ և չարի . դարձեալ գիտելոյ զորպիսութիւն , զօրինակ , զպատճառ և զնշանակութիւն իրիք , է նոյնպէս գործ հանճարոյ .

## ԳԼՈՒԽ Ը.

Թէ զինչ իցէ կշռելն , քանիօն , եւ որպիսի :

Ամենեցուն յայտ է թէ կշռել է գտանել զտարբերութիւն քանակութեանց , եւ լինի 'ի ձեռն գործեաց որ կշիռ եւ չափ կոչին . Գըտանել զչափ կամ զքանակութիւն իրաց ըստ չափաբերական սկզբանց յերիտ ազգս բաժանի . թուել , չափել եւ կշռել . Սովին երեք ազգ գործողութեամբ ինն ազգս տարբերութեանց որոշեմք յիրս զորոց զքանակութիւն ունիմք գտանել . 1. զբաղումն եւ զսակաւ , 2. զմեծն եւ զփոքր , 3. զհեռաւորն եւ զմտաւոր , 4. ըզբարձրն եւ զխոնարհ , 5. զխորն եւ զանխորն , 6. զերկայնն եւ զկարճ , 7. զլայնն եւ զնեղ , 8. զծանրն եւ զթեթեւ , 9. զթաւն եւ զնուրբ . Յայս ամենայն տարբերութիւնս գտանելոյ զքանակութիւն իրաց , որպէս տեսաք , կրկին են հանգամանք , այն է՝ բազմութիւն եւ սակաւութիւն , մեծութիւն եւ փոքրկութիւն , եւ այլքն եւս նոյնպէս . Յայստսիկ ինն ազգս տարբերութեանց մարթ է յաւելուլ եւ զտաններորդ զլն որ է համեմատութիւն 'ի մէջ երկուց տարբերութեանց .

Ի կշռողութեան նիւթական իրաց պիտոյ են գործիք . այլ ոչ այնպէս 'ի կշռողութեան

մտաց . Մտաւորն կշռողութիւն լինի 'ի ձեռն  
բանից . բանք են գործիք կշռելոյ մտաց . և  
նոյն ինքն բանն կշռի ըստ տրամաբանական  
օրինաց մտաց որ յառաջ բերեն զմակաժու-  
թիւն , այն է՝ զհետեւութիւն կամ զմակարե-  
րութիւն . լինի դարձեալ կշռել աչօք կամ  
հայեցուածով որով մակարեբեմք ինչ 'ի գի-  
մաց , 'ի ձայնէ և 'ի պէս պէս շարժմանց , նաև  
'ի բարուց և 'ի գործոց , և յայլոց բազմաց .  
Վախճան կշռողութեան մտաց է գտանել զոր-  
պիսութիւնս ներքին ոգւոյ և հոգւոյ մարդոյ ,  
որով խմանամք զբարս և զվարս այլոց .

### ԳԼՈՒԽ Թ .

Թէ զինչ իցէ առնելն , և զինչ պարտիմք առնել .

Առնել ասի գործել ինչ գործ վերացեալ  
կամ թանձրացեալ . վերացեալ ինչ գործ գոր-  
ծէ ոք , յորժամ օրհնէ կամ գովէ , անիծանէ  
կամ պարսաւէ , քամահէ կամ բամբասէ , և  
այլ ինչ որ սոցին նման են՝ առնէ . թանձրաց-  
եալ ինչ գործ գործէ ոք , յորժամ սպանանէ  
կամ հարկանէ , գրկէ կամ գգուէ , բառնաց ,  
տանի , այլովքն հանդերձ որ սոցին նման են .  
Եւ զի չէ մարթ ումեք առնել ինչ առանց կը-

A 5347  
3076

րելոյ , եթէ վերացեալ ինչ իցէ զոր առնէ և եթէ թանձրացեալ , ապա յայտ է թէ զոր ինչ առնէ ոք՝ զնոյն և կրէ . և այս են օրէնք ՚ի մէջ ամենայն զգայուն արարածոց , զի չիք ներգործութիւն առանց կրողութեան . Եւ զի այս այսպէս է , ապա պարտ է մեզ կամել և առնել զբարիս այլոց , զի և մեք զբարին կրիցեմք , և զբարին կրել է վայելել ՚ի բարւոջ . Ամենայն բարիք , եթէ հոգեւորքն և եթէ մարմնաւորք , բովանդակին ՚ի սէր , և ՚ի սիրոյ գան յառաջ . և ամենայն կենդանի ըզգայուն , մանաւանդ մեք բանաւորքս , ցանկամք հանապազ զի այլք , մանաւանդ բանաւորքն իբրեւ զմեզ , սիրիցեն զմեզ , և ՚ի սիրոյ անտի յորգորեալք կամիցին և առնիցեն մեզ բարիս . Վասն այնորիկ և Տէրն ասէ յԱւետարանի անդ թէ՛ «Մի գատիք , զի մի գատիցիք . զի որով գատաստանաւ գատիք՝ գատերոց էք . և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ » . և գարձեալ թէ՛ «Այլ ես ասեմ ձեզ . Սիրեցէք զթշնամիս ձեր . օրհնեցէք զանիժիշս ձեր . բարի արարէք ատելեաց ձերոց . աղօթս արարէք ՚ի վերայ այնոցիկ որ լիենն զձեզ և հալածեն » . և գարձեալ այլ ուրեք ասէ . « Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ , այնպէս արասջիք և դուք նոցա » . Այս բանք Տեառն , և այլ ևս բազումք որ յաստուածեղէն գիրս՝ զնոյն միտս

աւնին զոր ասացաք թէ չիք առնել առանց կրելոյ, և զոր ինչ առնէ սք՝ զնոյն կրելոյ է, Եւ թէպէտև բազումք բարոյական ինչ և կրօնական միայն ասեն լինել զայս, այլ մեք ասեմք եթէ ոչ բարոյական և կրօնական միայն է, այլ մանաւանդ բնական ևս:

Աստի զհետ գայ նախ՝ զի սիրեցուք զԱստուած որ կենդանին է միշտ և միայն կատարեալ, և արարիչ ամենայնի որ են, բանաւորաց և անբանից, շնչաւորաց և անշնչոց, Եւ եթէ սիրեմք զԱստուած, պարտիմք հաւատալ ՚ի նա, պաշտել զնա և զպատուիրանս և զօրէնս զոր ետ նա մեզ ՚ի ձեռն ծառայից իւրոց՝ առնել և սրահել հոգւով և ճշմարտութեամբ, և կալ ՚ի նոսա մինչև ՚ի մահ, զի և նա արասցէ զմեզ երանելիս յաստի և յանտի կեանս, Երկրորդ՝ պարտ է մեզ սիրել զնմանիս մեր զի սպասկեր են Աստուծոյ, Եւ եթէ սիրեմք զմարդիկ, սարտ է մեզ կամել և առնել նոցա բարիս, գթալ ՚ի նոսա, ներել նոցա, եթէ յանդէտս ինչ մեղանչիցեն մեզ, ոչորմել ևս և նպաստել նոցա, Զայս ամենայն եթէ առնիցեմք, կրեցուք և մեք զվտխարէնսն ՚ի մարդկանէ, և գտցուք ՚ի նոյն ինքն յԱստուծոյ գթութիւն, թողութիւն և ոչորմութիւն, Երրորդ՝ սարտ է մեզ սիրել և զայլ ևս կենդանիս որ պիտանիք են մեզ, դարման տանել այնոցիկ որ օգնենն մեզ, և զգուշանալ

նոցա յիրաց որ վնասակար են նոցա , զի մի վնասիցին և անօգուտ մեզ լինիցին , Պարտիմք սիրել և զայնս ևս 'ի կենդանեաց որ չիցեն մեզ վնասակարք , չառնել նոցա վնաս ինչ յորժամ չեն նոքա մեզ 'ի վնաս , այլ չէ արժան դարմանել զնոսա և պաշտպանել նոցա , Արժան է սիրել և զիրս անշունչս և անզգայս որ չեն մեզ մեղանշականք , նա մանաւանդ պիտանիք և օգտակարք մեզ և մերայոց :

## ԳԼՈՒԽ Ժ.

Թէ զինչ իցէ կրել , և ի իւրիք հնար իցէ մեզ ազատ լինել 'ի կրելոյ զվնասակարս :

Արելն է ընդունել յայլոց վերացեալ ինչ կամ թանձրացեալ . զոր օրինակ՝ կրեմք , յորժամ գովիմք յումեքէ կամ անիծանիմք , և կամ յորժամ գան ըմպեմք , և զայլ ինչ որ սոցին նման են՝ ընդունիմք .

Յայսպիսի գործողութիւնս է միշտ ոք կամ ինչ որ ներգործէ , և այլ ոք կամ ինչ որ ընդունի զներգործութիւնն , ներգործողն կոչի առնող , և ընդունողն անուանի կրող . և ներգործութիւնն լինի կրողութիւն յայնմ որ կրէ :

Բայց դարձեալ է կրողութիւն ինչ որ 'ի ներքս 'ի մեզ լինի , որպէս ուրախութիւն կամ

տրամութիւն , բարկութիւն , նախանձ , այլովքն  
 հանդերձ , եթէ 'ի ներքուստ 'ի մէնջ , և եթէ  
 արտաքուստ յայլոց , կրողութիւն մեր լինի  
 յառնելութենէ և 'ի ճանաչմանէ , Յառնելու-  
 թենէ ասի կրելն , յորժամ ընդունիմք ինչ  
 փոխանակ այնր զոր արարաք . ըստ այնմ՝ յոր-  
 ժամ սիրեմք զոք , 'ի հարկէ ընդունիմք սէր  
 'ի նմանէ . նմին հակառակ՝ եթէ ատեմք զոք  
 կամ չառնեմք նմա բարիս , ոչ սիրիմք 'ի նմա-  
 նէ . այսպէս յառնելութենէ անտի մերմէ կրեմք  
 ինչ եթէ բարի և եթէ չար .

Այլ է կրելն 'ի ճանաչմանէ զոր աստ սլար-  
 զեսցուք սակաւուք , խաղում անդամ կրեմք  
 ինչ 'ի փոփոխմանէ ժամանակաց , 'ի յարմա-  
 ըութենէ տեղոյ և 'ի համակրութենէ կամ 'ի  
 հակակրութենէ մարդոց , և այս երեքին սլատ-  
 ճառք կրելոյ ազդենն ըստ իրին , ըստ դործոյ  
 և ըստ քանակութեան .

Բնապէս , այն է ֆիզիքապէս , կրեմք աս-  
 տէն առողջութիւն կամ հիւանդութիւն , յա-  
 ջողութիւն կամ ձախողութիւն , երկարութիւն  
 կենաց կամ մահ տարաժամ , իշխանութիւն  
 կամ ստրկութիւն , և 'ի հանդերձելումն փառս  
 կամ տանջանս , Յայսմ ամենայնի ժամանակն և  
 տեղին և անձինք կարեն փոխել զմեր բարս ,  
 զվարս և զգործս . եթէ բարի իցեմք , կարեն  
 չարացուցանել . եթէ առողջ՝ տկարացուցա-  
 նել կամ հիւանդացուցանել . եթէ մեծատուն՝

աղքատացուցանել . եթէ 'ի պատուի՝ անպատիւս առնել . և եթէ իշխանք իցեմք , առնել սարուկս : Ապա յայտ է թէ յայտմ ամենայնի կրեմք 'ի ժամանակէ , 'ի տեղւոջէ և յանձանց . բայց ոչ ամենեքին զնոյն օրինակ , այլ պէս պէս ըստ իրին , ըստ գործոյ և ըստ չափոյ կամ քանակութեան .

Արդարեւ այս ամենայն գործի ըստ տեսչութեան կամացն Աստուծոյ որ պատճառն է ամենայնի , և ըստ նորա հրամանաց և սահմանելոյ լինի շարժել և ընթանալ , առնել և կրել : Ասկայն վճիռ հրամանին սահմանելոյ յԱստուծոյ վասն մեր բանաւորացս՝ թէական իմն է . այնպէս զի գէթ ըստ մասին ազատ կամք առնեմք և կրեմք . և եթէ կամիցիմք , մարթ է մեզ զչար 'ի բարի վիտել : Եւ զի զայդ առնել հնար իցէ մեզ , պարտիմք միտ գնել ժամանակի և ընտրել զգիւպոյ ժամ , և սպա ձեռնամուխ լինել 'ի գործ . և եթէ չիցէ ժամանակն 'ի գէպ , դադարեցուցանել զգործս և առնել յայլ ժամանակ գիւպոյադոյն .

Պարտ է երկրորդ և զտեղին գիտել և ընտրել , եթէ որ տեղի իցէ պատշաճ և գիւպոյ , և ըստ այնմ առնել անդ զոր առնելոցն եմք , նոյն բանք են և զանձանց . եթէ չիցեն մարդիկ համակարիք մեզ , հեռանալ 'ի նոցանէ , և խնդրեալ գտանել զայնպիսիս որ ունիցին ընդ մեզ համակրութիւն .

Այլ յընտրել մերում զժամանակ և զտեղի գիպող և զմարդիկ համակիրս մեզ՝ պարտ է հայել և յիրն և ՚ի դորժ զոր առնելոց իցեմք, և ՚ի քանակութիւն նոցա, Գարձեալ յառնել զայնպիսի ընտրութիւնս չէ բաւական իմացական կարողութիւն և հանճար մարդոց միայն առանձինն, այլ պարտ է պահօք և ազօթիւք և սուրբ սրտիւ կալ յազօթս առ Աստուած զի բացցէ զաչս մտաց մերոց, Այլ զորպիսութենէ պահոց և զազօթից, և զազատ կամաց Աստուծոյ և զանձնիշխանութենէ մարդոց ունիմք ճառեալ յայլ գիրս ուրոյն ՚ի սմանէ, և չէ տակաւին ընծայեալ ՚ի լոյս:

Ի վերայ այսր ամենայնի կրկին են պատճառք վասն որոյ չկարեմք ընտրել և ճանաչել զժամանակ և զտեղի գիպող և զմարդիկ համակիրս մեզ, ուստի և դէպք անյաջողք և աղէտք անհնարինք գիպեալ՝ տան մեզ կրել վիշտս չարաչարս և՛ աստ և ՚ի հանդերձելումն, Եւ պատճառքն կրկին զորոց ասացաք՝ են տգիտութիւն հանդերձ մելութեամբ, և սնապաշտութիւն որ է ապաւինել ՚ի սնոտիս:

Մօլութիւնք մեր չտան մեզ թոյլ գտանել արս առաքինիս, այլ տան մեզ յարել ՚ի չարս և յանզգամս որ կործանեն զմեզ ՚ի չարիս, իսկ տգիտութեամբ չկարեմք ընտրել զյարմարութիւն ժամանակաց և տեղեաց, և ճանաչել զմարդիկ որ համակիրք իցեն մեզ, իսկ սնա-

պաշտութիւնն արկանէ զմեզ 'ի խաւար, հեռացուցեալ զմեզ 'ի բնական լուսոյ հանճարոյ, յաստուածապաշտութենէ, 'ի շաւղաց և 'ի խրատուց աստուածեղէն գրոց ։

Ի հաստատութիւնն ճշմարտութեանն ասացելոցս ունիմք վկայութիւնս բազումս եթէ 'ի գրոց սրբոյ, եթէ 'ի պատմութենէ և 'ի գիտութենէ իրաց, և եթէ 'ի գործոց որ յարքունի և 'ի քաղաքական իրս և 'ի վաճառականութեան գիպին, և որոց հանապազ ականատես և ականջալուր եմք ։



## ԳԼՈՒԽ ԺԱ.

Թէ զինչ իցէ ունելն և զինչ միջոցք կամ  
և զանակք նորա ։

Ունելն է ըմբռնել կամ ստանալ ինչ, եթէ վերացեալ ինչ իցէ և եթէ թանձրացեալ ։ Ասացաք յառաջագոյն թէ յորժամ առնեմք ինչ՝ զնոյն և կրեմք ։ արդ յորում պահու կրեմք ինչ՝ 'ի նմին պահու ունիմք զնա ։ այնպէս զի՝ մարթ է ասել թէ զոր կրէ ոք՝ ունի, և զոր ունին՝ կրէ ։

Այժմ պարտ է մեզ ցուցանել թէ ոյք ի-

ցեն միջոցք կամ եղանակք ունելոյ , և որ միջոց ունելոյ իցէ սեպհական մարդոյ և լաւագոյն : Արդ առաջին միջոց ունելոյ ինչ կամ ստանալոյ սէրն է , զի նա որ սիրէ՝ ՚ի հարկէ կրէ ինչ , ուստի և ունի : Այս միջոց ունելոյ ՚ի ձեռն սիրոյ՝ ոչ մարդոյ միայն սեպհական է , այլ և ամենայն էից , ևս և անչնչոց և անզգայից : Զի ամենայն իրք սիրեն զմիմեանս , և սիրելով իւրեանց հակին և կցին առ իրեարս , ուստի և ունին ինչ , որպէս մազնիս ձգէ զերկաթ և յարի ՚ի նա . ոսկին՝ զսնդիկ , և կցի ընդ նմա . և արմաւենի զարմաւենի ձգէ յինքն և վարի զնովաւ . և այլ ևս բազում իրք են որ զնոյն բնական սէր կամ զմիտումն ունին առ միմեանս , և նովին յարին ՚ի միմեանս . այս է ունել նոցա : Այլ սէրն որ ՚ի զգայուն արարածս է՝ առաւել է քան զայն . զի սոքա ոչ բնական ինչ ձգմամբ միայն բերին առ միմեանս , այլ և զգացմամբ և զգայական ախորժանօք , և նովին կրեն և ունին . այլ կրեն և ունին յուսով թէ վայելելոց են ինչ : Ապա սէր անչնչոց և անզգայից առանց յուսոյ է , իսկ սէր զգայնոց՝ յուսով . կամ՝ ՚ի սէր անզգայից չիք յոյս . այլ ՚ի սէր զգայականաց խառն է յոյս , նա մանաւանդ ՚ի յուսոյ անտի է սէր նոցա : Անզգայքն ունին բնական սիրով . զգայունք ունին սիրով և յուսով :

Մարդիկ ևս իբրեւ զանզգայս՝ մարթին

ունել բնական ինչ սիրով . և իբրև զզգայունս՝  
 յուսալից սիրով . սակայն այնու զի բանա-  
 կանք են՝ պարտ է ունելոյ նոցա այլազգ լինել  
 յունելոյ անտի ոչ միայն անզգայից այլև զգայ-  
 նոց . այսինքն՝ պարտ է մարդոյ իբրև բանա-  
 կան այլով սկզբամբ և յայլոց պատճառաց ու-  
 նել . Եւ զի՞նչ իցէ սկիզբն և պատճառ որով  
 պարտին մարդիկ ունել , և ունելովն կրել .  
 — Հաւատք . Ունելն 'ի յուսոյ որ 'ի զգայունս  
 է՝ յողբողութուն իմն է և առժամանակեայ .  
 միայն ունելն որ 'ի հաւատոց է՝ կարէ լինել  
 հաստատուն և յաւերժական . ապա վայել իսկ է  
 բանական մարդոյ ունել 'ի հաւատոց , զի և այն  
 զոր ունի կամ ստանայ , լիցի նոյնպէս հաստա-  
 տուն և յաւերժական . զի բարիք որ չեն 'ի  
 հաւատոց՝ յողբողութունք են , թերեւս ասիցեն  
 ոմանք . Են բազումք յաշխարհի որ ունին մե-  
 ծութիւնս և բարիս բազումս , և ոչ ունին ու-  
 զիղ և ճշմարիտ հաւատս . ապա են բարիք որ  
 չեն 'ի հաւատոց . Արդարեւ են բարիք որ չեն  
 'ի հաւատոց այնոցիկ որ ունինն զնոսա , այլ  
 յայլոց պատճառաց և 'ի դիպաց . սակայն  
 այնոքիկ չեն սեպհականք նոցա որ ունին  
 զնոսա . ոչ են պատճառք բարեաց և ոչ տե-  
 ւեն յորդւոց յորդիս . այլ առժամանակեայ և  
 յողբողք , և պատճառք զրկելոյ 'ի բազում  
 բարեաց , զորօրինակ՝ յառողջութենէ յերկա-  
 բութենէ կենաց , 'ի բերկրութենէ սրտի , յի-

մաստութեանէ , 'ի հանճարոյ , յայլոց կարեւոր  
 դիտութեանց , յիշխանութեանէ և , 'ի վերջոյ ,  
 յանտի վառւաց , Զայս այսպէս գիտեմք 'ի  
 փորձոյ և յիրաց գիտելոց , 'ի պատմութեանէ ,  
 'ի վկայութեանէ իմասանոց և արանց լաւաց ,  
 նաև 'ի վճռոյ Աստուածեղէն գրոց , Որ զհա-  
 կառակն սորա պնդեն , անդէտ են սրպիսու-  
 թեան և զօրութեան հաւատոյ , զուրկ 'ի գի-  
 տութեանէ գրոց և իմասանոց , և ոչ խօսին 'ի  
 փորձառութեանէ , այլ ըստ իւրեանց ախորժա-  
 կաց յորոց խարեալն են :

Եւ զի հաւատք չեն յամենեւին նոյնպիսի  
 և նոյնչափ , ապա յայտ է թէ և բարիքն զոր  
 'ի հաւատարոյ անտի ընդունի և ունի ոք ,  
 կախեալ կան յորպիսութեանէ և 'ի չափոյ հաւա-  
 տոց . որպէս և Տէր մեր ասաց թէ Ըստ հա-  
 ւատոց քոց եղիցի քեզ . Եւ զի այս այսպէս է ,  
 ապա որչափ արժան է փոյթ յանձին ունել ստա-  
 նալոյ և ունելոյ հաւատս ճշմարիտս , ուղիղս  
 և կատարեալս : Հաւատք պատճառ են ամե-  
 նայն առաքինութեանց , մանաւանդ յուսոյ և  
 սիրոյ . զի 'ի հաւատոյ անտի ունիմք յոյս  
 աներկբաց , և 'ի յուսոյ անտի սէր առ Աստ-  
 ուած և առ ընկերս , թէպէտ հաւատք , յոյս  
 և սէր են աստուածարանական առաքինու-  
 թիւնք , սակայն առանց հաւատոց ոչ յոյս և  
 ոչ սէր ոչ կարեն լինել այնպիսի . զի , որպէս  
 'ի վեր անգր ասացաք , յոյս և սէր կարեն յայ-

լոց ևս պատճառաց ծագել, այն է՝ ոչ 'ի հաւատոց, այլ 'ի բնութենէ կամ 'ի բնական զգացմանէ, Նոյն բանք են և զայլոց բարոյական անաքինութեանց, ամենայն անաքինութիւն որ չիցէ յուղիղ, 'ի ճշմարիտ և 'ի կատարեալ հաւատոց, չէ ճշմարտիւ անաքինութիւն, այլ է երբեմն բնական զգացումն և երբեմն 'ի ցոյց և սնապարծութեան վասն: Արդորովհետեւ այսպէս է, զի անոնց հաւատոց ամենայն անաքինութիւնք ոչինչ են անաջի Աստուծոյ և մարդոյ աստուածապաշտից, պարտիմք, քան զամենայն անաքինութիւնս և քան զսէր և զյոյս ևս, ջանալ ստանալ կատարեալ հաւատս ըստ Աստուածաշունչ գրոց և ըստ սրբոց վարդապետաց:

Ոչ միայն ամենայն անաքինութիւնք 'ի հաւատոց են, այլ և գործք զարմանալիք և մեծամեծք վճարեալ են 'ի հաւատոց, 'ի ձեռն Նահապետաց, Մարդարէից, Առաքելոց և Աշակերտաց Քրիստոսի, Հայրապետաց և այլոց անձանց ճշմարիտ հաւատացելոց:

Հաւատով ստացան Նահապետք իշխանութիւն, ստացուածս, պատիւ և փառս աստ և 'ի հանդերձելումն. մարդարէք հաւատով գուշակեցին զապագայս, Առաքելք հաւատով քարոզեցին և ուսուցին զճշմարտութիւն և զգալուստ որդւոյն Աստուծոյ մարմնով յաշխարհ. Հայրապետք հաւատով յաջորդեցին Առաքել-

լոյց և ուսուցին զնոյն, Եւ ՚ի վեր քան զամենայն Տէրն մեր Քրիստոս որ միշտ զհաւատս ուսուցանէր և քարոզէր, և ՚ի հաւատոց անտի առնէր նշանս և արուեստս մեծամեծս քան զամենեւին որ յառաջ քան զնա եղեն, նա մանաւանդ առնէր արդեամբք զոր ուսուցանէրն բանիւք, տուեալ օրինակ աշակերտաց և հետեւողաց իւրոց զի և նոքա զնոյն առնիցեն. որպէս և գրեալ է թէ նշանք այնոցիկ որ հաւատանն երթիցեն զհետ նոցա. յանուն իմ դեւս հանցեն և լեզուս խօսեսցին, այլովքն հանդերձ. Եւ թէ ոչ միշտ նշանք լինին զոր Աստուծոյ միայն անկ է և նա միայն գիտէ շնորհել, այլ իրք մեծամեծք առնին և կատարին, ևս և ՚ի բնական և ՚ի քաղաքական կարգի, ՚ի ձեռն արանց որ կատարեալքն են հաւատովք:

Ապա պարտ է մեզ որ բանաւոր մարդիկ եմք և պատկեր Աստուծոյ, նա մանաւանդ Քրիստոնեայք ՚ի ձեռն մկրտութեան սուրբ Աւազանին, և հաղորդակիցք ընդ Քրիստոսի Աստուծոյ ՚ի ձեռն պատուական մարմնոյ և արեան սրբոյ պատարագին, ստանալ զճմարիտ հաւատս որդւոյն Աստուծոյ, և ունել զնա ՚ի սուրբ և յաստուածախօս մատենից որ են հոգի և կեանք, և դարձեալ ՚ի բնական աղբերէ ճմարտութեան, այն է՝ ՚ի տրամաբանութենէ որ է մարմին և սնունդ. զի սոքա եր-

կօքին , գիրք սուրբ և փիլիսոփայութիւն , մի  
են և միարան , և 'ի միասին լինին ակն և աղ-  
բիւր ամենայն ճշմարտութեանց :

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Թէ զինչ են հաւատք եւ ոյք իցեն աղբիւրք նորա

Բազումք յարանց նշանաւորաց և յասա-  
ուածապաշտից բազում օրինակօք սահմանե-  
ցին զհաւատս : Այլ մեք զհետ երթամք սրբոյ  
Առաքելոյն Պօղոսի որ 'ի թղթին առ Հերբա-  
յեցիս սահմանէ զհաւատս այսպէս . « Զինչ են  
հաւատք եթէ ոչ յուսացելոյ իրաց հաստա-  
տութիւն , և յանդիմանութիւն որոյ ոչն ե-  
րեւին » :

Աստի զհետ դայ թէ , յորժամ չիցեմք հա-  
ւատացեալ իմիք , ոչ յուսամք այնմ , և եթէ  
յուսամք , յոյս մեր 'ի հաւատոց մերոց է , և  
'ի հաւատոց անտի մերոց առնու յոյս մեր  
հաստատութիւն , եւ դարձեալ զաներեւոյթս 'ի  
զգալի աչաց մերոց 'ի ձեռն ուղիղ և ճշմարիտ  
հաւատոց մերոց կարեմք բերել և կացուցա-  
նել յանդիման առաջի աչաց մերոց և տեսա-  
նել , Գիտութիւն զանցելոյ և զհանդերձելոյ  
այսինքն զապառնեաց՝ հաւատովք միայն լինի :

Ապա հաւատք են իմացութիւն , հանճար ,  
 զգօնութիւն , գիտութիւն , իմաստասիրու-  
 թիւն և իմաստութիւն անցելոյն և ապագա-  
 յին . և նա որ չէ իմացական՝ ոչ է ընդունակ  
 հաւատոյ և չկարէ ունել հաւատս , իմացու-  
 թեամբ և հանճարով և այլովք ևս զոր վերա-  
 գոյն ասացաք՝ կարեմք յանդիման կացուցա-  
 նել մեզ զանցեալս , զապագայս զաներեւոյթս ,  
 այսինքն՝ զայնս որ եղեն և որ լինելոց են և  
 չեն մեզ տեսանելի , իբրեւ զառաջիկայ տե-  
 սանել և հաւատալ նոցա . զի բոտ Սողոմոնի  
 որ ինչ լինի՝ նոյն եղեալ է և լինելոց է . Եւ  
 եթէ միտ դնիցեմք այլոց ևս բանից Առաքե-  
 լոյն որ ՚ի նոյն գլուխ Հերբայեցւոց թղթոյն  
 գրեալ են , զսոյն մեր միտս դտանեմք . վասն  
 որոյ ամենայն ճշմարիտ հաւատացեալ առ ՚ի  
 գիտել թէ զինչ իցեն հաւատք , պարտի զնոյն  
 գլուխ ՚ի սկզբանէ մինչեւ ցվախճան ուշի ու-  
 շով ընթեռնուլ և ածել զմտաւ թէ որով կանո-  
 նաւ և որպիսի տեսութեամբ գրեալ իցեն . Պարտ  
 է ընթեռնուլ հաւաստեաւ և զայլն ամենայն որ  
 գրեալ կան ՚ի գիրս սուրբս վասն հաւատոց ,  
 և ՚ի նոցունց ուսանել և խելամուտ լինել քաջ  
 թէ զինչ իցեն հաւատք . Զորօրինակ՝ ՚ի նոյն  
 գլուխ Հերբայեցւոց գրեալ է թէ հաւատովք  
 իմանամք հաստատեալ զյաւիտեանս բանիւն  
 Աստուծոյ , յաներեւու թից զերեւելիսս եղեալ .  
 Այս հաստատէ աւասիկ զոր ասացաքս թէ զե-

ըրեւելիս տեսանելով ընդունիմք զաներեւոյթս,  
զանցեալս և զասպաղայս իբրև զառաջիկայ 'ի  
ձեռն ինունց կարողութեանց բանականութեան  
զոր յառաջագոյն ասացաք :

Բայց արժան է ձեռնարկութեամբ ուղիղ  
տրամաբանութեան իմաստասիրել, կշռել զհե-  
տեւութիւնս նորին կանոնօք և այնպէս ըն-  
դունել և հաւատալ. որպէս և սովոր եմք  
առնել, 'ի սակաւուց զբազումս, 'ի մերձառ-  
բաց զհեռաւորս, յառաջիկայէն զանցեալսն և  
զասպանիս, յերեւելեաց զաներեւոյթս. պար-  
տիմք իմաստասիրել և մակաբերելով հետե-  
ւեցուցանել 'ի ձեռն փորձոց և ասպ հաւատալ  
այնոցիկ որ լինելոց են առյապայ, Զի առանց  
գրոց սրբոց վկայութեան և կանոնաց տրամա-  
բանութեան հաւատալ յիմարութիւն է. Տգի-  
տաց, ուամկաց և մարդոց մոլորելոց է հաւա-  
տալ ամենայն սնտտեաց, որպէս տեսանեմք  
զի հեթանոսք հաւատային և արդ ես հաւա-  
տան կոոց և մահկանացու մարդոց մեռելոց  
իբր աստուածոց, ունին և պէս պէս վարդա-  
պետութիւնս մոլարս, և այս ամենայն ոչ այլ  
ինչ է եթէ ոչ հայհոյութիւն առ ճշմարտն  
Աստուած և թշնամանք ճշմարտութեան :

Այլ պարտ է գիտել զի հաւատք պարտին  
լինել 'ի ներքին զգացմանէ և 'ի հաւանութենէ  
մտաց. և 'ի ճանաչել մերում միանդամ՝ զճըշ-  
մարտութիւն ըստ կարողութեանց բանակա-

նութեան մերոյ՝ պարտխմք հոգւով և սրտի մտօք հայել ՚ի նա, փարել զնովաւ և կալ հաստատուն ՚ի նմա մինչեւ ցմահ :

Բայց վասն թէ զինչ իցեն հաւատք, և ուստի ծագումն նորա և զխարդ ծնանի ՚ի մարդ բանական՝ տեսցուք ՚ի ստորեւ :

### ԳԼՈՒԽ ԺԳ.

Թէ զխարդ ծագին հաւատք եւ զինչ զհետ գայ ծագման հաւատոյ :

Յայս գլուխունիմք նախ ճառել զծագմանէ հաւատոյ և ապա թէ զինչ զհետ գայ ծագման հաւատոյ :

Նախ ասացուք թէ ծագումն հաւատոյ և արդիւնք այնր ծագման նման են ծագելոյ արեգական և արդեանց նորա : Արեգակն յորժամ ծագէ, լուսաւորէ մեծապայծառ լուսովն զերկիր և զերկինս, և տայ տեսանել մարդոյ զորս միանգամ են յերկրի և յօդս, զդոյն, զգեղ և զամենայն հանգամանս նոցա, նոյնգունակ և հաւատք, ՚ի ծագել իրեանց լուսաւորեն և յայտ առնեն առաջի մտաց մարդոյն զերկրաւորս և զերկնաւորս միանգամայն, զիւր իսկ անձն մարդոյ, և զլստուած ինքն

գլխովին 'ի ձեռն բարձրագոյն պատճառաց իբրեւ ինքնագոյ և անեղ էութիւն, պարզ, անժամանակ, ամենուրեք և գոյութիւն 'ի վեր քան զբնաւ գոյութիւնս :

Այլ հաւատք նման են արեգական ոչ ըստ ծագման նորա միայն և ըստ արդեանց, այլև ըստ հանգամանաց նորա : Արեգական բնութիւն լոյս է, և բնութիւն հաւատոց իմաստութիւն : Արեգակն է չափ աւուրց և ժամանակաց : հաւատք չափ են և կշիռ վարուց և բարուց մարդկան : Արեգակն զարթուցիչ է զօրութեանց թմրելոց 'ի ծննդականութիւն և 'ի բոյս : հաւատք են զարթուցիչ բնութեան մարդոց թմրելով յաստուածպաշտութիւն և 'ի գործս բարեաց : Արեգակն է ոգի ամենայնի : հաւատք ոգի են ամենայն առաքինութեանց : Արեգակն պատճառ է երեցունց շարժմանց երկրի : հաւատք պատճառ են երկից կարգաց գիտութեանց բանական մարդոյ, այն է՝ բնականին, բարոյականին և քաղաքականին : Արեգակն ծնուցիչ է լուսոյ : հաւատք ծնուցիչ յուսոյ և սիրոյ : Արեգակն է կշիռ հաւատարութեան խառնուածոց : հաւատք կշիռ են կատարելութեան որ բարոյական հաւատարութիւնն է յամենայն գործս մարդոյ : Արեգակն կեդրոն է դրութեան մտորակաց : հաւատք կեդրոն և միջավայր են ամենայն առաքինական զօրութեանց մարդոյ : Ամենայն լոյս և

Չերմութիւն որ չէ յարեգակնէ՝ չէ ընդհանուր և տեւական , այլ մասնաւոր և առժամանակեայ . նոյնպէս ամենայն իմաստութիւն որ չէ 'ի հաւատոց դոյզն ինչ է և անտեւական . և զորօրինակ 'ի հեռանալ արեգական 'ի հիւսիսային կիսագնաց և 'ի գտանել նորա 'ի կենդանակերպի այժեղջեր նուազէ Չերմութիւն և ազդեցութիւն նորա 'ի մէնջ 'ի հիւսիսայնոց , և կարօտանամք եկամուտ Չերմութեան և զօրութեան հրոյ , նոյնպէս յորժամ յուղիղ և 'ի ճշմարիտ լուսոյ և 'ի Չերմութենէ հաւատոց նուազեմք առ յիմարութեան և մելութեան , նոյն ժամայն կարօտ լինիմք զգայական լուսոյ և Չերմութեան , այն է՝ զգայական յուսոյ և սիրոյ . Արդ քանզի չիք իմաստութիւն մնայուն և ընդհանուր առանց հաւատոց , ապա որչափ պարտ և պատշաճ է վոյթ յանձին ունել գտանելոյ զհաւատս և ստացեալ ունել զնա , զի մի փոխիցեն 'ի մէնջ յոյս և սէր , և յետոյ կարօտանայցեմք զգայական յուսոյ և սիրոյ նման զգայուն կենդանեաց , զի այս 'ի թերութիւն մեծ է 'ի մեզ որ բանաւորքս եմք .

Այժմ' ասասցուք թէ զիարդ ծագեն 'ի մեզ հաւատք . Ապաքէն յայանի են ամենեցուն հանգամանք նորածին մանկանց , և թէ զինչ անցք անցանեն ընդ նոսա մինչեւ հասանեն 'ի չափ հասակի մարդոյ կատարելոյ . Ի սկզբան անդ հազիւ ունին նոքա սակաւ ինչ զգա-

ցումն . այլ զի գոյ 'ի նոսա կարողութիւնն ի մացմանն և հանճարոյ , առ սակաւ սակաւ ըստ զարգանալոյ մարմնոյ նոցա՝ զօրանայ և հոգին , մինչեւ յետ աւուրց իբրեւ քառասնից սկիզբն առնեն ծիծաղել որով իբր թէ յայտ առնեն թէ են մարդ բանական . զի , որպէս տեսաք , ծիծաղել սեղհական է մարդոյ միայնոյ յամենայն շնչաւորս . Եւ որպէս ծիծաղականութիւնն է արտաքին յատկութիւն մարդոյ , ճանաչումն և ընտրութիւնն ներքին յատկութիւնք նորա են . վասն որոյ ըստ յառաջել զարդացման մարմնոյ մանկանն՝ տակաւ զարթնուն ճանաչումն և ընտրութիւնն նորա , և սկսանինա ճանաչել և ընտրել զիւր մայր կամ՝ զօտընստու , ճանաչէ և ընտրէ նաև զլոյս 'ի մթոյ . և այս է սկիզբն և իբր թէ նշանակ ծագելոյ բնական լուսոյ հաւատոյ յանձն մանկանն . Ըստ զարգանալ ևս քան զևս մարմնոյ և մտաց նորա՝ ճանաչումն այն և ընտրութիւնն երթալով զօրանայ մինչեւ ցեօթներորդ ամ հասակի . յայտմ միջոցի սկսանի մանուկն խօսել և յայտ առնել զիւր գաղտնարս , այլ թերակատար իմն և կիսով չափ . զի միտք և իմացումն և հանճար , այլովքն հանդերձ , չեն տակաւին հասեալ 'ի չափ կատարելութեան վասն մարմնոյն խակութեան . վասն որոյ և չկարէ տակաւին ընտրել զբարին 'ի չարէ , և զճմարիան 'ի ստոյ համեմատեալ զնոսա ընդ միմեանս ,

յօժարել 'ի բարին և խուսել 'ի չարէն , և ընդ  
 դունել զճշմարիտն և զսուտն մերժել . Սոյն վիճակ  
 իրաց տեսնեն յեօթն ամաց մինչև 'ի հինգ  
 գետասաներորդ ամ , թէպէտ ամ ըստ ամէ ,  
 նա մանաւանդ օր ըստ օրէ յառաջանայ 'ի կատարելութիւն ,  
 մինչև 'ի լինել նորա հնգետասանամեայ՝ մարմին նորա ըստ բաւականին  
 հասեալ է 'ի զարգացումն . վասն որոյ և միտք  
 և հոգի նորա զարգացեալ գտանի նովին չափով ,  
 այլ գաղափարք նորա չեն տակաւին յատակք  
 և պարզք , այլ նսեմ և խառն . չունին  
 հաստատութիւն , այլ հանապազ 'ի փոփոխութեան  
 կան . կարող է զոր ինչ զգայարանօքն  
 ընդունի՝ ըմբռնել յիմացականութեան ,  
 այլ չկարէ տակաւին ուղիղ դատմամբ որոշել ,  
 ճանաչել և ստուգել թէ ոյք 'ի գաղափարաց  
 իւրոց իցեն ճշմարիտք և ոյք՝ սուտք . և այսպէս  
 կայ և մնայ տարտամ և անորոշ մինչև ց  
 քսաներորդ երկրորդ ամ հասակի . Յետ այնորիկ  
 լինի մարմինն ամենեւին կատարեալ , այլ ոչ  
 հոգին լիովին ունի սրացեալ զիւր լրումն  
 և զկատարելութիւն , զի ոգին զգայական  
 բունն է յոյժ , և բանական հոգին տկար .  
 Ի հասանել 'ի քսաներորդ իններորդ կամ յերեսներորդ  
 ամ հասակի՝ լինին և՛ մարմինն և՛ հոգին  
 կատարեալք ըստ կաղմածոյ և ըստ բնական  
 ձրից , և յայնժամ սկիզբն առնէ զգաղափարսն  
 զոր ընդունի և ընկալեալն է արտա

քուստ 'ի ձեռն զգայարանաց՝ բերել 'ի կշիռ ընդ միմեանս մտօքն , այն է՝ ոչ միայն ըմբռնէ և գաղափարէ , այլ և բաղդատէ հանճարովն , և ճանաչէ , ընտրէ , դատէ և կշռէ , և յայն ժամ զբարին և զճշմարիտն ընդունի իբրև բարի և ճշմարիտ , և զչարն և զսուտ մերժէ իբրև արդարև չար և սուտ . Այս ընդունելութիւն նորա են հաւատք , և դայ յառաջ 'ի կատարելութենէ մտաց , 'ի հաճութենէ , 'ի յօժարութենէ և յազատ կամաց :

Ունիմք գեղեցիկ օրինակ ծագման 'ի նախահայրն մեր յԱդամ , որպէս ասացաք այլուրեք , թէ զիարդ ընդ ուտել նորա 'ի պտղոյ անտի ծառոյն յորմէ արգելեալ էր նմա չուտել , բայան աչք նորա , և կարող եղև ճանաչել զբարի և զչար , որով յայտ առնի ծագումն հաւատոյ 'ի նա , վասն որոյ և Աստուած ասէր թէ Ահա եղև Ադամ իբրև զմի 'ի մէնջ , Ուստի զորօրինակ էր ժամանակ յորում ոչ զիտէր Ադամ զբարի և զչար , զի չունէր տակաւին զընտրութիւն բարւոյ և չարի , ճշմարտի և ստոյ , և ապա յուտելն 'ի պտղոյն ծնաւ 'ի նմա այն ընտրութիւն , այն է՝ հաւատք 'ի փորձառութենէ անտի իւրմէ , նոյնպէս և յամենայն մարդ առ հասարակ՝ է ժամանակ յորում ոչ ունի նա զայն ընտրութիւն , այսինքն զհաւատս , մինչև 'ի հասանել նորա յերեսներորդ ամ հասակի կամ 'ի չափ կատարեալ մար-

դոյ , և 'ի լրանալ փորձառութեան նորա՝ գայ կամ ծնանի 'ի նմա այն ընտրութիւն հաւատոյ՝ և զորօրինակ 'ի ստանալ անդ Ագամայ զհաւատս և 'ի կարող լինելոյ ընտրել զբարի և զչար՝ ասացաւ զնմանէ թէ եղբւ իբրեւ զաստուած , նոյնպէս և ամենայն մարդ 'ի ստանալ իւրում յանձին զհաւատս՝ յայնժամ լինի մարդկատարեալ կատարելութեամբ բանական հոգւոյ :

Այլ զոր ինչ ասացաք զայլեայլ ամաց տիոց յորս բանականութիւն նոր իմն զարդացումն ուստի և նոր կերպարանս և նոր երեւոյթ առնու , չէ պարտ նոյնօրինակ իմանալ զամենայն մարդոյ , և ոչ ճիշդ 'ի նոյն թիւս տարեաց , ճշմարիտ է թէ առ հասարակ յայն տիս զորոց ասացաք լինին այն փոփոխութիւնք կատարելութենէ 'ի կատարելութիւն , այլ ճշդիւ զտարին և զամիս և զօր յորում այնք լինին՝ որոշել յամենայն մարդիկ անհնար է : Քանզի բազում ինչ պատճառք , որպէս ներքին և արտաքին կազմութիւն մարմնոյ , խառնուած բնութեան , կլիմայ երկրին , պէսպէս հանգամանք մարդկան ընդ որս կեսոյ ոք , և այլ ևս պատճառք անժանօթք մարթին փութացուցանել կամ յապաղել , նպաստել և արգելուլ զգործողութիւնս որպէս մարմնոյ , նոյնպէս զհոգւոյ :

Միւս ևս օրինակ ծագման հաւատոյ տե-

սանեմք յԱբրահամ , զորմէ և գիրք վկայեն թէ հաւատաց Աբրահամ յԱստուած , նաև հաւատք Աբրահամու , թուի մեզ , ծագեցան 'ի նմա նորին օրինակաւ որպէս յԱդամ և յայլ ամենայն մարդիկ . այն է 'ի փորձառութենէ գիտութեան . զի մարթ է կարծել թէ Աբրահամ որ էր յԱշխարհէն Քաղղէացոց , ուսեալ էր զաստեղագիտութիւն և զայլ ևս ուսմունս գիտութեանց ազգին այնորիկ , և 'ի գիտութենէ անտի իւրմէ 'ի ձեռն ուղիղ հետեւութեան տրամաբանական կանոնաց յերեւելեաց աստի՝ որ են գործ անհուն իմաստութեան , մակաբերեալ ծանեալ թէ զոյ էութիւն ինչ անսահման և բանաւոր յանհունս որ է սլատճառ և արարիչ նոցա , ուստի և հաւատաց 'ի նա , Էւ այս հաւատք արժանի արարին զնա յայանութեանց նորին իսկ Աստուծոյ , յորմէ և վարձս ընկալաւ զլինելն հայր ամենայն հաւատացելոց , նա և նորին իսկ որդւոյն Աստուծոյ ըստ մարմնոյ .

Աւելորդ է աստ կալ և ցուցանել թէ որչափ բարիք մեծամեծք սլարդեւին մարդկան 'ի ձեռն հաւատոց , Շատ և բաւական է Աբրահամ զորմէ արդ իսկ ասացաւ , թէ զխարդեղեւ նա արժանի լինելոյ հայր ազգաց բազմաց , մինչեւ ցարդ իսկ արդարեւ ազգք բազումք զմիմեամբք մրցին յընդունել զնա յիւրեանց Հայր . Այլ ևս արք անուանիք յԱբրահ-

համէ և այսր , այն է՝ նահապետք և մարգարէք և թագաւորք եթէ 'ի հնումն և եթէ 'ի նորումն՝ եղեալ 'ի ձեռն հաւատոց որդիք Աբրահամու , եղեն անուանի 'ի մեծութեան , յիշխանութեան , 'ի փառս , նա ոմանք և յիմաստութեան , ոչ վասն այլ իրիք եթէ ոչ վասն հաւատոց :

Սմին հակառակ՝ որչափ անհնարին աղէտք ծնանին առ 'ի չգոյէ հաւատոց , Ձիք ժողովուրդ և ազգ յերկրի որ ոչ պնդիցէ թէ ունի հաւատս ճշմարիտս , Այլ ուստի յայտ է թէ ամենեցուն հաւատք իցեն ճշմարիտք և ուղիղք և կատարեալք , ոչ ապաքէն բազմաց հաւատք թիւր են և սխալ և անկատար : Սուտ ինչ և սխալ չկարէ լինել ճշմարիտ և ուղիղ՝ համարելով միայն թէ է ճշմարիտ և ուղիղ , այսպէս բազումք համարին զսուտ և զթիւր հաւատս իւրեանց ճշմարիտ և ուղիղ , այլ այնու ոչ լինին ճշմարտահաւատք և ուղղագաւանք , ճշմարիտ և ուղիղ հաւատք այն են որ 'ի ճշմարիտ յայտնութենէ Աստուծոյ 'ի գիրս ճշմարտապէս Աստուածաշունչս ցուցեալ և առաջի եղեալ են , և զոր կարողութեամբ բանական հոգւոյ կամ լուսոյ մտաց և հանճարով 'ի ձեռն ուղիղ տրամաբանութեան ճանաչեմք լինել ճշմարիտ և ուղիղ և կատարեալ , և այնպէս ընդունիմք :

Արդ , որպէս ասացաք , ամբաւ չարիք

ժնանին յանհաւատութենէ . Այլ մարդիկ որ  
 առհասարակ խարեալ են 'ի մոլար դաստիա-  
 րակութենէ կամ 'ի սուտ վարդապետաց կամ  
 յայլոց պատճառաց՝ ոչ հաւատան թէ փրասքն  
 և չարիք զորս կրեն , իցեն 'ի թիւր և 'ի մո-  
 լար հաւատոց կամ յանհաւատութենէ իւր-  
 եանց զոր ճշմարտութիւն համարին . Այս ա-  
 մենայն չարիք , ասեն , զորս կրեմք կամ կրեալ  
 եմք և կրելոց ևս եմք՝ ոչ թէ 'ի պակասութե-  
 նէ անտի հաւատոց մերոց են , այլ յանօրէնու-  
 թենէ մերմէ , և 'ի մեղաց մերոց . Արդարեւ  
 լինին չարիք վասն մեղաց և անօրէնութեան  
 մարդկան , որպէս մահք տարաժամք , սովք ,  
 պատերազմունք և այլ ազգի ազգի չարիք .  
 սակայն պարտ է գիտել զի երկու ազգք են  
 մեղաց . մին 'ի տգիտութենէ , այն է՝ յանհա-  
 ւատութենէ կամ 'ի թիւր և 'ի թերի հաւա-  
 տոց , և միւս ևս՝ 'ի չար դործոց . Եւ զի յեր-  
 կուց պատճառաց աստի ևս կարեն լինել չա-  
 րիք և աղէտք , պարտ է յերկոցունց ևս զգոյշ  
 լինել . Եւ իւ իւրք մարթ իցէ կալ մնալ զերծ  
 կամ ապրել 'ի չարեաց , եթէ ոչ զհետ երթ-  
 եալ ուսման և իմաստութեան . Ուսմամբ և  
 իմաստութեամբ հասու լինիմք ոչ միայն ճշմար-  
 տութեան առ հասարակ , այլ և առաջնում  
 ճշմարտութեան որ է Աստուած . Դարձեալ և  
 զճշմարիտ հաւատս և զհաւատոց ճշմարտու-  
 թիւնս 'ի ձեռն հանճարոց և իմաստութեան , ո-

րոց գլխաւորն է ուսումն իմաստասիրութեան կամ տրամաբանութեան 'ի ձեռն իմաստասիրութեան որոյ գործիք են ներքին և արտաքին զգայութիւնք և բանն՝ ճանաչեմք զանձինս և զգոյութիւն մեր, զկարողութիւնս և զխորհուրդս մեր, զիրս արտաքինս, զյատկութիւնս և զգոյութիւն նոցա, և զամենայն էութիւն իմացական և վերացեալ. որ է ասել զամենայն ինչ որ է, զէն ինքնագոյ զպատճառ ամենայն իրաց եղբրոյ. Առանց ճշմարիտ կանոնաց տրամաբանութեան չիք ստուգութիւն թէ զոր միանգամ գիտեմք՝ իցէ ճշմարիտ, ուղիղ և կատարեալ. Տրամաբանութիւն է չափ և կշիռ, և եթէ արժան իցէ ասել՝ նա է ժանտաջուր որ լուծանէ և ընտրէ զճշմարիտն 'ի ստոյ, զուղիղն 'ի թիւրէ, զբարին 'ի չարէ. Ուսցուք ուրեմն զայս կարեւոր ուսումն.

Աստ խօսել զտրամաբանութենէ և ուսուցանել զկանոնս նորա չէ պատշաճ տեղւոյս, և մեր նպատակ չէ յօրինել ուսումն իմաստասիրութեան. Միայն ասասցուք զայլ և այլ բնութենէ կամ զկարգաց իրաց զորոց կարեմք ունել զգիտութիւն. Արդ՝ երեք կարգք են բնութեան իրաց զգալեաց և իմանալեաց յորոց ճանաչի գոյութիւն նոցա. Այս երեք կարգք են՝ Գոյութիւն, Զօրութիւն և Ներգործութիւն իրաց. զորօրինակ Հուր՝ գոյութիւն է, Զերմութիւն՝ զօրութիւն, Այրելն է ներգործու-

Թիւն , Հոգի՝ գոյութիւն է , Միտք՝ զօրութիւն , Հաճելն և կամել՝ ներգործութիւն , Յերեցունց կարգաց աստի՝ են որ յայտնի են մեզ , և են որ դազանի , և ՚ի յայտնեաց անտի մակարեբեմք զդազանիս , Տացուք օրինակս ինչ ՚ի սլաակերիս որ զկնի , ուր 1 Թիւն նշանակէ զգոյութիւն , 2՝ զզօրութիւն , 3՝ զներգործութիւն՝ զրոյք ցուցանեն զգազանութիւն , Յորժամ փոխանակ 1 Թուոյ կայցէ զրոյ , պարտ է իմանալ թէ գոյութիւն իրին որոյ անունն կայ ՚ի սկզբան տողին՝ է դազանի , Եթէ զրոյն կայցէ փոխանակ 2 Թուոյ , պարտ է իմանալ թէ զօրութիւն իրին է դազանի , և եթէ փոխանակ 3 Թուոյ կայցէ զրոյ , պարտ է գիտել թէ ներգործութիւն իրին է դազանի , Հնգեքին սօքա կան յազիւսակի անդ , Հուր , Մազձայոյզ , Գեղորայք , Մագնիս , Գիսաւորք .

Գոյ . Զօր . Ներ .

1 Հուր . . . .	1	2	3
2 Մազձայոյզ .	0	0	3
3 Գեղորայք .	1	0	0
4 Մագնիս . .	1	0	3
5 Գիսաւորք .	0	2	0

Գիտութիւնք որ ըստ տրամաբանական կանոնաց են , այսինքն՝ ՚ի վերացեալ գիտութիւնս կամ ՚ի վերացեալ մասունս գիտութեանց , ճառեն զգազանեաց , այսինքն

զայնպիսի իրաց՝ որոց գոյութիւն կամ զօրութիւն կամ ներգործութիւն անյայտ են . Քանզի բանիւ կամ տրամաբանութեամբ մակարեւեալ իմանամք զգաղանիս 'ի յայտնեաց . զի նախ ամենայն ներգործութիւն 'ի գոյութենէ իմեքէ լինի , և գոյութիւն ինչ կամ բաղադրեալ ինչ է այսինքն՝ նիւթական կամ տարրական , և կամ պարզ , այն է՝ հոգեւոր և անմարմին . Որպէս ներգործութիւնք տարերաց և ամենայն բնական իրաց 'ի բաղադրեալ գոյութեանց են , իսկ ներգործութիւնք հոգւոց , որպէս հրեշտակաց և հոգւոց մարդկան՝ 'ի պարզ գոյութեանց . Զպարզ գոյութեանց ունիմք բաղում ինչ ճառեալ յուրոյն զիրս որ չէ տակաւին 'ի լոյս ընծայեալ :

Արդ է ինչ յորոյ 'ի ներգործութենէ ճանաչեմք զգոյութիւն նորա . զորօրինակ՝ 'ի շնչառութենէ և 'ի շարժմանէ շնչաւորաց 'ի միտառումք թէ գոն նոցա ոգիք . 'ի խորհելոյ , 'ի խօսելոյ և 'ի ծիծաղելոյ մարդոյ՝ իմանամք թէ գոյ 'ի նմա հոգի բանական . Այսպէս 'ի ներգործութեանց ինչ շնչաւորաց և մարդոյ իմանամք , այսինքն՝ դիտեմք և հաւատամք թէ գոյ յառաջինսն , 'ի շնչաւորս՝ ոգի զգայական , և յերկրորդումն , այն է՝ 'ի մարդն , և՛ ոգի զգայական և հոգի բանական . և 'ի հաւատալոյ աստի թէ կենդանի բանական է մարդն՝ յուսամք թէ կարող է զամենայն պաշտօն մար-

դոյ կատարել, և 'ի նմին յուսոյ սիրեմք զնա, միայն թէ հաւատք և յոյս և սէր մեր չիցեն սուտ և յողզողուն, այլ ճշմարիտ և հաստատուն:

Դարձեալ յանձանց մերոց և յայլոց որ իբրեւ զմեզ բանականք են, 'ի պէս պէս բնութեանց, որպէս յանասնոց, 'ի տնկոց և 'ի մետաղաց որոց ազգի ազգի զօրութիւնք և ազդեցութիւնք են, 'ի լուսաւորաց որ թաւալին յերկինս և որոշեն զաւուրս, զամիսս և զտարիս, մակարերեալ իմանամք իբրեւ 'ի ներգործութենէ զպատճառ նոցա որ է Աստուած, զէն և զգոյն մշտնջենաւոր և անսահման, յորմէ ամենայն ինչ է և ինքն ոչ է յումեքէ: Արդ քանզի այսպէս հաւատացեալ գիտեմք թէ առանց նիւթեզէն կամ աննիւթ գոյութեան չիք զօրութիւն, և առանց զօրութեան չիք ներգործութիւն, 'ի տեսանել մեր ներգործութիւն ինչ՝ նոյն ժամայն ասեմք թէ գոյ զօրութիւն ինչ. և 'ի տեսանել մեր զօրութիւն ինչ, իսկոյն մակարերեմք թէ գոյ անդ գոյութիւն, եւ թէպէտ ոչ կարեմք ճանաչել թէ զինչ է գոյութիւն, սակայն գիտեմք թէ գոյ: Այսպէս, ըստ վկայութեան ամենայն փիլիսոփայից, յերեւելի և յաներեւոյթ իրաց իմանամք զառաջինն զբուն գոյութիւն զԱստուած, և թէպէտ ոչ տեսանեմք զնա և ոչ հասու լինել կարեմք նմա, սակայն ոչինչ երկրայիմք թէ

գոյ նա . Յետ հաւատալոյ մերոյ թէ գոյ Աստուած՝ հաւատամք ևս թէ ունի զօրութիւն անյաղթ և ներգործութիւն անչափ և անհուն .

Ապա մեզ ուղղափառ ֆրիստոնէից ոչ միայն պարտ է հաւատալ յԱստուած իբրեւ 'ի գոյութիւն յաւիտենական , անհուն , անճառ և անեղ , այլ և յամենասուրբ Երրորդութիւն նորա . այն է 'ի Հայրն Աստուած իբրեւ արդարեւ 'ի գոյութիւն իմանալի . յՈրդին Միածին իբրեւ 'ի զօրութիւն Հօր , և 'ի Հոգին սուրբ իբրեւ 'ի ներգործութիւն նորին իմանալի էութեան , թէպէտ և գոն այլ հաւատացեալք որ 'ի մի միայն էութիւն Աստուծոյ հաւատան , այլ ոչ հաւատան զօրութեանն և ներգործութեան , ուստի և հաւատք նոցա չեն կատարեալք , զի ոչ հաւատան յԱստուած իբրեւ Երրորդութիւն . այսինքն 'ի մի բնութիւն Աստուածութեան յերից անձնաւորութեանց . Եւ եթէ հաւատային յԱստուած իբրեւ Երրորդութիւն , հաւատային արդեօք և 'ի Յիսուս ֆրիստոս , 'ի Բան և 'ի Զօրութիւն Աստուծոյ , հաւատային ևս և 'ի Հոգին սուրբ որ է ներգործութիւն նորին Աստուծոյ ըստ հաւատոց ուղղափառ ֆրիստոնէից .

Աստ արժան է յաւելուլ զայս գիտողութիւն . Հաւատք բաղում ինչ նշանակեն . հաւատք կոչի երբեմն գիտակցութիւն , է զի նշանակէ զվստահութիւն , և է երբէք զի յայտ առնէ զանգղալին զայն զգացումն իմացակա-

նութեան . Զամենայն բնական բարիս ստանամք 'ի ձեռն գիտակցութեան , այն է փորձոյ գիտութեան . զբաղաքական բարիս ստանամք 'ի ձեռն վստահութեան , և զբարոյական բարիս որ են փառք հանդերձելոյ՝ ստանամք 'ի ձեռն անզգալի զգացման իմացականութեան . Վասն այսր հաւատոց ասաց Տէրն մեր թէ ըստ հաւատոց քոց եղիցի քեզ . Այսմ հաւատոյ պարտ է լինել ճշմարիտ և ուղիղ և կատարեալ . Միջոց ստանալոյ զհաւատս գիտակցութեան են գիտութիւնք և արուեստք , մանաւանդ տրամաբանականն , որ է գլուխ և զշխոյ ամենայն գիտութեանց .

Ինն կարողութիւնք զորոց յառաջագոյն ասացաք՝ ածեն 'ի հաւատս իբր 'ի վախճան և 'ի կատարումն ամենայնի . նախ 'ի վերուստ 'ի վայր , ապա 'ի ներքուստ 'ի վեր . Զորօրինակ՝ այն զոր զգայ մարդ բանական 'ի ձեռն զգայարանաց իւրոց՝ անցանէ 'ի միտս և լինի նախ իմացումն . երկրորդ՝ իմացումն լինի ըմբռնումն . երրորդ՝ ըմբռնումն լինի դադափար . չորրորդ՝ դադափարն լինի բաղդատութիւն . հինգերորդ՝ բաղդատութիւնն լինի ճանաչումն . վեցերորդ՝ ճանաչումն լինի ընտրութիւն . եօթներորդ՝ ընտրութիւն լինի դատումն՝ ու թերորդ՝ դատումն լինի կշռութիւն . իններորդ՝ կշռութիւն լինի ընդունումն որ է հաւատք . Ուստի և մարդն կենդանի է բա-

նական . ըստ որում բանական՝ է մտաւոր ,  
 ըստ որում մտաւոր՝ է խմացող . ըստ որում խ-  
 մացող՝ է ըմբռնող . ըստ որում ըմբռնող՝ է  
 գաղափարող . ըստ որում գաղափարող՝ է բաղ-  
 դատող . ըստ որում բաղդատող՝ է ճանա-  
 չող . ըստ որում ճանաչող՝ է ընտրող . ըստ ո-  
 ըում ընտրող՝ է դատող . ըստ որում դատող՝  
 է կշռող . ըստ որում կշռող՝ է ընդունող զճըշ-  
 մարիտն իրբեւ զճշմարիտ , և զսուտն իրբեւ  
 զսուտ , այսինքն՝ հաւատացող . Եւ քանզի  
 հաւատայ , ապա և յուսայ և սիրէ . և եթէ  
 սէր նորա է առ ամենայն մարդ . ճշմարտու-  
 թեամբ , սրբութեամբ և արդարութեամբ ,  
 ապա ուրեմն է կատարեալ և առաքինի . զի  
 լրումն ամենայն առաքինութեանց է սէրն ,  
 նախ սէր Աստուծոյ ապա սէր ընկերին . իսկ  
 եթէ ոչ ունիմք ճշմարտութեամբ , սրբու-  
 թեամբ և արդարութեամբ կատարեալ սէր  
 առ Աստուած և առ ընկերս մեր , ապա չու-  
 նիմք յոյս , եթէ ոչ ունիմք յոյս , ապա չունիմք  
 հաւատս . եթէ ոչ ունիմք հաւատս , ապա  
 չեմք կշռողք . եթէ չեմք կշռողք , ապա չեմք  
 դատողք . եթէ չեմք դատող , ապա չեմք  
 ընտրողք . եթէ չեմք ընտրողք , ապա չեմք  
 ճանաչողք . եթէ չեմք ճանաչողք , չեմք բաղ-  
 դատող այսինքն հանճարեղք . եթէ չեմք  
 բաղդատող , ապա չեմք գաղափարող . եթէ  
 չեմք գաղափարող , ապա չեմք ըմբռնող . և

թէ չեմք ըմբռնող, ապա չեմք իմացող. եթէ չեմք իմացող, ապա չեմք մտաւոր և բանական կենդանի, ուստի և եմք բանական հոգւով մեռեալ, կամ մոլեգնեալ և կամ կենդանի զգայուն, նա մանաւանդ մեքենայ, Որ մեռեալն է՝ ոչ զգայ, որ մոլեգնեալն է՝ վնասէ, որ զգայուն անասունն է՝ պատառէ իբրև զգազան, և որ մեքենայն է ինքնաշարժ ջախջախէ և խորտակէ. Այսպիսի ոք որ ՚ի սլակասութենէ հաւատոց լինի՝ արժանի է արտաքսելոյ ՚ի միջոյ մարդկան, կամ արդելեալ կալոյ յանմարդարնակ ուրեք տեղ ոջ.

### ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս որպիսութեան ուղիղ և ճշմարիտ հաւատոց, թէ քանիօն են և ի իւր լինին կատարեալ.

Պատշաճ թուի մեզ խօսել աստ համառօտիւք զորպիսութենէ ուղիղ և ճշմարիտ հատոց որ պարտի լինել ՚ի մարդ բանական. զի որ պարծինն լինել բանաւոր և մտաւոր ՚ի բռնէ, պարտ է նոցա, ՚ի վեր քան զայլ ամենայն առաքինութիւնս և քան զամենայն գիտութիւն, ցուցանել յանձին հաւատս այնպէս կա-

տարեալ և առանց այլայլութեան՝ որպէս հանդերձեալ եմք ցուցանել 'ի ստորեւ , զի յայտ լիցի 'ի ձեռն հաւատոյ թէ արդարեւ բանաւոր եմք և պատկեր Աստուծոյ :

Արդ պարտ և պատշաճ է բանական մարդոյ հաւատալ նախ 'ի մի Աստուած անեղ , այսինքն՝ ինքնազոյ , պարզ , ամենուրեք , անժամանակ , այն է յաւիտենական , որոյ ոչ սկիզբըն է և ոչ կատարած , ամենեւին կատարեալ , միայն բարի , այսինքն՝ թէ չիք այլ ոք բարի կատարեալ իբրև զնա . պատճառ ամենայնի , այսինքն՝ արարիչ երկնի և երկրի և ամենայնի որ 'ի նոսա՝ երեւելեաց և աներեւութից . միայն դատաւոր որ հատուցանէ բանաւոր արարածոց իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց , եթէ բարի իցեն վարձս անեղծականս , և եթէ չարք՝ պատիժս անվախճանս , և է ինքն անփոփոխ , անյաղթ զօրութեամբ և անկշիռ ներգործութեամբ . Յետ հաւատալոյ 'ի նա այսպէս , պարտ է հաւատալ նաեւ թէ արժան է պաշտել զնա և երկիր պագանել նմա 'ի բովանդակ կեանս մեր :

Այլ հաւատովս այսուիկ լինիմք լոկ մարդիկ բանաւորք և պատկեր Աստուծոյ ըստ հոգւոյ . և զի շնորհական , այն է՝ գործնական և կատարեալ լիցին հաւատք մեր և արժանի վարձուց , պարտ է յաւելուլ 'ի նա և զայն ևս զոր ասելոց եմք , ի հաւատոյ անտի զորմէ աւ

սացաք ծագի արդարութիւն , այլ ոչ շնորհք ,  
 Բայտ է 'ի սուրբ գրոց և յառողջ մտաց թէ  
 վասն արդարութեան մերոյ չպահանջին վարձք  
 և փառք , պարտք մեր են լինել արդար զի  
 արդարութիւն ասլրեցուցանէ : « Հաւատով ար-  
 դարանամք » , ասէ Առաքեալ , այլ վասն շնոր-  
 հաց ասի թէ « Շնորհք և ճշմարտութիւն 'ի ձե-  
 ուրն Բիսուսի Բրիստոսի եղեն » . և դարձեալ  
 թէ « Ի լրութենէ նորա մեք ամենեքին առաք  
 շնորհս փոխանակ շնորհաց » . Ապա յայտ է թէ  
 առ ընդունելոյ շնորհս պարտ է մեզ ունել  
 զշնորհական հաւատս , և այսպէս կոչեմք մեք  
 զհաւատս որ 'ի Բրիստոս Բիսուս . Նմին իրի  
 պարտ է մեզ 'ի դաւանութիւն մեր անդր Աս-  
 տուծոյ յաւելուլ և զհաւատալ մեր 'ի Բրիս-  
 տոս Բիսուս իբրև յՈրդի Հօր ամենակալի ,  
 յէութենէ նորա , բան և զօրութիւն Աստու-  
 ծոյ . Բայց ոչ յայտսիկ միայն , այլ և պարտ է  
 մեզ հաւատալ 'ի մարմնանալ նորա և 'ի ծնա-  
 նելն 'ի կուսէն , որով լինին հաւատք մեր 'ի  
 Բրիստոս , իբրև յԱստուած և 'ի մարդ կատար-  
 եալ . Գարձեալ 'ի մեռանել նորա 'ի խաչին , 'ի  
 յառնելն և 'ի համբառնալ , և սովին լինին  
 հաւատք մեր 'ի Բրիստոս ոչ միայն իբրև  
 յԱստուած և 'ի մարդ , այլ և իբրև 'ի Փրկիչ ,  
 Գարձեալ և 'ի հանդերձեալ զալուստ նորա  
 առ 'ի դատել . և սովին եւս լինին հաւատք  
 մեր 'ի նա եւս և իբրև 'ի հատուցանող վար-

ձուց և պատժոց, Յետ այսորիկ առ 'ի գործել ամենեւին կատարեալ զհաւատս մեր, պարտ է մեզ ուսանել զվարս և զգործս նորա որպէս գրեալ կան յԱւետարանն, և զհետ երթալ և ջանալ նմանող լինել նոցա. Այսպէս հաւատալով մեր՝ լինիմք ոչ միայն ըկ բանական մարդիկ, այլ և ֆրիստոնեացք, և յայնժամ ստացեալ մեր զչնորհական և զգործնական հաւատս, լինիմք բաւական ընդունելոյ շնորհս փոխանակ շնորհաց, Ըստ ամենայնի միաբան է ասացելոյ մերոց և ուղղափառ վարդապետութիւն ամենայն առաքելական եկեղեցեաց, որպէս եղաւ առաջի 'ի Սուրբ ժողովն Նիկիոյ, ուր յօրինեցաւ իբրև օրինակ դաւանութեան համօրէն հաւատացելոյ հանգանակն զոր ընթեռնումք իսկ հանապաղ թէ «Հաւատամք 'ի մի Աստուած Հայր ամենակալ արարիչ երկնի եւ երկրի, երևելեաց և աներեւութից. և 'ի մի Տէր Յիսուս ֆրիստոս յորդին Աստուծոյ». այլովքն հանդերձ.

Եւ զի գոն և մարթին լինել այլ ևս հաւատք որք հակառակին միմեանց փոքր 'ի շատէ, և զմիմեանս եղծանեն և հերքեն, դատապարտեն և մերժեն, և ամենեքին պնդեն թէ յԱստուծոյ կամ յազդեցութենէ Աստուծոյ տուեալ իցեն, զիարդ կամ որով իւրք հնար իցէ ճանաչել թէ զոր 'ի նոցանէ ընդունել արժան իցէ. Դաստիարակութիւն, ծնողք և ուսուցիչք,

և որ եւ իցէ հեղինակու թիւն մարդոյ չկարէ ուրոշել զայս խնդիր , Լուծումն սորա կախեալ կայ զտրամաբանութենէ : Տրամաբանութիւն որ ոչ այլ ինչ է եթէ ոչ բովանդակութիւն կանոնաց ուղիղ բանի կամ բնական լուսոյ , 'ի մէջ մտեալ լուծանէ և պարզէ զամենայն դժուարութիւն : Տրամաբանութիւն որ , որպէս վերագոյնն ասացաք , իբրև զժանտաջուր զտէ և զատանէ յամենայնի զճշմարիտն 'ի ստոյ , զուղիղն 'ի թիւրէ , զբարին 'ի չարէ՝ զտէ և որոշէ նոյնպէս 'ի հաւատս զճշմարիտն 'ի ստոյ , ի ձեռն տրամաբանութեան կշռելով մեր 'ի պատճառաց զգործս , 'ի գործոյ զպատճառս , 'ի ներգործութենէ զգորութիւն , 'ի բանից զիրողութիւնս , 'ի պէս պէս հանդամանաց պատմութեան զճշդութիւն ժամանակին , տեղեաց և անձանց , 'ի հանդամանաց անձանց զճշմարտախօսութիւն , զկարողութիւն , զիմաստութիւն նոցա , և զայլ բազում ինչ , հասու լինիմք ճշմարտութեան , և այնպէս հաւատք մեր զոր ընդունիմք յաւանդութենէ , 'ի գրոց և 'ի հեղինակութենէ մարդկան , լինին բանաւոր և ճշմարիտ : Նա որոյ հաւատք բանաւոր են՝ ոչ միայն ընդունի զնա հաստատութեամբ և ոչ խօտորի անտի կամ ուրանայ զնա , այլ և յօրինեալ յարգարէ զվարս իւր ըստ ճշմարիտ բարոյականի հաւատոյ և տայ եւս զկեանս իւր և զամենայն ինչ վասն նորա , որպէս արարին վը

կայք, այն է մարտիրոսք յամենայն դարս : Ընդհակառակն՝ նոքա որոց հաւատք չեն բանաւոր՝ յողդողդ են ՚ի հաւատս իւրեանց, կեան ըստ զգայական ախորժանաց և ըստ աղդեցութեան անկարգ կրից, և են մանաւանդ մուկեցնեալ ինչ կենդանի, քան մարդ բանական. շարժին յամենայն հողմոյ խաբէութեան, ՚ի թեւադրութենէ մուլար մարդոց, յերկիւղէ և ՚ի շահուց, և փոխանակ տալոյ զամենայն ինչ վասն պահպանութեան հաւատոց՝ տան զհաւատս իւրեանց վասն ամենայնի, վասն այսորիկ Առաքեալ ասէ զճշմարիտ հաւատացելոց որոց հաւատք բանաւոր են, թէ Ոչինչ կարէ մեկնել զնոսա ՚ի հաւատոց իւրեանց, ոչ մահ, ոչ կեանք, ոչ հրեշտակք, ոչ մարդիկ, ոչ որ կանս և ոչ հանդերձեալքն : Զսորին հակառակն պարտ է իմանալ զայնցանէ՝ որոց հաւատք չեն զոտեալ և հաստատեալ բանական լուսով ուղիղ բանին կամ տրամաբանութեան, ուստի և չեն բանաւորք :



## ԳԼՈՒԽ ԺԵ.

Յազագոս պէս պէս բաժանմանց հաւատոյ եւ  
մեկնութիւն նոցա:

Աստ ունիմք խօսել զբաժանմանէ հաւա-  
տոյ. Պարտ է գիտել զի հաւատք ըստ բնու-  
թեան են մի և անբաժին. այլ բաժանին միայն  
ըստ առարկայից, որպէս յետ սակաւ միով  
տեսցուք. Զայստսիկ այլ և այլ բաժանմունս  
հաւատոյ արժան է քաջ գիտել և ընարել 'ի  
միմեանց, զի մի լիցի 'ի սխալանս անկանել.  
զի առ 'ի չգիտելոյ զպէսպէս ազգս հաւատոյ  
և զընտրութիւն նոցա բազումք հանապազօր  
բազում վնասս կրեն, ընդ որ արդարեւ ցաւ  
է մեզ:

Արդ՝ առարկայք կամ իրք որոց որ և իցէ  
օրինակաւ հաւատամք, կամ որ լինին մեզ հա-  
ւատալիք, են՝ կամ բնական, այսինքն՝ ֆիզի-  
զական, որպէս ամենայն իրք նիւթականք  
կամ մարմնաւորք որք անկանին ընդ զգայու-  
թեամբ. կամ՝ մտաւորք այսինքն աննիւթք  
որ մտօք և եթ ըմբռնին, և կամ՝ այնպիսի ինչ՝  
որ զգրութենէ կամ զսովորութենէ մարդկան  
կախեալ կան. ըստ այսց երից բաժանմանց ի-  
րաց կամ առարկայից, հաւատք եւս որ առ  
նոսա՝ առնուն զանուանումն. ուստի նախ՝

բնական կոչին հաւատք որ են զմարմնաւոր զՖիզիզական իրաց , երկրորդ վերացեալ կոչին հաւատք որ են զմտաւոր իրաց , երրորդ՝ քաղաքական կոչին հաւատք որ են զգրական իրաց :

Այս երեքին բաժանմունք հաւատոյ ունին դարձեալ զիւրեանց երկրորդական բաժանմունն : Բնական հաւատք բաժանին յերկուս՝ 'ի Զգայական , և 'ի Ստացական :

Վերացեալ հաւատք բաժանին յերկուս՝ 'ի Բարոյական , 'ի Բնադանցական և 'ի Կրօնական :

Քաղաքական հաւատք յերկուս՝ յԱհատական և 'ի Գրական կամ յիրաւաբանական : Այժմ արժան է մեզ ճառել զսոցունց մի ըստ միոջէ :

Առաջին բաժանումն հաւատոյ , որպէս ասացաք , բնականն է , և բաժանի 'ի Զգայական և 'ի Ստացական : Զգայական ասի , քանզի յառաջ գայ 'ի զգացմանէ կամ զգալով , այսպէս զգայական հաւատով զխտեմք , կամ զգալով հաւատամք եթէ հուր ջերմէ , և ջուր՝ ցուրտ և խոնաւ : Ստացական ասին այն բնական հաւատք որ յառաջ գան 'ի ծանօթութենէ գիտութեանց և արուեստից , և այս գիտութիւնք կամ արուեստք կոչին բնական գիտութիւնք և բնական արուեստք , որոց գլխաւորք են , Բնաբանութիւն , Բնալուծութիւն , Բժշկականութիւն , Հանքաբանութիւն ,

Տնկարանութիւն , կենդանարանութիւն , Ներկարարութիւն , Չափաբերութիւն և Աստեղագիտութիւն :

Բնարանութիւն է գիտութիւն որ քննէ զպատճառս բնական երեւութից , բնալուծութիւն զօրէնս բաղադրութեան բնական մարմնոց լուծանելով զնոսա ՚ի մասունս իւրեանց , Բժշկականութիւն որ ունի այլ և այլ օգնական գիտութիւնս՝ քննէ գլխաւորաբար զպատճառս հիւանդութեանց կենդանեաց մանաւանդ մարդոյ , և զհանդամանս դարմանելոյ զնոսա , Հանքարանութիւն է ուսումն ամենայն անգործարան մարմնոց , որպէս քարանց , մետաղաց , աղից և այլոց , Տնկարանութիւն է ուսումն տնկոց , և քննէ զկազմութիւն , զգործարանս և զբաժանումն թագաւորութեան բուսականաց , կենդանարանութիւն հանդերձ բնախօսութեամբ ուսուցանէ զգործարանս մարդոյ և այլ և այլ ազգաց շնչաւորաց , զպաշտօն իւրաքանչիւր գործարանաց և զպէս պէս բաժանմունս նոցա ըստ առանձինն յատկութեանց նոցա , Ներկարարութիւն է արուեստ պէս պէս գունոց և խառնուածոց նոցա , որպէս և ճշմարիտ և սուտ ներկոց , Չափաբերութիւն է գիտութիւն թուական և տարածական քանակութեանց , Աստեղագիտութիւն ճառէ զչարժմանց երկնային մարմնոց , և զպէս պէս փոփոխմանց նոցա :

Զգայական հաւատով, այն է գիտութեամբ  
 որ 'ի ձեռն զգացողութեան՝ 'ի վերայ հասա-  
 նեմք պէս պէս յատկութեանց և զօրութեանց  
 մարմնոց 'ի ձեռն փորձառութեան, և կարեմք  
 'ի կիր արկանել զնոսա յօգուտ և 'ի պէտս մեր  
 կամ խորշել 'ի նոցանէ: Ստացական հաւատով,  
 այն է՝ 'ի ձեռն ուսմանց և գիտութեանց զգա-  
 ցողական հաւատք մեր կատարելագոյն ևս լի-  
 նին. այնպէս զի՝ այն որ 'ի ձեռն զգայական  
 հաւատոյ թերի էր, և բազում անգամ անհնար  
 էր մեզ նովաւ պահել, դիւրացուցանել և եր-  
 ջանիկ գործել զկեանս մեր՝ 'ի ձեռն ստացա-  
 կան հաւատոյ ծառայէ մեզ առ բազում ինչ,  
 Բնաբանութիւն և Բնալուծութիւն ծառայէ  
 յարուեստս և 'ի ձեռնագիտութիւնս. բժշկա-  
 կանութիւն զառողջութիւն և զկեանս մեր պա-  
 հէ, և է զի ապրեցուցանէ ևս 'ի թշուառու-  
 թենէ և 'ի մահուանէ: Հանքաբանութիւն,  
 տնկաբանութիւն և կենդանաբանութիւն ծա-  
 նօթս գործէ զմեզ բնական մարմնոց եթէ գոր-  
 ծարանաւորաց և եթէ անգործարանաց, և  
 ծառայեցուցանէ զնոսա մեզ: Չափաբերու-  
 թիւն 'ի բազում ինչ օգտակար է մեզ, 'ի հա-  
 շիւս, 'ի վաճառականութեան, 'ի զինուորու-  
 թեան, 'ի ճարտարապետութեան և յայլ բա-  
 զում ինչ, Աստեղագիտութիւն տեղեկացուցա-  
 նէ զմեզ ազդեցութեան որ լինի յերկնային  
 մարմնոց առ միմեանս, և ոմանց նաև յերկիր

մեր յորում՝ բնակիւմք , բազում ինչ փոփոխմունք , որպէս բեղմնաւորութեան և անպրտղութեան , առատութեան և երաշտութեան , նուազութեան արեգական և լուսնոյ , երբեմն ևս հիւանդութեանց , եղանակաց , տարեաց , ամսոց և աւուրց , 'ի ձեռն աստեղագիտութեան ծանօթ լինին մեզ , Ամբաւ և անհամար են օգուտք և շահք որ լինին մեզ 'ի գիտութեանց ստացական հաւատոյ .

Գիտութիւնք որ են արդիւնք գիտողութեան և փորձոյ ուսուցանեն մեզ զհաստատուն օրէնս բնութեան , զմիակերպ և զմիօրինակ կարգս և զանխախուտ ընթացս իրաց , և այնպէս յանցելոց անտի հաւատամք ասպագային . որպէս Սողոմոն ասէ թէ Որ ինչ եղեալ է՝ նոյն է որ լինելոց է , Այս սկզբունք են խելամտութեան ըստ տրամաբանից որով 'ի փորձոյ և 'ի քննութենէ մասնաւոր իրաց հասանեմք կամ մակաբերեմք զընդհանուր օրէնս նոցա .

Վասն վերացեալ հաւատոյ ասացաք թէ բաժանի 'ի Բարոյական , 'ի Բնազանցական և 'ի կրօնական , Բարոյական հաւատք ծնանին 'ի մեզ 'ի ձեռն իմացական կարողութեանց , յորժամ 'ի ձեռն զգայութեանց և ըմբռնման ստանամք զգաղափարս իրաց , ճանաչեմք զնոսա և բազդատելով կշռեմք , յայնժամ ընդունիւմք , և հաւատամք եթէ այս ինչ գործք կամ խորհուրդք ծնանին բնականապէս զայս ինչ բա-

րոյական զգացումն և զյօժարութիւն որպէս 'ի  
 մեզ նոյնպէս յայլս . և այնպէս մակարեւեմք ե-  
 թէ զոր ինչ առնեմքն այլոց՝ զփոխարէն ազդե-  
 ցութիւն նոցա կրելոց եմք 'ի մեզ 'ի նոցանէ ,  
 որպէս այլք կրեն 'ի մէնջ զփոխարէն բնական  
 ազդեցութիւն գործոց նոցա որ 'ի մեզ , Զայս  
 փորձառութիւն իմացական օրինաց կոչեմք բա-  
 րոյական հաւատս , Այս բարոյական հաւատք  
 ուսուցանեն մեզ զբարին առնել միշտ առ նմա-  
 նիս մեր , եթէ կամիմք փոխարէն բարեաց հան-  
 դիպել 'ի նոցանէ , և զգուշանալ յառնելոյ նո-  
 ցա շարիս զի մի ըստ արժանւոյն կրիցեմք և  
 փաստիցիմք , եթէ ոչ աստ , ապաքէն 'ի հան-  
 դերձելումն յօրէնագրէն բնական օրինաց իմա-  
 ցականութեան որ է Աստուած , բնազանցա-  
 կան հաւատք ևս ծագին 'ի մեզ 'ի ձեռն բանի  
 և հանճարոյ . սովաւ ճանաչեմք զընդհանուր  
 ճշմարտութիւնս գոյութեանց , թուոց , քանա-  
 կութեանց , հանգիտութեան , նմանութեան  
 և այլոց բազմաց . այս ճշմարտութիւնք են իբ-  
 րեւ առածք կամ ինքնայայտ ճշմարտութիւնք ,  
 Այս բնազանցական հաւատոյ ազբիւր է ի-  
 մաստասիրութիւն կամ տրամաբանութիւն , և  
 որ ինչ սովին ճանապարհաւ ստացեալ ունիմք՝  
 է ճշմարիտ և անհակառակելի .

կրօնական հաւատք են գիտութիւն և ծա-  
 նօթութիւն այն ամենայն իրաց զորս 'ի յայտ-  
 նութենէ դրոց Սրբոց և 'ի վարդապետութենէ

ուղղափառ վարդապետաց ուսանիմք, Եղեն  
 և են բազումք որ, քանզի չեն կատարեալ և  
 զօրաւոր մտօք և դատողութեամբ, և կամին  
 դամենայն ինչ ըստ իւրեանց հատողութեան ի-  
 մանալ և դատել, մերժեն և ուրանան զճշմար-  
 տութիւն կրօնական հաւատոյ, Այլ այսպիսիք  
 են տխմարք, երբեմն ևս անձնասէրք և ար-  
 ծաթասէրք ոչ միայն յաշխարհականս, այլ և  
 յեկեղեցականս որք արծաթով են ընտրեալ  
 և ոչ յԱստուծոյ, ըստ բանի Մովսէսի խորենաց-  
 ւոյ որոյ վաղագոյն խկ ողբացեալ է վասն նոցա  
 'ի գիրս իւր, Նոքա որ չունին բաւական ի-  
 մաստութիւն և դատողութիւն կամ գիտու-  
 թիւնքանելոյ և դատելոյ զճշմարտութիւն որ  
 բովանդակեալ կան 'ի Սուրբ Գիրս և 'ի մա-  
 տեանս հարց սրբոց և Աստուածախօս վարդա-  
 պետաց, պարտին անսալ իմաստուն և բարե-  
 պաշտ առաջնորդաց և ուսուցչաց որ քաջա-  
 ծանօթ և վորձ են քան զիտաս, և այնպէս ըն-  
 դունել և հաւատալ, և կալ մնալ 'ի նոյն հա-  
 ւատս :

Վասն քաղաքական հաւատոյ ասացաք թէ  
 յերկուս բաժանի, յԱնհատական և 'ի Գրական  
 կամ յիրաւաբանական, Անհատական հաւատով  
 իմանամք զվստահութիւնն որով երկուք կամ  
 բազումք 'ի միջի իւրեանց հաստատեն դա-  
 շինս ինչ կամ ուխտ, եթէ 'ի ձեռն գրոյ կամ  
 մուրհակի և եթէ անգիր վոխագարձ պար-

տաւորութեամբ կապելով զանձինս 'ի կատարումն իրիք կամ 'ի խորշումն յիմեքէ : Այս հաւատք քանզի յառաջ դան 'ի վստահութենէ զոր ունին երկօքին կողմանք առ իրեարս , առանց իշխանութեան կամ դրական ինչ օրինաց հեղինակութեան՝ ունելով միայն զսկզբունս բնական արդարութեան և պատուոյ որ կախեալ կայ 'ի կատարմանէ խոստման տուելոյ . վասն այնորիկ կոչեցաք անհատական հաւատս . Դրական կամ իրաւաբանական հաւատք ունին հիմն 'ի դրական օրէնս եղեալս 'ի վերագոյն օրէնսդ իր իշխանութենէ , որպիսի են ամենայն պայմանք և ուխտք և դաշինք 'ի տուրեւառս , 'ի գինս , 'ի վաճառս և յայլ ևս պարտաւորութիւնս որ կատարին ըստ օրինաց ինչ կամ իրաւանց 'ի մէջ եթէ անհատից , եթէ ընկերութեանց և եթէ տէրութեանց :

Պարտ է դիտել նախ՝ զի վասն հաստատութեան կամ օրինաւորութեան և վստահելի լինելոյ այսր քաղաքական հաւատոյ՝ հարկ է զի իցեն պայմանագրութիւնքն համեմատ բնական օրինաց արդարութեան յանհատականին , և դրական կամ քաղաքական օրինաց տեղոյ , քաղաքի , աշխարհի և ընկերութեան , եթէ քաղաքային իցէ ընկերութիւնն , եթէ արուեստական , եթէ առեւտրական , եթէ ուսումնական և եթէ կրօնական , Զի եթէ պայմանագրութիւնն չիցէ ըստ սահմանաց կամ կանո-

նաց պահանջերոյ , և չիցէ կատարեալ ըստ աւարտութեան և հանդիսութեան որ օրինօք կամ սովորութեամբ սահմանեալ է առ այս , ոչ պայմանադրութիւնն լինի օրինաւոր , և ոչ հաւատք մեր որ առ այն կարէ լինել հաստատուն և վստահելի : Աստի զհետ գայ թէ պարտ է քաջ տեղեկանալ , ուսանել և դիտել զսկզբունս իրաւաբանութեան , զօրէնս և զսովորութիւնս , և ճանաչել զօրինաւոր իշխանութիւն երկրին կամ տեղոյն կամ ընկերութեան , յորում կամ ընդ որում ունիմք կուել ինչ գաշն կամ պայման , կամ գնել ուխտ կամ կնքեալ մուրհակ , կամ տալ և ընդունել ձեռնագիր :

Երկրորդ պարտ է դիտել զի մեք պէս պէս տեսակաց զորոյ ճառեցաք , տուաք ընդհանուր բանիւ զանուն հաւատոյ , կոչելով զամենեւին հաւատս : Այլ բազումք ՚ի սոցանէ ՚ի հատարակաց լեզուի ունին այլ և այլ անուանս : Զոր օրինակ զգայական հաւատոց ասի վորձառութիւն , ստացական հաւատոց՝ գիտութիւն , բարոյականին ասի խիղճ մտաց , բնազանցականին՝ գիտակցութիւն և բան , կրօնականին՝ բուն հաւատք , քաղաքականին՝ վստահութիւն :

Այսչափ ինչ շատ համարեալ վասն հաւատոյ , եկեացուք այժմ՝ ճառել զՅուսոյ :



## ԳԼՈՒԽ ԺԶ .

Յաղագս յուսոյ :

Յոյսն է զօրութիւնն հաւատոյ . Հանդարտեցուցանէ զմիտս և բերկրեցուցանէ զսիրտ . Դարձեալ՝ յոյսն է իբրև զլոյս արեգական , զի լուսաւորէ զմիտս բանաւորաց , և նովաւ տեսանեմք զոր միանգամ ընկալեալ եմք 'ի հաւատոյ . Եթէ հաւատք նման են գոյութեան արեգական , որպէս յառաջն ասացաւ , ապա և յոյս նման է զօրութեան նորին գոյութեան , կամ որ նոյն է՝ հաւատք գոյութիւնն են , և յոյս՝ զօրութիւնն . Եւ զորօրինակ անհնար է լինել լուսոյ առանց արեգական , նոյնպէս չէ հնար լինել յուսոյ առանց հաւատոյ 'ի բանաւորս . Աստի զհետ գայ թէ որ ոչն ունիցի զճշմարիտ և զուղիղ հաւատս՝ անմասն է 'ի հաստատունն յուսոյ . Եւ զի այս այսպէս է , ապա պարտ է մեզ որ բանաւորքս եմք՝ ջանալ ունել զճշմարիտն և զուղիղ հաւատս , զի ունիցիմք և յոյս , և յոյս մեր լիցի աներկեւան ըստ չափոյ հաւատոյ մերոյ .

## ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս ծագման յուսոյ թէ ուստի իցէ :

Ի ստանալ մերում զուղիղ և զճշմարիտ հաւատս 'ի ձեռն աստուածապարգեւ բնական լուսոյ և 'ի ձեռն գիտութեանց և արուեստից , անդէն և անդ ծագէ 'ի ներքս 'ի մեզ յոյս , և սկիզբն առնումք յուսալ : Այլ առանց ունելոյ զհաւատս մի ոք խարիցի և կարծիցէ ունել յոյս ճշմարիտ . քանզի զխարդ հնար իցէ ծագել յուսոյ որ լոյս է , մինչչեւ ծագեալ հաւատոյ որ է արեղակն :

## ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս թէ որպիսի պարտի լինել յուսոյ :

Բանական մարդոյ չէ արժան վարկաբարդի կամ վայրասպար առանց օրինաց և կանոնաց յուսալ : Օրէնք և կանոնք յուսալոյ այս են . Նախ՝ պարտ է յուսալ ըստ բնութեան իրաց , երկրորդ՝ ըստ գործոց , երրորդ ըստ չափոյ , չորրորդ ըստ անձանց , հինգերորդ ըստ տեղւոյն , վեցերորդ ըստ ժամանակի : Որ

ոք ընդ հակառակն սոցա ունիցի յոյս՝ խաբի  
 և մնասի . զորօրինակ՝ չէ մարթ 'ի ձիոյ ակ-  
 նունել այժ , կամ՝ յայժէ ձի . այլ 'ի ձիոյ ձի ,  
 և յայժէ այժ . սյս է յուսալ ըստ բնութեան ի-  
 րաց . չէ արժան յուսալ 'ի ստախօսէ ճշմար-  
 տութիւն , քանզի պարտ է յուսալ ըստ գործոց ,  
 և ճշմարիան ասել հակառակ է գործոց ստա-  
 խօսին . Որ յուսայն ունել արմու 'ի Պաղեստին  
 յուսայ ըստ տեղւոյն , այլ ոչ նա որ 'ի կարլին  
 զնոյն յուսայ . նոյնպէս յիմարութիւն է յուսալ  
 ջեր և տօթ 'ի Յունուարի , կամ ցուրտ և սա-  
 ռամանիս յամեանն Յուլիսի . քանզի , որպէս  
 ասացաք , պարտ է յուսալ ըստ ժամանակի .  
 Այսպէս պարտ է իմանալ և զայլոցն .

Գարձեալ 'ի վեր անդր բաժանեցաք զհա-  
 ւատս 'ի բնական , 'ի բարոյական և 'ի քաղա-  
 քական . Արդ քանզի ասացաւ թէ յոյս ծագէ  
 'ի հաւատոց , ապա չէ արժան կարծել թէ 'ի  
 բնական հաւատոց կարէ ծագել 'ի մեզ յոյս  
 բարոյական կամ քաղաքական , որպէս ոչ 'ի  
 բարոյականէն և 'ի քաղաքականէն բնական .  
 այլ 'ի բնական հաւատոց ծագի բնական յոյս ,  
 'ի բարոյականէն բարոյական և 'ի քաղաքակա-  
 նէն քաղաքական . Այսչափ շատ լիցի վասն  
 որպիսութեան յուսոյ . յայլու՛մ տեղւոջ խօսես-  
 ցուք ընդարձակագոյնս .



## ԳԼՈՒԽ ԺԹ .

Յազազս բաժանման յուսոյ :

Արովհետեւ ասացաւ թէ յոյս զհետ երթոյ  
ամենեւին և յամենայնի հաւատոյ , զի 'ի նմա  
նէ ծնանի և նովաւ կայ , ապա յայտ է թէ և  
բաժանումն նորա պարտի լինել ըստ հաւատոյ .  
ուստի և աւերորդ իմն է աստ երկայնաձիգ բա  
նիւք ջանալ բաժանել զյոյս : Որպէս գոն բնա  
կան հաւատք , գոյ նոյնպէս բնական յոյս . զոր  
օրինակ են հաւատք բարոյականք , է և յոյս  
բարոյական . և որպէս գոն հաւատք քաղա  
քականք , ըստ նմին օրինակի պարտի լինել և  
յոյս քաղաքական : Որպէս հաւատամքն , և  
առ որ հաւատամքն՝ նոյնպէս և առ այն յու  
սամք . չէ մարթ այլ ազգ հաւատալ և այլ ազգ  
յուսալ . ապա որոյ սեռի են հաւատք մեր ,  
նորին սեռի է և յոյս մեր :

## ԳԼՈՒԽ Ի .

Յազազս սիրոյ , և սահմանի նորա :

Բազումք 'ի բարոյագիտաց և 'ի գիտնոց  
բազում օրինակաւ ետուն սահման սիրոյ . քան

զի պէս պէս մտօք խմանան զսէրն , Մեք այլ ազգ ունիմք սահմանել զնա , աննման ամենեւին յայլոյն ամենեցունց , Արդ ըստ մեզ Սէրն է կապ կամ պսակ խմանալի որ զերկուս ինչ կամ բաղումն , զանհատս և զազգս միանգամայն կապէ կամ պսակէ ընդ միմեանս , Այս կապ կամ պսակ յօդի և կաղմի յերկից , այն է՝ ՚ի համակրութենէ , ՚ի բարոյական և ՚ի քաղաքական յարարելութենէ , Մարթի և այլ բաղում ինչ խառն լինել ընդ երեսին սոսա ՚ի կաղմութեան սիրոյ , այլ սոքա են գլխաւոր և էական կաղմիչք սիրոյ , այլքն ամենեքին իբրեւ հանգամանք սոցա մտանեն ՚ի ներքս : Այլ զայսմանէ տեսցուք ընդարձակագոյնս ՚ի բաժանման սիրոյ :

Բաղում տեսութեամբ մարթ է ըստ բնութեան և այլարանաբար նկատել զսէր : Նախ ըստ բնութեան նկատելով՝ սէրն է պատճառ ամենայն արարած գոյացութեանց , պատճառ խաղաղութեան նոցա , մանաւանդ բանաւորաց , դարձեալ պատճառ և կենաց , Քանզի ՚ի սիրոյ ծնանիմք , զսրօրինակ ՚ի յուսոյ տածիմք և հաւատով զարդանամք , զօրանամք և լինիմք երջանիկ :

Երկրորդ սէրն ըստ բնութեան է սկիզբն ամենայն օրինաց և պատուիրանաց Աստուծոյ :

Այլարանաբար՝ սէրն է իբրեւ զջերմութիւն արեգական , զի նովաւ յառաջ գան ա

մենայն բարիք, որպէս 'ի ջերմութենէ գան 'ի գոյութիւն և յարդիւնս ամենայն մարմինք բնականք, մետաղք, բոյսք և շնչաւորք: Սէրն է սպակ ամենայն առաքինութեան:

Ի վերջոյ՝ սէրն երկոտասաներորդ ներգործութիւն է բանական հոգւոյ: Քանզի յետ ինն կարողութեանց որ են՝ միտք որ 'ի ձեռն հինգ զգայութեանց լինի իմացումն, ըմբռնումն, գաղափար, հանճար որ է բաղդատութիւն, ճանաչել, ընտրել, գատել և կշռել՝ գան անձնիշխան կամք որով ընդունի հոգին, այսինքն՝ հաւատայ, յետ հաւատոյ յոյս, հուսկ ուրեմն սէր որ է երկոտասաներորդն 'ի ներգործութիւնս հոգւոյ:

---

## ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս ծագման սիրոյ:

Սէրն 'ի բնէ հեղեալ է յԱրարչէն յամենայն արարած գոյութիւնս և 'ի գոյացութիւնս: Մեք աստ 'ի բաց թողեալ զսէր ամենայն արարած գոյութեանց և գոյացութեանց, խօսեսցուք միայն զսիրոյ բանական մարդոյ:

Արդ՝ ինդիր մեր այն է թէ ուստի՞, ե՞րբ և ո՞րպէս ծագիցի սէր բանական մարդոյ: Մեք

բանաւորքս զգամք նախ 'ի ձեռն հնգից զգա-  
յարանաց , և նոյն արտաքին զգայարանք ազգ-  
առնենն ներքին զգայարանաց թէ հաճոյ իցէ  
արդեօք նոցա եթէ անհաճոյ զգացումն այն .  
ներքին զգայարանք ևս զնոյն ազգ առնեն  
ներքին գործարանաց , և ներքին գործարանք  
համեմատեն զգացումնն , այն է՝ դատեն և  
որոշեն զյարմարութիւն և զանյարմարութիւն  
յատկութեանց զգացմանն և ազգ առնեն ար-  
տաքին զգայարանաց , և հրամայեն նոցա մեր-  
ձենալ յառարկայն զգացման , եթէ իցէ հա-  
ճոյ զգացումնն , և հեռանալ 'ի նմանէ , եթէ  
իցէ անհաճոյ . այս է առասիկ սէրն և ատելու-  
թիւն . Ապա յայտ է թէ սէրն բանական մար-  
դոյ 'ի զգացմանէ ծագի 'ի մարդն . Քանզի զա-  
ռարկայն հաճոյական զգացման , եթէ իր իցէ ,  
եթէ յատկութիւն ինչ , սկսանի սիրել հոգին .

Այս է առաջին օրինակ ծագման սիրոյ 'ի  
ձեռն զգացման . Այլ սէր ոչ ծագի միայն 'ի  
զգացմանէ , այլ երբեմն ծագի և յիմացմանէ ,  
այսինքն՝ 'ի հաւատոց կամ 'ի գիտութենէ ի-  
րիք զոր յառաջագոյն իմացեալ և ընկալեալ է .  
Զորօրինակ 'ի պատմելոյ ոմանց ուսանիմք եթէ  
այս ինչ ոք իմաստուն է և առաքինի . և նոյն-  
ժամայն , առանց արտաքին զգայարանաց օգ-  
նութեան , 'ի գործոց իմաստութեան և ա-  
ռաքինութեան նորա հասու լեալ թէ է այն-  
պէս , սիրեմք զնա 'ի հարկէ . զի , որպէս ասի .

Ժառ 'ի ստղոյ իւրմէ ճանաչի , և գարձեալ  
ասի թէ նման զնման իւր սիրէ . կամ յորժամ  
'ի լրոյ արժանահաւատ մարդոց տեղեկանամք  
թէ յայս ինչ տեղոջ է խաղաղութիւն , հան-  
գիստ , երջանկութիւն և առողջութիւն , սկսա-  
նիմք սիրել զայն տեղի , զկլիմայնորա , զգիրս ,  
զբերս և զայլ ևս հանդամանս նորա . Յայտ է  
թէ յայսպիսի դէպս ծագի 'ի մեզ սէր ոչ 'ի  
զգայարանաց , այլ 'ի վկայութենէ առանց ճշ-  
մարտախօսաց .

Սէրն Աստուծոյ ևս ծագի 'ի մեզ յիմաց-  
մանէ . զի որպէս յայլում տեղոջ ասացաւ ,  
յուզիզ և 'ի ճշմարիտ յայտնութենէ ուսեալ  
թէ դոյ Աստուած , արարիչ մեր ամենեցուն  
և ամենայնի որ են , 'ի միտ առնումք թէ ար-  
ժան է սիրել զնա , պաշտել և երկիր պագա-  
նել նմա .

Իսկ ժամանակ ծագման սիրոյ յայնժամ է՝  
յորժամ զգայարանք մեր 'ի տղայական թմրու-  
թենէ զարթնուն . յետ զարթնլոյ զգայարանացն  
սկսանի ծագել 'ի մեր սէրն .

Այլ թէ որպէս կամ զիարդ ծագէ սէրն ,  
պարտ է գիտել զի որպէս ընդ ծագել արե-  
գական ծագէ ընդ նմա լոյսն և ջերմութիւն մի-  
անգամայն , նոյնպէս 'ի ծագել հաւատոյ ծա-  
գէ ընդ նմին յոյս և սէր . Դարձեալ ծագէ 'ի  
մեզ սէրն անդ՝ ուր գտանեմք զմեր նման ,  
կամ զայն ինչ որում ախորժանօք ցանկամք .

## ԳԼՈՒԽ ԻԲ.

Յազագոս որպիսութեանց ճշմարիտ սիրոյ .

Բազում և ազգի ազգի են որպիսութիւնք սիրոյ , յորոց իբրև 'ի ճշմարիտ նշանաց ընտրի և ճանաչի ճշմարիտ սէր . զգլխաւորսն միայն համառօտիւ արկցուք 'ի համար .

Նախ՝ նա որ սիրէ ճշմարտապէս՝ հանապազ գբարիս ցանկայ և խնդրէ վասն իւրոյ սիրելւոյն . երկրորդ՝ ընդ լաւութիւն և ընդ յաջողութիւն նորա խնդաց . երրորդ՝ միշտ պատրաստ է օգնել նմա . չորրորդ՝ հանապազ գովէ զնա . հինգերորդ՝ հաւատայ նմա . վեցերորդ՝ զպատուիրանս նորա անթերի պահէ . եօթներորդ՝ խոնարհի նմա և միշտ 'ի հնազանդութեան կայ . ութերորդ՝ ծառայէ նմա . իններորդ՝ միշտ համարձակ է առ նմա . տասներորդ՝ ոչ կամի երբէք զի վրիպեսցի նա յաչաց իւրոյ . մետասաներորդ՝ ցանկայ և ջանայ ևս զի և այլք սիրեսցեն զնա . երկուտասաներորդ՝ սէր նորա որ ճշմարտիւ սիրէ , առաւելու մանաւանդ քան թէ նուազէ 'ի ժամանակի ձախողութեան սիրելւոյն , զորօրինակ 'ի հիւանդութեան նորա .

Այլ վասն որպիսութեան ճշմարիտ սիրոյ ունիւմք բազում ինչ ասել 'ի յաջորդ գլուխ գրոց ուր զբաժանմանէ սիրոյ լիցին բանք .

## ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս բաժանման սիրոյ , և զգուշութիւնք :

Սէրն ևս բաժանի այնպէս՝ որպէս 'ի վերանդր բաժանեցաք զհաւատս , այն է՝ 1. 'ի բնական , 2. 'ի բնականապէս բարոյական և 3. 'ի քաղաքական : Զերկոյ բաժանմանց աստի սիրոյ խօսեսցուք մի ըստ միովէ :

Բնական սէր այն է որ 'ի բնական պատճառաց յառաջ գայ , որպէս՝ յազգակցութենէ , 'ի քաղաքակցութենէ և յայլոց նոյնպիսեաց , որպէս յետոյ տեսցուք :

Բնականս այս սէր դարձեալ բաժանի յերկուս , 'ի փոխադարձ և յոչ փոխադարձ :

Բնական փոխադարձ սէր այն է յորժամ երկու ոք 'ի բնական ինչ համակրութենէ , առանց գիտելոյ իսկ զպատճառս , մղեալ 'ի բնական ինչ յօժարութենէ , սիրեն զմիմեանս , առնեն զհաճոյս և զախորժականս միմեանց :

Ոչ փոխադարձ սէր այն է յորժամ մին սիրէ զմիւսն և ոչ սիրի 'ի նմանէ :

Եւ զի բնականն սէր , եթէ փոխադարձն և եթէ ոչ փոխադարձ , որոչի 'ի խառնուածոց , և 'ի կազմութենէ ջլաց և յայլոց հանգամանաց կազմուածոյ մարմնոյ , և զի ոչ մի խառնուած և կազմութիւն է յամենեւին , այլ յո-

մանա ազգոյ և զօրաւոր, յայլս թոյլ և տկար, վասն որոյ և բնականն սէր չէ յամենեւսին զմի օրինակ, այլ է զի սաստկագոյն է և է զի թեթեւագոյն, ըստ հանգամանաց իւրաքանչիւր անհատի:

Բաց 'ի խառնուածոց, բնականն սէր յառաջ գայ յայլոց ևս բնական, ընկերական և բարոյական պատճառաց, որոց գլխաւորքն են չորեքին սոքա. Արենակցութիւն, Ազգակցութիւն, Վաղաքակցութիւն և Համակրութիւն. Զսոցունց մի ըստ միոջէ խօսեսցուք:

Սէրն արենակցութեան բնական իմն է. այսպէս նախ և 'ի վեր քան զամենեւսին սիրեն հարք և մարք զորդեակս իւրեանց. ապա որդիք հարազատք զծնողն, և եղբարք հարազատք զմիմեանս: Եթէ պատճառաւ իւրի ոչ սիրիցեն բովանդակ, գէթ սիրեն ըստ մասին, զի են արենակիցք, և 'ի միոջէ սկզբանէ առնուն զժագումն և զծնունդ. ուստի և հարկաւ գտանի ինչ 'ի նոսա համեմատութիւն ինչ կամ յարմարութիւն և նմանութիւն, ապա և սիրեն իսկ զմիմեանս փոքր 'ի շատէ, զի նմանն սիրէ զնման իւր: Եւ թէպէտ սովորաբար 'ի մէջ արենակցաց լինի սէր փոխադարձ, բազում անգամ գտանի և սէր անփոխադարձ, նա մանաւանդ բազում անգամ ատելութիւն ևս և թշնամութիւն, կազ և կռիւ: Ապա պարտ է քննել թէ զինչ իցեն պատճառք այնպիսի թե-

բակատար սիրոյ կամ պակասութեան սիրոյ 'ի մէջ արենակցաց և հարազատաց . Այս պատճառք բազում են . այլ սովորական պատճառք են կիրք և մտլութիւնք , որոյէս՝ ազահոթիւն , նախանձ , ընդ ձիր մարմնոյ կամ հոգւոյ կամ բախտի յորս տեսանեն վայելեալ զարենակիցս իւրեանց և զընքեանս զրկեալս . Երբեմն եւ ցանկութիւն վառաշոտութեան լինի պատճառք , 'ի պատճառս տարվածուաց և այլոց այսպիսեաց . Վասն որոյ պարտ է զոյն լինել և հսկելով շտալ թոյլ սպրդելոյ այնպիսի ախտից 'ի սիրտս արենակցաց , և տալ պատճառս ճարակելոյ նոցա . և եթէ սպրդիցին , ջանալ բուժել զնոսա . Միւս ևս պատճառ պակասութեան փոխադարձ սիրոյ 'ի մէջ արենակցաց՝ ակամայ կամ բռնի հարսնախօսութիւնք և ամուսնութիւնք են , յորոց ծնանի ատելութիւն , և յատելութենէ անտի ծնանին կռիւք և թշնամութիւնք :

Սէրն ազգակցութեան ոչինչ ընդհատ զօրաւոր է քան զսէրն արենակցութեան . Երկուարք համազգիք , զորօրինակ Հոյ ազգաւ , յորժամ պատահիցեն միմեանց , և դիտիցեն թէ համազգիք են , իսկոյն խառնի սէր և բարեկամութիւն 'ի մէջ երկոցունց . Այս սիրոյ բնական պատճառն է կիմայն կամ երկիրն , որ զխառնուածս բազմաց միօրինակս գործէ . իսկ բարոյական պատճառն է նոյնութիւն լեզ-

ուին , բարոյից , սովորութեանց , և զաղափարաց , Նոյնութիւն զաղափարաց , յառաջ զայ երբեմն 'ի կրթութենէ և յազգային սովորութենէ և 'ի ծխից , երբեմն ևս 'ի թելադրութենէ , այսինքն՝ 'ի համազելոյ այլոց թէ պարտ է սիրել զհամազգիս թէև 'ի հեռաւոր տեղիս իցեն . և այս թելադրութիւն և յորդոր յազգասիրութիւն սպարտ իմն է ամենայն մարդոյ , յօգուտ մարդկային ընկերութեան :

Մէրն քաղաքակցութեան կամ տեղակցութեան չէ ինչ այլազգ 'ի սիրոյ ազգակցութեան . զի և սա եւս յառաջ զայ 'ի կլիմայէ , 'ի լինելոյ վարժեալ և սովորեալ 'ի նոյն օրինակ կելոյ և վարելոյ : Միայն քաղաքակցութիւնն տայ սիրել ոչ միայն զայնտսիկ որ 'ի նմին լեզուէ և յարենէ կամ 'ի ցեղէ են , որպէս հայ զհայ սրէ , և յոյն զոյն , այլև զարս այլազգիս որ 'ի նմին քաղաքի կամ 'ի գեղջ ծնեալ և սնեալ , կամ զսնեա ժամանակս բազումս բնակեալ իցեն , զի հանապազօրեայ տեսութիւնն և կենակցութիւն ազգէ սէր 'ի կենակիցս :

Մէրն համակրութեան այն է զոր զգայ ոք 'ի բնական ազգմանէ , որով բերի առ այս ոք կամ առ այս ինչ , և թէպէտ ունի պատճառս , որպէս զհանգամանս ինչ սիրեցելոյն կամ զօգուտ և զհաճութիւն սիրողին , սակայն պատճառն այնպէս իմն զաղտնի և անզգալի է , մինչև թուել թէ 'ի հարկէ ինչ և ստիպմամբ սի .

րէ . Այս ազգ սիրոյ գտանի և յանասունս , վասն որոյ ասացաք թէ համակրութիւնն ազգինչ է բնական ազգման :

Հակակրութիւնն որ հակառակն է համակրութեան , ունի զնոյն բնութիւն և զնոյն պատճառս զորս զհամակրութենէ ասացաք . Պարտ է գիտել զի եթէ համակրութիւն և եթէ հակակրութիւն ներգործական են մանաւանդ քան կրաւորական , այսինքն՝ սովորաբար չեն փոխադարձ , թէպէտև ունին առարկայ կրաւորական առ որ բերին . երկրորդ պարտ է գիտել զի համակիրն կամ հակակիր առաւել կրէ քան զայն որ է առարկայ համակրութեան կամ հակակրութեան . Արդարև համակիրն , որպէս ստուգարանութիւնն իսկ յայտ առնէ , կրէ զայն զոր կրէ սիրելին իւր . վշտանայ ՚ի վշտանալ նորա , և խնդայ ՚ի խնդալ նորա . թշուառ է ՚ի թշուառութեան նորա , և երջանիկ յերջանկութեան նորա . սակայն բազում անգամ համակիրն վշտանայ և տառապի և հոգայ վասն սիրելոյն երկիւղիւ ապագայ ինչ կամ հնարաւոր չարեաց նորա . ուստի մինչ նա անտարբեր է վասն իւր , սա (համակիրն) միշտ և հանապազ նովաւ զբազի :

Բայց բազում անգամ պատահէ եւս զի համակրութիւնն լինի փոխադարձ յերկուց կողմանց . նա մանաւանդ համակրութիւնն ծնանի երբեմն ՚ի յայտներոյ յերկուս անձինս միօրինակ զգացմանց :

Համակրութիւնն , եթէ իցէ անչափ կամ անցեալ ըստ չափ և կուրօրէն , մոլութիւն է և յիմարութիւն , և սովորաբար , որպէս ասացաք բնական զգացումն . այլ եթէ իցէ բանաւոր և բարոյական , կոչի բարոյական սէր , և լինի առաքինութիւն , զորմէ այժմ խօսելոց եմք .

Ի բնական Համակրութեան , կամ 'ի Համակրութեան որ բնական զգացումն և եթէ , պատճառք բերմանն կամ յօժարութեան՝ խառնուածք գործարանաց են , և սատուութիւն կամ նուազութիւն Համակրութեանն կախեալ կայ զորպիսութենէ և դքանակութենէ չափոյ հիւթոց խառնուածոյն . Ի փոխադարձ Համակրութեան՝ Համակիրքն միշտ ունին նմանութիւն ինչ կամ Հանգիտութիւն 'ի կերպարանս , կամ 'ի կարծիս կամ 'ի բարոյս , այլովքն Հանդերձ . վասնորոյ մարթ է ասել թէ ամենայն պատճառք սիրոյ զորոց վերադոյն ասացաք , որպէս՝ արենակցութիւն , ազգակցութիւն և քաղաքակցութիւն , բովանդակին 'ի Համակրութեան , և են ազգ ինչ կամ տեսակ նորա , և մարդ է զամենեսին զնոսա կոչել Համակրութիւնս .

Երկրորդ բաժանումն սիրոյ է՝ 'ի բնականապէս բարոյական . և այս է բուն սէր և սեպհական բանաւոր արարածոց , և որ ունի զայս սէր է ճշմարտապէս առաքինի և սատուածահաճոյ , և սքանչելի 'ի մէջ մարդկան , և դողցես դիւցազն .

Յնականապէս բարոյական սէրն գարծեալ  
բաժանի յերկա , 1. 'ի բանաւոր , 2. 'ի գերբ-  
նական և 3. 'ի կրօնական :

Բանաւոր սէրն յառաջ գաց 'ի ճանաչմանէ  
և յընտրութենէ . յորժամ ոք գիտելով և զմը-  
տաւ ածելով թէ ամենայն մարդ է իւր նման  
բանաւոր , 'ի վերայ ածէ թէ ապա պարտ է սի-  
րել զնա , կամել նմա բարիս , և ոչ իւրիք մնաս  
կամ չարիս կամ վիշտս հասուցանել նմա , Ուստի  
և է իմաստասիրական այս սէր , և ամենայն ոք  
կարող է իւրով իսկ հանճարով գտանել զսկզբ-  
բունս նորա , որ է հաւասարութիւն և նոյնու-  
թիւն ամենայն մարդկան , առանց խտրութեան  
ցեղից , ազգաց և կրօնից :

Յորժամ և Աստուածային պատուէրն յա-  
ւելու 'ի վերայ այսր բանաւոր սիրոյ , այսինքն՝  
յետ գտանելոյ մարդոյ իւրով բնական հանճա-  
րով թէ պարտ է սիրել զամենայն մարդ առ-  
հասարակ և առանց խտրութեան զի են նոքա  
իւր նմանիք , իբրեւ տեղեկանայ եւս յԱստ-  
ուածային յայտնութենէ , այն է՝ 'ի գրոց սրբոց  
ուր Աստուած ինքնին պատուիրէ սիրել զըն-  
կերն իբրեւ զանձն իւր , սէր նորա որ առ ըն-  
կերն լինի գերբնական , զի փոխին սկզբունք  
նորա և ազնուանան , զի սէրն Աստուծոյ և հնա-  
զանդութիւն որ առ նա լինի սկիզբն սիրոյ ըն-  
կերին քանզի այնու հետեւ սկսանի սիրել զմար-  
դիկ ոչ լոկ իբրեւ զնմանիս իւր , այլ զի են նո-

քա գործք ձեռաց և իմաստութեան Ամենակալին , և զի կամք և պատուէր նորա է սիրել մեզ զմիմեանս , որպէս նա սիրեաց զմեզ այնպէս՝ մինչեւ տալ զկրօն իւր միածին և առնել զամենայն մարդ անխտիր յարմարս 'ի ժառանգութիւն իւրոց անեղծն և յաւիտենական փառաց , եթէ կամիցին հաւատալ նմա և յայտնութեան նորա , և առնել զպատուիրանս նորա որ են կամք նորա . քանզի այսու լինին ճշմարիտ աստուածապաշտք , այն է ճշմարիտ Քրիստոնեայք :

Յետ սիրելոյ զընկերն սովին գերբնական սիրով , իբրեւ սիրեմք ևս զնա , տեսեալ զի է ճշմարիտ և ուղղափառ քրիստոնեայ , կրօնակից , և հաւատակից մեզ , սէրն այն լինի միանգամայն կրօնական , ի մէջ բազում պատճառաց վասն սրոց պարտիմք սիրել զկրօնակիցս մեր , զլիաւորն այն է՝ զի միով դաւանութեամբ լինիմք անդամք միոյ հոգեւոր և աստուածահաստատ ընկերութեան , այն է՝ միոյ սրբոյ եկեղեցւոյ , յորում կամ որոյ միջնորդութեամբ ստանամք մի գլուխ և առաջնորդ , փրկիչ և դատաւոր զՅիսուս Քրիստոս , որ է զօրութիւն և իմաստութիւն անեղին աստուծոյ , կնքիմք 'ի մի մկրտութիւն յանուն նորա և Հօր և Հոգւոյն , վայելեմք 'ի միջէ սեղանոյ որ է կենարար խորհուրդն մարմնոյ և արեան նորա , և ընդունիմք յանուն նորա զնոյն թողութիւն մե-

զաց միով ապաշխարութեամբ, և զի հան-  
դերձեալ եմք լինել, յետ աստեացս դարձեալ  
անդամակիցք վերնոյն Սիոնի որ է եկեղեցին  
փառաւորեալ:

Երրորդ բաժանումն սիրոյ է սէրն քաղա-  
քական, որով սիրէ ոք զայլս վասն արտաքին  
ինչ և բնական ձրից, ուստի յառաջ գայ յար-  
տաքին պատճառաց յորոյ կէսք ստացականք  
են և կէսք բնականք այլ մարմնաւորք:

Ստացական ձիրք են՝ իշխանութիւն և մե-  
ծութիւն ընչից:

Բնական ձիրք մարմնոյ են՝ խմստութիւն,  
քաջութիւն, գեղեցկութիւն և ուժեղութիւն,  
վասն այսպիսի ձրից ծնանի բազում անգամ հա-  
մակրութիւն և սէր: Սակայն պարտ է գիտել  
զի որ վասն այսպիսի արտաքին ստացական և  
մարմնաւոր ձրից սիրեն զմարդիկ, ոչ են ճշ-  
մարիտ սիրողք, այլ սիրեն առ շողքորթու-  
թեան և պաշտօն առնելոյ վասն ՚ի պատճառս  
չահու և ՚ի պէտս իւրեանց: Ուստի և այնպի-  
սի սէր ոչ է բարոյական և գերբնական, ոչ է  
սէր մշտատեւ և հաստատուն, այլ յողդողդ և  
վազանցիկ, զի որ այսպէսն սիրեն՝ են ըստ-  
րուկք, խարդախք և ագահք: Սարուկք և  
ծառայք սիրեն զմեզ յորժամ ՚ի պատուի և  
յիշխանութեան եմք, խարդախք և յանցաւորք  
սիրեն զմեզ, յորժամ եմք ՚ի դատաւորական  
իշխանութեան: Իսկ ագահք կամ աղքատք սի-

քեն զմեզ յորժամ եմք 'ի մեծութեան և յքն-  
չաւետութեան , իսկ իբրեւ զրկիցիմք յայնպի-  
սի ձրից և կորուսանիցեմք , անդէն խոյս տան  
ամենեքին 'ի մէնջ և դարձուցանեն զերեսս ,  
զի սէր նոցա առ երեսս էր և առ անձնասի-  
րութեան և շահասիրութեան , և չէր առաքի-  
նութիւն , նա մանաւանդ կեղծաւորութիւն և  
խարէութիւն :

Վասն իմաստութեան մերոյ սիրեն զմեզ  
ուսումնասէրք և բարեբարոյք , բայց երբեմն  
և տղէտք և նորախարժք : Վասն քաջութեան  
մերոյ և արութեան սիրեն զմեզ երկչոտք և  
վհճերոտք , Վասն գեղեցկութեան՝ սիրեն զմեզ  
հեշտասէրք : Վասն ուժեղութեան՝ սիրեն զմեզ  
սկարք և ծերք :

Նոքա որ վասն այսպիսի իրաց սիրին՝ յի-  
մարք են և կոյրք և փառասէրք , եթէ հաւա-  
տան նոցա և խնդան և պարծին իբրեւ թէ սի-  
րիցին 'ի մարդկանէ , նա մանաւանդ և վնա-  
սին եւս . զի ոչ վասն նոցա և յօգուտ նոցա  
սիրեն զնոսա մարդիկ , այլ յօգուտ և 'ի շահ  
անձանց իւրեանց : Եւ յորժամ կատարեն զգի-  
տաւորութիւն իւրեանց և յազեցուցանեն ըզ-  
ցանկութիւն , կամ եթէ 'ի թերեւ ելցէ ակնկա-  
լութիւն շահու նոցա , իսկոյն 'ի բաց կան : Բա-  
զումք յայսպիսի սիրողաց անօրէն եւս են . զի  
վախճան և նոպատակ նոցա է խարել և վնասել .  
է զի և թշնամի և ս լինին և փորեն գաղտ խոր-

խորատ և դործեն գաւ զի կործանեացեն զմեզ , կամ՝ վասն զի ինքեանք շահեացեն փնասուք մերովք , և կամ՝ զի նախանձին , և առ նախանձու և շարակնութեան կամին բառնալ զմեզ 'ի միջոյ , Զայս գիտացեալ՝ պարտ է զգոյշ լինել 'ի նոցանէ որ ոչ վասն այլոյ իրիք սիրիցեն զմեզ եթէ ոչ վասն ստացական և բնական ձրից , մանաւանդ վասն ընչեղութեան և գեղեցկութեան մերոյ . Պարտ է երկնչել և զգուշանալ յայնցանէ որ ոչ ունին ճշմարիտ և կատարեալ առաքինութիւն . կատարելութիւն մարդոյ այն է ոչ խաբել զքք և ոչ խարիլ յումքէ , եւ զի մի խաբեացուք յայլոց 'ի սիրել նոցա զմեզ , կարծելով զսէր նոցա ճշմարիտ և անկեղծաւոր , մինչդեռ սուտ իցէ և կեղծաւորեալ , պարտ է զպատճառս , զչարժառիժս , զնպատակ , զհանգամանս սիրոյ նոցա քննել , կշռել և խմանալ քաջ , տեսանելով թէ որպիսի իցէ սէրն և յոր կարգ յերից բաժանմանց անտի զորոց ճառեցաք՝ գասել պարտ իցէ : Եթէ իցէ՞ բնական , կամ բարոյական , գերբնական կամ կրօնական , և խաղաքաղաքական , այն է՝ արտաքին և վասն շահունչ և առ շողոքորթութեան կամ 'ի փնաս մեզ :

Ամենայն սէր բնական որ ոչ իցէ փոխադարձ՝ կոյր է , յորժամ նա որ սիրէ՝ ոչ սիրիցի յայնմանէ զոր սիրէ , և ոչ բարւոք առնէ սիրելով զայն որ ցուրտ և անտարբեր է առ նա . Այս սէր յիմարութիւն միայն է , և յետին ան-

մտութիւն, այլ ոչ անօրէնութիւն, իսկ սէրն քաղաքական որ վասն շահու է կամ առ ՚ի վընասելոյ կեղծաւորութեամբ՝ անօրէնութիւն եւս է։ Միայն սէրն բնականապէս բարոյական, գերբնական և կրօնական, է սէր ճշարիտ, բանաւոր և աստուածահաճոյ եւս, քանզի առաքինական է։ Աւելորդ է մեզ յառաջ բերել մի ըստ միոջէ զվլասն և զվտանգս որ ծնան ՚ի յուր և ՚ի կեղծաւորեալ սիրոյ, շատ լիցի յիշել զսէրն Ամենայ առ թամար, և ծերոցն առ Շուշան ՚ի պատմութեան Դանիելի։

Ի վերջոյ, կատարեսցուք զայս գլուխ յաւելլով թէ պարտ է մեզ ունել սէր ՚ի ճշմարիտ և յուզիղ հաւատոց, առնել զնա և կրել զի սէր մեր լիցի կատարեալ, շահաւէտ և հաճոյ Աստուծոյ և մարդկան։ Սէր՝ որ չէ յուզիղ և ՚ի ճշմարիտ հաւատոց, մոլի է և չարահնար, լինի պատճառք բազմագիմի չարեաց, որպէս նախանձու, բարկութեան, ատելութեան, գողութեան, նա և սպանութեան իսկ գլխովին։



## ԳԼՈՒԽ ԻԳ.

Համառօտ բովանդակութիւն նախընթաց գլխոց  
որ զհաւատոյ, զյուսոյ և զսիրոյ :

Մինչեւ ցայս վայր խօսեցաք զհաւատոյ,  
զյուսոյ և զսիրոյ. ցուցաք համառօտիւ յուրոյն  
ուրոյն գլուխս թէ զինչ իցեն առաքինութիւնքս  
որ են հիմունք յորոց վերայ հաստատեալ կայ  
խմացական շինուած մարդոյ. և են իբրեւ կէտ  
շարժման ամենայն մտաւոր, բարոյական և ըն-  
կերական գործողութեանց նորա. խօսեցաք և  
զժաղմանէ նոցա թէ ուստի կամ յորոց սկզբանց  
գայցեն յառաջ, զորպիսութենէ նոցա և հուսկ  
յետոյ զբաժանմանէ, այն է՝ զպէս պէս ազ-  
գաց նոցա. Եւ զի օգտակարագոյն լիցին յա-  
ռաջագոյն ճառեալքն, կամիմք աստ յայսմ  
գլխի զհամառօտ բովանդակութիւննոցա դնել,  
զի լիցի իբրեւ վերջաբան յորում ընթերցողք  
տեսցեն կարճառօտ և ամիտի, զոր ինչ մանր  
և երկարապատում տեսանելով թերեւս ոչ  
յստակ ինչ միտս և ծանօթութիւն ստացան  
զնոցունց :

Արդ ՀԱՅԱՍՏՔ են ճշմարիտ ծանօթութիւն  
զոր ունի մարդ զթանձրացեալ և զվերացեալ  
իրաց, կամ՝ այլով բանիւք ասասցուք՝ զնիւ-  
թական և զիմանալի իրաց. Զծանօթութիւնս  
զայս ստանայ մարդ խմացական գործեօք որ

են կարողութիւնք բանական հողւոյ, զորս մեք  
ինն հաշուեցաք թուով, այսինքն՝ զգացողու-  
թիւն, իմացումն, բնութեանն, գաղափար,  
հանճար, ճանաչումն, ընտրութիւն, գատումն  
և կշռումն. տես դլուխ Ա. ճշդութիւն և ուղ-  
ղութիւն գործեացս այսոցիկ յորոց ձեռն ստա-  
նայ մարդ զայն ծանօթութիւն զոր մեք հա-  
ւատս կոչեցաք՝ կախեալ կայ զտրամաբանու-  
թենէ որ այնչափ կատարեալ լինի որչափ այլք  
ևս 'ի գիտութեանց, յուսմանց և յարուեստից  
լինին նմա նպաստ և օգնական, կամիմք ասել  
թէ հաւատք, կամ տեսական և գործնական  
ծանօթութիւն մարդոյ զբնութենէ զէութենէ  
և զարդեանց իրաց, այնչափ առաւել կատար-  
եալ է 'ի մարդն, որչափ աւելի է դրական գի-  
տութիւն նորա 'ի ձեռն ուղիղ տրամաբանու-  
թեան.

Յետ այսպէս սահմանելոյ զհաւատս, ինք-  
նին յայտնի լինի եթէ որ միանգամ այնպիսի  
գործեօք որ են կարողութիւնք հողւոյ, եւ  
այնպիսի կանոնօք և կշռովք որ է գիտանա-  
կանն տրամաբանութիւն, ստանայ զհաւատս,  
այն է զծանօթութիւն եթէ տեսական և եթէ  
գործնական զիրաց, ապահովագոյն է 'ի դժըն-  
դակագունէն և 'ի վնասակարագունէն քան  
զամենայն թշնամիս մարդոյ, որ է տգիտու-  
թիւն. և կարէ լինել վստահ եթէ հաւատք  
իւր կամ ծանօթութիւնք զիրաց, եթէ զգեր-

բնականաց 'ի ձեռն յայտնութեան , եթէ ըզ  
բնականաց 'ի ձեռն զգայութեանց , եթէ ըզ  
մտաւորականաց կամ զբնազանցականաց 'ի ձեռն  
ներքին զգայութեան կամ իմացականութեան ,  
և վերջապէս՝ եթէ զպատմականաց 'ի ձեռն  
վկայութեանց մարդկան , ազատ են 'ի մոլորու  
թենէ և 'ի ստութենէ , որչափ մարթ է լինել  
ապահովութիւն 'ի մարմնաւոր կացութեան աստ  
բանական հողոյ :

Ամենայն սուտ հաւատք , որպէս հեթա  
նոսացն և ամենայն մոլոր ազանդոց , որպէս և  
ամենայն սխալ ծանօթութիւնք մարդկան եթէ  
բնականք , եթէ բարոյականք , եթէ իմացա  
կանք և եթէ պատմականք , վասն այնոցիկ են  
սուտք և մոլորականք , զի չեն ըստ գիտնական  
սկզբանց տրամաբանութեան , որ է փորձա  
քար որ ընտրէ զճշմարիտ ոսկին 'ի ստոյ , և է  
իրբեւ զժանտաջուր որ զտէ զմաքուրն և զբուն  
'ի կղկղանաց :

Ամենայն մոլորութիւն և ստութիւն որ սը  
պրրդեալ է 'ի ճշմարիտ հաւատոս քրիստոնէ  
ութեան՝ 'ի տգիտութենէ և 'ի չարութենէ ,  
'ի կրից և 'ի զգայական ախորժակաց անձնա  
սէր , արծաթասէր և հեշտասէր մարդոց և 'ի  
փառասէր կղերականաց գտեալ են մուտ :

ՅՈՅՍ ոչ այլ ինչ է բայց հաստատուն ակն  
կալութիւն զօրութեան կամ արդեանց ճշմար  
տութեանն զոր ստոյգ և ուղիղ հաւատով ընկալ

եալ եմք, Աստի, յայտ է թէ յոյն յայնժամ ճշմարիտ է, յորժամ է 'ի ճշմարիտ և 'ի կատարեալ հաւատոց, Յոյս՝ որ է 'ի մելար հաւատոց՝ խաբեբայ է և վրիպական. և ած է 'ի յուսահատութիւն, յորժամ յանդիմանեալ խայտառակեցի ստութիւն հաւատոցն:

Պատճառք տալոյ զանձն 'ի մելութիւնս և յանկարգ կիրս, նաև անձնասպանութեան՝ է յոյն մելար որ հիմնեալ է 'ի մելար հաւատս, Այսպէս, զորօրինակ ճշմարիտ և կատարեալ հաւատք ծնանելով զյոյս հաստատուն 'ի սրտի տան վայելել 'ի վստահութեան անվրէպ ակնկալութեամբ առ յաւիտենական անեղծութիւնն 'ի հանդերձելումն, և 'ի խաղաղ և յանդորր երջանկութիւն յաստիս, նոյնպէս սուտն և մելար հաւատք տալով միայն յողորմ ինչ և վրիպելի յոյս, լինին պատճառք յուսահատութեան և յետին թշուառութեան և աստ և անդ: Ապա որչափ արժան է մեզ խնամով փոյթ յանձին ունել և արթնութեամբ և զգուշութեամբ հսկել զի հաւատք մեր լիցին ճշմարիտ, ուղիղ և կատարեալ, որպէս զի և յոյն լիցի ըստ այնմ՝ աներկեւան, զի երկրքին կեանք մեր, աստէնն և հանդերձեալն, իցեն հաստատեալք 'ի վերայ անշարժ խաբսխի:

Սէրն է պսակ հաւատոյ և յուսոյ. զի յուսամք առ որ հաւատամքն, և առ որ յուսամքն սիրեմք զնա: Սէրն որ է 'ի ճշմարիտ հաւատոյ

և յուսոյ՝ ոչ խարի և ոչ փոփոխի , այլ սէր՝ որ  
 'ի մոլար հաւատոց և 'ի յողզողզ յուսոյ ծնա-  
 նի , դիւրաւ եղծանի և փոխի 'ի վերջոյ յատե-  
 լութիւն . Եւ զի մոլար և ստայօղ հաւատք և  
 յոյս յողզողզ 'ի տգիտութենէ են , և տգի-  
 տութիւն մայր է մոլութեան , անօրէնութեան ,  
 ամենայն ազգ կրից և զգայական ախորժա-  
 կաց , ցանկութեան , անձնասիրութեան , ամ-  
 բարտաւանութեան , ազահութեան , այլովքն  
 հանդերձ , ապա ամենայն սէր որ չէ յուզիղ և  
 'ի ճշմարիտ հաւատոց և յաներկեւան յու-  
 սոյ , ունելով զժագումն և զսերմն իւր 'ի տգի-  
 տութեան՝ մոլի է և մոլեկան , անասնական և  
 անվայել բանաւոր մարդոյ , Ուստի և չէ ճշմա-  
 րիտ սէր , այլ անձնասիրութիւն , անօրէնու-  
 թիւն և մոլութիւն .

Ուստի յայտ է թէ գերբնական սէրն և կրօ-  
 նական , որպէս 'ի նախընթաց գլուխ ճառիս  
 յայտ արարաք , կատարելագոյն և պատուակա-  
 նագոյն է քան զիմացականն , քան զբնականն  
 ազնուագոյն . Եւ մարթ է ասել թէ բուն և  
 ճշմարիտ և սուրբ սէր՝ գերբնականն և կրօ-  
 նական սէր է , զոր ստանամք 'ի յայտնութենէ  
 գրոց սրբոց , այն է՝ 'ի պատուիրանաց Սատու-  
 ծոյ , հաստատեալ և վկայեալ օրինակաւ փրկ-  
 չին և սրբոց և ամենայն արանց և կանանց ա-  
 ռաքինեաց , ճշմարիտ հաւատացելոց , Եւ  
 դարձեալ սէրն գերբնական և կրօնական մար-

Թի լինել սովորաբար փոխադարձ , ուր բնականն և իմացական սովորաբար չեն փոխադարձ : Սէրն գերբնական և սէրն կրօնական են 'ի ճշմարիտ հաւատոց զի են 'ի գրոց սրբոց և 'ի վարդապետութենէ եկեղեցւոյ , առաջինն որ է սէր գերբնական՝ է ճշմարտութիւն յաղբերէ ճշմարտութեան որ է Աստուած , և երկրորդն , այն է սէր կրօնական՝ իրբեւ յառուէ որբսէ 'ի նմին աղբերէ , որ են գիրք սուրբք : Այլ սէրն բնական և իմացական են 'ի զգայութենէ , 'ի համակրութենէ և 'ի բնական իմացականութենէ որ չեն միշտ և իսպառ ճշմարիտ :

---

## ԳԼՈՒԽ ԻԵ .

Յաղագս թէ որն յերեցունց , 'ի հաւատոց , 'ի յուսոց և 'ի սիրոց իցէ նախամեծար :

Այժմ մնայ մեզ խօսել թէ որն յերեցունց , 'ի հաւատոց , 'ի յուսոց , և 'ի սիրոց իցէ նախամեծար :

Ի ցուցանել զայս կամովք 'ի կիր արկանել զօրէնս ինչ թուարանութեան որ կոչի փոփոխադրութիւն , ուստի նախ հարկ է մեկնել զայս :

Թիւ ինչ , զոր օրինակ , 1, 2, 3, 'ի շարելն

կարգաւ , այսպէս՝ 123, մարթի փոխել զկարգն .  
այսինքն՝ իւրաքանչիւր թիւ կարէ զկնի իւր  
ունել զիւր նման . որպէս 111 կամ 222 , կամ  
333 . և կամ կարէ ունել զկնի իւր մին զմիւսն  
կրկին , որպէս 122 , կամ 133 . և կամ երեքին  
ևս կարեն լինել 'ի միում կարգի , որպէս 123 ,  
և 'ի կարգի աստ կարեն փոխել իւրաքանչիւր  
թուանշանքն զտեղի իւրեանց , որպէս 123 ,  
կամ 213 , կամ 132 , կամ 321 . և կամ այլազգ .  
Արդ յամենայն թիւս՝ փոփոխումնս այս լինի  
ըստ խորանարդ կարողութեան թուոյն . ըստ  
այսմ փոփոխումն երկից թուանշանաց լինի քսան  
և եօթն օրինակաւ . զի 27 է խորանարդ կա-  
րողութիւն երկից թուոց , քանզի երկիցս երեք  
լինին ինն , և երկից ինն՝ լինին քսան և եօթն . Այս  
է ըստ թուաքանից օրէնք փոփոխադրութեան .

Ի փոփոխադրութեան թուոց ինչ , զոր օ-  
րինակ՝ երկից , նախ՝ մարթին , որպէս ասացաք ,  
երեքն ևս լինել նոյն , որպէս 111 , 222 , 333 .  
յայս դէպս կոչի թիւն Համազոյց . երկրորդ՝  
կարեն երկուքն լինել նոյն մի զկնի միոյ , եւ  
երրորդն՝ օտար , զոր օրինակ՝ 112 , 221 , 331 ,  
և յայնժամ կոչի թիւն Նախադաս Մասնաւոր  
Համազոյց . և կամ նոյնաթիւքն 'ի վերջոյ , որ-  
պէս 211 , 311 , 122 , 322 , 133 , 233 , և յայն-  
ժամ կոչի թիւն Ետտադաս Մասնաւոր Համա-  
զոյց . երրորդ՝ կարեն լինել թուանշանքն նոյնք  
'ի ծայրս , և 'ի միջի օտար թիւ , որպէս՝ 121 ,

- 131 , 242 , 232 , 343 , 323 . այսպիսի թիւք  
 կոչին Տարազոյդք . Չորրորդ՝ մարթին լինել  
 թուանշանքն կարգաւ 'ի փոքուէ սկսելով  
 ցմեծն , կամ 'ի մեծագունէն սկսելով ցփոքրն ,  
 որպէս 123 , կամ 321 , և յայնժամ կոչի թիւն  
 Շարազոյդ . Յուցյուք զայս յայտնագոյնս յե-  
 տագայ օրինակաւ , եղեալ զանուն իւրաքան-  
 չիւր փոփոխման առաջի իւր . զոր օրինակ .
- 111 Համազոյդ ստորին կարգի .  
 112 Նախագաս Համազոյդ ստորին կարգի .  
 113 Նախագաս Համազոյդ ստորին կարգի .  
 121 Տարազոյդ ստորին կարգի .  
 122 Յետագաս Համազոյդ ստորին կարգի .  
 123 'ի փոքուէ շարազոյդ .  
 131 Տարազոյդ ստորին կարգի .  
 132 Անկանոն ստորին կարգի .  
 133 Յետագաս Համազոյդ բարձրագոյն կարգի .  
 241 Յետագաս Համազոյդ միջին կարգի .  
 242 Տարազոյդ միջին կարգի .  
 243 Անկանոն միջին կարգի .  
 221 Նախագաս Համազոյդ միջին կարգի .  
 222 Համազոյդ միջին կարգի .  
 223 Նախագաս Համազոյդ միջին կարգի .  
 231 Անկանոն միջին կարգի .  
 232 Տարազոյդ միջին կարգի .  
 233 Յետագաս Համազոյդ միջին կարգի .  
 341 Յետագաս Համազոյդ բարձրագոյն կարգի .  
 342 Անկանոն բարձրագոյն կարգի .

- 313 Տարազոյց բարձրագոյն կարգի .  
 324 Ի մեծագունէ շարազոյց .  
 322 Յետագաս համազոյց բարձրագոյն կարգի .  
 323 Տարազոյց բարձրագոյն կարգի .  
 334 Նախագաս համազոյց բարձրագոյն կարգի .  
 332 Նախագաս համազոյց բարձրագոյն կարգի .  
 333 Համազոյց բարձրագոյն կարգի .

Արդ մեք նշանակեմք զսէր 1 (մի) թուով ,  
 զյոյս 2 ( երկու ) թուով և զհաւատս 3 ( երեք ),  
 թիւով , թէ ընդէր զսէր 1 , զյոյս 2 և զհաւատս 3 թուանշանօք յայտ արարաք , զայսմաննէ յետոյ ասացուք , և տացուք զպատճառսն .

Ի յառաջագոյն ասացելոց անտի յայտնի է եթէ սէրն հասարակ է ամենայն էից , եթէ բանականաց , եթէ զգայականաց և եթէ անզգայից . զի ամենայն իրք , ևս և անզգայք , 'ի բնէ հակին առ միմեանս , որպէս մեղիկ առ ոսկին , երկաթ առ մագնիս և արմաւենի առ արմաւենի . Ապա 'ի բանաւորս , զորօրինակ 'ի մարդիկ , նա որ սիրէ կամ ունի սէր , այլ ոչ յոյս և հաւատս , յանզգայից կարգի միայն է , զի սէրն միայն ոչ ամբառնայ զնա 'ի կարգ բարձրագոյն .

Զգայականք ունին ոչ միայն սէր , այլ և յոյս , որպէս յայտ է յառաջագոյն ասացելոց , զի զգայուն կենդանին ոչ միայն սիրէ զայն որ յագեցուցին է զգայական ակտորժակաց իւրոց , այլ և յուսայ ևս թէ յագեցուցանելոց է

Նա զախորժակս իւր , վասն այնորիկ հակէ 'ի նա , այսինքն՝ 'ի յուսոյ անտի սիրէ զնա , և այս է կատարելագոյն քան զառաջինն . ուստի և 'ի բանաւորս , կամ 'ի մարդիկ , նա որ յուսայ և 'ի յուսոյ անտի սիրէ , է 'ի կարգի զգայալ կանաց :

Իսկ բանականք ունին ոչ միայն զյոյս և զսէր , այլ և զհաւատս . զի հաւատայ , այն է ճանաչէ , քանզի է բանաւոր , և ճանաչմամբն , կամ 'ի հաւատոյ անտի իւրմէ՝ յուսայ և սիրէ : Այս է ևս կատարելագոյն և վերին աստիճան :

Այսպէս երիս ազգս մարդկան ընտրեմք . նա որ սիրէ միայն , և այս է բնական մարդ . երկրորդ՝ նա որ յուսայ և սիրէ , և այս է զգայալ յուն մարդ՝ երրորդ՝ նա որ հաւատայ , յուսայ և սիրէ , և այս է բանաւոր մարդ :

Այս երեք կարգք մարդկան զորս 1 , 2 , և 3 [Թուանշանօք նշանակեմք՝ գալով առ միմեանս , և փոխփոխելով զգիրս իւրեանց , ըստ վերագոյն օրինաց փոխփոխադրութեան , լինին 27 կարգք . ի 27 կարգաց աստի՝ 'ի մեծագունէ շարազոյցն է կանոնաւոր , այն է

3. Նա որ ունի հաւատս , յոյս և սէր .

2. Նա որ ունի յոյս և սէր , այլ ոչ հաւատս .

1. Նա որ ունի սէր այլ ոչ յոյս և հաւատս .

Այս շարազոյց կարգ 'ի մեծագունէ է կանոնաւոր , զի կատարելագոյնն , որ է բանա-

ւորն մարդ յորում հաւատք են տիրող, ունի զառաջին տեղին. զերկրորդ տեղին ունի ըզգայականն մարդ յորում տիրող է յոյս. և զերրորդ տեղին ունի անզգայականն մարդ յորում սէր միայն տիրէ:

Պարտ է զխտել զի այս կարգ՝ յորում բանաւորն մարդ որ ունի հաւատս, և ՚ի հաւատոյ անտի յուսայ և սիրէ, համեմատ է սկզբանց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ զհաւատս եղ հիմն, և պահանջէր ՚ի հաւատոյ աստի ունել յոյս և ՚ի յուսոյ սէր:

Յոյժ կանոնաւոր է համազոյգն բարձրագոյն կարգի, որ է

3. Նա որ ունի հաւատս, յոյս և սէր.

3. Նոյնպէս.

3. Նոյնպէս.

կանոնաւորագոյն են նախագաս համազոյգն բարձրագոյն կարգի, որ են

3. Որ ունի հաւատս, յոյս և սէր.

3. Նոյն.

2. Որ ունի յոյս և սէր.

և

3. Որ ունի հաւատս յոյս և սէր.

3. Նոյն.

1. Որ ունի սէր միայն.

կանոնաւորագոյն է նոյնպէս տարազոյգն բարձրագոյն կարգի, որ է

3. Որ ունի հաւատս, յոյս և սէր.

2. Որ ունի յոյս և սէր միայն .

3. Որ ունի հաւատս , յոյս և սէր .

Կանոնաւորադոյն է դարձեալ յետադաս  
համադրոյդն միջին կարգի , որ է

3. Որ ունի հաւատս , յոյս և սէր .

2. Որ ունի յոյս և սէր .

2. Որ ունի յոյս և սէր .

Ի բացատրութենէ աստի յայտ է թէ 'ի 27  
կարգս վեց միայն կանոնաւորք են ,

Ա

Բ

3 } Համադրոյդ բարձրա-  
3 } գոյն կարգի .

3 } Նախադաս համադրոյդ  
2 } բարձրագոյն կարգի .

Գ

Դ

3 } Նախադաս համադրոյդ  
3 } բարձրագոյն կարգի .

3 } Տարադրոյդ բարձրագոյն  
2 } կարգի .

Ե

Զ

3 } Յետադաս համադրոյդ  
2 } միջին կարգի .

3 } Շարադրոյդ 'ի մեծագու-  
2 } նէ .

Այլքն ամենայն կարգք միջին և ստորին  
կարգի՝ աստիճանաբար անկանոնք են . Բանդի  
յամենեօին 'ի նոսա բանաւորն մարդ ունի լի-  
նել յետադաս քան զմին 'ի միւս ևս երկուց ,  
այն է քան զզգայականն կամ քան զանզգայա-  
կանն մարդ , որպէս .

2 }  
3 } Անկանոն .  
1 }

1 }  
3 } Անկանոն .  
2 }



Երբորդ՝ Անզգայականն ունի զԵրբորդ տե-  
զի , եթէ իցէ անզգայական 'ի կարգի անդ .

Պարտ է դիտել զի Մովսէս նախամարգա-  
րէն և օրէնսդիր , թէպէտեւ ազդեալ յԱս-  
տուծոյ , ըստ խակութեան ժամանակին , առ-  
ընդերլագոյն առնելոյ զվարդապետութիւնն առ-  
մարմնապիչ և զգայական Հրեայս , զսէրն գաս-  
եաց յառաջ քան զհաւատս , ուստի և ըստ  
նմա , 'ի կարգի անդ հաւատոյ , յուսոյ և սիրոյ ,  
գասաւ որութիւնն է շարագոյդ 'ի փոքրագունէ ,  
այն է

1. Նա որ ունի սէր . Առաջին .

2. Նա որ ունի յոյս և սէր . Երկրորդ .

3. Նա որ ունի հաւատս , յոյս և սէր մի-  
անգամայն . Երբորդ .

Չայս կարգ , որպէս ասացաք , փոխեաց  
Տէրն մեր , տուեալ հաւատոյ զյառաջամաս-  
նութիւնն , և փոխեալ զշարագոյդն 'ի փոքրա-  
գունէ առ մեծագոյնն . այն է

2  $\left\{ \begin{array}{l} 1 \\ 2 \\ 3 \end{array} \right\}$  շարագոյդ 'ի փոք-  $\left\{ \begin{array}{l} 3 \\ 2 \\ 1 \end{array} \right\}$  շարագոյդ 'ի մե-  
րագունէ .  $\left\{ \begin{array}{l} 2 \\ 1 \end{array} \right\}$  ծագունէ .

Թուի մեզ թէ ըստ բաւականին յայտնի ե-  
զեն սկզբունք դրութեանս՝ յորմէ զհետ գայ  
հետեւեալն իբրեւ գործնական սկզբունք պի-  
տանի և կարեւոր 'ի բարոյական , յընկերական  
և 'ի քաղաքական գործառնութիւնս կենաց .

Եթէ անհատք իցեն և եթէ բարոյական

մարմինք կամ ընկերութիւնք, 'ի միանալ երկոց՝ եթէ իցեն երեքին եւս այլաթիւք, որպէս 1, 2, 3, պարտի ունել զառաջին տեղին Բանաւորն մարդ, զերկրորդ տեղին՝ Զգայականն . քանզի բանաւորն է որ ունի վարել զմիւս երկուսն, և ստորակարգութիւնն լինի ըստ օրինի : Եթէ, ամին հակառակ, Զգայականն կամ Անզգայականն ունիցին զառաջին տեղին, և Բանաւորն լինիցի իբրեւ ծառայ, կամ եթէ Բանաւորն իսպառ պակասիցէ, զտեղի նորա ունելով Զգայականն կամ Անզգայն, և կամ Զգայականն պակասիցէ և զտեղի նորա ունիցի Անզգայականն, ոչ լինի վարչութիւնն կատարեալ, այլ անկանոն, թերի և խառնակ : Ապա եթէ երեքին եւս իցեն բանաւորք, ծնանի հաւասարութիւն, և թէպէտ բառնայ ստորակարգութիւն, այլ ոչ մտանէ խառնակութիւն :

Աստ տացուք այլ ինչ օրինակ որ լուսաւորեսցէ զայն զոր ասացաք :

Դիցուք թէ յատկութիւն թագաւորի է լինել արդար, իմաստուն և քաջ . յատկութիւն զօրավարի իցէ լինել իմաստուն և քաջ . իսկ յատկութիւն զինուորի իցէ լինել քաջ :

Յայտ է թէ, եթէ թագաւորն ունիցի զիւր յատկութիւն, զօրավարն զիւրն և զինուորն զիւրն առանձին, բարոք է կարգն . Եթէ զօրավարն բաց յիմաստութենէ և 'ի քաջութենէ ունիցի և զարգարութիւն, կամ զինուորն բաց

'ի քաջութենէ ունիցի և զարդարութիւն և զիմաստութիւն , ոչ մնասէ կարգին . Ապա եթէ թագաւորն չունիցի զարդարութիւն , և զօրավարն ունիցի . կամ թագաւորն և զօրավարն չունիցին զիւրեանց յատկութիւնս , այսինքն՝ մին զարդարութիւն և զիմաստութիւն , և միւսն զիմաստութիւն , և զինուորն ունիցի զերեսին եւս , ոչ բարւոք է կարգն . զի որում թագաւորն լինել պարտ էր՝ եղեալ է զինուոր , և որում արժան էր լինել զինուոր՝ լեալ է թագաւոր . նոյնպէս ոչ է բարւոք կարգն , եթէ յանձին թագաւորին պակասիցէ արդարութիւն . կամ յերկոսին եւս , եթէ 'ի թագաւորին և եթէ 'ի զօրավարին , պակասիցեն արդարութիւն և իմաստութիւն , այսինքն՝ յորժամ կարգն իցէ նախադաս համազոյգ միջին և և ստորին կարգի

Դիցուք աստէն զօրինակն .

- |  |                       |
|--|-----------------------|
| 3. Թագաւոր արդար , իմաստուն և քաջ .      | } կանոնաւոր .         |
| 2. Զօրավար իմաստուն և քաջ .              |                       |
| 1. Զինուոր քաջ .                         |                       |
| 3. Թագաւոր արդար , իմաստուն և քաջ .      | } յոյժ<br>կանոնաւոր . |
| 3. Զօրավար արդար , իմաստուն և քաջ .      |                       |
| 3. Զինուոր արդար , իմաստուն և քաջ .      |                       |
| 2. Թագաւոր , ոչ արդար , իմաստուն և քաջ . | } անկանոն .           |
| 2. Զօրավար իմաստուն և քաջ .              |                       |
| 1. Զինուոր քաջ .                         |                       |

- |   |   |           |
|---|---|-----------|
| 1. Թագաւոր , ոչ արդար եւ ոչ իմաստուն , այլ քաջ .  | } | անկանոն . |
| 2. Զօրավար իմաստուն , եւ քաջ .                    |   |           |
| 3. Զինուոր արդար , իմաստուն եւ քաջ .              |   |           |
| 3. Թագաւոր արդար , իմաստուն եւ քաջ .              | } | անկանոն . |
| 4. Զօրավար ոչ իմաստուն , քաջ միայն .              |   |           |
| 3. Զինուոր արդար , իմաստուն եւ քաջ .              |   |           |
| 4. Թագաւոր ոչ արդար ոչ իմաստուն , այլ քաջ միայն . | } | անկանոն . |
| 4. Զօրավար ոչ իմաստուն , այլ քաջ միայն .          |   |           |
| 4. Զինուոր քաջ .                                  |   |           |
| 2. Թագաւոր ոչ արդար , այլ իմաստուն եւ քաջ .       | } | անկանոն . |
| 3. Զօրավար արդար , իմաստուն եւ քաջ .              |   |           |
| 4. Զինուոր քաջ .                                  |   |           |
| 2. Թագաւոր ոչ արդար , այլ իմաստուն եւ քաջ .       | } | անկանոն . |
| 2. Զօրավար իմաստուն եւ քաջ .                      |   |           |
| 2. Զինուոր իմաստուն եւ քաջ .                      |   |           |

Ըստ այսմ կանոնի դիւրին է իմանալ և զայլ լոց թէ ոյք իցեն անկանոն , և ընդէր .



## ԳԼՈՒԽ ԻԶ.

Յազագոս պատճառաց վասն որոց հաւատք են նախամեծար, եւ բողանդակութիւն այնր ամենայնի որ ասացաւ յայսմ մասին գրոցս :

Այժմ կայ մեզ ցուցանել թէ ընդէր, զսէր նշանակեցաք Վ թուանշանաւ, զյոյս 2, և զհաւատս 3 թուանշանօք. Այսր պատճառին քնին յայտնի է ՚ի յառաջագոյն ասացելոց. նախ զի սէր կարէ լինել առանձինն, առանց յուսոյ և հաւատոյ, որպէս յանգղայս, զորօրինակ ՚ի վեր անդր ասացաւ, զսնդկէ և զոսկւոյ զերկաթոյ և զմագնսէ, այլովքն հանդերձ. վասն այսորիկ նմա պատշաճի թուանշանն Վ. Երկրորդ ըստ մերում գրութեան սէր որ ոչ է յառաջ եկեալ ՚ի յուսոյ՝ տկարագոյն է. ևս տկարագոյն՝ յորժամ չիցէ յառաջ եկեալ ՚ի հաւատոյ և ՚ի յուսոյ. սմին իրի ևս գիպող է նմա թուանշանն մի :

Յոյս միշտ ունի ընդ իւր իբրեւ պտուղ և արդիւնս զսէր, որպէս ՚ի զգայականս, վասն այնորիկ յարմարագոյնս նշանակի 2 թուանշանաւ. Այսպէս, զորօրինակ մի թիւ զօրանայ ՚ի յաւելուլ առ նմա միւսոյն, այն է՝ ՚ի գնել զ2 յառաջ կամ յետոյ քան զՎ լինի 2Վ կամ 12, նոյնպէս սէր որ յառաջ գայ ՚ի յուսոյ՝ զօրագոյն է քան զսէր որ առանձինն է և միակ :

Սովին սկզբամբ եղաք և վասն հաւատոյ

զթուանչանն երեք, զի հաւատք ունի ընդ իւր զյոյս և զսէր, որով լինի երբեակ կամ երեքկին: Եւ զորօրինակ 'ի վերայ 12 կամ 21 տասնաւորացն յաւելեալ զթիւն 3 յառաջ կամ զինի, ածի թիւն 'ի հարիւրաւոր, այն է՝ 123, կամ 321, նոյնպէս սէր և յոյս որ ծնանին 'ի հաւատոց զօրագոյն են, քան առանց հաւատոց:

Աստ արժան է յաւելուլ զայս գիտողութիւն թէ զերեսին սոսա, զհաւատս, զյոյս և զսէր, մարթ է կրկին օրինակաւ զմտաւ ածել, այն է ըստ Մովսիսեան սկզբանց սկսանելով 'ի սիրոյ իջանել 'ի հաւատս, և կամ ըստ Աւետարանական կամ ըստ Տերունական սկզբանց, սկսանելով 'ի հաւատոց իջանել 'ի սէր: Այլ խտիր մեծ է 'ի մէջ երկուց դրութեանցս այսոցիկ: Արդարև ծնանին յոյս և հաւատք 'ի սիրոյ: Զի և սէրն զգայական ծնանի երբեմն զյոյս վայելելոյ զառարկայն ակորժական, և նա որ սիրէ, 'ի յուսոյ անտի սնդի զհետ ակորժականին զի իրօք վայելիցէ: Այլ որպէս յայտ է, այսպիսի հաւատք և յոյս ոչ են հաստատուն և տեւական. զի 'ի նուազել և 'ի ցրտանալ սիրոյ, կամ 'ի կորնչել և 'ի հեռանալ առարկային, կորնչին և յոյս և հաւատք. քանզի չեն 'ի հաւատոց, այն է՝ յիմուցականութենէ, Եւ սէրն այն ոչ գայ յառաջ 'ի ծանօթութենէ առարկային, ըստ որում յառաջագոյն է քան զհաւատս. ուստի և սկիզբն

կամ ծնունդ և ծագումն նոյնպիսի սիրոյ յեն թակայէ անտի ծնանի , և ոչ յառարկայէ , այսինքն՝ 'ի սիրելութենէ կամ 'ի ճանաչելոյ զարժանաւորութիւն առարկային սիրելոյ , Ուր ընդհակառակն , սէրն որ 'ի հաւատոյ յառաջ գայ՝ հաստատուն և ճշմարիտ է , քանզի է մտաւոր , իմացական , բարոյական և հոգեւոր , զի ոչ ծնանի 'ի զգայական ակտորժանաց , և 'ի բերմանէ ենթակային , այլ 'ի ծանօթութենէ գոյութեան և ճշմարտութեան առարկային .

Սէրն ոչ միշտ առաքինութիւն է , այլ և կիրք . հաւատք ոչ են կիրք , այլ գիտութիւն՝ եթէ իցեն զբնական իրաց . և առաքինութիւն՝ եթէ իցեն հիմնեալ 'ի վերայ հեղինակութեան ուրուք՝ որոյ բարութիւնն և ճշմարտութիւն կամ ճշմարտասիրութիւն և անսուտն հաւատարմութիւն յայտնի են , որպէս՝ հաւատք որ առ Աստուած և առ յայտնութիւն նորա , իբրեւ կրօնական կամ Աստուածային առաքինութիւն , և հաւատք առ ծնողս , առ վարդապետս և առ առաքինիս , իբրեւ բարոյական առաքինութիւն , և հաւատք առ վկայութիւնս ներքին և արտաքին զգայութեանց , իբրեւ բնական առաքինութիւն . Ասպ սէրն որ ծնանի 'ի հաւատոյ , կամ քան զոր կանխեն հաւատք՝ ազնուագոյն և սրբագոյն է յոյժ քան զսէր որոյ ծագումն չէ 'ի հաւատոյ , այլ ինքնածին է և ակտորժան .

Ապա շեն ինչ զարմանք թէ ընդէր Տէրն մեր միշտ պահանջէր հաւատս , և զնոյն քարոզէր , և մեծամեծս խոստացաւ 'ի հաւատոց . քանզի գիտէր թէ անհնարին է թէ 'ի հաւատոց ոչ ծնանիցին յոյս և սէր , իբրեւ առաքինութիւնք կարեւորք յամենայն կարգս կենաց և հանդերձելոց . գիտէր ևս թէ յոյս և սէր որ ծնանին 'ի հաւատոց՝ աներկեւան և կատարեալ են . և որ միանգամ ունիցի զճշմարիտ հաւատս 'ի յայտնութենէ Աստուծոյ , 'ի վարդապետութենէ աւագաց , 'ի վկայութենէ բանին և զգայութեանց՝ այնպէս իմն զօրանայ յուսով , և բորբոքի սիրով , մինչեւ սաստկագոյն և հզօրագոյն լինել քան զամենայն , և կարող և ձեռնհաս առ ամենայն , ուստի յիրաւի ասացաւ թէ Ամենայն ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայ .

Լոկ զգացմամբ են հաւատք այնր որ 'ի սիրոյ հաւատայ . այլ իրական է սէր նորա՝ որ 'ի հաւատոց սիրէ .

Վերագոյնն ասացաք թէ Նախամարգարէն Մովսէս զսէր յառաջագոյն եղեալ՝ գըրեաց 'ի գլուխ պատուիրանացն զՍիրեսցեսն զՏէր Աստուած քո . և այսմ բերաք պատճառ թէ Մարգարէն զայս արար վասն խակութեան ժամանակին . զի Հրեայք 'ի ստրկութեան անդ ընդ եգիպտական լծով վատթարեալք մտօք և հոգւով , չէին ընդունակ

բարձրագոյն վարդապետութեան հաւատոյ , առ որ , որպէս ասացաք յիւրում տեղ ոչ , պահանջի կարողութիւն տրամաբանական . զի ոչ ոք որ խնդրէ հաւատս յումեքէ՝ կարէ պահանջել 'ի նմանէ զի հաւատասցէ առանց խորհրդածութեան և տրամաբանական ընտրութեան , որպէս թէ արժան իցէ ընդունել զոր ինչ և ասիցէ , թէպէտև անտեղի և անհնարին . ասպա և ոչ Աստուած որ արդարեւ խնդրէ 'ի մարդոյ հաւատս բացարձակ , այլ ոչ առանց խորհրդոյ , քանզի եղեալ է նա առաջի մարդոյ զտիեզերս որ են գործք ձեռաց նորա յորմէ նախ 'ի վերայ հասանէ մարդ (եթէ վարիցի ուղիղ տրամաբանութեամբ) գոյութեանն Աստուծոյ , և ստորոգելեաց նորա որ են ամենակարողութիւնն , իմաստութիւն և բարութիւն , զորոց զհետ գայ արարչագործութիւնն նորա . Յետ հաւատալոյ այսպէս փաստիւք բնութեան 'ի գոյութիւնն նորա , ոչինչ անտեղի կարէ թուել մարդոյ թէ կամեցեալ իցէ նորա խօսել և յայտնել զկամս իւր , միայն ոչ այլ ինչ մնայ բայց կշռել և դատել զբանս նորա ընդ սկզբանց իմացականութեան և բարոյականութեան որ են բնական և բնածին 'ի մարդն , և ըստ այսց սկզբանց յորոց վերայ հիմնեալ է տրամաբանութիւն՝ կարող է ընտրել զճշմարիտն 'ի ստոյ , զուղիղն 'ի թիւրէ , և զբարին 'ի չարէ , և այնպէս հաւատայ

դրականապէս կամ բացասապէս, այն է ընդունի և մերժէ :

Ապա յիրաւի պահանջէ Տէր մեր հաւատս, և պահանջելով հաւատս նախ՝ յորդորէ և զարթուցանէ զտրամաբանութիւն մեր, քննել և ընդունել, զի ճշմարիտ իմաստութիւնն Աստուծոյ վստահ է ՚ի ստուգութիւն այնր զոր առաջարկէ ՚ի հաւատալ. որպէս և ասաց իսկ ցՀրեայս թէ Գննեցէք զգիրս որովք համարիք ունել զկեանս : Ուստի և եկեղեցի ՚ի պահանջել հաւատս յեկեղցն առ նա ՚ի մկրտութիւն, ըստ բանի Տեառն թէ Որ հաւատայ և մկրտի՝ կեցցէ, դնէ զհաւատս ՚ի գլուխ կարգի երկց յատկութեանցն բանաւոր մարդոյ, այն է հաւատոյ, յուսոյ և սիրոյ, և այսպէս ուղղի կարգն, և տայ իմանալ թէ Քրիստոնեայն պարտի լինել բանաւոր մարդ և ոչ զգայական կամ անզգայական : Այս է առաւելութիւն Քրիստոնէութեան և ճշմարտութիւն դրութեան նորա նկատմամբ առ մարդն հոգեւոր, իմացական և ընկերական :

Թուի մեզ թէ ըստ բաւականին բացատրեցաւ զոր ինչ մինչեւ ցայս վայր ասացաք յայսմ մասին դրոցս, և յայտնի եղև նպատակ մեր որ էր ցուցանել թէ զինչ իցէ մարդն որ ըստ Աստուծոյ հաստատեալ է, և զիարդպարտի ճանաչել զանձն և ջանալ զի իցէ այնպէս որպէս էն ըստ Աստուծոյ :

# Գ Ի Ր Ք Ե Ր Կ Ր Ո Ր Դ

## Գ Լ Ո Ւ Խ Ա .

Յաղագս թէ ու թեան թէ զինչ իցէ :

**Թ**էն թիւիւն ասի այն ինչ յորոյ գոյութենէ կախեալ կայ այլոյ իրիք գոյութիւն . Զորորինակ՝ եթէ եմք մարդ բանական , պարտ է մեզ յերեւելեաց զաներեւոյթս իմանալ և գիտել . եթէ ոչ իմանամք և ոչ գիտեմք , ապա չեմք մարդիկ բանաւորք :

Օրինակաւ թէ ու թեան գիցուք առաջի ըզ նպատակ մատենիս . եթէ ունիմք հաւատս , պարտ է մեզ կրել յոյս . եթէ կրեմք յոյս , պարտ է մեզ սիրել առ որ յուսամքն . եթէ սիրեմք առ որ յուսամքն , պարտ է մեզ լինել ժիրս յամենայնի հանդերձ համեստութեամբ , այսինքն՝ հանդարտութեամբ . եթէ եմք ժիր յամենայնի , արժան է մեզ լինել խոհեմ հանդերձ պարկեշտութեամբ . եթէ եմք խոհեմ , արժան է ունել արութիւն հանդերձ խոնարհութեամբ . եթէ եմք արիք , ՚ի դէպ է մեզ գտանել անձինս համակիրս մեզ , ճանաչելով զմիտս , զկամս և զխորհուրդս նոցա

գոնեա ըստ մասին . եթէ գտանեմք զհամա-  
 կիրս մեզ , պարտ է և զյարմարութիւն տեղ-  
 ւոյն որոնել և ճանաչել ըստ գործոյն կամ ըստ  
 իրին . եթէ որոնեցաք և ծանեաք զյարմա-  
 րութիւն տեղւոյն , պարտ և զհոլովումն ժա-  
 մանակաց որոշել և ընտրել ըստ քանակու-  
 թեանն կամ ըստ աստիճանի . եթէ կարացաք  
 զհոլովումն ժամանակաց որոշել և ընտրել , ար-  
 ժան է լինել արդարս հանդերձ շնորհօք . ե-  
 թէ եմք արդարք , հարկ է զի և սուրբք ի-  
 ցեմք չափով . և եթէ եմք սուրբք , հարկ է  
 զի և ճշմարիտք իցեմք ամենայնիւ , մտօք  
 և սրտիւ . Սմին հակառակ , եթէ չեմք  
 ճշմարիտ , չեմք սուրբ . եթէ չիցեմք սուրբ ,  
 չեմք արդար . եթէ չեմք արդար , չեմք կա-  
 րացեալ որոշել և ընտրել զհոլովումն ժամանա-  
 կաց . եթէ չեմք կարացեալ որոշել և ընտրել  
 զհոլովումն ժամանակաց , չեմք որոնեալ և  
 գտեալ զյարմարութիւն տեղւոյն . եթէ չեմք  
 որոնեալ և գտեալ զյարմարութիւն տեղւոյն ,  
 չեմք գտեալ զհամակիրս մեզ . եթէ չեմք  
 գտեալ զհամակիրս մեզ , չեմք արիք . եթէ  
 չեմք արիք , չեմք խոհեմ . եթէ չեմք խոհեմ ,  
 չեմք ժիր . եթէ չեմք ժիր , չունիմք սէր . եթէ  
 չունիմք սէր , չունիմք և յոյս . և եթէ չու-  
 նիմք յոյս , չունիմք և հաւատս .

Յօրինակէ աստի յայտ է թէ 'ի գոյութենէ  
 թէութեան մակաբերեմք զհետեւութիւնն .

և 'ի չգոյէ հետեւութեան՝ զպակասութիւն  
 թէութեան . Այլ զթէութենէ 'ի ստորեւ լի-  
 ցին բանք :

## ԳԼՈՒԽ Բ .

Յաղագս ժրութեան թէ զինչ իցէ , եւ քանիօն :

Ժրութիւն ասելով իմանամք զարագու-  
 թիւն համեստութեամբ , այն է՝ չդանդաղել ,  
 առնել 'ի դէպ ժամանակի զոր առնել պատ-  
 շաճ է , առանց օր 'ի յօր և ժամ 'ի ժամ առ-  
 նելոյ . Ժրութիւնն է թէութիւն հաւատոյ ,  
 յուսոյ և սիրոյ . կամ՝ սիրոյ յուսով զօրացե-  
 լոյ և բխելոյ 'ի հաւատոյ :

Ժրութիւն թէպէտ մի է ըստ ինքեան ,  
 այն է մի յապաղել և մի դանդաղել քան  
 զպատշաճն , այլ երեքիկին է ըստ առարկային ,  
 Ժրութիւն 'ի միտս , Ժրութիւն 'ի բանս և ժրու-  
 թիւն 'ի գործս :

Ժրութիւն 'ի միտս այն է , զի յորժամ  
 կայցէ առաջի իմանալ ինչ կամ ճանաչել և  
 հասու լինել , մի դանդաղեսցուք , այլ իսկ և  
 իսկ ջանասցուք 'ի վերայ հասանել . եթէ մե-  
 զէն ոչ կարեմք , փութասցուք ուսանել յայ-  
 լոց որ գիտակ են և կարող յուսուցանել :

Ժրութիւնն 'ի բանս այն է , զի յորժամ ունիցիմք ասել ինչ ումեք կամ ինդրել կամ ազաչել կամ ազդ առնել և տեղեկացուցանել , մի դանդաղեացուք :

Ժրութիւնն դործոյ այն է , զի յորժամ հարկ է և պարտիմք առնել ինչ , մի յուլասցուք և դանդաղեացուք , և մի արասցուք յայլ որ կամ 'ի ժամ . այլ մանաւանդ ոչ արագ միայն , այլ և եռանդեամբ և տենջանօք սրտի առնել . զի առած է թէ Յուլից և ծուլից փակեալ է դուռն արքայութեան :

Ի սակասութենէ ժրութեան եթէ 'ի միտս , եթէ 'ի բանս և եթէ 'ի դործս , մարթ է բազում վնասուց և կորստեան և անպատեհ և ձախող իրաց պատահել ընդ որ զվճասցուք , այլ 'ի զուր : Զորօրինակ՝ դիցուք թէ առաջիկայ մեզ ասել ինչ , և դանդաղեացաք և զանց արարաք . մարթ է և յոյժ հաւանական թէ կորնչելոց է պատեհութիւնն այն , զի 'ի փոխել և յանցանել ժամանակին , փոխին և անցանեն և սրայմանք կամ պարագայք իրաց և անձանց , և ոչ կարիցեմք թերեւս դտանել յետոյ զայրն առ որ խօսելոցն էաք , կամ յորմէ կախեալ կայր կատարումն իրացն կամ նպատտ . կամ իրքն վասն որոց ասելոց էաք՝ կորնչիցին կամ տարցին այլուր , կամ տացին այլոց . կամ այն որ 'ի տունջեան լինելոց էր կամ 'ի դարնան կամ յամարան , եկեալ գիշերոյ կամ

ձմերան և աշնան , լինիցի անհնարին , Մարթ է գիտել և մահու կամ այլ անհնարութեան , դարձեալ և ազդեցութիւն կամ զօրութիւն բանից մերոց նուազի , և բանք մեր ոչ լիցին հաճոյ և ընդունելի . վասն այնորիկ ասէ . Յուլից և ծուլից փակեալ է դուռն արքայութեան . Չնոյն պարտ է իմանալ և զդանդազութենէ կամ զյապաղմանէ յիմանալ և 'ի գործել . Ո՛րչափ մարդիկ մնացին անդէտ , մերկ , սովամահ , վրիպեալ 'ի նպատակէ , յարդեանց , 'ի պտղոց , 'ի շահուց , և եղեն նշաւակ բազում անպատեհութեանց զորս մի ըստ միոջէ թուել անհնար է . Արդարեւ մնամք անմասն յօգտակարութենէ հաւատոյ , յուսոյ և սիրոյ , եթէ 'ի ժրութեան գացուք թերի .

Աստ գիտել արժան է , զի ժրութիւնն կամ արագութիւն պարտի լինել ըստ պատշաճի , այսինքն՝ չէ պարտ դանդաղել քան զչափըն , բայց և ոչ արագել և շտապել քան զարժանն . վասն որոյ ասացաք թէ ժրութիւնն է արագութիւնն ~~հարկաւոր~~ : Արդարեւ գործ է գտանել զայս միջին վայր , կամ զհաւասարակշռութիւն 'ի մէջ կարի արագութեան և յոյժ դանդազութեան . Այլ հանդարտ 'ի կրից ունիցի զայս համեմատութիւն . վասն այսորիկ տեսցուք զգլուխն որ զկնի ուր զխոհեմութենէ ճառեսցուք .

## ԳԼՈՒԽ Գ.

Յազազսխոհեմութեան թէ զինչ իցէ եւ քանիօն :

Խոհեմութիւն է դտանել զպատշաճն եւ զդէպն հանդերձ պարկեշտութեամբ : Պատշաճ եւ դիպող ասելով իմանամք զայն ամենայն որ օրինաւոր եւ վայելուչ է . եւ զի միայն բարին եւ ճշմարիտն եւ օգտակարն են օրինաւոր եւ վայելուչ , իսկ չարն եւ սուտ եւ մնասակար են միշտ ապօրինաւոր եւ անվայել , ապա խոհեմութիւնն ունի իւր նպատակ զբարին եւ զճշմարիտ եւ զօգտակար . որով դիւրին է իմանալ թէ խոհեմութիւնն բովանդակէ յինքեան զիմաստասիրութիւն եւ զբարոյականութիւն , եւ է ուղղիչ մտայ եւ կամայ կամ սրտի միանգամայն , եւ զի մարթ է շփոթել զխորամանկութիւն ընդ խոհեմութեան որ է խորագիտութիւն , վասն այսորիկ յաւելաք թէ պարտի լինել հանդերձ պարկեշտութեամբ այսինքն ուղղութեամբ . զի եթէ ոչ իցէ ուղղութիւն 'ի միտս , զգայական ախորժակքն եւ անձնասիրութիւն զօգուտ անձին տան նախամեծար առնել քան զբարին եւ զճշմարիտ , յորմէ դայ յառաջ մնասակարութիւն առ այլս , այն է՝ անիրաւութիւն եւ եղեւնագործութիւն :

Խոհեմութիւնն եւս , մի ըստ ինքեան , յառարկայէ անտի բաժանի յերիս . խոհեմութիւն

՚ի միտս կամ մտաւոր , խոհեմութիւն ՚ի բանս  
և խոհեմութիւն ՚ի գործս :

Մտաւորն խոհեմութիւն կայանայ յայնմ  
զի , մինչչեւ արարեալ մեր ինչ կամ կրեալ ,  
կշռեսցուք զիրն հակառակաւ նորա , այսինքն՝  
համեմատեսցուք զպարագայն երկուց հակա-  
ռակաց ընդ միմեանս , առ ՚ի տեսանել թէ  
զի՞նչ զհետ դալոց է եթէ զայս ինչ արասցուք  
կամ կրեսցուք , և զի՞նչ՝ եթէ զնորին հակա-  
ռակն :

Պարտ է զիտել զի պարագայք իրաց են՝  
եղանակ , ժամանակ , տեղի և պատճառք . ՚ի  
սոսա մարթ է յաւելուլ և զգործին կամ զմիջոց .  
Ապա քննել զպարագայս է որոնել և ճանաչել  
զորպէսն , զերբ , զուրն և զվասն էրն , ապա և  
զորովն և զի՞ ձեռն որոյն , Ոչ ապաքէն իմաս-  
տութիւն է այսոցիկ քաջ խելամուտ լինել , և  
ապա մխել ՚ի գործ , վասն այնորիկ առած է  
թէ Զոր ինչ առնես՝ նախ խորհեաց և ապա ա-  
րա . իսկ ընդ հակառակն՝ վայրապար զանձն ՚ի  
ներքս արկանել ոչ ապաքէն անխոհեմութիւն  
իցէ :

խոհեմութիւն ՚ի բանս կայանայ յայնմ զի  
նովին օրինօք զրոց ասացաք , և ըստ նոցին  
սկզբանց ասացուք ինչ և խօսեսցուք . Նոյն  
բան է և զխոհեմութենէ ՚ի գործս . այն է ոչ  
ձեռնարկել ՚ի գործ ինչ , յառաջ քան զզիտել  
զբնութիւն և զպարագայս գործոյն :

Պարտ է գիտել զի երկօրին յերտինքս , այն է խոհեմութիւն 'ի բանս և 'ի գործս , չեն ինչ տարբեր 'ի մտաւոր խոհեմութենէ , զի չիք բան կամ գործ որոյ կատարումն կամ գործադրութիւն չունիցի կախումն 'ի մտաց , նա մանաւանդ 'ի մտաց անտի բխէ , և հրամանաւ հոգւոյ և հաճութեամբ կամաց ելանէ արտաքս , վճարի և արկանի 'ի կիր :

Երկրորդ՝ պարտ է գիտել զի փորձառութիւնն է մայր խոհեմութեան , զի 'ի ձեռն փորձառութեան միայն մարթ է ուսանել զհետեւանս որ ըստ այլ և այլ պարագայից , փոփոխին և ածեն յառաջ արդիւնս այլակերպս , փորձառութիւն է որ ետ մարդկան հաստատել սկզբունս կամ առածս խոհեմութեան , զոր օրինակ թէ Առաջի իմաստնոց և մեծամեծաց քան զմեզ չէ պարտ յերկար խօսել . Բազում զգուշութեամբ յայտնել կնոջ մարդոց զգաղտնիս . Ընդ ազահի չուտել հաց . Առաջի մախացողի մի գովել զոք . Մի խօսել խրատս առ անզգամս , և այլ սոցին նմանք :

Չխոհեմութիւնն եղաք զկնի ժրութեան , ոչ զի խոհեմութիւն յառաջ գայ 'ի ժրութենէ , այլ վասն զի խոհեմութիւն իսկ և իսկ և 'ի մօտոյ 'ի վերայ հասեալ ժրութեան , չափաւորէ զանկարդ եռանդննորա . Դարձեալ չեն մեզ կամք ասել թէ ամենայն յաջողութիւնք իցեն 'ի խոհեմութենէ . զի գէսլ լինի երբեմն յաջողել

ըստ պատահմանն , կամ ըստ կոյր բախտի . բայց պատահար և բախտ չեն ընդ կանոնաւ և ոչ միակերպ և միօրինակ , ուստի և յուսալ 'ի պատահարէ և 'ի բախտէ՝ է յենուլ 'ի հողմն , և յոչընչէ խնդրել ինչ . նոքա որ այսու սկզբամբ գործեն՝ գործեն աւանց սկզբան . Եւ բազում անգամ սխալին :

## ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս արութեան թէ զինչ իցէ ևւ քանիօն :

Արիութիւն է ոչ կասել , ոչ ընկրկել յետս , այլ գիմադրել գժուարութեանց որ ընդ առաջ ելանեն հողւոյ . նա երբեմն գիմադրաւ ևս լինել նոցա . Ամենայն գժուարութիւն որ ընդ առաջ ելանէ հողւոյն , եթէ 'ի ներքուստ իցէ և եթէ յարտաքուստ , թշնամի է , որում սպարտի յաղթել արութիւն . Ներքին թշնամիք են ախորժակք զգայական ոգւոյ , որոց անկարգքն և սաստիկք կիրք կոչին . Արտաքին թշնամիք են մարդիկ յարուցեալք 'ի վերայ՝ մտօք արկանելոյ զմեզ 'ի խաբս և 'ի պատրանս , կամ առ 'ի հրապուրել . այսպիսիք են կամ մոլեղնեալք 'ի կրից , կամ յայլոց մտակորոյս վարդապետաց թելադրչաց չարին , որ մասնաւոր ճշմարտու-

Թեամբ ընդէմ ընդհանուր ճշմարտութեան մաքառին :

Մասնաւոր ճշմարտութիւն ասելով իմանամք զջանալն պահել և առնել երջանիկ զանձն և զիւրսն միայն , այսինքն զվերաբերեալս առ իւր . իսկ ընդհանուր ճշմարտութեամբ իմանամք զջանալն պահել ապահով եւ երջանիկ զընդհանուրս . առաջինն է սէր առանձնական , երկրորդն սէր հասարակաց բարւոյ առանց դիտման մնասելոյ իրաւանց և ոչ միոյ ուրուք : Արդ արիութիւն կռուի ընդ անձնասիրութեան կամ ընդդէմ տենջանաց առանձին բարւոյ որ ոչ դիտէ զհասարակաց բարիս կամ զընկերին . զի ոչ դիտելն զընկերին բարին՝ է ոչ դիտել զհասարակացն :

Է և ազգ ինչ արիութեան որ կայանայ 'ի ձեռնամուխ լինել 'ի դժուարինս և հանել 'ի գլուխ : Այս արիութիւն երբեմն բնական է մարդոյ , երբեմն կրթութեամբ ստանայ , է ևս զի պատահմամբ լինի . այն է՝ 'ի ժամանակաց , 'ի տեղեաց և յընկերաց , այսինքն՝ 'ի բնաւորութենէ և 'ի ձրից նոցա թելադրեալ . զի մարդ բազում անգամ 'ի սոցունց զօրանայ և արիանայ , կամ տկարանայ վեհերոտի և լքանի :

Արիութիւն ոչ մի օրինակ է յամենայն մարդիկ . ոմն արի է 'ի վիշտս և 'ի ձախողանս , այլ ոք 'ի դժուարին դէպս որ պատահեն 'ի լինել խափան կատարման գործոց ինչ . այլք

յառնուլ զառաջս վտանգաց, այլովքն հան-  
 դերձ։ Այլ արիութիւն բաժանի յերիս։ Եւ-  
 ղիութիւն մարմնոյ որ է ուժոյ զօրութեամբ  
 կամ համարձակութեամբ տալ կուրծս և պա-  
 տահել հակառակորդին որ սպառնայ վտանգ  
 կամ մնաս։ Այս արութիւն գիմագրաւելոյ վը-  
 տանգաց, նաեւ տալոյ եւս զկեանս, յառաջ  
 գայ երբեմն 'ի հաւատոց, այն է 'ի լինելոյ հա-  
 մոզեալ 'ի ճշմարտութիւն իրիք և 'ի համարելոյ  
 զիւր վերագոյն բարին 'ի նմա։ Զի որպէս ըն-  
 չասէրքն և մարմնասէրք որ զվազիկութիւն և  
 զմեծութիւն աշխարհիս համարին զիւրեանց  
 վերջին բարիս՝ զամենայն վիշտս, ևս և զմահ  
 յանձն առնուն զի մի կորուսցեն զվայելս իւր-  
 եանց, այսպէս նա որ հաւատացեալն է 'ի ճշ-  
 մարտութիւն և ծայրագոյն բարութիւն իւր ըզ-  
 նա համարի՝ ոչ խոնջի և ոչ երկնչի, նաեւ ըզ-  
 կեանս իւր ևս տայ արութեամբ։ Այս արու-  
 թիւն երեւեցաւ 'ի ճշմարիտ վկայս։ կամ լաւ  
 ևս ասասցուք ճշմարտապէս և անկեղծ հա-  
 ւատք տան զայս արիութիւն, երկրորդ ազգ-  
 արիութեան է 'ի գործս, այն մխել անխոնջ և  
 անվեհեր 'ի գործ հասարակաց բարոյ, զայս  
 արութիւն ունին երբեմն թագաւորք, իշխանք  
 ազգապետք, որ աշխարհաշէնք կոչին և մե-  
 ծագործք։

Երրորդ ազգ արիութեան է արիութիւն  
 սրտի։ Արիութիւն սրտի այն է զի որ արին է

սրտիւ ոչ լքանի , այլ հաստատուն կայ մնայ միշտ յամենայնի . նախ քննէ և զննէ զսլատ ճառս իրաց . և է աներկիր ՚ի հաստատել և յապացուցանել զճշմարտութիւնն որում հաւանեալն է՝ առաջի ամենեցուն , ևս և իմաստնոց և աւագաց : Արիութիւն սրտի առնէ զիւր նահատակն ոչ միայն քաջասիրտս , այլ և քաջաբանս և կորովախօսս , մինչև ՚ի զօրութենէ ձեռնարկութեանց նորա և վաստից զարմանալ լսողաց , և ապշել և ամիւրերան լինել հակաակորդաց : Որպէս Տէրն մեր առնէր ընդ ապարատան Հրեայս , մինչև զայրանալ նոցա և խորհել սպանանել զնա : Շփոթել և վարանել ՚ի տալ սրտասխանի հակաակորդաց որ մասանօք և չարակնութեամբ կամին վասնել մեզ և յանցաւոր ցուցանել կամ դատասպարանել զմեզ՝ է նշան վատութեան , Այս արութիւն ևս երեւեցաւ ՚ի վկայս ճշմարտութեան , ՚ի սուրբ մարտիրոսս , որք բազում անգամ որչափ տկարք էին մարմնով , այնչափ զօրաւորք էին արութեամբ սրտի . զի համողումն ճշմարտութեան այնպէս է զի ոչ միայն տայ զօրութիւն ընական , այլ և ոյժ բարոյական և իմացական :

Պարտ է գիտել զի արիութիւն եթէ չիցէ հանդերձ խոնարհութեամբ և չունիցի ընդ իւր լծակից զխոհեմութիւն հանդերձ պարկեշտութեամբ և զժրութիւն հանդերձ համեստու

Թեամբ՝ փոխի 'ի յանդդնութիւն որ է թերութիւն մեծ , և բազում փնասք ծագին 'ի յանդըզնութենէ աստի նաեւ մահ իսկ . և զի աբխութիւն աղատ գտանիցի 'ի բերկրութենէ աստի և յայլոց ևս թերութեանց և 'ի մոլորութեանց՝ պարտի յառաջ դալ 'ի հաւատոց իմաստութենէ , և ոչ 'ի կոյր եռանդանէ կրից և զգայական ախորժակաց :

Են և այլ մեծամեծ դործք որ են արդարեւ դործք արութեան , և են նոյնպէս թէութիւնք հաւատոյ . Այսպէս են մեծագործութիւն . որպէս՝ օրէնսդիր լինել , կարգս և կանոնս հաստատել . շինել ճանապարհս , կամուրջս , աղբիւրս . հնարագիւտ լինել արուեստից կամ ուսուցանել մարդկան զհանգամանս իրաց կարեւորաց և օգտակարաց . դիրս դնել և մատեանս յօրինել և այլ սոցին նմանք :

Բովանդակեսցուք այժմ՝ զբանս մեր որ ըզժրութենէ , զխոհեմութենէ և զարիւթենէ , Յասացելոց անտի գիւրին է իմանալ զի առանց երեցունց սոցա ոչ կարեն կալ ուղիղ և ճշմարիտ հաւատք . ուստի և երեքին առաքինութիւնքս են թէութիւն հաւատոց , Ապա հարկ է մեզ ժիր լինել մտօք , բանիւ և դործով , հանդերձ համեստութեամբ ըստ ամենայնի . յետ ժրութեան հարկէ լինել խոհեմ մտօք , բանիւ և դործով , հանդերձ պարկեշտութեամբ և ժրութեամբ . երբորդ անգամ ,

հարկ է լինել արիս մարմնով, դործով և սրտիւ հանդերձ խոնարհութեամբ, ժրութեամբ և խոհեմութեամբ, եթէ կամիմք ունել զուղիղ զճշմարիտ և զկատարեալ հաւատս իմաստութեան. Արիութիւն պարտի լինել հանդերձ խոնարհութեամբ. զի այր խոհեմ վստահ է 'ի ճշմարտութիւն և ոչ յանձնապատան յանձն. իսկ ամբարտաւանութիւն որ է յանձնապատանութիւն և մեծամտութիւն՝ ոչ գայ յառաջ 'ի ճշմարտութենէ, այլ 'ի կրից, և եղծանէ զարդիւնս խոհեմութեան, արկանելով 'ի յանդգնութիւն և 'ի ժպրհութիւն.

## ԳԼՈՒԽ Ե.

Թէ որն յերկց աստի պատշաճի 'ի քաղաքական, 'ի բնական եւ 'ի վերացեալ հաւատս.

Յայտ է թէ մեք զհաւատս յերիս ազգս բաժանեցաք, 'ի քաղաքական, 'ի բնական և 'ի վերացեալ. Քաղաքականն այն է որ առ հասարակ վստահութիւն կոչի. բնականն է փորձառական, իսկ վերացեալն իմացական.

Աստ արժան է մեզ ցուցանել թէ որն յերեցունց անտի, որ են ժրութիւն, խոհեմութիւն և արիութիւն որոյ ազգի հաւատոց պատշաճիցի. ի ժրութենէ, իբրեւ 'ի թէութենէ

Ծնանին քաղաքական հաւատք այն է վստահութիւն . զի անհնար է լինել վստահ առանց ժրութեան . 'ի խոհեմութենէ Ծնանին բնական հաւատք , այն է փորձառութիւն և հրմտութիւն , քանզի առանց խոհեմութեան անհնար է ստանալ և ունել փորձառութիւն և հմտութիւն զորս բնական հաւատոս կոչեցաք . իսկ յարխութենէ , իբրեւ 'ի թէութենէ բղխեն վերացեալ հաւատք որոյ մասունք են բնազանցականն , բարոյական և կրօնական , զորոց յիւրում տեղւոջ ճառեցաք .

Այլ ընդէր ժրութիւնն իցէ թէութիւն քաղաքական հաւատոց , կամ վստահութեան , քանզի ճշմարիտ վստահութիւն պարտի ծնանել 'ի ժրութենէ , ապա թէ ոչ լինէր անվտայութիւն կամ յիմարութիւն , ուստի և լինէր մոլութիւն .

Ընդէր խոհեմութիւնն իցէ թէութիւն բնական հաւատոց կամ փորձառութեան և հրմտութեան , քանզի առանց խոհեմութեան անհնար է լինել փորձ և հմուտ իրաց և օրինաց բնութեան .

Մնայ մեզ այժմ ասել թէ ընդէր արութիւնն իցէ թէութիւն վերացեալ հաւատոց որ է իմացութիւն , քանզի չէ հնար առանց արութեան ունել և պահել հաստատութեամբ զխելամտութիւնս բարոյական , բնազանցական և կրօնական հաւատոց .

## ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս թէութեանց ընդհանուր յուսոյ :

Յասացելոց անտի կանխաւ յայտ է , և եթէ ոք քաջ խորհիցի , մտօք իսկ գտանէ 'ի փորձառութենէ գիպաց պատահելոց , զի յոյս մեր որ 'ի հաւատոց է՝ կատարի ըստ գործոց մերոց եթէ բարեաց և եթէ չարաց , և այս կատարումն յուսոյ մերոյ ըստ գործոց , երբեմն գիպի 'ի գիտութենէ կամ 'ի տղիտութենէ մերմէ . այսինքն՝ 'ի գիտութենէ բարիք , և 'ի տղիտութենէ չարիք հանգիպին մեզ . Այլ բազում անգամ բարիք և չարիք որոց ակն ունիմք կամ պարտիմք 'ի հարկէ ակն ունել ըստ որպիսութեան գործոց մերոց՝ պատահին մեզ 'ի մարդկանէ . բարիքն 'ի համակիր մարդոց , և չարիքն 'ի հակակրաց . Այլ յերկոսին դէպս եւս յարմարութիւն տեղւոյն և ժամանակին 'ի մէջ մտանէ իբրեւ պարագայ եղելոցն ըստ իրին , ըստ գործոց և ըստ քանակութեան , վասն այսորիկ ասացաք այլուր , և աստէն եւս ասացուք , եթէ պարտ է մեզ առ յարդիւնս ածել զյոյս մեր՝ միտ եղեալ որոնել , գտանել և ընտրել զմարդիկ համակիրս , զտեղւոյ յարմարութիւն և զհոլովումն ժամանակի , և այն ըստ իրին , ըստ գործոցն և ըստ քանակութեան ,

եթէ կամիմք զի յոյս մեր լիցի աներկեւան ըստ  
չափոյ :

Այժմ հարկ է մեզ խօսել զհամակրութե-  
նէ , զյարմարութենէ տեղոյ , և զհողմանէ  
ժամանակաց թէ զինչ սոքա յայտ առնիցեն :

## ԳԼՈՒԽ Է.

Յազազս համակրութեան թէ զինչ իցէ :

Թէպէտ համակրութիւն յամենայն իրս ե-  
թէ յանշունչս և եթէ 'ի շնչաւորս դտանի , մեք  
թողեալ զայլ ամենայն համակրութիւնս , խօ-  
սեսցուք միայն զհամակրութենէ մարդոց :

Համակրութիւն մարդոց այն է յորժամ եր-  
կու կամ բազում անձինք ունին զնոյն միտս ,  
զնոյն կամս և զնոյն հաճութիւն : Զոր օրինակ՝  
Յովհաննէս կամի և հաճի խօսել և քարոզել  
զքարոյական սիրոյ , Պետրոս և Յակոբոս եւս  
զնոյն կամին և ընդ նոյն հաճին , ապա համա-  
կիր են միմեանց : Հովերոս սիրէ հարկանել քը-  
նար , զնոյն առնել ախորժէ և Որփէոս , ապա  
նոքա եւս համակիրք են միմեանց , և զամե-  
նայն կեանս իւրեանց զնուազածութենէ և  
զգեղգեղանաց խորհին և խօսին : Սոկրատ խոր-  
հի զէութենէ միոյ Աստուծոյ , զնոյն զմտաւ ա-

ծեն և Պղատոն և Արխատուել, ապա երեքին են համակիրք .

Համակրութիւն դայ յառաջ 'ի ներքին եօթն գործարանաց, այն է՝ յորպիսութենէ և 'ի գրութենէ նոցա . 'ի չորից խառնուածոց որպիսութենէ և 'ի չափոյ, 'ի ջլաց և յաղեաց որպիսութենէ զի սոքա ամենեքին ունին յարմարութիւն և սլատշածութիւն, այն է՝ գործարանք և խառնուած՝ ընդ բարոյական համակրութեան .

Ըստ բաւականին ցուցաւ թէ զինչ է համակրութիւն, այժմ՝ տեսցուք թէ քանի ազգ են համակրութեան .

Համակրութիւնն 'ի մարդիկ՝ երեքկին է . այն է՝ 1. համակրութիւն 'ի միտս, կամ համամտութիւն . 2. համակրութիւն 'ի խորհուրդս, որ է համախորհութիւն . և 3. համակրութիւն կամաց որ է համակամութիւն .

Եթէ երկու կամ բազում անձինք իցեն մի անգամայն համամիտ, համախորհուրդ և համակամ, լինին ըստ ամենայնի համակիրք . իսկ եթէ իցեն մի մտօք, այլ ոչ մի խորհրդով և կամօք, չեն կատարեալ համակիր, այլ ըստ մասին . թէպէտ և մասնաւոր համակրութիւնն ևս է համակրութիւն, այլ ոչ ազգու և մշտատեւ . Նոքա որ ըստ մասին համակիրք են, երբեմն միաբան են ընդ միմեանս և երբեմն անմիաբան .

կատարեալ համակիրք միշտ միաբան են

ընդ միմեանս , վասն որոյ մարթ է համարել զնոսա բարոյապէս մի , մի սիրտ և մի ոգի բընակեալ 'ի բազում մարմինս , որք զմի օրինակ խորհին , միով օրինակաւ շարժին , և միապէս ազդեն , իբրեւ զնոյիկ կամ զայլ մետաղս որ 'ի բազում մասունս բաժանին , այլ ունին զնոյն ազդեցութիւն , և կարեն միւսանգամ դալ առ միմեանս և միանալ :

Դարձեալ համակրութիւնն մտօք կամ համամտութիւն , է բնական . համակրութիւնն խորհրդով կամ համախոհութիւն է վերացեալ , իսկ համակրութիւնն 'ի կամս , կամ համակամութիւն , է քաղաքական . ի մէջ երեցունց սոցա՝ համամտութիւնն է հաստատուն , այլքն են փոփոխական և յողոողդ , քանդի խորհուրդ և կամք բազում անգամ փոփոխին . Արդ որովհետեւ մարդիկ խարդախք և կեղծաւորք համակրութիւն կեղծաւորին առ 'ի խարել , չահել ինչս և յագեցուցանել զիւրեանց անյագցանկութիւն , ուստի պարտ է բարոյագէտ անձանց ճանաչել զնոսա 'ի նշանաց նոցա և զգոյշ լինել 'ի նոցանէ :

Ասացուք այժմ զգործոց համակրութեան . Համակրութիւնն եթէ 'ի բարին և եթէ 'ի չար , յառաջ ածէ արդիւնս մեծամեծս չարեաց և բարեաց . Թագաւոր կամ իշխան կամ այլ ոք աւագ որ է բարեբարոյ , իմաստուն , արդար , քաջ և մարդասէր , 'ի ձեռն համակիր անձանց

գործէ բաղում բարիս . գնէ օրէնս , ուղղէ , շինէ և յարդարէ զաշխարհ : Զսորին հակառակն գործէ որ չարն է և անիրաւ , անգութ , տղէտ և դժնեայ . զի սա եւս 'ի ձեռն անձանց որ համակիրքն են նմա՝ քանդէ և տապալէ զամենայն . համակրութիւն է որ տայ ածել 'ի պատիւ և 'ի վառս , 'ի պաշտօն և 'ի գործ զբարիս կամ զչարս ըստ իւրում հաճութեան . համակիրն ոչ ընդունի բողոքս կամ ամբաստանութիւնս , թէ եւ արդար իցեն , զիւրմէ համակրէն . փոխանակ պատժելոյ զիւր համակիր անիրաւ և յանցաւոր , պատուհասէ զայն որ ամբաստանն լինի կամ բողոքէ : Վասն այնորիկ հարկ է ամենայն մարդոյ , մանաւանդ այնոցիկ որ ուղղիչքն են ազգայ և ժողովրդոյ , եթէ աշխարհական իցէ իշխանութիւն նոցա և եթէ եկեղեցական , լինել այր ընտիր և առաքինի . ունել զյոյս 'ի հաւատոյ , հաստատեալ 'ի բարին , զի համակրութիւն նոցա իցէ ընդ բարիս և մի ընդ չարս , և այնպէս մի լիցի փտանդ հասարակութեան անկանելոյ ընդ բռնութեամբ անդդամաց և անիրաւ պաշտօնելոյ :

Ի համակրութենէ են և այլ եւս մասնաւոր բարիք . որպէս խաղաղութիւն և յաջողութիւն յընկերութեան , և ծնունդ որդեկաց յարևոման ծնողաց 'ի համակրութենէ առն և կնոջ . յառաջագիմութիւն և զօրութիւն ազգայ և քաղաքայ՝ 'ի համակրութենէ ժողովրդեան .

ծաղկումն և մեծութիւնն 'ի վաճառականութեան , յարուեստս և 'ի մշակութեան՝ 'ի համակրութենէ ընկերաց , արուեստագիտաց և գործաւորաց , հողատերանց և մշակաց , և այլք եւս ըստ ամին օրինակի մի ըստ միջէ :

Գարձեալ է գործ համակրութեան զի յորժամ ոք պարասլի յայն գործ առ որ ունի ձիրս և բերումն՝ բարգաւաճի և յառաջադէմ լինի , վասնորոյ պարտ է միշտ հայել 'ի դաստիարակութեան 'ի յօժարութիւնս և 'ի ձիրս իւրաքանչիւր ուրուք , և այնպէս առնել զմարդիկ համակիրս ըստ գործոց :

## ԳԼՈՒԽ Ը.

Յազազս յարմարութեան երկրի թէ զինչ իցէ :

Յարմարութիւնն երկրին է պատշաճաւորութիւն և յանկութիւն տեղւոյն ուր առնեմք ինչ գործ՝ ընդ նմին իսկ գործոց : Ուր գուցէ այս պատշաճաւորութիւն , անդ յաջողին գործք մեր եթէ բնականք , եթէ բարոյականք և եթէ քաղաքականք , և մեք չկրեմք ինչ ամօթ կամ դժուարութիւն :

Զյարմարութիւնն երկրին որոշել դժուարին է յոյժ . զի բազում են կլիմայք ըստ գրից , հայեցուածոց , ջրոց և հողմոց որ տիրեն , և

ըստ այլոց հանգամանաց : Այլ երկս գլխաւոր կէտս պարտ է ընտրել , զբնականն , զբարոյականն և զքաղաքական : Եւ պարտ է գիտել զի եթէ 'ի բնականս , եթէ 'ի բարոյականս և եթէ 'ի քաղաքականս լաւն և պիտանին , որպէս և յոսին և անպիտան , յառաջ դան 'ի յարմարութենէ երկրին :

Ըստ բնականին նկատեալ՝ յարմարութիւն երկրին ըստ երեցունց խառնմանցս այսոցիկ առնէ ազգեցութիւն , ըստ ցրտութեան , ըստ բարեխառնութեան և ըստ սաստիկ ջերմութեան : Եւ տարբերութիւնս այս գործի սովորաբար ըստ երկց գրից երկրին որ են լեռնայինն , դաշտային և խորածոր : Եթէ տունկք և եթէ անասունք ըստ երկց այսց խառնուածոց և գրից պէս պէսք և այլակերպք են ըստ բուսոյ բարուց , ըստ գունոց , ըստ համոց , հոտոց , չափոց և այլոց հանգամանաց : Բնական որպիսութիւն երկրին բազմապատիկ ազգեցութիւնս գործէ 'ի բնականս , զորօրինակ չիք տարակոյս թէ որոց խառնուած արիւնային է՝ առողջագոյնք լինին , եթէ բնակիցեն յայնպիսի տեղիս ուր հողմն հիւսիսոյ տիրէ : շիկամաղձոտք՝ եթէ բնակին 'ի վայրս ուր հողմն արեւմտեան իշխէ , սեւամաղձոտք պարտին բնակել ընդդէմ՝ հարաւային հողմոյ , իսկ մաղասայլինք անդ՝ ուր շնչէ ստէպ հողմ՝ արեւելեան :

Բնական որակսութիւն երկրին ունի ազգեցութիւն և 'ի բարոյս կամ 'ի բարոյականս . զորօրինակ 'ի պատմութենէ և 'ի փորձոյ յայտ է թէ ժողովուրդք լեռնաբնակք լինին վայրագ , յափշտակող , անգութ , անյօժարք 'ի կրթութիւն . դաշտաբնակքն նմին հակառակ լինին համբոյրք , առատաձեռն , մարդասէրք և մէտք 'ի կրթութիւն և 'ի յառաջադիմութիւն . Արդարեւ գտանին լաւաբարոյք 'ի լեռնաբնակս և չարաբարոյք 'ի դաշտաբնակս , այլ դուն ուրեք և անօսր .

Նոյն բանք են և դքաղաքականէն . ոչ ամենայն խառնուած և դիր երկրի յարմարագոյն է 'ի հողագործութիւն , յարուեստ և 'ի վաճառաշահութիւն . դարձեալ և որ յարմարագոյնն է 'ի հողագործութիւն , չլինի պատշաճ յամենայն ազգս բերոյ և արդեանց . և այլքն ևս նոյնպէս . Ապա իմաստութիւն մեծ է միտ գնել . որոնել և ուսանել զհանգամանս երկրին յամենայնի , եթէ կամիմք գտանել յաջողութիւն . Եւ զայս առնել արժան է վասն օգոյ երկրին , դրից և հայեցուածոց 'ի պատճառս առողջութեան , վասն բարուց , սովորութեանց և յօժարութեանց մարդկան՝ 'ի պատճառս համակրութեան , զի դաշտաբնակն հեղ և մարդասէր չկարէ գտանել համակրութիւն 'ի մայառաբնակ , սորամուտ բնակիչս լեռնարդաց , և ոչ լեռնաբնակն դժնեայ 'ի

հարթարնակ, դաշտասէր բնակիչս քաղաքաց  
և շինից, միտ դնել պարտ է և բերոց և արդ-  
եանց երկրին 'ի պատճառս արուեստից և վա-  
ճառականութեան և մշակութեան: Եթէ ոչ  
միտ դնիցեմք այսոցիկ, վտանգիմք յառողջու-  
թեան, 'ի պատուի և 'ի շահու մերում:

### ԳԼՈՒԽ Թ.

Յազազս հոլովման ժամանակաց թէ զինչ իցէ, եւ  
նոք իցեն ազգեցութիւնք նորա յէս եւ 'ի գոյս:

Հոլովմամբ ժամանակաց, որպէս յայտ է,  
պարտ է իմանալ զշրջանս դարուց, տարեաց,  
ամսոց, աւուրց և ժամուց, և զվիտիտիսմունս  
եղանակաց: Հոլովումն ժամանակաց դործի 'ի  
ձեռն թաւալման և գնացից մտորակաց զարե-  
գակամբ, արբանեկաց նոցա զնոքիմք իսկ զմ-  
տրակօք, և որպէս հաւանական է ըստ աս-  
տեղագիտաց, մեծամեծ հոլովմանց բովան-  
դակ մտորակային դրութեան հանդերձ արե-  
գակամբ զայլով արեգակամբ որ մեծազոյն է  
քան զմերն:

Հոլովումն երկնային մարմնոց կամ թաւա-  
լումն և շարժումն նոցա այլ և այլ ազգեցութիւնս  
գործէ յամենայն իսկ լուսաւորս, մանաւանդ

'ի վերայ մերոյ մտորակի որ է երկիր • Այլ մեք  
 երկուս ազգեցութիւնս կամիմք զմտաւ ա-  
 ծել՝ մին ուղղակի , միսն անուղղակի • Ուղ-  
 զակի ազգեցութեամբ է զի լինին գիշեր և  
 տիւ , ամառն և ձմեռն , գարուն և աշուն • և  
 աստի գան յառաջ փոփոխութիւնք 'ի ծոց  
 երկրի , 'ի մետաղս , 'ի ջուրս և յայլս և սնիւթս  
 հանքային կարգի • Դարձեալ 'ի բոյսս որք 'ի  
 փոփոխմանց անտի լինին այլակերպ , ապակա-  
 նին , մեռանին , գրեթէ ջնջին իսկ , և միւս-  
 անգամ նորոգին , ծնանին և գան 'ի դոյ • Բազ-  
 մանան և նուազին , աճին և հիւժին , զօրա-  
 նան և տկարանան , և այնպէս են միշտ 'ի  
 շարժման • Զնոյն մարթ է ասել զզգայականաց  
 և զմարդոց • զի ո՞ կարէ ուրանալ զազգեցու-  
 թիւն փոփոխմանց ժամանակաց յորպիսութիւն ,  
 յաճումն , 'ի նուազութիւն և 'ի կեանս իսկ  
 զգայնոց և բանաւորաց • Փոփոխումն դրից և  
 շարժմանց մտորակաց է որ 'ի քաջ 'ի բաց հին  
 ժամանակս , կամ 'ի դարս երկրաբանականս ,  
 յառաջ բերեալ է յեզափոխութիւնս 'ի վերայ  
 երկրի , և ցարդ իսկ սասանութիւնք և բոր-  
 բոքումն հրաբուխ լեբանց գործեն աւեր բա-  
 զում , և փոփոխեն զերեսս ցամաքի և ծովու •  
 Յանուղղակի ազգեցութենէ հոլովման ժա-  
 մանակաց յառաջ գան փոփոխութիւնք գի-  
 պաց և այլ և այլ վիճակաց մարդկան • Այս-  
 պէս ըստ հոլովելոյ ժամանակաց հոլովին և

կեանք անհատից և ազգաց . ծնանին , դան  
յերիտասարգութիւն , ծերանան և մեռանին .  
դէպք դիպաց յաջորդեն , որպէս ձախողու-  
թիւնք յաջողութեանց , աղքատութեան՝ մե-  
ծութիւն , երջանկութեան՝ թշուառութիւն ,  
առողջութեան՝ հիւանդութիւն , և ընդհակա-  
ռակն , Եւ քանզի մեծագոյն մասն 'ի փոփո-  
խութեանց բարոյական և քաղաքական կար-  
գի , որպէս յաջողութեան 'ի ձախողութիւն ,  
կործանումն և կանգնումն ազգաց և թագա-  
ւորութեանց և այլոց բաղմաց , ոչ բացարձա-  
կապէս , այլ ըստ թէական վճռոց ինչ Աստու-  
ծոյ լինին , այն է՝ եթէ այս ինչ դէպ դիպես-  
ցի , այն ինչ գործ յաջող կամ անյաջող զայնր  
զհետ գաց , և զի ամենայն ինչ 'ի բնութեան  
միակերպ օրինօք գործի , ապա պարտ է եթէ  
'ի պատմութենէ , և եթէ 'ի դիտութենէ և 'ի  
փիլիսոփայութենէ ջանալ հասու լինել թէ ոյք  
են պատճառք յորոց ըստ հոլովման ժամանա-  
կաց այս ինչ և այն ինչ դէպք 'ի հարկէ և  
իրբեւ 'ի բնական պատճառաց լինին , Պարս-  
դայք որ զկործանումն Ասորեստանեաց , Մա-  
բաց , Պարսից , Յունաց և Հռոմայեցւոց յա-  
ռաջ բերին ըստ հոլովելոյ ժամանակաց՝ պար-  
տին անշուշտ և զայլոց տէրութեանց յառաջ  
բերել ըստ նմին օրինակի , Այն ինչ՝ որ զհի-  
ւանդութիւն կամ զայլ ինչ ձախողութիւն և  
զյաջողութիւն միոյ ուրուք գործեաց , պարտի

դործել և դիմն , ըստ պարագայից և ըստ հոլովման ժամանակաց :

Հոլովումն ժամանակաց ազդէ 'ի մարդիկ ըստ երկից գլխոց , 'ի տնկական որպիսութիւն նոցա , 'ի զգայականն և 'ի բանական : Տնկականն ըստ հոլովման ժամանակի աճէ , յորմէ և փոփոխի տնկականն էութիւն ըստ խառնուածոց , ըստ չափոց և ըստ այլոց որպիսութեանց , և անտի յառաջ գայ փոփոխումն զգայականնին . զի յաճել և 'ի զօրանալ տնկականին աճէ և զօրանայ զգայականն , որպէս և 'ի վատթարել և 'ի տկարանալ նորա՝ վատթարէ և տկարանայ և սա : փոփոխման զգայականին զհետ գայ փոփոխումն 'ի բանականն , այն է՝ 'ի կարողութիւնս հոգւոյն որ են միտք և կամք , Ամենայն գաղափարք , ծանօթութիւնք , կիրք և բաղձանք ըստ հոլովման ժամանակի փոփոխին , որպէս տեսցի 'ի պատկերիս որ զկնի :

---

## ԳԼՈՒԽ Ժ.

Թէ ո՞րն 'ի թէութեանց աստի ընդհանուր յուսոց պատշաճի մասնաւորաց :

Որպէս յայտ է , զյոյս բաժանեցաք 'ի վերանդր 'ի բնական , 'ի բարոյական և 'ի քաղա-

քական, Արդ համակրութիւն է թէութիւն  
քաղաքական յուսոյ. զի մինչեւ ոչ դասուք  
համակիրս մեզ, ոչ կարեմք յուսալ պատիւ և  
պաշտօն, ինչս և օգնութիւն, Ոչ ոք կամի աալ  
ինչ կամ առնել իւրում հակակրին, այլ խնդրէ  
զիւր համակիր, վասն որոյ առակ է թէ Լաւ է  
քարինս կրել ընդ իւրում համակրի, քան ՚ի  
փառս վայելել ընդ հակակրի իւրում. Ապա չէ  
պարտ յուսալ բարիս ՚ի հակակրէ, և եթէ ոք յու-  
սայցէ ևս, յոյս նորա ոչ է աներկեւան ըստ  
չափոյն, այլ յողդողդուն և կասկածելի.

Աստի ուսանիմք քննել և գիտել թէ ո՞ւմ  
ծառայեմք և վասն է՞ր, և ապա յուսալ եթէ  
պատիւ, եթէ գործս, և եթէ այլ ինչ օգտա-  
կար մեզ. Նա որում ծառայեմք, եթէ չիցէ  
մեզ համակիր, եթէ զանձն մեր ՚ի մահ ևս  
մատնիցեմք վասն նորա, չկարեմք շահել զնա,  
և չօգտիմք ինչ, թէպէտև անձն այն յորմէ  
յուսամքն՝ իցէ հայր կամ մայր, եղբայր կամ  
քոյր, որդի կամ կին, բարեկամ կամ ընկեր.  
Ի գտանել մեզ զհամակիր մեր, իսկոյն յոյս  
մեր լինի աներկեւան ըստ չափոյն. Տես և զոր  
վասն համակրութեան ասացաք այլուր:



## ԳԼՈՒԽ ԺԱ.

Թէ զինչ իցէ թէութիւն բնական յուսոյ .

Ասն թէութեան քաղաքական յուսոյ , այն է՝ յընկերական կեանս կամ 'ի կենակցութեան , ասացաք թէ է համակրութիւն մարդկան . Այժմ՝ կայ մեզ առաջի ասել թէ զինչ է թէութիւն բնական յուսոյ , այն է՝ երբ կամ վասն էր կարեմք յուսալ ինչ 'ի բնութենէ յիրս որոց ծնունդ կամ արդիւնք բնական կարգի են .

Արդ թէութիւն բնական յուսոյ է յարմարութիւն երկրին , Արդէն վերագոյնն ասացաք թէ յարմարութիւն երկրին ըստ օգոյ , ըստ գրից գեանոյն , ըստ հողմոց , ըստ կազմութեան հողոյն և այլոց , ունի աղդեցութիւն եթէ ոչ բացարձակ , գէթ մեծ յոյժ 'ի վերայ ամենայնի , մանաւանդ 'ի բնականս . Ամենայն երկիր ունի զիւր բերս կամ արդիւնս , եթէ զանշունչս , եթէ զգգայունս և եթէ զբանաւորս . Զոր օրինակ՝ ոչ ամենայն հող զնոյն մետաղս , զհանածոյս , զնոյն բոյսս , զնոյն անասունս , նա մանաւանդ զնոյն ցեղ կամ օրինակ մարդկան յառաջ բերէ . եթէ զայսր երկրի բոյսս կամ զանասունս կամիցի ոք յառաջ բերել յայլում երկրի որոյ յարմարութիւնն առ այն բոյս կամ կենդանի չունի յարմարութիւն՝ բազում անգամ ոչ յաջողի . եթէ յաջողեսցի ևս , բազում

աշխատութիւնք և ծախք և արուեստ պիտին .  
 դարձեալ չլինի ուժեղ և արգասաւոր իբրև  
 զայն զոր երկիր յարմարագոյն 'ի բնէ բերէ յա-  
 աաջ . Ո՞րիցէ որ կարիցէ ակն ունել բուսու-  
 ցաներոյ 'ի Հիւսիսային կողմանս երկրի ձիթենի  
 և արմաւ և նարինջ և նուռն և զայլ բազում  
 ազգս տնկոց և արմատոց որ 'ի Հարաւային  
 աշխարհս բուսանին . Նոյն բանք են և զկեն-  
 դանեաց , նաեւ զմարդոյ . Չէ հնար 'ի յար-  
 մարութենէ երկրին Ափրիկէի յուսալ 'ի բնէ  
 մարդ սպիտակ , բայց եթէ 'ի խառնելոյ ընդ-  
 սպիտակ սերնդոյ . և ոչ 'ի յարմարութենէ Եւ-  
 րոպիոյ յուսալ 'ի բնէ ծնունդ սեաւ , եթէ ոչ  
 'ի խառնածին ամուսնութենէ սպիտակի ընդ-  
 սերոյ .

Յայսմ ամենայնէ յայտ է թէ ամենայն ինչ  
 բնական փոփոխի ըստ տեսակին և ըստ որպի-  
 սութեանց իւրոց բնականաց ըստ զանազանու-  
 թեան տեղոյն և կլիմային . և այնպէս լինի  
 լաւ կամ վատթար , շահաւէտ կամ անպիտան ,  
 առատ կամ սակաւ . Վասն որոյ պարտ է մեզ  
 ամենեցուն զի զոր ինչ յուսամքն 'ի բնութենէ՝  
 ունիցի պատշաճութիւն կամ աղերս միաբա-  
 նութեան ընդ յարմարութեան երկրին . և զայս  
 թէութիւն պարտիմք որոնել և ճանաչել , ապա  
 թէ ոչ յոյս մեր ոչ լիցի աներկեւան ըստ չա-  
 փոյն . Եթէ չգտանեմք զյարմարութիւն երկ-  
 րին , չէ արժան 'ի բնութենէ ևս յուսալ բա-

րիս կամ արդիւնս . քանզի շտեմարան ամե-  
նայն բնական արդեանց է երկիր , ընդ որոյ  
յարմարութեանն կից է ծնունդ և սերունդ և  
զարգացումն իրաց բնականաց :

## ԳԼՈՒԽ ԺԲ .

Թէ զինչ իցէ թէութիւն բարոյական յուսոյ :

Թէութիւն բարոյական յուսոյ է հոլովումն  
ժամանակաց քանզի 'ի հոլովմանէ ժամանակաց  
բազում ինչ գործի եթէ յերկրի և եթէ յօդս  
վերինս . Ուստի և 'ի ճանաչել մեր հաւաստ-  
եաւ զհոլովումն ժամանակաց 'ի բազում ինչ  
իրս որ բնական են՝ յոյս մեր ոչ լինիցի սնտի և  
յողդողդ . Այլ պարտ է մեզ հմուտ լինել հա-  
ւաստեալ իրաց եղելոց և պէսպէս հանդամա-  
նաց նոցին , զոր օրինակ թէ յորում ամի կամ  
յամսեան կամ 'ի տեղւոջ , կամ որով չափով  
լեալ և դիպեալ իցեն . Եւ վասն այսորիկ ար-  
ժան է մեզ գիտել զտիրող աստեղս և զհա-  
մաստեղութիւնս տարւոյ , և զկէտ մոլորա-  
կաց ըստ հաշուի և համարոյ ճշմարիտ աստե-  
ղագիտութեան . Քանզի բազում դէպք բնա-  
կանք պատահին յազգեցութենէ լուսաւորաց ,  
և ազգեցութիւն նոցա է ըստ դրից և համե-

մատութեան նոցա հանդիպելոյ ընդ միմեանս  
 և ընդ երկրի . որպէս զի հանապազ 'ի նոյն  
 դիրս և 'ի համեմատութեան հանապազ նոյն  
 իրք նովին օրինակաւ պատահին . Եթէ արե-  
 գակն և լուսին յայլ և այլ դիրս և 'ի համեմա-  
 տութիւնս իւրեանց ընդ երկրի նովին օրինա-  
 կաւ միշտ փոփոխեն զազդեցութիւն իւրեանց ,  
 զորոց զհետ գան տիւ և դիշեր , ամառն և  
 ձմեռն , այլովքն հանդերձ , և այլ ևս ազգի  
 ազգի փոփոխմունք և երեւոյթք յօդս , որք և  
 ճշգիւ գուշակին , մանաւանդ թէ գիտին յաս-  
 տեղազիտաց և յայնցանէ որ միտ դնեն օդե-  
 բեւութից , զինչ զարմանք են եթէ եւ այլք  
 եւս յաստեղաց , մանաւանդ 'ի մըլրակաց ու-  
 նիցին նոցին նման ազդեցութիւնս 'ի վերայ  
 երկրի ուղղակի կամ անուղղակի 'ի ձեռն մեր-  
 ձաւոր աստեղաց իւրեանց , Ոչ է ճշմարիտ կար-  
 ծիք նոցա որ համարին թէ ոչ ինչ ազդեցու-  
 թիւն գործի 'ի մըլրակի աստ մերում յերկ-  
 նային մարմնոց , բաց 'ի սակաւ լուսոյ և 'ի ջեր-  
 մութենէ :

Ամենեցուն յայտ է թէ 'ի հոլովմանէ ժամա-  
 նակաց ճրչափ փոփոխմունք լինին յերկրագնդի  
 աստ . երկիր բարձրացեալ լինի լեռոն , կամ  
 խոռոջացեալ բանայ վիհս մեծամեծս . գետք  
 փոխեն զընթացս իւրեանց , ծով զերեւալ ողողէ  
 զցամաք , և հրաբուխք երեւին : Ի հոլովմանէ  
 ժամանակաց լինի և փոփոխումն 'ի տունկս և

յանասունս և 'ի մետաղս եթէ ըստ աճման և եթէ ըստ նուազութեան և ըստ այլոց հանդամանաց նոցա , Մեզ չէ մարթ զամենայնի զպատճառս ճշգիւ գիտել , այլ կարող եմք ոչ սակաւ ինչ իրաց տեղեկանալ եթէ միտ գնիցեմք , զի փորձ և հաշիւ և ուղիղ արամաբանութիւն բազում ինչ ցուցանեն մեզ հաւաստեալ . զոր օրինակ զխաւարումն արեգական և լուսնոյ , զչըջանս մըրբակաց և զգիտաւորաց , զորոց ռամիկք և տգէտք այլազոյ կարծիս ունէին և ունին . Ո՞ իշխիցէ ասել թէ չեն յազդեցութենէ երկնային մարմնոց սէս սէս հիւանդութիւնք , մանաւանդ մահք տարաժամք կամ ախտք համատարածք զորս տարափոխիկս կոչել սովոր եմք . այսպիսի անհարթութիւնք գործին 'ի հեռաւոր ինչ ազդեցութենէ աստեղաց , և որ զառաջինն չէր տարափոխիկ՝ յետոյ լինինոյնպիսի .

Ապա չէ սխարտ արհամարհել և լքանել զքըննութիւնս աստեղագիտականս , որպէս առնեն բազումք որ սնապաշտութիւն և յիմարութիւն իմն համարին զգուշակութիւնս եթէ հնոց և եթէ նորոց որ զբազում իրաց պատճառս դնեն յազդեցութենէ լուսաւորաց . Բանք մեր չեն զայնպիսի գուշակութեանց որ քաղէութիւն կամ աստեղաբաշխութիւն կոչի , ըստ որում առհինս ոմանք սովոր էին զկենդանակերպս համարել պատճառ բազում գիպուածոց , ըստ նուան նոցա տալով նոցա պաշտօն , զորօրինակ՝

առիւծ կենդանակերպի՝ զօրութիւն , կարճի՛  
զիջնասակարութիւն , խոյի՛ զմեծութիւն , և այ-  
լոց եւս սոցին նման . այլ մեք խօսիմք զբուն  
աստեղադիտութենէ որ ՚ի ձեռն թուոց և չա-  
փաբերական արուեստի , քննութեան , փորձոյ  
և դիտողութեան ջանայ գտանել և գտեալ իսկ  
է , որպէս ասացաք զպատճառս բնական ե-  
րեւութից ,

Ապա նոքա որ յուսան ինչ ՚ի բնական իւ-  
րաց , որպէս ՚ի պտղաբերութենէ երկրի , ՚ի  
մշակութենէ , ՚ի ծովադնացութենէ և յայլոց  
այսպիսեաց , պարտին հմուտ լինել ազգեցու-  
թեան բնական պատճառաց յորոց կարգի են  
և լուսաւորք . ապա թէ ոչ ձեռնարկութիւն  
նոցա բազում անդամ ՚ի դերեւելանեն . քանզի  
սերմանեն ուր և յորժամ չէ պարտ սերմանել ,  
կամ ո՛չ սերմանեն ուր և յորժամ սերմանելն  
պարտ էր . Յուսան առողջութիւն , առատու-  
թիւն և բազմածնութիւն անդ և յայնժամ ուր  
և յորժամ պարտ էր մանաւանդ հիւանդութեան  
կամ կոտորածի , նուազութեան և ամբութեան  
ակն ունել և ակն ունելով՝ յառաջագոյն պատ-  
րաստ գտանել և զգարմանսն որոնել , Գլխառո-  
րեսցուք զբանս մեր ասելով թէ զդիտութենէ  
հորովման ժամանակաց կախեալ կայ , դէժ ՚ի  
բնականս , աներկեւանութիւն յուսոյ մերոյ ,



## ԳԼՈՒԽ ԺԳ.

Նզրակացութիւն թէութեանց ընդհանուր յուսոյ :

Յասացելոց անտի 'ի վեր անդր՝ յայտ եղև թէ զի՞նչ իցեն թէութիւնք ընդհանուր յուսոյ . այլ աստ 'ի դիւրութիւն ուսանողաց համառօտելով ասացուք :

Թէութիւնք ընդհանուր յուսոյ են համակրութիւն ըստ իրին , յարմարութիւն երկրի ըստ գործոյն , հոլովումն ժամանակաց ըստ քանակութեան . Այլ համակրութիւն է թէութիւն այնր յուսոյ զոր ընդունիմք 'ի քաղաքական հաւատոյ , այն է 'ի վստահութենէ : Յարմարութիւն երկրի է թէութիւն այնր յուսոյ զոր ընդունիմք 'ի բնական հաւատոյ . իսկ հոլովումն ժամանակաց է թէութիւն այնր յուսոյ զոր ընդունիմք 'ի վերացեալ հաւատոյ . Համակրութիւնն է յիրս , յարմարութիւն երկրին 'ի գործըս և հոլովումն ժամանակաց 'ի քանակութեան :

Յիրս՝ պարտ է մեզ համակրութիւն , կամ գտանել համակիրս . 'ի գործս՝ արժան է մեզ որոնել զյարմարութիւն երկրի . իսկ 'ի չափս իրաց և գործոց պիտոյ է մեզ գիտել զհոլովումն ժամանակաց . Եթէ յոյս մեր ոչ լիցի ըստ այսմ օրինակի , ոչ լիցի աներկեւան ըստ չափոյն :



## ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս թէութեանց ընդհանուր սիրոյ :

Թէութիւնք ընդհանուր սիրոյ են երեք-  
կին . արդարութիւն հանդերձ շնորհօք , սրբ-  
բութիւն հանդերձ բարեխառնութեամբ , և  
ճշմարտութիւն հանդերձ հաստատութեամբ և  
միշտ . եթէ չեմք արդարք հանդերձ շնորհիւ ,  
ոչ սուրբք հանդերձ բարեխառնութեամբ , և  
ոչ ճշմարտք հանդերձ հաստատութեամբ ,  
սէր մեր չէ կատարեալ 'ի բարին . ի պակասել  
այսոցիկ , կարէ լինել տակաւին սէր , այլ այն  
ոչ է սէր յօգուտ ընկերին և յառաջ եկեալ  
յաստուածսիրութենէ և յանձնուրացութե-  
նէ , այլ լոկ զգայական ախորժակ զոր և ան-  
շունչ իրք և անասունք եւս ունին . Քանզի ,  
որպէս յառաջագոյն ասացաւ , անշունչքն և  
անբանք ևս սիրեն զցանկալին և զախորժելին  
իւրեանց , այլ վասն յագեցուցանելոյ զախոր-  
ժակս իւրեանց . այսպէս սիրելով նոքա կամին  
զիւրեանց բարիս մանաւանդ քան զայնոցիկ  
զորս սիրեն . Այսպիսի զգայական սէր է մա-  
նաւանդ անիրաւութեամբ և կողոպտելով քան  
արդարութեամբ և շնորհօք . աղտեղութեամբ  
է և պղծութեամբ քան սրբութեամբ և բա-  
րեխառնութեամբ , ոչ է ճշմարտութեամբ և

միշտ հաստատուն և մնայուն, այլ ստույթեամբ, կեղծեօք, յողդողդուն և առժամանակեայ. Այսպիսի սէր որ է զգայականաց և զգայասէր մարդոց՝ ոչ է բուն սէր որ պարտի լինել կատարեալ ՚ի բարին:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս արդարութեան:

Արդարութիւնն է ուղղութիւն մտաց և պատրաստութիւն կամաց որով ոք ՚ի ճանաչելն զիրաւունս ուրուք հաւանի այնմ գործնականապէս: Արդարն ոչ կամի զայլոց իրաւունս յինքն յափշտակել և բռնաբարել, և ոչ առնու յանձն զի և այլք զիւր իրաւունս յափշտակեալ բռնաբարիցեն: Դարձեալ՝ արդարն ոչ կամի զի և այլք զայլոց իրաւունս զրկիցեն: Միշտ և հանապազ ունի ՚ի ձեռին իւրում կշիռ հաւասար, և կամի առնել միշտ զարդարութիւն: Զարդարութիւնն պարտ է մեզ յերիս դէպս մանաւանդ ՚ի կիր արկանել, ՚ի գատելն, ՚ի կշռելն և յառնել մերում գործ ինչ:

## ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս թէ քանի ազգք են արդարութեան, եւ քանի օրինակաւ գործի արդարութիւն :

Արդարութիւն բաժանի յերկուս . Արդարութիւն ըստ թուոյ կամ թուական, եւ՝ Արդարութիւն ըստ չափոյ կամ տրամաբաշխական . Թուաբանական արդարութիւն այն է զի հաւասարապէս բաժանեմք կամ առնեմք զոր ինչ առնեմքն առ ամենեւեան, ըստ տրամաբաշխական արդարութեան առնեմք կամ տամք ոչ ամենեցուն հաւասար, այլ իւրաքանչիւր ըստ արժանեաց եւ ըստ կարեաց :

Արդարութիւն երկւք օրինակօք գործի, մտօք, կամօք եւ արդեամբք :

Արդարութիւն մտօք այն է զի խնդրեացուք ամենայն վտթով եւ զգուշութեամբ, զամենայն հնարս ՚ի կիր արկեալ, քննել, ՚ի վերայ հասանել եւ ստուգել զիրաւունս այլոց ՚ի դատել մերում զնոսս, մանաւանդ եթէ իբրեւ դատաւոր ՚ի սլաշտօնէ դատիմք զոք . Այլ զի մի խարիցիմք ՚ի դատաստանի մերում, սլարտ է լինել տեղեակ այլ եւ այլ հնարից, զննութեանց եւ քննութեանց որովք դատաւորք անաչառք սովոր են վարել, յորժամ ունին ՚ի վեր հանել զիրաւունս ուրուք կամ զանիրաւութիւն հա-

կառակորդին , զճշմարտութիւն միոյն և զսրտութիւն կամ զխարէութիւն միւսոյն , մերթապղով խօսել զնոսա երես առ երես , մերթառանձին առանձին , խնդրելով վկայս և ստուգելով զաստիճան ուղղութեան վկայութեան և ճշմարտախօսութեան նոցա : Առ այս պիտոյ է ճմարտութիւն և փորձ , մանաւանդ գիտութիւն և մտադրութիւն ուղիղ կանոնաց տրամաբանութեան : Որ միանգամ անգէտ են օրինաց դատաստանի և քննութեան 'ի ստուգել զասպացոյցս և զվկայութիւնս , լաւ է նոցա բնաւ չմըխել զանձինս յայնպիսի ծանր և 'ի վախուկ պաշտօն , զի հետեւութիւն անիրաւ ինչ դատաստանի չէ թեթեւ ինչ , այլ կախեալ կայ բազում անգամ զանիրաւութենէ : Վճռոյ կործանումն և աւեր անհատից , նաեւ ամբողջ գերդաստանաց , և պատասխանատուութիւն ահաւոր կայ մնայ առաջի անաչառ ատենի աւնակալին , յորոյ արդարութենէ դողան երկինք և երկիր :

Ոչ մտօք միայն , այլ և կամօք պարտ է լինել արդար , այն է՝ կամեւ զի ամենեցուն լիցի արդարութիւն , կամ պարտ է լինել պատրաստ և յօժար զի եթէ իցէ 'ի կարի մերում և կախեալ կայցէ զմէն՞ , արասցուք իրաւունս ընկերին , և տրամեցուք և զայրասցուք 'ի տեսանել զի զրկին անմեղք , և եթէ հնար ինչ իցէ , արդեւ լիցուք ամենայն զրկանաց , իսկ դորձովս

արդար լինելէ չզրկել զոք արդեամբք, և ոչ հայել յօգուտ մեր, այլ 'ի կատարումն արդարութեան. զի չէ օգուտ այն զոր անիրաւելով այլոց և զրկելով զանմեզն յիրաւանց իւրոց՝ կարեմք հայթայթել մեզ.

Այնպէս ընդհանուր է գործ արդարութեան, զի չիք ոք որում ոչ պատշաճիցին պարտք արդարութեան, եթէ թագաւոր իցէ և եթէ հպատակ, եթէ աշխարհական և եթէ եկեղեցական, եթէ այր և եթէ կին, եթէ մեծատուն և եթէ աղքատ, եթէ տէր և եթէ ծառայ, այլովքն հանդերձ. ամենայն ոք ունի ինչ պարտս 'ի հատուցանել, զոր եթէ ըստ իրաւանց կատարիցէ, առնէ զարդարութիւն, ապա թէ ոչ զրկէ և լինի ապիրատ: Արդարութիւնն պարտի լինել և շնորհօք ըստ անձին, ըստ տեղոյն և ըստ ժամանակին.



## ԳԼՈՒԽ ԺԷ.

Յազազս թէութեան սիրոյ որ 'ի յուսոյ քաղաքական հաւատոց.



Թէութիւն սիրոյ զոր ստանայ ոք 'ի յուսոյ քաղաքական հաւատոց՝ է արդարութիւնն հանդերձ շնորհիւ. ի քաղաքականութեան ամենայն ինչ և ամենայն գործ կախեալ կայ զար-

դարութենէ : Ի պակասել արդարութեան 'ի քաղաքականութեան կամ յընկերութեան , ամենայն ինչ խանդարի , և ոչինչ կայ 'ի կայի և 'ի հաստատութեան . ամենայն կարգ .ք , կառավարութիւն , վաճառականութիւն , ընկերութիւն , դաշինք , և ամենայն յարաբերութիւնք եղծանին և լինին յոչինչ :

Արդարութիւն հանդերձ շնորհիւ ծնուցանէ դքաղաքական սէր , այսինքն՝ զսէր որ յառաջ գայ 'ի յուսոյ ծագելոյ 'ի վստահութենէ , Քանզի նա որ արդար է հանդերձ շնորհիւ՝ և սիրէ զարդարութիւն , սիրի 'ի քաղաքականութեան , զի ստանայ զվստահութիւն , և պատուի եւս յամենեցունց և լինի հաճոյ նոցա . Ոչ ապաքէն 'ի պակասութենէ արդարութեան , կամ մանաւանդ յանիրաւութենէ և 'ի զրկանաց զոր առնէ ոք՝ լինի կասկածելի , արկանի 'ի բանտ , աքսորի , պատուհասի , և զայլ եւս բազում չարիս կրէ : Եւ եթէ առ բռնութեան կամ մեծութեան և կամ իշխանութեան թուիցի լինել 'ի յաջողութեան , ամենեքին ատեն զնա և սպասեն պատեհ առթի կործանելոյ զնա և ջախջախելոյ , և լինի իսկ այնպէս բազում անգամ :

Այլ մեզ պարտ է եւս առնել զարդարութիւն , ոչ միայն 'ի ստանալ զվստահութիւն և զսէր մարդկան , այլ մանաւանդ 'ի սէր Աստուծոյ , զինա իսկ է արդարութիւն : Ի սիրել մեր

զարդարութիւն , սիրեմք զնոյն ինքն զԱստուած . այլ զխարդ հնար է մեզ սիրել զարդարութիւն , եթէ չեմք արդար առ ընկերս . զի յարդարութենէ և 'ի սիրոյ անտի որ առ ընկերս՝ երեւի արդարութիւն և սէր մեր առ Աստուած . վասնորոյ ասացեալ է յաստուածեղէն զիրս թէ Որ սիրէ զարդարութիւն՝ արդար է , որպէս և Աստուած արդար է . և թէ՛ եթէ ոք ասիցէ թէ սիրեմ զԱստուած և զեղբայր իւր ատիցէ , սուտ է :



## ԳԼՈՒԽ ԺԸ .

Յաղագս սրբութեան որ է թէութիւն բնական սիրոյ , եւ թէ զխարդ բաժանի սրբութիւն :



Չսուրբն և զսրբութիւն չկարեմք 'ի գոյութենէ նոցա , այլ 'ի բանից յիրաց և 'ի գործոց սահմանել . Արդ սրբութիւն է ամբժութիւն , մաքրութիւն , անխառնութիւն և պարզութիւն 'ի բանս , յիրս և 'ի գործս . և սուրբ այն է որ զյատկութիւնսն զայնոսիկ ստացեալ ունի . Այն ինչ որ կայ և մնայ այնպէս որպէս էրն 'ի բնէ՛ սուրբ ասի , որպէս գինի յոր չիցէ խառնեալ ջուր կամ այլ ինչ նիւթ , անապակ կոչի որ է սուրբ . այսպէս որ և իցէ բնութիւն յորոյ 'ի

զանգուածն չիցէ խառնեալ օտար ինչ՝ սուրբ  
 և անխառն է : Բայց մարթ է լինել զի որ յին-  
 քեան անխառն է ուստի և սուրբ , ըստ նշա-  
 նակութեանն զոր առաք , չիցէ սուրբ առ այլս .  
 ուստի սրբութիւն բաժանի յերկուս , Անձնա-  
 կան և Ընկերական : Ըստ անձին կամ յինքեան  
 սուրբ է որ չէ խառնեալ օտար իւրիք . առ այլս  
 կամ առ ընկերն սուրբ այն է որ ոչինչ վնասա-  
 կար կամ ազտեղի գործեալ է յայլս : Իսկ որ  
 յերկոսին ևս սուրբ է , նա ունի զկատարեալ  
 սրբութիւն և է կատարեալ սուրբ : Պարտ է  
 գիտել զի ՚ի բարոյական կարգի սրբութեան ,  
 երկօքին ևս պահանջին , սրբութիւն յանձին և  
 սրբութիւն առ ընկերն . ՚ի բնականս սրբութիւն  
 յինքեան որ է անխառնութիւն կամ հարազա-  
 տութիւն՝ շատ և բաւական է . ՚ի քաղաքականս՝  
 առհասարակ պահանջի սրբութիւն առ ընկերն  
 որ է անվնասակարութիւն . իսկ ՚ի բարոյա-  
 կանս , որպէս ասացաք , երկօքին ևս պիտին .  
 և այս է կրօնական սրբութիւն , զի Աստուած  
 որ հեղինակն է կրօնից՝ զկատարեալ սրբութիւն  
 կամի և պահանջէ :

Ի բանաւորս սրբութիւնն ըստ երից նկատի ,  
 ըստ սրտի , ըստ բանից և ըստ գործոց : Որ  
 սուրբն է ըստ սրտի , չկամի չար այլոց , և ոչ  
 ցանկայ որում չէ պարտ ցանկալ . և զոր ինչ  
 վասն իւր կամի՝ զնոյն տենջայ և այլոց , Սրբու-  
 թիւնն ըստ բանից է չհայհոյել , չբամբասել ,

չթ շնամանել, չխօսել սուտ, այլովքն հանդերձ,  
այլ զնոցին հակառակսն գործել. օրհնել, գո-  
վել, և որ 'ի կարգին, նոյնպէս բարեխօսել զըն-  
կերէն առ մարդիկ և առ Աստուած. Սրբու-  
թիւնն 'ի գործս է մաքրութիւն կամ բարե-  
խառնութիւն. քանզի 'ի բնէ և 'ի սովորութե-  
նէ և 'ի բարոյից են իրք որ զազիր են և  
պիղծք յայս Աստուծոյ և մարդկան :



### ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս թէութեան սիրոյ որ 'ի բնական հաւատոց :

Թէութիւն սիրոյ որ 'ի բնական հաւա-  
տոց՝ է սրբութիւն հանդերձ բարեխառնու-  
թեամբ. Չսրբութենէ արդէն իսկ ճառեցաք.  
և գիտեմք թէ զինչ իցէ սրբութիւն սրտի,  
բանից և գործոց. ինքնին յայտ է թէ ամենայն  
ոք, թէպէտ և ինքն չիցէ սուրբ և մաքուր  
ըստ արժանոյն, պահանջէ սրբութիւն և մաք-  
րութիւն յայլոց և խորչի և դարչի ըստ կարի  
'ի մերձենալոյ յայն որ պիղծ է և զգուելի.  
այս բնական իմն է, վասն այնորիկ ասեմք թէ  
սրբութիւն հանդերձ բարեխառնութեամբ է  
թէութիւն բնական և հասարակ սիրոյ. Աւե-  
լորդ է մեզ երկայն բանիւք ցուցանել թէ սր-

չափ աղնուական , յափշտակիչ ուստի և սիրելի և հաճելի է առհասարակ սրբութիւն , եթէ արտաքին մաքրութիւն մարմնոյ , հանդերձից , բնակութեան , կահուց և կարասեաց այնպէս ձգէ յինքն զմարդիկ մինչեւ զմայլել , յայտ է թէ յորժամ քնդ արտաքին սրբութեան կից իցէ և ներքին հոգեւոր և բարոյական սրբութիւն որ 'ի սրտի , 'ի բանս և 'ի գործս , զսէր հասարակաց յինքն գրաւ է :



## ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս ճշմարտութեան :

Ճշմարտութիւնն է վերացեալ անուն և չէ հնար սահմանել զնա 'ի գոյութենէ նորա , այլ սահմանի նա 'ի բանից , յիրաց և յիրողութեանց որ են առարկայ ճշմարտութեան :

Ճշմարտութիւնն է իսկութիւն կամ ստուգութիւն կամ ուղղութիւն որ տարածի 'ի բանս , 'ի գործս և յիրս . հակառակն սորա է ստութիւն կեղծ և մոլար : Զճշմարտութիւն ճանաչեմք յառարկայէ անտի նորա . եթէ առարկայ նորա ճշմարիտ է , ասի ճշմարիտ . ասպա թէ ոչ սուտ է և մոլար : Ուստի եթէ այլք վկայեն վասն ուրուք թէ լաւ ոք է և արդա-

բակորով, ճշմարտութիւնն ոչ կայանայ 'ի վկայութեան անդ, այլ պարտ է յանձին իսկ նորա տեսանել և ստուգել զլաւութիւն և զարդարութիւն նորա. վասն այսորիկ ասացաք թէ յառարկայէ անտի միայն ճանաչի ճշմարտութիւն, և ոչ յինքեմէ զի չէ գոյութիւն ինչ:

Ճշմարտութիւն է անբաժանելի, այլ 'ի գործոց, յիրաց և 'ի բանից որ առարկայ են ճշմարտութեան՝ բաժանի յերկուս. յհնդհանուր և 'ի Մասնաւոր. զոր օրինակ ոմն ասէ. Տիւ է և առաւօտ. այլ ոք ասէ. Տիւ է այլ ոչ առաւօտ, զի ստուեր տնկոց երեւի յարեւելս. Առաջինն խօսեցաւ մասնաւորապէս ճշմարիտ. երկրորդն խօսեցաւ համօրէն ճշմարիտ. Մասնաւորապէս ճշմարիտ խօսին նոքա որք մերթ ճշմարիտ խօսին, մերթ սուտ, կամ բանք նոցա ըստ մասին ճշմարիտ են և ըստ մասին սուտ.

Ճշմարտութիւն բաժանի դարձեալ յերիս. 'ի բնական, 'ի բարոյական և 'ի քաղաքական. զոր օրինակ՝ Արեգակն է լուսաւոր և անանկիւն. Հուր ջերմ է. սոքա են բնական ճշմարտութիւնք. Ի վեցերորդումն Յունուարի է ծնունդ Տեառն. Ուրբաթք պահք են. սոքա են բարոյական ճշմարտութիւնք. Այգիս այս Մանուէլի է. Տունդ է Յովհաննու. սոքա են քաղաքական ճշմարտութիւնք:

Դարձեալ ճշմարտութիւն 'ի մեզ 'ի բանա-

ւորս՝ երկուք պարտի երեւել . հողւով , մտօք  
 և կամօք . քանզի ասացաւ թէ հողին է գո-  
 յութիւն , միտքն է զօրութիւն , կամքն է  
 ներգործութիւն . Ապա պարտ է երեքումքք  
 ևս լինել ճշմարիտ , այն է՝ հողւով , մտօք և  
 կամօք . զի հողին է պատճառ մտաց , և միտք  
 կամաց , եթէ ոչ իցեմք հողւով ճշմարիտ ,  
 միտք մեր ոչ կարեն լինել ճշմարիտ , և ճանա-  
 չել և որոշել զճշմարտութիւն . և եթէ միտք  
 մեր ոչ ճանաչեն զճշմարտութիւն , կամք մեր  
 ոչ կարեն լինել բարի , շահաւէտ և հաստա-  
 տուն . Ի լինել հողւոյն ճշմարիտ՝ միտք ևս  
 լինին ճշմարիտ . և ՚ի լինել մտաց ճշմարիտ՝  
 կամք ևս լինին ճշմարիտ . Ի լինել կամաց մե-  
 րոց ճշմարիտ՝ միշտ զբարիս կամիմք ընկերաց  
 մերոց , որպէս անձին մերում . և եթէ չունի-  
 ցիմք զայսպիսի կամս , յայտ է թէ միտք և  
 հողի մեր ևս չեն ճշմարիտ . Զի , որպէս այլուր  
 ասացաք , զամենայն իմանալի գոյութիւն ՚ի  
 ներգործութենէ իւրմէ ճանաչեմք , որոշեմք  
 և գիտեմք . Եւ Տէրն ասաց յԱւետարանի թէ  
 Ամենայն ծառ ՚ի պտղոյ իւրմէ ճանաչի . ձըշ-  
 մարիան լինել հողւոյ , մտաց և կամաց մերոց  
 ճանաչի ՚ի բարութենէ կամաց մերոց .



## ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս թէութեան սիրոյ որ յիմացական կամ 'ի բարոյական հաւատոց :

Եթէ կամիմք զի Աստուած և արք աստուածապաշտք սիրիցեն զմեզ բարոյական սիրով, պարտ է մեզ զխտել զթէութիւն այնր սիրոյ, և նովին թէութեամբ վարել առաջի Աստուծոյ և մարդկան : Եւ զի թէութիւն բարոյական հասարակ սիրոյ է ճշմարտութիւն, պարտ է մեզ յամենայնի լինել ճշմարիտս : Ոչ ոք սիրէ երբէք զստութիւն, և ոչ հնար է մեզ խարել ընդ երկար զայլս, նաև ոչ զանձինս : Ապա պարտ է գնալ միշտ և հանապաղ ճշմարտութեամբ : յայս և 'ի սոյն հայի բան Յովհաննու թէ Պարտ է հոգւով և ճշմարտութեամբ երկիր պագաննել Աստուծոյ : այն է՝ գնալ առաջի Աստուծոյ ճշմարտութեամբ և լինել ճշմարիտ առ մարդիկ և առ անձինս : Ի զուր է ասել թէ Եմք ժիրք և համեստք, խոհեմք և պարկեշտք, և զամենայն ինչ խոհեմութեամբ առնեմք : և թէ՛ եմք արի հանդերձ խոնարհութեամբ, և առնեմք զամենայն գործս մեր արիութեամբ, և թէ՛ այս ինչ ոք համակիր է ընդ մեզ այսու կամ այնու, և թէ՛ գտաք զյարմարութիւն երկրի ըստ գործոց մերոց, և

Թէ՛ ծանեաք և որոշեցաք զհօրովումն ժամանակաց հանդերձ քանակութեամբ, և թէ՛ եմք յամենայն գործս մեր արդարք հանդերձ շնորհօք, և առնեմք զամենայն գործս մեր արդարութեամբ և շնորհօք. և թէ՛ սուրբ եմք հանդերձ բարեխառնութեամբ՝ սրտիւ, բանիւ և գործով յամենայն աւուրս մեր. 'ի զուր է զայս ամենայն պնդել, եթէ չիցեմք արդարեւ նոյնպիսիք. ճշմարտութիւն է որ առնէ զմեզ արդեամբ այնպիսիս, և յարդարէ զմեզ սիրելիս առ ամենայն մարդիկ ևս և առ աջի Աստուծոյ, Ապա ամենայն առաքինութիւնք և բարիք կախեալ կան զճշմարտութեանէ, որպէս համօրէն բնութիւն կախեալ կայ զԱստուծոյ իբրեւ զառաջնոյ պատճառէ:

Արդարեւ ճշմարտութիւն ոչ է ինքնին առաքինութիւն, այլ է հաստատիչ և պահպանիչ ամենայն առաքինութեանց և բարեգործութեանց. որպէս խոհեմութիւնն չէ ինքնին առաքինութիւն, այլ ծնող ամենայն առաքինութեանց. Համառօտ իսկ ասել՝ ճշմարտութիւն է թաղաւոր անյաղթ յաշխարհի աստ և 'ի հանդերձելումն. վասն այնորիկ եղաւ 'ի կատարածի ամենայն թէութեանց և առաքինութեանց, զի 'ի նմա առնուն լրումն և եզր ամենայն առաքինութիւնք:

## ԳԼՈՒԽ ԻԲ.

Յազազս շարազուղութեան և տարազուղութեան  
ինն թէութեանց ընդհանուր հաւատոյ , յուսոյ և  
սիրոյ :

Արդէս տեսանի 'ի ցուցակի անդ՝ 'ի ներքոյ  
Ժրութեան որ է առաջին թէութիւն ընդհանուր  
հաւատոյ՝ եղեալ է թուանշանն 3 . 'ի ներքոյ  
խոհեմութեան որ է երկրորդ թէութիւն ընդհանուր  
հաւատոյ՝ եղեալ է թուանշանն 2 . և 'ի ներքոյ  
արութեան որ է երրորդ թէութիւն ընդհանուր  
հաւատոյ՝ եղեալ է թուանշանն 1 . 'ի ներքոյ  
թէութեանց ընդհանուր յուսոյ որ են համակրութիւն  
մարդոց , յարմարութիւն երկրի և հոլովումն  
ժամանակաց՝ նոյնպէս եղեալ են նոյն երեքին  
թուանշանք 3, 2, 1 . նոյնպէս է և 'ի ներքոյ  
թէութեանց ընդհանուր սիրոյ , այսինքն՝ եղեալ  
են թուանշանքս 3, 2, 1 , 'ի ներքոյ արդարութեան ,  
սրբութեան և ճշմարտութեան :

Արդ երեքին կարգք թուանշանացս 1 2 3,  
1 2 3 , 1 2 3 . որ առանձին առանձին ընծայեցուցանեն  
զերեսին թէութիւնս հաւատոյ , յուսոյ և սիրոյ՝ են  
շարաղոյգք ընդ միմեանս . այսինքն՝ Արիութիւն ,  
խոհեմութիւն , Ժրութիւն՝ են շարաղոյգք ընդ  
միմեանս . շարաղոյգ

ենն ընդ միմեանս նաեւ Հոլովումն ժամանակաց  
յարմարութիւն երկրին, համակրութիւն մարդ-  
կան, նոյնպէս շարազոյգ են՝ ճշմարտութիւն,  
սրբութիւն և արդարութիւն :

Բայց 'ի շարեւ մեր կարգաւ զերիս երբեակս  
միանգամայն 'ի մի կարգ, այսպէս՝ 123123123,  
յայնժամ լինին ընդ միմեանս տարազոյգ նոյ-  
նանշան թուանշանքն, այսինքն՝ երեքին 3  
թուանշանք, երեքին 2 թուանշանք և երե-  
քին 1 թուանշանք : Եւ ըստ այսմ՝ տարազոյգ  
լինին թէութիւնքն որ ունին 'իներքոյ զթուա-  
նշանն 3, այն է՝ յրութիւնն, համակրութիւն  
մարդոց և արդարութիւն. որք են երեք թէ-  
ութիւնք՝ առաջինն քաղաքական հաւատոյ,  
երկրորդն քաղաքական յուսոյ, երրորդն քա-  
ղաքական սիրոյ : նոյնպէս տարազոյգ են թէ-  
ութիւնք որ ունին զթուանշանն 2, այն է՝  
Խոհեմութիւն, յարմարութիւն երկրի, սրբու-  
թիւն. որք են երեք թէութիւնք, առաջինն  
բնական հաւատոյ, երկրորդն բնական յուսոյ  
և երրորդն բնական սիրոյ : նոյնպէս տարազոյգ  
են թէութիւնքն որ ունին զթուանշանն 1 այն  
է Արիութիւն, հոլովումն ժամանակաց և ճշ-  
մարտութիւն. երեք թէութիւնք՝ առաջինն  
իմացական կամ բարոյական հաւատոյ, երկ-  
րորդն իմացական յուսոյ, երրորդն իմացական  
սիրոյ :

Այսպէս 'ի հայեւ մերում 'ի ցուցակ անդր՝

տեսանեմք ըստ շարազուգութեան զի 'ի լինել մերում ժիր՝ կարեմք լինել և խոհեմ. 'ի լինել մերում խոհեմ՝ լինիմք և արի. և այս 'ի մասին հաւատոյ. Գարձեալ ըստ նմին սկզբան շարազուգութեան՝ եթէ գիտեմք զհամակիրն ըստ իրին, կարեմք ճանաչել զյարմարութիւն երկրին. և եթէ ճանաչեմք զյարմարութիւն երկրին ըստ գործոյն, կարեմք որոշել զհորջումն ժամանակաց. այն է՝ զանձն ըստ իրին (համակրութիւն մարդոյ), զտեղին ըստ գործոյն (յարմարութիւն երկրի) և զժամանակն ըստ քանակութեան (հոլովումն ժամանակաց), և այս 'ի մասին յուսոյ. Նոյն բան է և զերրորդէն, այսինքն զսիրոյ. զի ըստ շարազուգութեան՝ եթէ արդար եմք, կարեմք լինել սուրբ. և եթէ եմք սուրբք, կարեմք լինել ճշմարիտ յամենայնի և այս որպէս ասացաք, 'ի մասին սիրոյ.

Գարձեալ հայեցեալ 'ի ցուցակ անդր, տեսանեմք ևս ըստ տարազուգութեան զի եթէ ունիմք ժրութիւն հանդերձ համեստութեամբ 'ի հաւատս, գտանեմք զհամակիրն մեր ըստ իրին 'ի յոյս. և եթէ գտանեմք զհամակիրն, լինիմք արդարք հանդերձ շնորհօք 'ի սէր. և այս 'ի քաղաքականին. Նոյնպէս 'ի բնականին ըստ տարազուգութեան, եթէ ունիմք խոհեմութիւն 'ի հաւատս, կարեմք ճանաչել զյարմարութիւն երկրին 'ի յոյս. և եթէ ճանաչեմք

գլխարմարութիւն երկրին , լինիմք սուրբ հանդերձ բարեխառնութեամբ 'ի սէր : Նոյնպէս գարձեալ յիմացականին կամ 'ի բարոյականին , եթէ ունիմք արիութիւն 'ի հաւատս , կարեմք որոշել զհոլովումն ժամանակաց 'ի յոյս , և յորոշել մեր զհոլովումն ժամանակաց , լինիմք ճշմարիտք 'ի սէր :

Պարտ է գիտել զի առաջին տարազոյգքն 'ի ցուցակի , որ են թէութիւնք որոց թուանշան է 3 , այսինքն՝ Ժրութիւն , համակրութիւն և արդարութիւն , են յարդարողք 'ի քաղաքականս :

Երկրորդ տարազոյգքն որ են թէութիւնք որոց թուանշան է 2 , այսինքն՝ Խոհեմութիւն , յարմարութիւն երկրին և սրբութիւն , են մաքրիչք 'ի բնականս :

Երրորդ տարազոյգքն որ են թէութիւնք որոց թուանշան է 1 , այսինքն՝ Արիութիւն հանդերձ խոնարհութեամբ , հոլովումն ժամանակաց ըստ քանակութեան և ճշմարտութիւն , են յաղթողք 'ի վերացեալն , այսինքն՝ յիմացականին և 'ի բարոյականի :

Խօսեսցուք սակաւուք և զներդործութենէ ինունց թէութեանցս : Ժրութիւն հանդերձ համեստութեամբ , խոհեմութիւն հանդերձ պարկեշտութեամբ , և արիութիւն հանդերձ խոնարհութեամբ որ են շարազոյգ թէութիւնք հաւատոյ ընդ միմեանս՝ տան ստանալ զհար-

կաւոր պիտոյս մարդկային բնութեան ըստ ամենայնի անթերի և միշտ առատ և լիութի :

Համակրութիւն ըստ իրին , յարմարութիւն երկրին ըստ դործոյն և հոլովումն ժամանակաց ըստ քանակութեան որ են շարազոյգ թէութիւնք յուսոյ ընդ միմեանս՝ տան ճանաչել և ընտրել զառատն և զփառաւոր , և ստանալ ըզբարձրագոյնն վասնմարդկային բնութեանմերոյ :

Արդարութիւն հանդերձ շնորհօք , սրբութիւն հանդերձ բարեխառնութեամբ , ճշմարտութիւն միշտ և յամենայնի որ են շարազոյգ թէութիւնք սիրոյ ընդ միմեանս՝ առնեն երջանիկ և պահեն միշտ ՚ի խաղաղութեան աստ մարմնով եւ առ յապայն հոգւով :



## ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս առարկայի եւ սահմանի նորա :



Առարկայն է նիւթ յորմէ կազմի կամ շինի ինչ . Առարկայն բաժանի յերիս . ՚ի Տեսական , յՈրակական և ՚ի Նիւթական . Տեսական առարկայն է գովել զք կամ պարսաւել , որոց մին է առարկայ սիրերոյ , միւսն ատերոյ . Որակական առարկայն է լոյս , գոյն , պլլովքն հանդերձ . Նիւթական առարկայք են ոսկի ,

արծաթ , երկաթ , մետաքս , փայտ , և այլ սո-  
ցին նմանք • Ուր ոչ գոյ լոյս և գոյն , անդ չիք  
ակն որ տեսանիցէ • եթէ չիք ոսկի , չիք ոս-  
կեղօծումն և ոչ այն որ ոսկեղօծէ • եթէ չիցէ  
երկաթ , չկարէ լինել տապար , մանգաղ , խոփ  
և դարբին . այսպէս պարտ է իմանալ և զայլոց •

### ԳԼՈՒԽ ԻԴ .

Յաղագս առարկայից ընդհանուր հաւատոյ , յուսոյ  
և սիրոյ •

Առարկայն ընդհանուր հաւատոյ է ժրու-  
թիւն հանդերձ համեստութեամբ , խոհեմու-  
թիւն հանդերձ պարկեշտութեամբ , արիու-  
թիւն հանդերձ խոնարհութեամբ •

Առարկայ ընդհանուր յուսոյ է համակրու-  
թիւն ըստ իրին , յարմարութիւն տեղւոյն ըստ  
գործոյն և հոլովումն ժամանակաց ըստ քանա-  
կութեան •

Առարկայ ընդհանուր սիրոյ է արդարու-  
թիւն հանդերձ չնորհօք , սրբութիւն հանդերձ  
բարեխառնութեամբ և ճշմարտութիւն միշտ  
և ամենայն ուրեք •

Զխարդ հնար է մեզ ասել թէ հաւատաց-  
եալ եմք և ունիմք ուղիղ , ճշմարիտ և կատար-

եալ հաւատս , եթէ չիցեմք ժիր հանդերձ համեատութեամբ , և ոչ խոհեմ հանդերձ պարկեշտութեամբ , և ոչ արի հանդերձ խոնարհութեամբ . զի ամենայն ինչ 'ի նիւթոյ կազմի , ուր չիք նիւթ , անդ չիք գործ և ոչ գործող :

Իսկ եթէ ունիմք հաւատս , պարտիմք ունել և յոյս , այսինքն կրել և ունել զառարկայն յուսոյ , որ է գտանել զհամակիրն ըստ իւրին , որոշել զտեղին ըստ գործոյն և ճանաչել զժամանակն ըստ քանակութեան . ապա թէ ոչ չիք 'ի մեզ յոյս և ոչ հաւատք , Յունել մեզ հաւատս և 'ի հաւատոյ անտի յոյս , ապա հարկ է ունել և սէր , և ընդ նմին զառարկայն սիրոյ որ է արդարութիւն հանդերձ շնորհօք , սրբութիւն հանդերձ բարեխառնութեամբ եւ ճշմարտութիւն հաստատուն յամենայնի և միշտ , ի պակասել 'ի մեզ առարկայի սիրոյ , պակասեն 'ի մեզ 'ի հարկէ և յոյս և հաւատք : Ի յուսոյ և 'ի սիրոյ մերմէ ճանաչին հաւատք մեր , ըստ հաւատոց մերոց են յոյս և սէր մեր , Եթէ առնեմք և ունիմք զառարկայն հաւատոյ , յայնժամ ճանաչեմք և գիտեմք և զառարկայն յուսոյ , և վարիմք առարկայիս սիրոյ : Այսպէս հաւատք , յոյս և սէր մարդոյ ճանաչին միմեամբք . զի յայտնի լինին ուղղութիւն , ճշմարտութիւն և կատարելութիւն հաւատոյ , աներկեւանութիւն յուսոյ և սրբութիւն սիրոյ , ըստ այնմ թէ՛ լուսաւորեոցէ լոյս ձեր առաջի մարդ-

կան, զի տեսցեն զգործս ձեր բարիս և փա-  
ռաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է, Եթէ  
ոչ իցեն 'ի մեզ առարկայք երկոց առաքինու-  
թեանցս այսոցիկ աստուածեղինաց, հաւատք,  
յոյս և սէր լինին ընկ տեսականք, որ ոչինչ են,  
Ծառ 'ի պտղոյ իւրմէ ճանաչի:

## ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս առարկայից մասնաւոր հաւատոյ, յուսոյ  
և սիրոյ:

Երիս ազգս հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ եւ  
դաք 'ի վեր անդր. այն է, Քաղաքական, բնա-  
կան և իմացական կամ բարոյական, Աստ գըլ-  
խաւորելով զբանս մեր, գիցուք համառօտիւ  
ղառարկայս իւրաքանչիւրոցն:

Առարկայ քաղաքական հաւատոյ է ժրու-  
թիւն հանդերձ համեստութեամբ, այսինքն՝  
հանդարտութեամբ, Որ ունի զքաղաքական  
հաւատս՝ պարտի ժիր լինել 'ի բանս և 'ի գոր-  
ծըս հանդերձ համեստութեամբ. իսկ որ 'ի  
քաղաքական հաւատոյ անտի ունի զյոյս՝ պար-  
տի ճանաչել զհամակիրս իւր, զի այն է առար-  
կայ յուսոյ ճանաչել զհամակիրն. քանզի զոր  
ինչ միանգամ յուսայ ոք բարիս 'ի քաղաքա-

կան կամ՝ յընկերական կեանս՝ ընդունի՝ ի ձեռն իւրոյ համակրի . իսկ որ ունիցի սէր քաղաքական ի հաւատոյ և ի յուսոյ անտի՝ պարտի ունել արդարութիւն հանդերձ շնորհօք . զի եթէ չիցէ ոք ի քաղաքական կամ՝ յընկերական կեանս արդար ի կշռել և ի դատել և յառնել հանդերձ շնորհօք, զիարդ կարէ առնել զանձն սիրելի այլոց . նա որ չունի ժրութիւն մտաց ի բանս և ի դործս հանդերձ համեստութեամբ, ոչ ճանաչէ զիւր համակիր, և չունի զարդարութիւն հանդերձ շնորհօք՝ այնպիսին չունի ոչ հաւատս, ոչ յոյս և ոչ սէր քաղաքական . զի ամենայն ոք յառարկայէ անտի ճանաչի թէ ունի զայս ինչ կամ զայն հանդամանս կամ զճարտարութիւն . որպէս բժիշկ ոչ այլ ուստեք ճանաչի եթէ ոչ ի բժշկելոյ անտի զայր հիւանդ կամ աստաժէտ .

Նոյն բանք են և զբնական հաւատոյ, զյուսոյ և զսիրոյ . յառարկայէ անտի իւրեանց ճանաչին սոքա թէ են ի մարդն . Առարկայ բնական հաւատոյ է խոհեմութիւն հանդերձ պարկեշտութեամբ, առարկայ բնական յուսոյ որ ի բնական հաւատոյ է յարմարութիւն երկրին ըստ դործոյն, և առարկայ բնական սիրոյ ծագելոյ ի բնական հաւատոյ և սիրոյ է սրբութիւն հանդերձ բարեխառնութեամբ . Որ ոչ ունիցի զայստակ, այն է զխոհեմութիւն հանդերձ պարկեշտութեամբ, զժանօթութիւն

յարմարութեան երկրին, և զսրբութիւն հանդերձ բարեխառնութեամբ՝ այնպիսին չունի ոչ զհաւատս, ոչ զյոյս և զսէր բնական, բնական հաւատք են հմտութիւն և խելամտութիւն զխտութեանց, արդ խոհեմութիւն է սկիզբն ամենայն իմացութեան, զի նովաւ ընտրեմք զճշմարիտն և զսուտ, զարդարն և զանիրաւ, զբարին և զչար, զգեղեցիկն և զվատթար, ապա զխարդ հնար է ունել զբնականն հաւատս առանց ունելոյ զսկիզբն նորա որ է խոհեմութիւն, Ապա առ ունելոյ զբնական հաւատս՝ հարկ է լինել խոհեմ մտօք, բանիւ և գործով:

Բնականն յոյս է յուսալ ինչ ՚ի բնական պատճառաց, և բնական պատճառք ունին կախումն զյարմարութենէ երկրին, ապա զխարդկարէ լինել աներկեւան յոյս նորա որ չունի զգիտութիւն յարմարութեան երկրին, Արդ որ ունի զբնական հաւատս, այն է զգիտութիւն պէսպէս իրաց, պարտի ունել և զառարկայն յուսոյ որ է յարմարութիւն երկրի ըստ գործոց, ապա թէ ոչ ՚ի զուր է ասել նորա թէ ակն ունի ընդ ունել ինչ ՚ի բնական պատճառաց:

Զնոյն պարտ է ասել և զբնական սիրոյ, Յայտ է թէ ամենայն ինչ յառաջ գայ և ծնանի ՚ի սիրոյ, մետաղք և բոյսք և շնչաւորք, և բնութիւն որ սուրբն է ինքնին, ուղիղ և օրինաւոր՝ սիրէ զսրբութիւն, այն է զուղիղն և զօրինաւոր կարգ, ապա անհնար է յաջողել և

ունել զիւր արդիւնն ըստ բնականին , եթէ չիցեմք սուրբք ։ Սրբութիւնն պարտի լինել բախտաւորութեամբ , այն է՝ ըստ չափոյ ։

Խօսեսցուք այժմ և զիմացական կամ բարոյական հաւատոյ , յուսոյ և սիրոյ ։ Սոքա եւս յառարկայից իւրեանց ճանաչին , և որ չունիցին զառարկայս նոցա՝ չունին և զնոսա զլիսովին ։ Այլ զինչ իցեն առարկայք իմացական կամ բարոյական հաւատոյ , յուսոյ և սիրոյ . զսոցունց այլուր ասացաք , աստ կարճ ՚ի կարճոյ բովանդակեսցուք ։

Առարկայ իմացական կամ բարոյական հաւատոյ է արիութիւն հանդերձ խոնարհութեամբ ։ Իմացական կամ բարոյական հաւատք են ճշմարիտ սկզբունք ՚ի բարոյականս ընդ որս մաքառին կիրք և ակտորժակք զգայականք ընդդէմ ճշմարտութեան . ապա պարտ է ունել արիութիւն առ զդէմ ունելոյ նոցա ։ Արք վեհերոտք բազում անգամ առ ամօթոյ երեւելոյ այնպիսի որպիսի ենն՝ կեղծաւորին , և այնպէս շիտթեն զճշմարտութիւն ընդ ստութեան , մանաւանդ թէ մատնեն իսկ զնա ։ Այլ յայտ է թէ այնպիսիքն չունին զբարոյական հաւատս . ապա պարտ է ունել արութիւն հանդերձ խոնարհութեամբ զի բարոյական հաւատք մեր լիցին ճշմարիտ և անկեղծ ։

Առարկայ իմացական կամ բարոյական յուսոյ ծագելոյ ՚ի բարոյական հաւատոց է գիտել

զհօլովումն ժամանակաց 'ի ձեռն պէսպէս ար-  
 ուեստից և 'ի ձեռն փորձոյ ստուգելոյ , որպէս  
 յիւրում տեղւոջ ասացաք . Յուսալ այսու յու-  
 սով է գիտել զայն որ լինելոց է ըստ բնական  
 ինչ օրինաց . Ամենայն ինչ որ լինի ըստ բնա-  
 կան ինչ օրինաց՝ գործի ըստ հօլովման ժամա-  
 նակաց , ապա զիարդ կարէ ունել ոք յոյս խմա-  
 ցական , եթէ չունիցի զգիտութիւն հօլովման  
 ժամանակաց այն է՝ կարգի տիեզերաց . Ապա  
 պարտ է մեզ 'ի ձեռն աստուածապարգեւ ար-  
 ուեստից և հանճարոյ մերոյ զննել և քննել  
 զհօլովմանս ժամանակաց այն է զտիեզերաց  
 կարդ կամ զօրէնս բնութեան և գիտակ լինել  
 նոցա , և գտանել զկանոն այնց՝ զորս այլք պա-  
 տահարս համարին . զի չիք ինչ 'ի բնութեան  
 որ չիցէ ընդ կանոնաւ . Յայտ է մեզ ամենե-  
 ցուն զի 'ի հնումն զխաւարումն արեգական և  
 լուսնի համարէին ըստ գիպաց ինչ , այլ ըստ  
 աստեղագիտաց այնպէս ըստ կանոնի են խա-  
 ւարմունք մինչեւ յառաջագոյն գուշակել ըստ  
 վայրկենից , Մարթ է նոյնպէս 'ի ձեռն փորձոյ  
 և ստէպ գիտողութեան գիտել և գուշակել  
 բազում ինչ որ ըստ օրինակի խաւարմանց օրի-  
 նօք և կարգօք լինին . և այնպէս ապրել 'ի  
 չարեաց և վայելել 'ի բարիս . Քանզի հօլովումն  
 ժամանակաց փոխէ զգիրս երկրի , ծովու և ցա-  
 քի , զտեսակս և զհանգամանս բուսոց և տըն-  
 կոց և մետաղաց . լինի պատճառք առատու-

Թեան կամ՝ նուազու թեան իրաց բաղմնոց , ածէ մահս տարածամն կամ՝ տայ զառողջութիւն աւանտոց և մարդկան , մանաւանդ գործէ հիւանդութիւնս , որպէս զժանտախտ և զվարդախտ և զմաղձայոյղ , այլովքն հանդերձ , Բաց ՚ի սոցունց , հոլովումն ժամանակաց փոփոխէ երբեմն և զղգայական կիրս , զզօրութիւն մտաց և զխառնուած և զազդեցութիւնս մարմնոց բանականաց , այլ գործք ազատ և անձնիշխան կամաց ոչ անկանին ընդազդեցութեամբ հոլովման ժամանակաց ուղղակի , այլ անուղղակի միայն :

Առարկայ իմացական կամ բարոյական սիրոյ ծագելոյ ՚ի յուսոյ յաջողելոյ ՚ի հաւատոց՝ է ճշմարտութիւն . վասն որոյ պարտ է հանապաղ ունել հաստատուն ՚ի հողիս , ՚ի միտս և ՚ի կամս մեր զճշմարտութիւն . Ամենայն ճշմարտութիւն որ չէ հաստատուն ՚ի հողիս , ՚ի միտս և ՚ի կամս՝ ոչ է այն ճշմարտութիւն այլ յօժարութիւն ներքին զգայական ոգւոյ և բաղձանք մարմնոյ . ուստի և չէ յիմացական բարոյական սիրոյ որ ստացեալ լինի ՚ի յուսոյ ծագելոյ ՚ի հաւատոց . Եւ սէրն որ ոչ է յիմացական բարոյական հաւատոց , որպէս յայտ է և այլուր ասացաւ , ոչ է ճշմարտութիւն այլ զգացումն ինչ , ի պակասել ՚ի մեզ այնր սիրոյ , յայտ է թէ պակասէ և յոյս . և եթէ պակասէ ՚ի մեզ յոյս , ապա պակասեն և հաւատք :

# Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Գ



## Գ Լ Ո Ւ Խ Ա .

Յաղագս նշանի թէ զինչ իցէ :



Նշանն է զեկուցանող, գուշակող և յայտնող էական կամ իրր էական բանից, իրաց և գործոց անցելոց, ապառնեաց և աներեւութից . այսինքն՝ այնպիսի բանից, իրաց և գործոց որ գաղտնի են 'ի զգացմանէ մերմէ . և են լեալ յանցեալ ժամանակի կամ լինելոց են առ յայս . Զոր օրինակ՝ ընդ առաւօտս և 'ի գիշերի յոչ գիտել ուրուք զժամ՝ ծագելոյ արեգական, երեւի մոլորակն արուսեակ կամ լուսաբեր, և լինի նշան ծագելոյ արեւուն որ էր ապագայ և աներեւոյթ . Այսպէս խմա և զայլոց :



## Գ Լ Ո Ւ Խ Բ .

Թէ քանի՞ն բաժանիցի նշանն :



Նշանն բաժանի նախ յիրական, 'ի Գործնական և 'ի Բանական : Երկրորդ բաժանի 'ի

Բնական , 'ի Պատահական և 'ի Խորհրդական ,  
 Բնականն բաժանի դարձեալ 'ի Հարկաւոր և  
 'ի Ներընդունական :

Իրական նշանն երեւի յառաջ քան զիրն ,  
 որպէս ծուխ քան զհուր : Գործնականն յառա-  
 ջագոյն է քան զգործն , որպէս յայտարարու-  
 թիւն պատերազմի կամ զանդակն ժամերգու-  
 թեան , փողք և այլ ևս ձայնատուք , որ ազդ-  
 առնեն զիմեքէ , որպէս զպատերազմէ , զաղօ-  
 թից և զայլոց մինչչեւ եղեալ : Բանական նշանն  
 կանխէ քան զբանս . որպէս որ բամբասելոցն  
 է՝ նախ քամահէ , և ապա բամբասէ , յետոյ  
 ապա առնէ ատելի և ինքն ևս ատէ : Ուստի  
 քամահումն է նշան բամբասանաց , և բամբա-  
 սանք՝ նշան են ատելութեան :

Բնական նշանք են 'ի բնութենէ , որպէս  
 բնական պիտակ ( պէճ ) 'ի մարմինս , կամ այլ  
 բիծք : Այսպիսի նշանք գտանին յամենայն ա-  
 բարածս :

Պատահական նշանն ըստ դիպաց իմն պա-  
 տահէ , որպէս յանակնկալ ինչ հարուածոյ կո-  
 բուսանել զակն , կամ խորտակել միոյ 'ի սրու-  
 նից և լինել կաղ , և կամ այլոց անդամոց խե-  
 ղել ըստ պատահման կամ 'ի վնասակարութե-  
 նէ այլոց :

Խորհրդական նշանն խորհելով կամ ըստ  
 հաճոյից լինի . որպէս են մատանին 'ի ձեռին  
 եպիսկոպոսի որ զեպիսկոպոսական կարգն յայտ

առնէ , կամ ուսանողն յուս զօրավարի . այսպիսի նշանք ըստ հաճոյս գնին վասն իրիք յարմարութեան և պատշաճութեան .

Ասացաք եթէ բնականն նշան բաժանի դարձեալ 'ի հարկաւոր և 'ի ներընդունական , Հարկաւոր նշանք են անձրեւք վասն ամպոց . զի 'ի տեսանել մեր զանձրեւ գիտեմք եթէ գոն ամպք յերկինս , ներընդունական նշան են ամպք վասն անձրեւաց , զի բազում անգամ ամպք ծածկեն զերեսս երկնից , այլ չտեղայ անձրեւ զայն օր կամ յայնմ տեղւոջ . նոյնպէս բանականութիւնն է ներընդունական նշան արդարութեան մարդոյ և ոչ անմեղութեան . զի հնար է մարդոյ լինել արդար այլ չէ հնար լինել անմեղ , զի է անձնիչխան ըստ մասին ազատ կամօք : վասն այնորիկ ասաց Տէրն մեր . Չէ յարուցեալ 'ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ . այլ փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա .

Չպէսպէս աղգս նշանաց ճանաչել և ընտրել կարեւոր է , զի մի խաբեսցուք ոչ գիտելով բարւոք թէ յորպիսի նշանաց որպիսի իրք զհետ դան . և զիտրդ , 'ի հարկէ՞ ինչ՞ թէ ըստ դիպաց , 'ի կամայ մարդկան իցեն թէ 'ի բնութենէ :



## ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս ճանաչման թէ զինչ իցէ :

Ճանաչումն է բաղդատել զիրս ընդ միմեանս . Յետ ճանաչելոյ ասլա ըստ դաղափարին զոր կանխաւ ունիմք՝ ընտրեմք կամ որոշեմք զնոսա . Այսպէս ճանաչեմք զթուխս կամ զսպիտակս , զուղիղս և զթիւրս , զքաղցունս և զդառինս կամ զթթուս , այլովքն հանդերձ , համեմատելով զնոսա ընդ միմեանս , և յետ այնորիկ որոշեմք ըստ նախկին դաղափարի մերոյ թէ ո՞րն աւելի թխադոյն իցէ կամ սպիտակագոյն , քաղցրագոյն կամ դառնագոյն . Որպէս առանց բաղդատութեան չէ հնար ճանաչել , նոյնպէս չէ հնար ընտրել կամ որոշել առանց ճանաչելոյ :

## ԳԼՈՒԽ Դ.

Թէ քանիօն բաժանիցի ճանաչումն :

Ճանաչումն 'ի կողմանէ ճանաչողին մի է , այլ առարկայք ճանաչման բազմադիմի են և պէսպէս . այլ մեք զնոսա 'ի սակաւս ամիտիւն

լով ստասցուք, ճանաչելիք բաժանին 'ի Նիւթական, 'ի Գործնական և 'ի Բանական.

Նիւթականն դարձեալ բաժանի 'ի Քանակական և յՈրակական.

Գործնականն ևս բաժանի 'ի Հոծ և 'ի Տարած, 'ի Թիւր և յՈւղիղ, 'ի Լաւ և 'ի Յոռի.

Բանականն նոյնպէս բաժանի 'ի Սուտ և 'ի Ճշմարիտ, 'ի Կեղծեալ և 'ի Բուռն.

Ձնիւթական առարկայս մարթ է ճանաչել երբեմն 'ի քանակութենէ, երբեմն ևս յորպիսութենէ, զորօրինակ՝ 'ի համոյն, 'ի հոտոյ, 'ի գունոյ և 'ի ձայնից. Այսպէս ճանաչեմք զքնար և զտաւիղ, զի այլ է ձայն քնարի, և այլ՝ տաւիղի. և զայս դիտեմք ըստ գաղափարին զոր ստացեալ ունիմք զնոցանէ կանխաւ. Գործնական ճանաչումն լինի 'ի հոծութենէ, այսինքն՝ 'ի խոտութենէ (տոտ-տոտ) և կամ 'ի տարածութենէ այսինքն՝ յանօսութենէ (տոտ-տոտ). Ի տեսանել մեր ինչ շօշափելով ճանաչեմք ըզյատկութիւնս զայսոսիկ, այսինքն՝ վործով կամ քննութեամբ, և վասն այսորիկ կոչեցաք զճանաչումն այսպիսի յատկութեանց՝ գործնական, նոյնպէս 'ի ձեռն վործոյ ճանաչեմք զուղղութիւն և զթիւրութիւն, զլաւութիւն և զյոռութիւն նիւթոց.

Բանական ճանաչումն ոչ է էական, այլ իբր էական, և առարկայ նորա է ճշմարիտ կամ սուտ. Ի բաղդատել մեզ զքանս ուրուք

ընդ օրէնս տրամարանութեան մտայ՝ իմա նամբ թէ ճշմարիտ է կամ սուտ զոր ասացն , Զոր օրինակ՝ որ ասիցէ թէ սիրէ զԱստուած , և զընկեր իւր ասիցէ , յայտ է թէ սուտ խօսի և ոչ ճշմարիտ : Նոյնպէս որ յայտնի ստա խօսն է և ասիցէ թէ սիրէ զճշմարտութիւն , յայտ է թէ սուտ է :

## ԳԼՈՒԹ Ե.

Յազազս յատկութեան :

Յատկութիւն է սեպհականութիւն իրիք , կամ այն առանձինն ինչ որով իրն է այն ինչ որ է : Եթէ իր ինչ չունիցի զիւր յատկութիւն չէ այն ինչ իր խկապէս , այլ այլ ինչ և օտար , և զանունն միայն ունի և ոչ զխկութիւն : Այսպէս ջուրն ունի զիւր յատկութիւն զովացուցիչ , հուրն զիւր այրիչ յատկութիւն , ուսուցիչն կամ վարդապետ զյատկութիւն վարդապետի . Եթէ ջուր , հուր և վարդապետն չունիցին զիւրեանց էական յատկութիւնս , ոչ ջուրն ջուր է , ոչ հուրն հուր , և ոչ վարդապետն արդարեւ ուսուցիչ : Լինելով միայն հեղուկ ջուր ոչ է ջուր , և ոչ հուրն ունելով միայն զդոյն հրոյ , մարթի կոչել հուր : Ամենայն

ինչ յատկութեամբ իւրով ճանաչի և որոշի յայլոց . և յայսմ է ճշմարտութիւն նորա . ապա թէ ոչ մտլորութիւն մեծ լինէր հակառակ զգալ յութեանց պնդել թէ է ջուր այն ինչ՝ որ չէ զովացուցիչ . նոյնպէս իմա և զայլոց . Աստուած զճշմարտութիւն իրաց կացոյց 'ի յատկութիւնս նոցա , և զզգայութիւնս և զխմացականութիւն եզ վկայս :

Ըստ այսմ՝ ծիծաղականութիւն մարդոց է յատկութիւն նորա , ապա մարդ որ ոչ ծիծաղի՝ չէ մարդ բանական , այլ կամ կապիկ է եթովպիոց և կամ այլ ինչ անասուն . նոյնպէս չէ հնար ծանօթ լինել հաւատացելոյ , այսինքն այնր՝ որ ունի հաւատս , այլուտ եթէ ոչ 'ի գործոց առաքինութեան և շնորհաց . զի այստքիկ իսկ են յատկութիւնք նորա . որ ոչն ունիցի զայնոսիկ , զիարդ կոչեսցուք զնա ուղիղ և ճշմարիտ կատարեալ հաւատացեալ . Զնոյն իմա և զբանաւոր մարդոց որ ոչ կարիցէ յայտնել զմիտս իւր ոչ մերձաւորաց բանիւ , և ոչ հեռաւորաց գրով . և ոչ իսկ նշանաւ իւիք իբրև զհամերս , այլ իցէ իբրև զանասուն անբան , զիարդ մարթ իցէ ասել վասն նորա թէ իցէ բանաւոր :

## ԳԼՈՒԽ Զ .

Ապացոյց նշանի , ճանաչման եւ յատկութեան  
հանդերձ շարազուգութեամբ ընդ միմեանս :

Ի վեր անդր խօսեցաք ուրոյն զնշանէ , ըզ  
ճանաչմանէ և զյատկութենէ . աստ արժան  
համարիմք խօսել զնոցունց շարազոյդ կանո  
նաւ , եթէ զիրական , եթէ զգործնական և  
եթէ զբանական բանից , զիրաց , զնիւթոց և  
զգործոց :

Նշան տուրնջեան է ծագումն լուսաբեր  
աստեղն . ճանաչումն տուրնջեան է արշալոյսն ,  
և յատկութիւն տուրնջեան է ծագումն արե  
գական . Նշան հրոյ է ծուխն . ճանաչումն նորա  
է ջերմութիւն , իսկ այրելն և կիզուլ է յատ  
կութիւն նորա . Նշան ջրոյ է ցրտութիւն , ճա  
նաչումն նորա է խոնաւութիւն , յատկութիւն  
նորա է զովացուցանելն :

Նշան դարբնութեան է կռանն 'ի ձեռին .  
ճանաչումն նորա է հարուած կռանին ընդ սալ  
և յատկութիւն նորա է շինել խօփ , տապար ,  
մանգաղ , այլովքն հանդերձ . Նշան բժշկի է  
ունել և ճանաչել զնիւթս դեղաց , զզօրութիւն  
և զազդեցութիւն նոցա և զկանոն բաղադրելոյ  
զնոսա . ճանաչումն նորա է գիտել զսլէս սլէս  
ազգս հիւանդութեանց , զպատճառս նոցա  
և զբնաւորութիւն , և զնունդ հիւանդաց :

յատկութիւն բժշկի է ազգու բանիւ մխիթարելով բժշկել հանդերձ դեղովք զհիւանդն , և առողջացուցանել ըստ վիճակի և ըստ հասակի նորա դարմանելով զնա :

Նշան թագաւորի և իշխանի է զոյգ և հաւասար սիրել զամենայն հպատակս իւր . ճանաչումն թագաւորի և իշխանի է օրէնսդ իր լինել յօգուտ և 'ի յառաջադիմութիւն հասարակաց և 'ի հաստատութիւն թագաւորութեան իւրոյ . իսկ յատկութիւնն է արդարութեամբ դատել զամենայն մարդ , զլաւս վառօք եւ պատուով պսակել և զչարս ըստ օրինաց պատժել 'ի զգուշութիւն և 'ի խրատ սյրոց :

Նշան վարդապետութեան է լինել համեստ , պարկեշտ և խոնարհ . ճանաչումն նորա է գիտել զարուեստս և զգիտութիւնս պիտանիս , եթէ զկրօնականս և եթէ զբարոյականս . յատկութիւն նորա է խրատել զոգէտս , և ուսուցանել նոցա զնալ բարւօք ընդ ժողովրդեան . հանապազ քարոզել զհաւատս , զյոյս և զսէր , սիրով և խաղաղութեամբ պահել զհաւատացեալս : Նշան մարդոյ է վարելն բանիւ . ճանաչումն նորա է խօսելն , և յատկութիւն՝ ծիծաղականութիւնն , Նշան մարդկութեան է իմացականութիւն , ճանաչումն է ճանաչել և ընտրել զբարին 'ի չարէն , զյոռին 'ի լաւէն և զուղիղն 'ի թիւրէն . իսկ յատկութիւն մարդկութեան է առաքինի լինել միշտ :

Նշան քաղաքական ուղիղ և ճշմարիտ հաւատոյ է հաւատարմութիւն. ճանաչումն է սղջախոհութիւն. յատկութիւնն է վեհանձնութիւն. Նշան բնական ուղիղ հաւատոյ է առողջութիւն մարմնոյ մի օրինակ և անվնաս. ճանաչումն նորա է հանճար և ստանալ պատիւ. իսկ յատկութիւնն է գիտել զպատճառս ամենայն իրաց որ լինին ՚ի բնութենէ, և նովին ունել բերկրութիւն և իշխանութիւն ՚ի վերայ անձին իւրոյ և ՚ի վերայ այնոցիկ որ ոչ գիտեն զբնութիւն. իմացական կամ բարոյական նշան ուղիղ և ճշմարիտ հաւատացեալ Քրիստոնէի է ըստ վճռոյ Աւետարանին սքանչելագործութիւն. ճանաչումն նորա է սէր սուրբ և անկեղծ առ ամենայն մարդ. իսկ յատկութիւնն է խաղաղութիւն և շնորհս ունել առ ամենեւին. Նշան ճշմարտութեան է համարձակութիւն ՚ի բանս. ճանաչումն է խօսել մի օրինակ. իսկ յատկութիւնն է կեալ հաստատուն.

Նշան բարեկամութեան է գովել զբարեկամն ՚ի բացակայութեան նորա. ճանաչումն է զթալ և ներել զյանցուածսն զոր առնէ նա տղիտութեամբ կամ առ սխալանաց. յատկութիւնն է օգնել նմա ՚ի նեղութեան և առնել շնորհս ՚ի ձախորդութեան. Նշան նախանձութիւն է քրթմնջել ՚ի վերայ մեծամեծ և ընտիր գործոց, հարմարելով զնոսա ոչինչ, ճանաչումն է

չհաճել ընդ դործս նորա ընդ որ նախանձի ,  
 իսկ յատկութիւնն է բժականդիր լինել 'ի ճշմա-  
 րիտս առ 'ի սուտ առնելոյ զճշմարտախօսն և  
 երեւեցուցանելոյ զանձն ճշմարիտ . նշան թըշ-  
 նամոյ է քամահել , բամբասել և ոչ հաճել .  
 ճանաչումն է խօսել հակառակ պէս պէս խար-  
 դախութեամբ , իսկ յատկութիւնն է զմարդա-  
 սիրութիւնն քարոզելով իբրեւ մարդահաճու-  
 թիւն յարուցանել զայլս 'ի վերայ նորա առ որ  
 ունի զթշնամութիւն .

Նշան ազգասիրութեան է կարօտելոց ազգի  
 իւրոյ տանել դարման ըստ կարի . ճանաչումն  
 է զբարս և զվարս ազգին իւրոյ ուղղել . յատ-  
 կութիւնն է մեծացուցանել զնա և առնել ըն-  
 չաւէտ նիւթական , բարոյական և բնական մե-  
 ծութեամբք և ընչիւք , այն է՝ ստացուածով ,  
 ուսմամբ և բազմամարդութեամբ . նշան խմաս-  
 տասիրութեան է զամենայն մարդ շահել և  
 բարեկամանալ ընդ նոսա . ճանաչումն է զա-  
 մենայն մարդ 'ի վրասուց և 'ի չարեաց պահել  
 զերծ , և համոզել 'ի բարին , 'ի ճշմարիտն և  
 յօգտակար . իսկ յատկութիւնն է գիտել ըզ  
 պատճառս ամենայն էից , զամենայն մարդ իբ-  
 րեւ զիւր անձն ճանաչելով և ուսուցանել նոցա  
 ըստ չափոյ կարողութեան նոցա ուսումն և գի-  
 տութիւն .

Նշան ընչեղութեան է անպարանս մեծա-  
 մեծս ունել . ճանաչումն է ունել ստացուածս

բազումս . իսկ յատկութիւնն է ծախել զինչս իւր 'ի պէտս որբոց , այրեաց և կարօտելոց , նախ՝ վասն երկարութեան կենաց նոցա , երկրորդ՝ առ ուղղել զբարոյս նոցա , երրորդ՝ առ 'ի բազմացուցանելոյ զմարդիկ , և չորրորդ՝ վասն գործելոյ զերկիր արգաւանդ , և զայն՝ նախ 'ի փառս Աստուծոյ . երկրորդ՝ 'ի ծառայութիւն թագաւորի . երրորդ՝ 'ի սէր և 'ի պատիւ անձին իւրոյ , չորրորդ՝ վասն հասարակաց օգտի .

## ԳԼՈՒԽ Է .

Յաղագս հաւատարմութեան ,

Հաւատարմութիւն է անխփփոխն լինել յիրս , 'ի խորհուրդս , 'ի բանս և 'ի գործս զոր այլք հաղորդեն նմա , և պահել զգաղտնիս . Այր կատարեալ խորհի քաջ և ընտրէ թէ երբ կամ զիարդ և որչափ պարտ իցէ 'ի վեր հանել և յայտնել բանս ինչ կամ խորհուրդ եւ կամ գործ , նոյնպէս ընտրել զայն որում պարտի 'ի վեր հանել , և ըստ այնմ ասել .

Երկրորդ՝ այր կատարեալ յառաջ քան զառնելն ինչ խորհի ընդ մտերիմ և հանճարեղ բարեկամս , կչուէ ընդ նոսա զվախճան գործոյն և զայլ ևս հանգամանս .

Հաւատարմութիւնն պարտի տեւել մինչև  
 'ի ժամանակն որ եղեալ է նմա 'ի պահպանու-  
 թիւն խոստման կամ իրաց և կամ խորհրդոց .  
 և եթէ մշտնջենաւոր իցէ խոստումն , պարտի  
 տեւել մինչև ցմահ :

## ԳԼՈՒԽ Ը .

Թէ ընդէր հաւատարմութիւնն եղաւ նշան հաւա-  
 տոյ 'ի ցուցակի :

Հաւատարմութիւնն է հաստատութիւն 'ի  
 միտս , 'ի բանս և 'ի գործս առ այն զոր ընկալաւ ոք  
 իբրև ճշմարիտ . եւ զի հաւատք են ճանաչումն  
 ճշմարտութեան , ապա հաւատացելոյն պարտ  
 է լինել հաւատարիմ , այն է հաստատուն յայնմ  
 զոր ծանեաւն և ընկալաւ . եւ զի ամենայն ինչ  
 իւրով յատուկ նշանաւ ճանաչի , հաւատացեալն  
 եւս ոչ այլով իւրիք մարթի ծանօթ լինել եթէ  
 ոչ հաւատարմութեամբն . Չէ մարթ ումեք  
 պահանջել զի այլք տացեն վկայութիւն հա-  
 ւատոյ նորա , եթէ չցուցանէ նա զնշան հաւա-  
 տոյն իւրոց . Հաւատարմութիւնն իբրև նշան  
 հաւատոյ այնպէս հաստատուն և հաւաստի է  
 մինչև 'ի հաւատարմութենէ մակաբերել զհա-  
 ւատս , որպէս 'ի հաւատոյ մակաբերեմք զհա-  
 ւատարմութիւն . ուստի կարեմք ասել Այս ինչ

ոք է հաւատացեալ, ապա է հաւատարիմ, է հաւատարիմ, ապա է հաւատացեալ.

Այլ նախ հաւատարմութիւնն պարտի լինել հանդերձ բերկրութեամբ և զթութեամբ, երկրորդ՝ պարտ է գիտել զի բաց 'ի նշանաց դոն և ճանաչումն և յատկութիւն, Տեսանելով զնշանն միայն չէ մարթ 'ի վերայ ածել թէ է հաւատացեալ. զի բազում անգամ նշանք խաբեն. ուստի պարտ է խնդրել յետ նշանաց զճանաչումն եւս և զյատկութիւն, զորոց 'ի ստորև խօսեսցուք.

## ԳԼՈՒԽ Թ.

Յազագս ողջախոհութեան.

Ողջախոհութիւն է լինել ողջ, այն է՝ ուղիղ 'ի խորհուրդս, և 'ի կամս. Ապա ողջախոհութիւն է նախ ուղղութիւն 'ի դատել, միշտ մտադիւրութեամբ խորհել զողջն, զճշմարտն և զմնայուն, և ոչ զսնտաին, զմոլարն և զանցաւոր. երկրորդ՝ ողջախոհութիւն է զգատութիւն 'ի կերակուրս և յբնակելիս, եւս և 'ի զգեստս, 'ի բանս, 'ի գործս և 'ի վարս. երրորդ՝ ողջախոհութիւն է մանաւանդ համեստութիւն կամ չափաւորութիւն 'ի գանկու

թիւնս , այն է՝ ազատ լինել 'ի վաւաշտութենէ  
 և յամենայնէ որ ազանդեն զմիտս , զսիրտ և  
 զլեզու : Միով բանիւ ողջախոհն զգուշանայ  
 յամենայն զգայական ախորժակաց :

## ԳԼՈՒԽ Ժ .

Թէ բնդէր ողջախոհութիւնն եղաւ ճանաչումն հաւ-  
 ւատոյ :

Ի նախընթաց գլուխ գրոցս ասացաք թէ  
 զինչ իցէ ողջախոհութիւն , Իսկ վասն հաւա-  
 տոց գիտեմք զի հաւատք են իմաստութիւն  
 և խելամտութիւն ճշմարտութեան , Աստի յայտ  
 է թէ հաւատացեալն որ իմաստունն է և խելա-  
 մուտ ճշմարտութեան՝ 'ի հարկէ պարտի լինել  
 ողջախոհ , այն է ուղիղ 'ի միտս , 'ի բանս , 'ի  
 գործս և 'ի վարս իւր որով ճանաչի իսկ . Այլ  
 ողջախոհութիւնն պարտի լինել համբերու-  
 թեամբ և ներողութեամբ , զի համբերութիւնն  
 և ներողամտութիւնն արբանեակք են ողջախո-  
 հութեան :

## ԳԼՈՒԽ ԺԱ .

Յաղագս մեծանձնութեան ,

Մեծանձնութիւն է բարձրութիւն և պերճութիւն ոգւոյ որ արհամարհէ զամենայն ստորինս և անարժան ինչ իրս . Մեծանձնութիւնն է աստուածամանութիւն ըստ կարողութեան մարդոյ . Զի որպէս Աստուած ոչ կարօտի իմիք և ոչ խնդրէ ինչ յումեքէ այլ շնորհէ միշտ առատութեամբ , նոյնպէս մեծանձնն ոչ խնդրէ 'ի մարդկանէ բայց 'ի լինել հարկի . յԱստուծոյ միայն խնդրէ , իսկ մարդկան յօժար է տալ մանաւանդ քան առնուլ 'ի նոցանէ : Երկրորդ՝ մեծանձնն 'ի հաւատոց իւրոց առնէ զոր ինչ և կամի ըստ նախասահմանութեանն Աստուծոյ , զի գիտէ զօրինակ կալոյ յաղօթս , և Աստուած լսէ աղօթից նորա ըստ վճռոյ նախասահմանութեան իւրոյ . Երրորդ՝ մեծանձնն ոչ լքանի , ոչ տաղտկայ , ոչ հառաչէ , ոչ տրտմի , ոչ պահէ ոխս . Զորրորդ՝ մեծանձնն հաստատուն է 'ի միտս իւր և ծանր 'ի բանս և 'ի գործս . զի երկնչի թէ գուցէ լիցի սխալ կամ անիրաւութիւն ինչ , և յետոյ ստրջացի . Միով բանիւ մեծանձնն որ է հաւատացեալ հաւատարիմ՝ բովանդակէ յինքեան զայն ամենայն զորոց խօսեցաք , իբրև թէութիւն հաւատոյ , յուսոյ և սիրոյ . այն է՝ ժրութիւն հանդերձ

համեստութեամբ , խոհեմութիւն հանդերձ պարկեշտութեամբ , արիութիւն հանդերձ խոնարհութեամբ . ընտրել զհամակիրն , որոշել զյարմարութիւն տեղւոյն , ճանաչել զժամանակն փորձիւ և չափաբերութեամբ , այսինքն՝ թուելով համեմատել և դատանել . արդարութիւն հանդերձ շնորհօք , սրբութիւն հանդերձ բարեխառնութեամբ , ճշմարտութիւն անփոփոխ : Դարձեալ՝ զթալ առ ամենեսին , ներել յանցաւորին , բերկրել հանասպաղ , համբերել ըստ պայմանեալ ժամանակին , հաւատարիմ յամենայն դործս և իրս , ողջախոհ ըստ ամենայնի , մեծանձն , պատրաստ միշտ առնել շքնորհս առ ամենայն մարդիկ , և առնուլ շնորհս յԱստուծոյ :

Մեծանձնութիւնն եւս ըստ օրինակի հաւատոց երեքիկն է . բնական , իմացական և քաղաքական :

Բնական մեծանձնն օգնէ զօրութեամբ մարմնոյ և ուժեղութեամբ . է նա որպէս ձեռն Աստուծոյ , հասանէ ՚ի վերայ տկարին , հիւանդի , ծերոյ և գերւոյ . զօրացուցանէ զնոսա , դարմանէ , լինի նեցուկ և ազատիչ նոցա :

Որ իմացականութեամբ մեծանձնն է՝ է իբրև զբերան Աստուծոյ . ուսուցանէ , խրատէ , մխիթարէ , կրթէ , այլովքն հանդերձ :

Որ մեծանձնն է քաղաքականապէս՝ յընչից և ՚ի գոյից իւրոց լինի նպաստ :

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Թէ ընդէր մեծանձնութիւնն իցէ յատկութիւն հաւատոյ :

Ասացաք եթէ մեծանձնութիւնն է աստուածանմանութիւն ըստ կարողութեան մարդոյ , քանզի մեծանձնն յօժար է տալ մանաւանդ քան առնուլ , Զիարդ հնար է մարդոյ ունել զայս յօժարութիւն , եթէ չունիցի ճշմարիտ և կատարեալ հաւատս յԱստուած որ տուիչն է ամենայն բարեաց , և հատուցանէ արդարութեամբ ըստ գործոց իւրաքանչիւրոց , ողորմած առ ողորմածս , և սիրէ զտուրս զուարթառատս :

Ապա յայտ է թէ յատկութիւն ճշմարիտ հաւատոց է մեծանձնութիւն , որ ոչ այլուստեք կարէ յառաջ գալ եթէ ոչ 'ի հաւատոց , Եւ արդարեւ բարերարութիւն , ողորմութիւն , շնորհք , առատաձեռնութիւն , և ամենայն գործք մեծանձնութեան յառաջ դան 'ի հաւատոց : Եւ քա որ ոչ ունին ճշմարիտ և կատարեալ հաւատս՝ չեն առատաձեռն , և տուրքնոցա չեն զուարթ և յօժարակամ , այլ կծծի , և առժամանակեայ :

Դարձեալ , և զի հաւատք են իմաստութիւն և խելամտութիւն ճշմարտութեան , և

մեծանձնութիւն է բարձրութիւն և վսեմութիւն ողւոյ, իմաստունն և խելամուտ ճշմարտութեան՝ ի հարկէ ունի ողի պերճ և գեր ՚ի վերոյ քան զամենայն գծուծս և ստորինս որ են իրք երկրաքարչք և մարմնաւորք :

Մեծանձն ողւոյ վայելէ արուեստ, իշխանութիւն, դատաւորութիւն, բժշկականութիւն, հողագործութիւն, հովուութիւն ըստ երկրաւորին, և ըստ հոգեւորին՝ եպիսկոպոսութիւն, վարդապետութիւն, ՚ի քաղաքականութեան՝ վաճառականութիւն, և պէսպէս արուեստից տեսչութիւն : Ապա պարտ է թագաւորաց և ազգաց ընտրել զայր մեծանձն ՚ի գործ, զի արժան է ըստ գործոյն ընտրել զմարդ, և ոչ մարդոյ գտանել գործ :

## ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս բերկրութեան :

Բերկրութիւն է խնդութիւն և զուարթութիւն ընդ բարիս որ հաճոյն և ցանկալի են անձին, եթէ իցէ իր, եթէ բան և եթէ գործ : Բարիք ընդ հանրապէս կախեալ կան զհաճութենէ կամաց կամ ՚ի բերմանէ ներքին բաղձանաց, Բարիք բաժանին Ա. ՚ի բնական կամ

զգայական . 2. 'ի բարոյական կամ 'ի հոգեւոր .  
 3. 'ի քաղաքական կամ ստացական .

Ի զգայականս և 'ի բանականս քաղաքա-  
 կան բարիք 'ի կրկին աղբերաց դան յառաջ .  
 մի՛ յԱստուծոյ կամ 'ի բնութենէ , երկրորդ՝  
 'ի խորհրդոց , 'ի կամաց կամ 'ի բարոյականու-  
 թենէ մարդկան . Բարիքն որ յԱստուծոյ և 'ի  
 բնութենէ՝ մի են յաչս խմաստնոց , իսկ վասն  
 բարեաց որ են 'ի խորհրդոց և 'ի կամաց մարդ-  
 կան՝ պարտ է գիտել զի չէ արժան վստահ լի-  
 նել 'ի նոսա , եթէ չիցէ հաստատեալ վստա-  
 հութիւնս այս 'ի պայմանս մուրհակօք , վկա-  
 յիւք և ըստ կանոնաց եղելոց յօրէնսդիր իչ-  
 խանութենէ , միջամտութեամբ կամ վաւերաց-  
 մամբ գործադիր իչխանութեան . Այլ վասն  
 բարեաց որ են յԱստուծոյ և 'ի բնութենէ՝ ոչ  
 է այսպէս . 'ի նոսա մարթ է վստահ լինել . զի  
 բնութիւն և Աստուած անփոփոխ են և անվը-  
 րէպ , այլ մարդիկ փոփոխելիք և վրիպականք ,  
 վասն որոյ որ յուսանն հաւատով յԱստուած և  
 'ի բնութիւն՝ կարող են համբերել , այն է՝ տո-  
 կալ , տեւել , կալ հաստատուն սպասելով ժա-  
 մանակին յորում գիտեն թէ կատարելոց է ան-  
 վրէպ և անխաբ այն որում ակն ունին , և թէ  
 Աստուած 'ի բնութեան հաստատեալ և վրճ-  
 ուեալ է թէական վճռով , այսինքն՝ զի մարդն  
 հասանիցէ բարեաց բնականաց եթէ առնիցէ  
 զայս ինչ կամ զայն ինչ , եթէ վարիցի այսու

կամ այնու օրինակաւ , զորոց կախեալ կայ կա-  
տարումն իրացն ըստ անշարժութեան և միօ-  
րինակութեան բնութեան :

Արդ բերկրելն ընդ զգալի բարիս է այն-  
պիսեաց որ զգայուն միայն են , այն է՝ անաս-  
նոց . և բնական մարդիկ բերկրելով ընդ զգալի  
բարիս՝ հաւասարեն անասնոց . ապա բանա-  
կան մարդոց պարտ է բերկրել մանաւանդ ընդ  
իմացական բարիս , զոր համարիմք կամ մա-  
նաւանդ ընդունիմք լինել բարիս կշռելով  
հանճարով և տրամաբանութեամբ , կամ լաւ  
եւս ասասցուք՝ հաւատով խելամուտ լեալ  
գիտեմք զի են նոքա արդարև բարիք . և զի  
'ի ճշմարիտ հաւատոյ բխէ յոյս աներկեւան թէ  
բարիքն այն լինելոց են յերջանկութիւն մեր  
առյապա , ծնանի 'ի մեզ բերկրութիւն 'ի յու-  
սոյ անտի՝ ուստի և յիրաւի ասեմք թէ բերկ-  
րութիւնն է նշան յուսոյ որպէս տեսցուք 'ի  
ստորեւ :

Բերցուք օրինակ ինչ բերկրութեան ծա-  
գելոյ 'ի յուսոյ . ըստ յարմարութեան տեղոյ  
կամ ըստ ժամանակի սերմանեմք ուրեք 'ի  
գարնան կամ յայլ եղանակս տարոյ , և զի  
գիտեմք թէ արդիւնաւոր լինելոց է սերմն մեր  
վասն յարմարութեան տեղոյն և ժամանակին ,  
իսկոյն ծնանի 'ի մեզ յոյս աներկեւան ըստ չա-  
փոյ թէ վայելելոց եմք առյապա 'ի ստուղսն . և  
ահա յաջորդէ յուսոյն՝ բերկրութիւն . և զի-

արդ հնար է չբերկրել, բայց եթէ մատչուող ոք  
իցէ կամ յիմար :

Աստի զհետ գայ թէ նա որ ոչ բերկրի՝ ոչ  
յուսայ, և որ ոչն յուսայ՝ ոչ յուսայ զի չունի  
հաւատս : Եւ որ ոչն ունի հաւատս չէ բանա-  
կան այլ լոկ զգայուն կենդանի :

## ԳԼՈՒԽ ԺԴ.

Քէ ընդէր բերկրութիւնն իցէ նշան յուսայ :

Ի բերկրել մարդոյ զուարթանայ և զուար-  
ճանայ սիրտն, զի տարածի արիւնն ընդ ամե-  
նայն երակս փոխանակ յորդեւոյ և սեղմեալ  
պնդեւոյ ՚ի սրտի : Ի տարածել արեանն ընդ-  
ամենայն անդամս ՚ի ձեռն երակաց, մարմինն  
զօրանայ և ժրանայ, և ամենայն գործարանք  
գիւրաւ և բարևք կատարեն զիւրեանց պաշ-  
տօն : Նիզք և ուղեղն զիմացական գործողու-  
թիւնս, թոքք զտուրեւառ շնչոյն, նոյնպէս և  
այլք ՚ի գործարանաց զիւրեանց պէտս պաշ-  
տամանն : Գարձեալ և միտք և կամք եւս զօ-  
րացեալ զգէմ ունին զգայական ախորժա-  
կաց և կրից, յստակագոյնս տեսանէ հոգին  
զճշմարտութիւն, կամքն յօժարագոյնս սիրեն  
զբարին, և այլ եւս բազում ինչ պատահեն

մարդոյ զորոց խօսել մի ըստ միոջէ աւելորդ է . վասն այսորիկ այր բերկրեալ առաւել զերծ է 'ի կրից քան զայլ ո.ք . Արդ զինչ իցէ պատճառ այսպիսի և այսչափ փոփոխութեանց որ լինին 'ի ձեռն բերկրութեան . ապաքէն ոչ այլ ինչ է եթէ ոչ յոյս աներկեւան . Չի յոյս է որ տայ մարդոյ ակնկալել բարեաց եթէ զգալ յականաց և եթէ քաղաքականաց , և մանաւանդ բանականաց , և հաճել և հանգչել այսու խորհրդով եթէ վայելելոց է առյապա , նա և 'ի մօտոյ իսկ յերջանկութեան և 'ի լաւութեան . Ապա յայտ է թէ բերկրութիւն նշանակ է յուսոյ , այնպէս զի 'ի տեսանել մեր զոք զի չունի բերկրութիւն յանձին , իմանամք թէ զուրկ է 'ի յուսոյ կամ է 'ի յուսահատութեան . և չունենլն յոյս յայտ առնէ զպակասութիւն հաւատոց , ապա և չէ այնպիսին բանական , այլ ընկ զգայուն կենդանի , որպէս ասացաք :

Այլ պարտ է գիտել զի բերկրութիւն ոչ է միշտ նշան յուսոյ . զի 'ի նշանաց խաբիմք , եթէ ոչ խնդրեսցուք զճանաչումն և զյատկութիւն ևս յուսոյ , յորոց կարեմք ստուգել թէ գոյ արդարեւ յոյս . և եթէ գոյ յոյս , ապա գոն և հաւատք . Չոր օրինակ մարթ է ումք խաբել և կարծել թէ գոյ հուր տեսանելով զդժուրչի ինչ և համարելով զայն ծուխ . սոյնպէս մարթ է խաբել 'ի բերկրութենէ , որում հնար է յառաջ գալ երբեմն յանզգայութենէ

կամ յանմտութենէ , Յայտ է թէ զայսպիսիս չէ արժան ընդունել իբրեւ զմարդ ճշմարիտ բանական , զի են զուրկ 'ի յուսոյ յաջողելոյ 'ի հաւատոց , և յայնպիսի յուսոյ միայն ծնանի ճշմարիտ բերկրութիւն , իսկ թէ ճշմարիտ իցէ բերկրութիւն ուրուք , այն է՝ թէ իցէ՞ արդարեւ 'ի յուսոյ յաջողելոյ 'ի հաւատոց , ոչ այլով իւրիք մարթ է ստուգել բայց 'ի ձեռն ճանաչման և յատկութեան յուսոյ :

## ԳԼՈՒԽ ԺԵ .

Յաղագս համբերութեան :

Համբերութիւնն է տոկալ վշտաց և նեղութեանց . այն է՝ հաստատութեամբ տանել նոցա , առանց շփոթութեան , վհատութեան և յուսահատ լինելոյ , այլ մանաւանդ ըստ կարի ջանալ առ ոչինչ գրել զնոսա դիւցազնութեամբ :

Գարձեալ համբերութիւնն է երկայնմտութիւն , այն է՝ ոչ լքանել 'ի դժուարութեանց և 'ի բաց կալ վաղվաղակի , զի համբերութեամբս այսուիկ որ է յարատեւութիւն՝ մարթ է յաղթել բազում դժուարութեանց որ զառաջինն թուին անհնարին առ յաղթել . Այսպէս համբերութիւն կեցուցիչ է , վասն որոյ ասաց Տէրն թէ Որ համբերեսցէ իսպառ՝ կեցցէ :

## ԳԼՈՒԽ ԺԶ.

Թէ ընդէր համբերութիւնն եղաւ լինել ճանաչումն սիրոյ .

---

Գործ համբերութեան է աներկբայութիւնն յուսոյ 'ի ձեռն ուղիղ ճշմարիտ և կատարեալ հաւատոյ . Յոյսն այն է շնորհ այնր ճշմարիտ և կատարեալ հաւատոյ . նշան յուսոյն է բերկրութիւնն , իսկ 'ի բերկրութենէ անտի ծնանի առողջութիւն մարմնոյ , 'ի մարմնոյ առողջութենէ՝ ամփոփին միտք , և 'ի մտաց ամփոփմանէ անտի զօրանայ և լինի կատարեալ հանճարն . Յայնժամ հոգին 'ի ձեռն ամփոփ մտաց և զօրացեալ հանճարոյ իմանալի աշօք սկսանի յանդիման առնել իւր զբարիսն ապագայս որ աներեւոյթն են , և այնպէս չափաբերապէս , այն է՝ որոշ և ստուգիւ գիտէ զչափն և զկշիռ եղերոյ , տոկայ առանց տրրանջանաց և դժգոհութեան , ուստի և կայ մնայ անփոփոխ և հաստատուն մինչեւ 'ի ժամանակն զոր չափաբերապէս հաւաստեաւ ծանուցեալ գիտաց .

Վերագոյնն խօսեցաք զբարեաց և զբաժանմանէ նոցա . ապա ցուցաք թէ բարիքն բնականք որ յլստուծոյ են և 'ի բնութենէ՝ անշարժ և անփոփոխ են ըստ օրինաց բնութեան

որ միօրինակն և հաստատուն է . Արդ ասեմք թէ 'ի բարիս որ յԱստուծոյ և 'ի բնութենէ են՝ պարտ է յուսալ աներկեւան . ասպա և համբերել հաստատութեամբ և վստահութեամբ առանց տրտնջելոյ և վհատելոյ . Որ ունի զյոյսն աներկեւան 'ի հաւատոց՝ 'ի հարկէ ունի և ըզհամբերութիւնս զայս , վասն որոյ յիրաւի ասացաւ թէ համբերութիւնն է ճանաչումս յուսոյ . զի 'ի համբերութենէ անտի ճանաչի հաւաստեաւ եթէ ունի այնպիսի յոյս աներկեւան 'ի ճշմարիտ և 'ի կատարեալ հաւատոց .

## ԳԼՈՒԽ ԺԷ .

Թէ զինչ իցէ պատրաստութիւն :

Պատրաստութիւնն է գտանել կազմ և յարար յառաջագոյն քան զբան ինչ կամ զգործ կամ զիրողութիւն , ունելով որ ինչ կարեւորն և պիտանին է բանին , գործոյն կամ իրողութեանն որ առաջի կայ .

Պատրաստութիւն մարթի լինել ուսումն ինչ կամ նիւթ կամ գործի կամ կարգադրութիւն ինչ , այլովքն հանդերձ . Յուղիղ և 'ի ճշմարիտ հաւատոց յուսամք աներկբայ , և 'ի յուսոյ անտի բերկրիմք , և 'ի բերկրութենէ

անտի համբերեմք, և համբերեմք, քանզի եմք կաղմ և պատրաստ ամենայն կարեւորօք առ այն առ որ յուսամք գիտելով, այն է՝ հաւատալով թէ լինելոց և կատարելոց է ապաքէն ։

Պարտ է գիտել զի ՚ի պատրաստութեան՝ կաղմութիւն մեր կամ հանդերձանք պէս պէս են ։ Եթէ զպատուոյ իցեն բանք, պատրաստութիւն մեր պարտի լինել իմաստասիրութեամբ, այն է՝ զգաստութեամբ և իմաստութեամբ ։ Եթէ զգոտիճանէ իցեն բանք, պատրաստութիւնն պարտի լինել ուսմամբ և գիտութեամբ ։ Եթէ զշահուց իցեն բանք, պարտի ունել ՚ի պատրաստի ժրութիւն, համեստութիւն, խոհեմութիւն, պարկեշտութիւն (չափաւորութիւն), արութիւն, խոնարհութիւն ։ Եթէ իցեն բանք զչինուածոց, պատրաստութիւն նիւթոց պահանջի, որպէս՝ փայտի և քարի և կրոյ, սյրովքն հանդերձ ։ Վասն ճանապարհի՝ պահանջի պաշար և հանդերձ, սյրովքն հանդերձ ։ Ապա ոչ է մարթ հաւատացելոյն յուսալ բերկրութեամբ և համբերել հաստատութեամբ առանց պատրաստութեան կարեւորացն ։



## ԳԼՈՒԽ ԺԸ .

Թէ ընդէր պատրաստութիւնն եղաւ յատկութիւն  
յուսոյ :

Գործ պատրաստութեան է , որպէս տե-  
սաք 'ի նախընթաց գլխի , յառաջագոյն հո-  
գալ և հայթայթել զպէտս կարելորս : Եթէ  
յուզիղ և 'ի ճշմարիտ հաւատոց ունիմք յոյս և  
համբերեմք , յայտ է թէ հոգացեալ և հայ-  
թայթեալ ունիմք զմիջոցս կարելորս , ապա  
թէ ոչ զխարդ կարէ համբերութիւն մեր լի-  
նել հաւաստեալ և իմաստութեամբ . այլ հարկ  
է զի այնպիսի համբերութիւն իցէ սուտ և  
ծաղրական և մոլորական . և անտի զհետ գայ  
թէ և յոյս մեր չէ աներկեւան վասն որոյ և ոչ  
'ի հաւատոց . Ապա զոր օրինակ աներկեւանու-  
թիւն յուսոյն որ 'ի հաւատոց՝ ճանաչի համբե-  
րութեամբ , ճանաչի ևս 'ի պատրաստութենէ  
իրբև 'ի յատկութենէ , այսինքն՝ իրբև 'ի պայ-  
մանէ առանց որոյ ոչ . Զի Աստուած որ արարն  
զամենայն հաստատութեամբ և օրինօք զոր հա-  
ւատք ծանուցանեն մեզ , յորմէ և յուսամք ան-  
շուշտ թէ ըստ անորէպ օրինաց նորա հասանելոց  
եմք այնմ զոր յուսամք , թէտկան վճռով սահ-  
մանեալ է հասանել մեզ այնմ զոր հաւատով  
գիտացաք և յուսով ակն ունիմք և համբերեմք .  
և մին ևս 'ի թէութեանց անտի վճռոյն Աս-

տուծոյ է պատրաստութիւն միջոցաց , Յոյս որ առանց պատրաստութեան է՝ չէ ճշմարիտ յոյս , զի զուրկ է 'ի յատկութենէ իւրմէ : Որ յուսայն աներկեւան 'ի հաւատոց՝ պատրաստութեամբ միջոցաց է աներկեւան և նովին ճանաչի :

Յայսմ ամենայնէ ինքնին զհետ դայ եթէ ամենայն ինչ ունի զիւր պատրաստութիւն և զմիջոց , Այլ է միջոց թագաւորաց և դատաւորաց 'ի բարեօք վարել զժողովուրդս : այլ են միջոցք այնոցիկ որ 'ի բնութենէ յուսան ինչ կամ 'ի քաղաքականութենէ կամ յարուեստից , այլովքն հանդերձ , Ոմն պարտի ունել զիրաւագիտութիւն , այլ օք զփիլիսոփայութիւն , միւս ևս օք զայս ինչ ուսումն կամ զարուեստ կամ զգիտութիւն կամ զհմտութիւն կամ զփորձառութիւն : Այն որ ելանէ 'ի ճանապարհ և ակն ունի հասանել յուշ եղեալ նպատակն՝ չկարէ հասանել և 'ի զուր աշխատի , եթէ չունիցի զբուն և զսեպհական միջոց և զպատրաստութիւն առ այն յոր հասանելն 'ի մտի եղեալ է : Աստի յայտ է թէ այս ամենայն պատրաստութիւն , համբերութիւն , յոյս՝ ունին ըզհաստատութիւն իւրեանց 'ի հաւատոց : Ունել պատրաստութիւն ըստ առաջիկայ իրին և գործոյ՝ անհրաժեշտ պիտոյ է , ասլա թէ ոչ ամենայն ազգք ձախորդութեանց , չաջողութիւն , վնասք , տոյժք և կորուստք անվրէպ մտալուտ և վերահաս են :

## ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս գթութեան :

Գթութիւն է շարժումն սրտի 'ի նպաստ ուրուք որ դտանի 'ի վիշտս ինչ կամ 'ի վտանգս . և ծնանի գութն ճշմարիտ յիմացականութենէ , այն է՝ 'ի հաւատոց որ քաջ հասու առնէ վըտանգի անձին տառապելոյ , թէպէտ չիցէ նա 'ի յայտնի ինչ տառապանս կամ չզգայցէ զիւր վիճակ ցաւագին և զաղէտս որում նշաւակն է :

Գութն է երբեմն զգացումն լոկ , երբեմն ևս 'ի համակրութենէ 'ի բարեբարոյութենէ , այլովքն հանդերձ . Այլ ճշմարիտ գթութիւն է 'ի հաւատոց , կամ յիմացականութենէ , այն է 'ի ճշմարիտ ճանաչմանէ :

## ԳԼՈՒԽ Ի.

Թէ ընդէր եզաւ գթութիւնն նշան սիրոյ :

Զգործոյ գթութեան ասացաք թէ է վըշտակից լինել և արգահատել նեղելոյն . Ասացաք ևս թէ յայլ և այլ պատճառաց մարթի գալ յառաջ գթոյ . նախ՝ 'ի հաւատոց և յիմացութենէ , և գութն որ իմացմամբ և 'ի հա-

ւատոց է՝ զգացումն ինչ է անդրադարձ, երկ-  
րորդ՝ ՚ի համակրութենէ ևս ծնանի գութ . և  
երրորդ՝ ՚ի բարեբարոյութենէ , այն է ՚ի փափ-  
կութենէ զգածման . յայս գութ բազում ինչ  
նպաստէ ունակութիւն , և կազմութիւն ջղաց  
և գործարանաց . Այլ բուն և ճշմարիտ գութն  
որ յիմացականութենէ՝ է իմաստասիրական ,  
բանաւոր և առաքինական .

Եւ զի սէրն է բերումն բնական և գութն  
է շարժումն այնր բերման , ապա յիրաւի է ա-  
սել թէ գթութիւն է նշան սիրոյ , զի յայտ  
առնէ զգոյութիւն սիրոյ ՚ի սրտի գթացողին .  
Իբրեւ գթամբ հաւատարմութեամբ և բերկ-  
րութեամբ , անդէն և անդ ստուգեալ լինի  
սէր մեր , Բայց և այնպէս տակաւին գթու-  
թեամբ լոկով ոչ ճանաչի սէր . հարկ է որոնել  
զճանաչումն և զյատկութիւն նորա .

---

## ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս թողութեան .

Թողուն է արձակել զոք որ իցէ կալեալ  
կամ ըմբռնեալ .

Պարա է գիտել նախ զի չորեքումբ օրի-  
նակօք ըմբռնի ոք . իրօք , Չեռամբ , Բանիւ և  
Սրտիւ . և չորեցունց ըմբռնմանցս ազդեցու-

Թիւնք այլակերպք են 'ի միմեանց . Թէպէտև  
անունն մի է , այլ դորձն և օրինակ՝ այլազգ .

Յայտ է թէ ոչ ոք լինի կալեալ կամ ըն-  
բըռնեալ արդեամբք և օրինօք առանց իրիք  
յանցանաց . Ուստի պատճառք ըմբռնման են .  
Առաջին՝ մեղանչել կենաց և առողջութեան .  
Երկրորդ՝ մեղանչել պատուոյ ընկերին , և եր-  
րորդ՝ մեղանչել ստացուածոց նորա . Վասն այսց  
երկից կարգաց յանցուածոց ըմբռնին մարդիկ և  
արկանին 'ի կալանս , 'ի կապանս և 'ի մահ եւս  
մատնին .

Թողուն է ներել վասն երեցունց եւս կար-  
գաց յանցանացս . այլ ներելով կամ թողլով ոչ  
է պարտ իմանալ զարձակումն 'ի կապանաց  
յանցաւորին , այլ զարձակումն նորա 'ի կապա-  
նաց սրտի այնր առ որ մեղաւն .

Ապա որ թողուն՝ պարտի թողուլ զոխ ,  
զլրէժ և զողի հատուցանելոյ չարիս և վնասս  
փոխարէն չարեաց և վնասուց .

---

## ԳԼՈՒԽ ԻԲ .

Թէ վասն էր թողութիւնն եղաւ ճանաչումն սիրոյ .

Ի վերագոյն գրելոց անտի յայտ եղև թէ  
զինչ է թողութիւն . այժմ պարտ է մեզ զպատ-

ճառէ նորա խօսել, Երեք են որ յորդորեն ըզմեզ թողուլ. Առաջին՝ վարդապետութիւն Աւետարանին. Երկրորդ՝ անգիտութիւն կամ արկարութիւն յանցուցելոյն. Երրորդ՝ յամօթ առնելոյ վասն զնա. վասն միոյ այսց երից պատճառաց հարկ է մեզ թողուլ յանցուածոց ընկերին.

Իսկ նշանակք թողութեան են. չյիշել զյանցանս մեղուցելոյն. օգնել նմա անյիշաչարութեամբ ՚ի վիշտս նորա ըստ կարի մերում ամենայն զօրութեամբ. սովին յայտնի լինի ուղղութիւն մտաց մերոց և անկեղծութիւն ՚ի ներքէն. վասն այսորիկ յիրաւի եղաւ թողութիւնն ճանաչումն սիրոյ, զի ուր չգուցէ սէր՝ անդ չիք ներել և անտես առնել. և այնչափ առաւել ներէ ոք և անտես առնէ զյանցանս և զթերութիւն ուրուք, որչափ առաւել սիրէ զնա.

Արդ քանզի ասացաւ թէ առաջին պատճառ թողլոյ մեր զյանցանս ընկերին է պատուէր Աւետարանին, այս պատուէր ստիպէ ըզմեզ ներել մանաւանդ եղբարց հաւատակցաց. Որ ոչն թողուցու ընկերին՝ զիարդ ունիցի համարձակութիւն խնդրելոյ ներումն յայլոց, մանաւանդ յԱստուծոյ.

Իսկ ներել այլոց վասն տկարութեան՝ է վասն այնորիկ զի և մեք ընդ նովին տկարութեամբ եմք, և ՚ի վտանգի մեղանչելոյ առ

այլս . Այսմ ետ օրինակ Տէրն որ աղօթս առ նէր առ Հայր թէ թող գոցա զի ոչ գիտեն զինչ գործեն .

Երրորդ պատճառն ներերոյ է յամօթ առ նել զյանցուցեալն . զի ներելով կուտեմք կայ ծակունս հրոյ 'ի գլուխ նորա , այն է՝ ամաչեցուցանեմք զնա 'ի բաց կալ 'ի չարակամ մտացն վնասակարաց .

---

## ԳԼՈՒԽ ԻԳ .

Յազագս ողորմութեան .

---

Ողորմելն է տալ տուրս կարօտելոց , այն է՝ առնել ողորմութիւն որոց ոչն ունիցին ինչ . կարօտութիւնն երեքկիին է . բնական , իմացական կամ բարոյական և քաղաքական .

Բնական կարօտութիւն է թերութիւն ինչ կամ խեղութիւն մարմնոյ ունել . ողորմիլ սոցա է խնամել զնոսա . և ողորմութիւնն առ այս կարօտութիւն է բնական ողորմութիւն .

Իմացականն կամ բարոյական կարօտութիւն է թերութիւն մտաց և բարուց , որպէս խելագարութիւն և վատթարութիւն 'ի բարս . Ողորմել այսպիսեաց է դարմանելն և խրատել և ուսուցանել և այլքն որ 'ի կարգին .

Քաղաքական կարօտութիւն է նեղութիւն  
 և աղքատութիւն առ ՚ի չգոյէ պիտոյից կե-  
 նաց , որպէս կերակրոց և ըմպելեաց , հանդեր-  
 ձից և բնակութեան և այլոց իրաց կարեւորաց ,  
 եւս և դուզնաքէից որ անհրաժեշտ պիտոյն  
 են . Ողորմել այսպիսեաց կարօտելոց է տալ զո-  
 գեպահիկն նոցա և զայն՝ առանց որոյ ՚ի վտան-  
 գի են կեանք տառապելոյն . Օգնել քաղա-  
 քականապէս կարօտելոց պարտք են ամենայն  
 մարդոյ , այլ այնպէս և այնչափ զի ոչ որ տայն  
 ծանրասցի և նեղեացի , և ոչ որ ընդունին յըղ-  
 փասցի . զի նպատակ այն է՝ հարկանել զպէտս  
 կարօտելոյն , և ոչ մեծացուցանել զնա , կամ  
 զայլ ոք աղքատացուցանել :



## ԳԼՈՒԽ ԻԳ .

Թէ վասն էր եղաւ ողորմութիւնն յատկութիւն  
 սիրոյ :



Զործոց ողորմութեան և զպէսպէս բա-  
 ժանմանց նորա եղեն բանք ՚ի նախընթաց գըլ-  
 խի . Արդ ողորմութիւն այնպէս կից է ընդ սի-  
 րոյ մինչև չէ մարթ ըմբռնել զսէր առանց ո-  
 ղորմութեան . Քանզի արդարև եթէ ոչ հաւա-  
 տամք , ոչ յուսամք . և եթէ ոչ յուսամք ,

ոչ սիրեմք , եթէ ոչ սիրեմք , ոչ գթամք հան-  
 դերձ հաւատարմութեամբ և բերկրութեամբ .  
 եթէ ոչ գթամք , ոչ թողումք հանդերձ ողջ-  
 մտութեամբ և համբերութեամբ . և եթէ ոչ  
 թողումք գլխանցանա , ոչ ողորմիմք հանդերձ վե-  
 հանձնութեամբ և սպառաստութեամբ . Ապա  
 արդարև ողորմելն է յատուկ սիրոյ . որ ոչն սի-  
 րէ՝ չկարէ ողորմել . և որ ոչն ողորմի՝ չունի  
 սէր , զի զուրկ է ՚ի յատկութենէ սիրոյ .



# Գ Ի Բ Ք Զ Ո Ր Ր Ո Ր Գ

## Գ Լ Ո Ւ Խ Ա .

Յաղագս արգասեաց թէ զինչ իցեն ,

**Ա**ՐԳԱՍԻՔ են արդիւնք կամ պտուղ իրիք էական այսինքն՝ իրօք, կամ իբր էական այսինքն բանիւ . Զոր օրինակ՝ պտուղ էական արգասիք են ծառոյ . Արգասիք են այն ամենայն որ յառաջ դան ՚ի վաստակոյ կամ յաշխատութեանց . համբաւ և պատիւ և յարգանք են արգասիք առաքինական գործոց . բժշկութիւն է արգասիք դեղոց , ջերմութիւն է արգասիք հրոյ , տամկութիւն և զովացումն՝ ջրոյ . Այսպէս խմա և զայլոց .

Ի ցուցակի մերում նշանակեալ են արգասիք բնական , խնացական և քաղաքական հաւատոյ , յուսոյ և սիրոյ . զի որպէս ամենայն իրաց են արգասիք , նոյնպէս և հաւատոյ , յուսոյ և սիրոյ հարկ է ունել արգասիս , զորոց յայսմ մասին ճառեսցուք մի ըստ միովէ .

## ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս արգասեաց քաղաքական հաւատոյ ,  
յուսոյ և սիրոյ :

Քաղաքական հաւատոյ արգասիք են Ան-  
դորրութիւն մտաց , Երկարութիւն կենաց և  
Ստացուածք արդարք դարուց 'ի դարս :

Աստ կայ մեզ առաջի քննել թէ ընդէր և  
զիարդ երեքին այսոքին իցեն արգասիք քա-  
ղաքական հաւատոյ , յուսոյ և սիրոյ , զորոց մի  
ըստ միջէ ճառեսցուք :

## ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս անդորրութեան մտաց :

Անդորրութիւն մտաց է հանգիստ , խա-  
ղաղութիւն և ապահովութիւն առանց յուզե-  
լոյ և առանց վրդովելոյ :

Նա որ ունի կատարեալ և ճշմարիտ հա-  
ւատս քաղաքական , այն է՝ վստահութիւն ,  
յետ խօսելոյ կամ առնելոյ և տալոյ կամ գոր-  
ծելոյ ինչ ոչ խորհի զնոցունց , զի յառաջագոյն  
խօսեցաւ , առ և ետ և գործեաց ժրութեամբ  
և համեստութեամբ , խոհեմութեամբ և պար-

կեչտութեամբ, արիութեամբ և խոնարհութեամբ ըստ անձին, ըստ իրին, ըստ տեղւոյն և ըստ գործոյն, ըստ ժամանակին և ըստ քանակութեան, արդարութեամբ և շնորհօք, սրբութեամբ և բարեխառնութեամբ, յարածամ և ամենեւին ըստ ճշմարտութեան, Նաոր ունի հաւատս՝ գիտէ զայս ամենայն թէութիւնս, զօրինակ և զհանգամանս, և յամենայնի խնդրէ զնշան, զճանաչումն և զյատկութիւն հաւատոյ, յուսոյ և սիրոյ յանձին և յայլս զբանս, զիրողութիւնս և զգործս նոքիմք սահմանէ, ընդ այնչ համեմատէ, կարգէ, և ապա ձեռնամուխ լինի ՚ի գործ. և յետ առնելոյ զայս ամենայն՝ բնաւ ոչ խորհի զնոցունց, վասն այնորիկ ունի կատարեալ անգորրութիւն մտաց. Այլ այս վիճակ մտաց յառաջ գայ ՚ի կատարեալ քաղաքական հաւատոյ, և է արգասիք նորա :

---

## ԳԼՈՒԽ Դ.

Յազագս երկարութեան կենաց թէ զինչ իցէ :

Արարիչն բնութեան սահմանեալ է իւրաքանչիւր մարդոյ ժամանակ և սահման կենաց պայմանաւ կամ թէութեամբ և ոչ բացարձակ :

այնպէս զի 'ի ձեռս մարդոյ է կարճել զայն սահմանն և եղծանել զկեանս իւր 'ի ձեռն մութութեանց և ազգի ազգի անկարգութեանց :

Այլ նա որ ունի կատարեալ և ճշմարիտ հաւատս՝ հաւատովն այնուիկ ոչ է յիմար՝ այլ իմաստուն . ոչ է մոլի՝ այլ համեստ , պարկեշտ և զգաստ . չէ անօրէն՝ այլ միշտ և ըստ ամենայնի արդար , սուրբ և ճշմարտասէր , վասն այնորիկ ոչինչ գործէ 'ի վրաս առողջութեան և խառնուածոյ մարմնոյ իւրոյ , ուստի և ոչ կարճէ զսահման կենացն և ոչ եղծանէ զնա . նմին իրի կայ հանապազ 'ի ցնծութեան , 'ի բերկրութեան և 'ի հանդարտութեան . և այս է աւասիկ երկարութիւն կենաց . Այս վիճակ յառաջ գայ 'ի քաղաքական յուսոյ և է արգասիք նորա :



## ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս արդար ստացուածոց թէ զինչ իցեն :

Արդար ստացուածք այն են զի ոք 'ի կեանս իւր անդուլ և հանապազորդ աշխատութեամբ և չափաւորութեամբ 'ի շահուցարուեստին իւրոյ , եթէ ազատական իցէ արուեստըն , եթէ մեքենական և եթէ զբաղումն ինչ

և ծառայութիւն , ստանայ ինչս և ստացուածս  
 առանց խարդախութեան և անիրաւութեան ,  
 առանց բռնութեան և յափշտակութեան , և  
 այլոց սոցին նման իրաց , Եւ այսպիսի ստաց-  
 ուածք մնան և տեւեն դարուց 'ի դարս , զի  
 ոչ ոք նախանձի ընդ նա , ոչ խանդայ կամ  
 դաւ գործէ նմա , և ոչ խորհի հնարս յափրչ-  
 տակելոյ զգոյս նորա 'ի նմանէ , կամ նուազե-  
 ցուցանելոյ կամ այլով իւրիք հանելոյ զնոսա 'ի  
 ձեռաց նորա , ֆանդի նա որ այնպէսն մեծա-  
 նայ , որպէս ասացաք , ժիր է և համեստ , խո-  
 հեմ , պարկեշտ , արի , խոնարհ , ճանաչէ զհա-  
 մակիրն ըստ իրին , գիտէ զտեղին ըստ գոր-  
 ծոյն , և որոչէ զժամանակն ըստ քանակութեան ,  
 արդար է հանդերձ շնորհօք , սուրբ՝ հանդերձ  
 բարեխառնութեամբ , զճշմարտութիւն սիրէ  
 յամենայնի և հանապազ . հաւատարիմ է 'ի  
 բանս և 'ի գործս իւր հանդերձ բերկրութեամբ  
 և գթութեամբ . ողջախոհ կամ ողջամիտ է  
 յամենայնի հանդերձ համբերութեամբ և թո-  
 զութեամբ . մեծանձն 'ի բնաւս հանդերձ  
 պատրաստութեամբ և ողորմութեամբ , Եւ  
 պատճառ այսպէսն լինելոյ նորա է սէրն որ բրդ-  
 խէ 'ի յուսոյ յաջողելոյ հաւատով . վասն այնո-  
 թիկ ասացաք թէ արդարութիւն ստացուածոց  
 են արդասիք քաղաքական սիրոյ ,



## ԳԼՈՒԽ Զ.

Թէ զինչ իցեն պատճառք արդասեաց քաղաքական  
հաւատոյ, յուսոյ և սիրոյ :

Անգորբութիւն մտաց է պատճառ երկա-  
րութեան կենաց, երկարութիւն կենաց լինի  
պատճառ արդար ստացուածոց, և արդարու-  
թիւն ստացուածոց լինի պատճառ տեւողու-  
թեան նորա դարուց 'ի դարս :

Արդ մի ըստ միով է ասասցուք թէ զիարդ-  
իւրաքանչիւրն 'ի սոցանէ, անգորբութիւն մը-  
տաց, երկարութիւն կենաց և արդար ստաց-  
ուածք դարուց 'ի դարս՝ ծնանին 'ի քաղաքա-  
կան հաւատոյ, յուսոյ և 'ի սիրոյ :

Նախ պարտ է գիտել զի, որպէս սյլուր  
ասացաք, քաղաքական հաւատով իմացեալ  
լինի վստահութիւն, Այս հաւատք կամ վստա-  
հութիւն լինի հաստատուն և ապահով հնգե-  
գումբք իրօք . այն է՝ նախ յիրաւանց կամ յօ-  
րինաց . երկրորդ՝ 'ի սովորութենէ տեղւոյն որ  
են իբրև երկրորդ օրէնք . երրորդ՝ յօրինաւոր  
յարաբերութենէ առեւտրական օրինաց . չոր-  
րորդ՝ 'ի կանոնաց որ տիրեն 'ի մէջ արուեստա-  
գիտաց ըստ իւրաքանչիւր տեղւոյ և ժամա-  
նակի . հինգերորդ՝ յարքունական հրամանաց  
և 'ի կարգադրութեանց . Որ և իցէ գործ կամ

իրողութիւն կամ դաշինք կամ պայման , եթէ  
 լինիցին համեմատ ըստ հնգեցունց կարգացն  
 այնոցիկ , լինին հաստատուն և տեւական , ուս-  
 տի և ծնանի հարկաւ վստահութիւն : Որ ու-  
 նին ուղիղ և ճշմարիտ և կատարեալ քաղա-  
 քական հաւատս կամ վստահութիւն՝ խօսին և  
 գործեն զամենայն ժրութեամբ , համեստու-  
 թեամբ , խոհեմութեամբ , պարկեշտութեամբ ,  
 արիութեամբ , խոնարհութեամբ . դարձեալ՝  
 ըստ իրին , ըստ անձին , ըստ գործոյն , ըստ  
 տեղւոյն , ըստ ժամանակին և ըստ քանակու-  
 թեան կարգեն , խօսին և գործեն . դարձեալ  
 առնեն և խօսին արդարութեամբ , շնորհօք ,  
 սրբութեամբ , բարեխառնութեամբ , անվտոխ  
 ճշմարտութեամբ , յամենայնի . դարձեալ՝ հա-  
 ւատարմութեամբ , բերկրութեամբ , գթու-  
 թեամբ , ողջխոհութեամբ , համբերութեամբ ,  
 թողութեամբ , մեծանձնութեամբ , պատրաս-  
 տութեամբ և ողորմութեամբ : Սոքա , որպէս  
 յայտ է , են ինն թէութիւնք հաւատոյ , յուսոյ  
 և սիրոյ հանդերձ եղանակօք և պարագայիւք  
 իւրեանց , և երիւք նշանօք , ճանաչմամբք և  
 յատկութեամբք : Որ միանգամ ըստ ամենեցուն  
 սոցա գործեն և առնեն և խօսին՝ ի հարկէ վայե-  
 լեն զանդորրութիւն սրտի : Սմին հակառակ՝ որ  
 առանց այսոցիկ գործէ և խօսի՝ յիմար է կամ  
 մոլի . և յայտ է թէ ՚ի յիմարութենէ և ՚ի մոլու-  
 թենէ ծնանի անհաւատութիւն և յանհաւա-

տութենէ՝ անօրէնութիւն , և յանօրէնութենէ ծնանին պէս պէս չարիք , վնասք և ձախողութիւնք . և դիարդ հնար իցէ այնպիսեաց ունել զանդորրութիւն սրտի , քանզի լինին միշտ 'ի կասկածանս և 'ի յոյզս : Եւ պատճառ սորա այն է զի ոչ են դորժք կամ բանք նորա 'ի քաղաքական հաւատոց , քանզի չեն համեմատօրինաց , սովորութեանց , ուխտից և այլ և այլ կարգաց և կանոնաց երկրին : Ապա յայտ է թէ անդորրութիւն մտաց ծնանի 'ի քաղաքական հաւատոց . կամ լաւ եւս ասասցուք , քաղաքական հաւատք կամ վստահութիւն են պատճառք անդորրութեան , որպէս և սմին հակառակ 'ի քաղաքական անհաւատութենէ կամ յանվստահութենէ որ ծագի յանհամաձայնութենէ ընդ քաղաքական օրինաց և կարգաց՝ ծնանին վարանք և կասկածք . և 'ի սոցանէ՝ այլ եւս չարիք մեծամեծք :

Ասացաք թէ յերկարութիւն կենաց են արգասիք քաղաքական յուսոյ . այսր ևս պատճառ յայտնի է և պարզ : Զի եթէ դորժք մեր և բանք և ձեռնարկութիւնք են ըստ քաղաքական հաւատոց , և վասն այնօրիկ ունիմք զանդորրութիւն մտաց , յայտ է թէ յոյս մեր ևս քաղաքական աներկեւան է , քանզի գիտեմք եթէ հասանելոց եմք 'ի կէտ նպատակի մերոյ . և 'ի լինել մտաց մերոց անդորր և աներկեւան յուսով՝ 'ի հարկէ յերկարին կեանք

մեր , զի միտք և խորհուրդք մեր չեն 'ի խղճի և 'ի խիթի , 'ի յոյզս և 'ի խռովութեան և 'ի վարանս : Խայթ խղճի , խռովութիւն և յոյզք կամ աշխատութիւն մտաց՝ փնասակարագոյն են առողջութեան , խառնուածոյ և կաղմածոյ և կենաց մարդոյ քան զաշխատութիւն մարմնոյ , որ բազում անգամ օգտակար ևս լինի , այլ ոչ երբէք աշխատութիւն մտաց :

Ասացաք դարձեալ թէ արդար ստացուածք դարուց 'ի դարս են արդասիք քաղաքական սիրոյ : Սորին ևս պատճառք յայտնի են , նա որ ըստ սկզբանց քաղաքական հաւատոց , կամ վստահութեան , այսինքն՝ ըստ իրաւանց և օրինաց և սովորութեանց և կարգաց առնէ զամենայն զիւր ձեռնարկութիւնս , յայտ է թէ չունի 'ի մտի իւրում խորհուրդ կամ նպատակ փնասելոյ ումեք . և այս յառաջ դայ 'ի սիրոյ . զի որ ոչն կամի փնասել ումեք՝ ունի սէր առ նա , ապա թէ ոչ զի՞ փոյթ էր նմա թէ փնաս ինչ ծագիցի նմա կամ ոչ : Արդ որ այսպէս 'ի սիրոյ առ մարդիկ չկամի փնասել ումեք , և օրինօք և արդարութեամբ զամենեցուն միտս հաճելով ասէ և առնէ զամենայն՝ այնպիսին ոչ միայն արդարութեամբ շահի , այլ և չկրէ փնաս փոխարէն յումեքէ , և ստացուածք նորատեւեն դարուց 'ի դարս :

Ապաքէն ինքնին յայտ է թէ որ օրինօք և իրաւամբք շահի և ստանայ՝ ստացուած և շահ

այնպիսւոյն արդար են և ոչ անիրաւ , Այլ դժուարին է հաւանեցուցանել զբազումս թէ ստացուածք այնպիսւոյն տեւեն դարուց 'ի դարս , Գիտեմք զի բազումք անիրաւութեամբ և զրկանօք դիզեն մեծութիւնս և ինչս բազումս . դարձեալ խոստովանիմք ևս թէ ոմանց արդար ստացուածք երբեմն վնասին և զրեթէ ջնջին իսկ , Այլ ճշմարտութիւն բանից մերոց թէ արդար ստացուածք տեւեն դարուց 'ի դարս՝ ոչ եղծանի դիպուածովք ինչ , սմին հակառակ անթիւ և անհամար դիպօք և օրինակօք հաստատի . զի անհամեմատ առաւելութեամբ բազում են օրինակք տեւելոյ արդար ստացուածոց դարուց 'ի դարս , իսկ անիրաւ ստացուածոց 'ի սակաւ ժամանակի բընաջինջ լինելոյ . և զայս ցուցանեն մեզ փորձառութիւն և պատմութիւնք , վճիռք դրոց սրբոց , նաեւ արանց իմաստնոց արտաքնոց , ևս և հաւանութիւն հասարակաց մտաց , մինչեւ մարթ է ասել թէ իբրև բնական իմն ազդումս և բնածին ինչ գաղափար է 'ի միտս ընդհանուր ամենայն մարդկան թէ արդար ստացուածք տեւեն և անիրաւքն եղծանին և ջնջին ,



## ԳԼՈՒԽ Է.

Յաղագս արդասեաց բնական հաւատոյ , յուսոյ  
և սիրոյ :

Վասն արդասեաց ասացաք 'ի վեր անդր  
թէ զինչ են . Դարձեալ խօսեցաք զարդասեաց  
քաղաքական հաւատոյ , յուսոյ և սիրոյ . Այժմ'  
կայ մեզ խօսել զարդասեաց բնական հաւա-  
տոյ , յուսոյ և սիրոյ :

Արդ արդասիք բնական հաւատոյ , յուսոյ  
և սիրոյ են՝ Արիութիւն և Հանճար , Բերկրու-  
թիւն սրտի և Իշխանութիւն երկրի ազգէ յազգ :

## ԳԼՈՒԽ Ը.

Թէ զինչ իցէ Արիութիւն և Հանճար :

Զարիութիւնն սահմանեցաք 'ի վեր անդր .  
աստ միւսանգամ կրկնել աւելորդ է . խօսեա-  
ցուք զՀանճարոյ , Հանճար է համեմատել ընդ  
միմեանս զգաղափարս զորս ըմբռնեն միտք .  
Համեմատութիւնս այս յերիս ազգս բաժանի .  
Առաջին՝ 'ի մեծէ առ փոքր . Երկրորդ՝ 'ի փոք-  
ուէ առ մեծ . Երրորդ՝ 'ի հաւասարէ առ հա-  
ւասար :

Իսկ նշանակութիւնն հանճարոյ է՝ գտանել  
հնարս, ելս իրաց. և որ ունի զայս հանգա-  
մանս՝ կոչի հանճարեզ կամ հնարագէտ.

## ԳԼՈՒԽ Թ.

Թէ զինչ իցէ բերկրութիւն սրտի.

**Ջ**բերկրութիւն ևս սահմանեցաք իրրեւ  
նշան այլուր. աստ երկրորդել աւելորդ հա-  
մարիմք. Ասասցուք միայն համառօտիւ թէ  
զինչ իցէ սիրտ.

Սիրտն է ՚ի ներքս զգայուն կենդանեաց  
պատճառ և սկիզբն կենդանանալոյ մարմնոյ.  
զի հիւթն սնուցիչ որ է արիւն՝ ՚ի սրտէ անտի  
բաշխի ընդ ամենայն անդամս առ ՚ի նորոգել  
և պահպանել զմարմին որ պահի ՚ի լուծանելոյ  
և յեղծանելոյ. Ջնիւթոյ կամ զմասանց որ բա-  
ղաղրեն զմարմին, զգրից և զկազմածոյ նորա  
և զայլոց ևս հանգամանաց որ ունին վերաբե-  
րութիւն ՚ի շրջան արեանն՝ թողումք խօսել  
բնագիտաց. շատ լիցի մեզ զոր ասացաքն ՚ի  
նպատակ առաջիկայ գործոյս.

## ԳԼՈՒԽ Ժ.

Թէ զինչ իցէ իշխանութիւն երկրի ազգէ յազգ :

Աստ ունիմք 'ի մտի խօսել նախ զիշխանութենէ թէ զինչ իցէ , երկրորդ զերկրէ , և ապա ասացուք թէ զինչ խմանամք ազգէ յազգըն ասելով :

Իշխանութիւն է կարողութիւն բարոյական զոր մարդիկ տան ումեք զի առնիցէ զամենայն ինչ որ պիտոյ է յապահովութիւն իւրաքանչիւրում 'ի նոցանէ , պարտս գնելով ազատ կամօք 'ի վերայ անձանց հնազանդեւլ ամենայն հրամանաց և կարգադրութեանց նորա զոր ազատ կամօք կարգեն իշխան , միայն թէ հրամանքն և կարգադրութիւնք իցեն այնու նպատակաւ և յայն սակս՝ վասն որոյ տուաւ նմա իշխանութիւնն :

Պարտ է գիտել զի իշխանութիւն ոչ է տէրութիւն . տէրութիւն նախ լինի 'ի վերայ անշունչ իրաց ըստ օրինի և 'ի վերայ գերեաց սովորութեամբ իւրիք որ չէ օրինաւոր . երկրորդ՝ որ ինչ ընդ տէրութեամբ է՝ ստացուած է , և է 'ի պէտս և 'ի հաճոյս տեսառնն կամ ստացչին . իսկ որ ինչ ընդ իշխանութեամբ է՝ հպատակ կամ հնազանդեալ է , և ոչ է 'ի պէտքս և 'ի հաճոյս իշխողին , այլ զպէտս ինչ իւր :

այն է զասպահոյութիւնն , ակն ունի յիշխանէն .  
երրորդ՝ տէրութիւնն է բացարձակ և ոչ ընդ-  
սլայմանաւ . ուր իշխանութիւնն է ընդ սլայմա-  
նաւ կամ թէութեամբ . չորրորդ՝ տէրութիւն  
ոչ բղխէ 'ի ստացուածոյն որ է առարկայ տէ-  
րութեան , իսկ իշխանութիւնն բխէ 'ի հպա-  
տակաց որ են առարկայ իշխանութեան :

Ապա յայտ եղև թէ զի՞նչ իմանամք իշխա-  
նութիւնն ասելով . իշխանութիւն կրկին է . հո-  
գեւոր և մարմնաւոր , կամ կրօնական և ժա-  
մանակաւոր , որ կոչի ևս եկեղեցական և աշ-  
խարհական :

Հոգեւորն իշխանութիւն ճշդիւ խօսելով  
ոչ է իշխանութիւն այլ պաշտօն իմն կամ իրա-  
ւունք որ համարի առեալ ուղղակի կամ ա-  
նուղղակի ոչ 'ի մարդկանէ այլ 'ի գերագոյն  
տեառնէ հոգւոց՝ պատմել զկամս նորա մարդ-  
կան , պահանջելով հնազանդութիւն առ այն ,  
ոչ ընդ մարմնաւոր այլ ընդ հոգեւոր կամ  
հանդերձեալ պատժով :

Առ հոգեւորն իշխանութիւն պահանջին  
Չիրք հոգւոյ ընդ որում պարտին միացեալ  
լինել ինն թէութիւնք , նշանք , ճանաչմունք և  
յատկութիւնք հաւատոյ , յուսոյ և սիրոյ . Ռւս-  
տի որ զհոգեւորն իշխանութիւն ունին՝ պար-  
տին ունել ժրութիւն համեստութեամբ , խո-  
հեմութիւն պարկեշտութեամբ , արիութիւն  
խոնարհութեամբ , արդարութիւն շնորհօք ,

սրբութիւն բարեխառնութեամբ կամ չափաւորութեամբ, ճշմարտութիւն յամենայնի, հաւատարմութիւն հանդերձ ողջախոհութեամբ, և վեհանձնութիւն հանդերձ պատրաստութեամբ և ողորմութեամբ, Դարձեալ պարտին խնդրել զհամակրութիւն 'ի հոգեւոր և 'ի մարմնաւոր իշխանաց և 'ի հաճութենէ ժողովրդեան, այլովքն հանդերձ, Յասացելոց աստի յայտ է թէ 'ի պակասել հոգեւոր իշխանութեան յայտ՝ ամենայնէ՝ որչափ չարիք սպրդին 'ի մատակարարութիւն և յայլ ամենայն իրս որ ունին կախումն զայնր իշխանութենէ:

Մարմնաւորն իշխանութիւն է բուն իշխանութիւն, զի առեալ ունի իրաւունս 'ի ժողովրդենէ հրամայելոյ, օրինադրելոյ, վարելոյ և պատժելոյ մարմնաւոր պատժովք: Առ այս իշխանութիւն պահանջին ոչ միայն ձիրք հոգւոյ այլ և մարմնոյ, որպէս քաջութիւն, ոյժ, այլովքն հանդերձ, լնդ ձիրս ընդ այստիկ պարտին միացեալ լինել ամենայն թէութիւնք, նշանք, ճանաչմունք և յատկութիւնք հաւատոյ, յուսոյ և սիրոյ, որք առ ամենայն բան, դորժ և իրողութիւն բանական մարդոյ պիտոյ են, որպէս յայտ յանդիման երեւի յասացելոց անտիցարդ:

Զխարդ և իցէ օրինակ և ընդարձակութիւն իշխանութեան, եթէ՝ իցէ որդի 'ի հօրէ, եթէ ընտրութեամբ և եթէ այլազոյ, եթէ ազատ իցէ և եթէ հարկատու և ընդ այլով իշ-

խանութեամբ, կանոնք և հանգամանք նորա պարտին լինել այնպէս որպէս ասացաքն, այն է՝ ըստ ամենայն հանգամանաց հաւատոյ, յուսոյ և սիրոյ :

Այս հանգամանք այնպէս կարեւոր են վասն իշխանութեան, զի բազում անգամ որ ունինն զայն հանգամանս, թէև իցեն 'ի ստորին կարգէ, լինին արժանաւորք ամբառնալոյ յիշխանութիւն, որպէս վկայեն պատմութիւնք, նաև մեղէն իսկ տեսեալ եմք զվորձ :

Երկիր ասելով իմանամք զգունդս յորում մեքս բնակեալ եմք . այլ երկրաւ չէ պարտ իմանալ զհողագունտն բնական, այլ զերկիր՝ ըստ որում է բնակութիւն և ստացուած ազգի մարդկան հանդերձ բաժանմամբք նորա, որպէս յայտ է յաշխարհագրութենէ :

Իսկ ազգէ յազգն ասելով իմանամք զլինելն որդւոց յորդիս, կամ ազգատոհմէ յազգատոհմ :

## ԳԼՈՒԽ ԺԱ .

Թէ զինչ են պատճառք արգասեաց բնական հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ :

Երեքին հանգամանք զորոց յերիս նախընթաց գլուխս ճառեցաք, այն է՝ արիութիւն

և հանճար, բերկրութիւն սրտի և իշխանութիւն երկրի ազդէ յազգ, եւն արգասիք. առաջինն բնական հաւատոյ, երկրորդն բնական յուսոյ և երրորդն բնական սիրոյ .

Բնական հաւատք, որպէս յիւրում տեղւոյ ասացաք, եւն ծնունդ գիտութեան, հրմտութեան և արուեստից ըստ իրաց, ըստ տեղւոյ և ըստ ժամանակի . Սոքօք լինին ուղիղ և ճշմարիտ հաւատք մեր, այն է բանականութիւն լինի կատարեալ և հաստատուն . բնական յոյս մեր լինի աներկեւան, և 'ի տեսանել մարդկան 'ի մեզ զամենայն թէութիւնս, զնշանս, զճանաչմունս և զյատկութիւնս բնական հաւատոյ և յուսոյ, 'ի հարկէ բնականապէս սիրեն զմեզ . ի լինել բնական հաւատոյ մերոց ուղիղ և ճշմարիտ՝ ստանամք արիութիւն և հանճար . 'ի լինել բնական յուսոյ մերոյ աներկեւան՝ ստանամք զբերկրութիւն սրտի, և 'ի լինել մերում սիրելի ամենեցուն վասն հաւատոյ, յուսոյ և սիրոյ մերոյ, իշխանութիւն մեր 'ի վերայ երկրի լինի մշտնջենաւոր և տեւական, այն է ազդէ յազգ .

Զբնական հաւատոյ, զյուսոյ և զսիրոյ տեսանդ ուր ընդարձակագոյնս ճառեցաք .



## ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս արգասեաց խմացական կամ բարոյական  
հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ:

Յայտ է 'ի ցուցակի անդ մերում՝ զի ար-  
դասիք խմացական հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ  
են Չայն երանաւէտ, Տեսութիւն աստուա-  
ծային եւ Վայելումն անդրաւ փառաց:

Հարկ է մեզ խօսել զսոցունց սահմանելով  
զնոսա: Արդարեւ դժուարին է յոյժ սահմանել  
զնոսա, զի ոչ անկանին ընդ զդայութեամբք,  
այլ 'ի հաւատոց միայն գիտեմք եթէ ճշմարիտ  
են նոքա: Ապաքէն ըստ Եզնկայ վարդապետի՝  
Յորժամ՝ զաներեւութէն եւ զնորին զմշտնջնա-  
ւոր զօրութենէն ճառիցէ ոք, քանզի մարմ-  
նաւոր լեալ է, պարտի զմիտս յատակել, եւ ըզ-  
խորհուրդս սրբել, զյոյզս շարժմանց պարզել  
զի յայն զոր առաջի եզ՝ հասանել կարացէ,  
նա եւ որ ընդ ճառագայթս արեգական հայել  
կամիցի՝ պարտի զպզտորութիւն աչացն, զաղ-  
տըն եւ զբիժն 'ի բաց պարզել, զի մի մթարքն  
որ զբքօք շողայցեն՝ արդեւ հայելոյ 'ի յատակու-  
թիւն լուսոյն լիցին:

Չայս արարեալ եւ մեր ըստ կարի՝ մխես-  
ցուք 'ի խնդիր ճառիցս:



## ԳԼՈՒԽ ԺԳ .

Յաղագս երանաւէտ ձայնի :

Ձայն ասի բարբառ ինչ զոր լուեալ հասու լինիմք իմիք . իսկ երանաւէտ ձայն այն է որ առնէ զլսողն երանելի և երջանիկ . Սովին ձայնիւ է զի սուրբք և արդարք և ամենայն ճշմարտասէրք ցնծան և բերկրին և լինին երանելի . Ձայնս այս ոչ իբրև զձայն կամ զբարբառ մարմնաւոր իրաց յառաջ եկեալ է 'ի բախմանէ օդոյ , և ոչ նման երգոց և նուագաց և գեղգեղեալ ձայնից դուսանաց և նուագարանաց և իբրև զդայլայլիկս հաւուց . այլ է բարբառ խմանալի որ հնչէ գեղեցիկ յունկն հոգւոյ , և որք լսենն զայն ձայն ոչ կարեն կալ 'ի քուն և 'ի թմրութեան կամ 'ի մեռելութեան , այլ յառնեն և կենդանանան յաւտենական կենօք . Այս երանութիւն արդասիք են իմացական կամ բարոյական հաւատոյ զորմէ խօսեցաք 'ի վեր անդր .

## ԳԼՈՒԽ ԺԴ .

Յաղագս տեսութեան Աստուծոյ :

Տեսութիւնս այս այնպիսի է զոր չէ հնար մտաց մարդոյ բմբռնել , ոչ պատմել զնմանէ , կամ տալ ինչ օրինակ կամ նմանութիւն .

վասն այնորիկ ասէ Առաքեալն թէ Ակն ոչ ետես , և ունին ոչ լուաւ և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ : Նա որ ունի զիմացական կամ զբարոյական հաւատս և 'ի հաւատոյ անտի զյոյսն իմացական՝ 'ի հարկէ հասանիցէ այսմ սքանչելի տեպեան որ է վերջին պտուղ և արգասիք այնր յուսոյ յաջողելոյ նովին հաւատով :

## ԳԼՈՒԽ ԺԵ .

Յաղագս վայելման անզրաւ փառաց :

Վայելումն է ստացումն կամ ժառանգութիւն իրիք ըստ բողոքին , որ անզրաւ բառիւ լաւ եւս յայտ առնի :

Այս վայելումն անզրաւ փառաց , այն է փառաւորեալ լինել առանց վախճանի և կատարածի՝ արդիւնք են իմացականն կամ բարոյական սիրոյ : Որովհետեւ իմացական հաւատք են գիտութիւն զիմացական իրաց որոց առաջինն և գլխաւոր է Աստուած , էն և Գոյն մըշտընջենաւոր և անբաւ , ճշմարտութիւն , սրբութիւն , արդարութիւն և գեղեցկութիւն 'ի վեր քան զամենայն , անպատում և անճառ , և որ ունի առ նա հաւատս՝ յուսայ 'ի նա ոչ աներկեւան միայն այլ և անճառ և երանաւէտ յուսով , յայտ է թէ 'ի յուսոյ անտի ծնանի սէր յաւիտենական առ Նա . այս սէր է որ անդէն և անդ ածէ վայելումն անզրաւ փառաց :

## ԳԼՈՒԽ ԺԶ .

Թէ զինչ են պատճառք արգասեաց իմացական կամ բարոյական հաւատոյ , յուսոյ եւ սիրոյ :

Պատճառք արգասեաց իմացական կամ բարոյական հաւատոյ , յուսոյ եւ սիրոյ են նոյն իսկ հաւատոյ , յուսոյ եւ սիրոյ թէ ու թիւնք , պարագայք , նշանք , ճանաչմունք եւ յատկութիւնք :

Նա որ ժիր է հանդերձ համեստութեամբ , խոհեմ հանդերձ պարկեշտութեամբ կամ չափով , արի հանդերձ խոնարհութեամբ՝ ունի զթէ ու թիւնս ուղիղ եւ ճշմարիտ հաւատոյ , եւ ՚ի հաւատոյ անտի հարկաւ կրէ յոյս եւ սէր կատարեալ :

Ժիրն հանդերձ համեստութեամբ գործունեայ է ՚ի գործս բարիս . որ խոհեմն է հանդերձ պարկեշտութեամբ՝ քննէ , ընտրէ եւ գրտանէ զճշմարտութիւն եւ միշտ զայնր զհետ երթայ : Որ արին է հանդերձ խոնարհութեամբ՝ հանապազ յաղթող է ընդդէմ կրից ոգւոյ եւ բաղձանաց մարմնոյ , նոյնպէս յաղթէ եւ այնոցիկ որ պաշարեալն են նովին զգայական կրիւք եւ մարմնաւոր ախորժանօք :

Ժիրն եւ խոհեմ եւ արի՝ ընտրէ անձինս բարեպաշտօնս եւ համակիր է ընդ նոսա , ուստի եւ որոշէ զյարմարն տեղի , քննէ զժամանակս

և գտանէ զյաջողն . և 'ի վերայ այսր ամենայնի արդարութեամբ վարի ընդ ամենեսին , սիրէ զսրբութիւնն հանդերձ բարեխառնութեամբ , և կայ մնայ յամենայնի 'ի ճշմարտութեան .

Գարձեալ ճանաչէ 'ի ձեռնն նշանաց զհաւատսն և զհաւատացեալն , զյուսալին և զյուսացողն , զսէրն և զսիրող . և 'ի հաւատոյ , 'ի յուսոյ և 'ի սիրոյ անտի է միշտ 'ի բերկրութեան , և համբերէ ամենայն առժամանակեայ նեղութեան և անարգանաց , և համբերութեամբն սլատրաստէ զանձն 'ի վայելքս այնց առ որս ունի հաւատս , յոյս և սէր .

Է զարձեալ գթած , թողու և ներէ եւ ողորմի այլոց , մանաւանդ եթէ առ տգիտութեան և առ սխալանաց յանցուցեալ իցեն . Առ այսպիսին յիրաւի ասի թէ Եկ օրհնեալ , այլովքն հանդերձ . և զարձեալ Մուտ յուրախութիւնն Տեառն քո , ուր են ժառանգութիւնն և վիճակ իմացականն հաւատոյ , յուսոյ և սիրոյ , այսինքն՝ Չայն երանաւէտ , Տեսութիւն Աստուածային և վայելումն անզրաւ փառաց .



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՎԵՐՋ



Յասացելոց աստի մինչեւ ցարդ յայտ եղեւ եթէ կէտ նպատակի մերոյ է, որպէս եւ ասացաւ իսկ 'ի յառաջաբանի անդ, յանդիման կացուցանել զբուժիւն գործնական յուզղութիւն բարոյական վարուց եւ գնացից ընկերական մարդոյ, Եւ զի չիք բարոյականութիւն առանց բանականութեան եւ անձնիչխանութեան, վասն այնորիկ խօսեցաք նախ զկարողութեանց մտաց եւ կամաց, Չիք տարակոյս եթէ իմացական կարողութիւնք 'ի մարգն կացուցանեն զպատուականագոյն եւ զբարձրագոյն մասն ընութեան մարդոյ, Բայց առանց երկբայութեան է դարձեալ եթէ գոյ 'ի բնութեան աստ մերում միւս եւս մասն, որ թէպէտ խոնարհագոյն քան զիմացականն, հզօր եւ ուժգին է. այն է՝ զգայականն մասն, որ եւ մարտ եղեալ կռուի ընդ առաջնոյն. նա՛ ոչ կռուի միայն, այլ եւ բազում անգամ յաղթէ իսկ եւ ածէ ստուերածս 'ի վերայ յստակութեան բանաւոր մասին:

Ամենեցուն որ զբարոյականութենէ գրեցին՝ ջանք այն եղեն. բառնալ կամ մեղմել զհակառակութիւնն որ 'ի մէջ բանականին եւ զգայականին, Ոմանք կամեցան ջնջել իսպառ կամ սպանանել

զգգայական մասն . այլք , իմաստնագոյնք քան զնոսա , հնարեցան միայն 'ի չափու ունել զնա եւ արկանել ընդ իշխանութեամբ բանական մասին : Մեր եւս ջան այս է . ոչ բնաջինջ առնել խորհիւնք զգգայականն որ անհնարին է , այլ տալ բանական մասին տիրել 'ի վերայ նորա :

Եղեալ մեր զայս կէտ նպատակի , խորհեցաք պարզ եւ զիւրին օրինակաւ յօրինել զմեր գրութիւն : Եւ աւասիկ համառօտ յատակագիծ նորա :

Գիմումն զգայականին է յերջանկութիւն կամ 'ի վայելումն . այնպէս զի զոր ինչ եւ առնէ մարդ կամ կրէ՝ յուսայ անտի զիւր երջանկութիւն կամ վայելս ինչ . եւ այդ բնական իմն է : Մեք զերջանկութիւն կամ զվայելս կոչեմք սէր , կամ սիրով իմանամք զայն . իսկ զիմումն այն որ բնականն է՝ ըստ մեզ ոչ այլ ինչ է եթէ ոչ յոյս . յոյս է որ ցուցանէ զվայելս եւ տայ ձկտել յայն : Եւ զի զիմումն այն 'ի բնէ կոյր եւ անսանձ է , բազում անգամ , գրեթէ միշտ , դահավէժ անկանի յայն զոր վայելս եւ երջանկութիւն կարծէ անձին . ուստի եւ նման է նաուու որոյ չիցենն ոչ զեկք եւ ոչ նաւապետ զեկավար : Ամենեցուն յայտ է թէ իմացականութիւն կամ բանաւորն մասն որ է 'ի մարզն՝ պարտի վարել զպաշտօն զեկաց եւ զեկավարի . այս տեսութիւն ճշմարիտ է , այլ ունի ինչ թերութիւն . այն է զի իմացականութիւն հանդերձ իւրովք կարողութեամբք մեծամեծօք՝ ոչ ինչ է առանց հրահանգչի : Եւ հրահանգիչն այն է զոր մեք հաւատս կոչեցաք , եւ բազմեցուցաք իբրեւ դշխոյ , առաջ-

նորդ , լոյս , այլովքն հանդերձ , Յառաջնորդել յուսոյ 'ի հաւատոց' սէրն լինիցի ճշմարիտ . այս է սկիզբըն մեր բացատրեալ մերով արուեստական լեզուաւ , եւ սովին ասել կամիմք եթէ յառաջնորդել բնական դիպման զգայականութեան յիմացականութենէ լուսաւորելոյ գիտութեամբ (զգիտութիւն աստ ընդարձակ մտօք առնումք) երջանկութիւնն եւ վայելք լինին հաւատաի . եւ աստի զհետ գայ թէ մարդն լինի դերձ 'ի վնասուց : Այս է աւասիկ յատակագիծ դրութեան մերոյ :

Առաջնորդեալ մեր 'ի փորձառութենէ եւ 'ի գիտողութենէ' խօսեցաք մանր զայնմ ամենայնէ որ են անհրաժեշտ կարեւոր հաւատոյ , կամ որ են տարերք նորա , յերիս գիրս կամ 'ի կացութիւնս մարդոյ , 'ի բնականին , յիմացականին կամ 'ի բարոյականին եւ 'ի քաղաքականին : Զնոյն արարաք ըզյուսոյ եւ սիրոյ իբրեւ բխելոց կամ ծագելոց 'ի հաւատոյ :

Արդ 'ի մերում դրութեան , թուի մեզ , մարդն 'ի բնէ զգայական' երեւի հաւատովք լեալ ճշմարիտ բանական , այն է մարդ՝ որոյ գիմումն (յոյս) յերջանկութիւն եւ 'ի վայելս իւր . ('ի սէր) ուղիղ եւ անվրէպ է . եւ զի կարեւոր է մարդոյ ճանաչել յանձին եւ յայլս զմարդ այնպիսի , զայս ցուցանեն թէութիւնք , նշանք , ճանաչմունք եւ յատկութիւնք հաւատոյ , յուսոյ եւ սիրոյ : Զվիճակ կամ զբնաւորութիւն մարդոյ այնպիսւոյ ցուցաք 'ի վերջոյ համառօտիւ 'ի մասին որ 'ի վերայ արգասեաց :

Աւասիկ բովանդակութիւն մատենիս : Որք մի-

անգամ առանց կանխակալ մտաց հայեացին յայս  
մեր դոյզն աշխատութիւն՝ գտցենք բազում ինչ գործ-  
նական 'ի խրատ եւ յուսումն։ Այլ զի յիմաստասի-  
րութեան աստ մերում չունինք զոք յեւրոպական  
գիտնոց անտի մեզ առաջնորդ՝ ակն ունինք թէ ոչ  
ոք ունիցի իրաւունս համարելոյ զայն մեզ 'ի մեզս ։





# ՊԱՏԿԵՐ ԲՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ

## ՀՍ ՋԱՆԱՋԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՑ ՀԱՍԱԿԱՑ ՈՐԲ ՓՈՓՈԽՆ

ՇՐՋԱՆ ԿԵՆԱՑ	ՀՍ ՋԵՐՄՈՒԹԵԱՆ	ՀՍ ՋՐՈՒԹԵԱՆ	ՀՍ ՇԱՐՉԱՆ	ՀՍ ՋԱՐԿԵԼԵԱՑ ԿՈՐ ԱՌՈՐՋԱԿԱՑ	ՀՍ ԿՐԻՑ	ՀՍ ՈՒՐՈՑ ԵՒ ՀՍ ՀՈՒՐՈՑ	ՀՍ ՋԱՆԱՋՄԱՆ	ՀՍ ԿՐԻՆՈՂՈՒԹԵԱՆ	ՀՍ ԼԵՋՈՒԻ ԵՒ ՀՍ ԽՕՍԱԿՈՒԹԵԱՆ	ՀՍ ՅՕՃԱՐՈՒԹԵԱՆ
<b>Ա. ՇՐՋԱՆ</b>										
Առանձին սխեմայի, կանխաձեռնության և ստորագրության:										
Ա. Տղայ..... 1. 2. 5.	Քրտնոց.	Մակարիթաման.	Հնկոզմեալ.	Կաթնասուն.	Լացոզ.	Պարզ.	Անդէա.	Կնճոզ.	Ճիչ. անխա.	Առ ոչինչ.
Բ. Մանուկ..... 5. 5. 7.	Խոնաւ.	Թամբ մրա.	Դիւրասաւ.	Թանասուն.	Նրիծաղացոզ.	Ցողոզ ուն.	Այլուրէնս.	Անփոյթ.	Թօթ ուխաւս.	Առ պիտոյ իւր.
Գ. Արբանջ կամ Պատանեակ... 7. 14. 22.	Փաղջ.	Դիւրաթէք.	Հնթացիկ.	Համադամաւոր.	Խաղացոզ.	Երկչոտ.	Աւանոզ.	Արթուն.	Շաղկրատ.	Անկարզ
<b>Բ. ՇՐՋԱՆ</b>										
Առանձին սխեմայի, լիւրձի, կանխաձեռնության և ստորագրության:										
Դ. Պատանի..... 22. 29.	Արտաշնչոզ.	Դիւրադրոզ.	Թեթեւաչարեա.	Ակրածէտ.	Կատակաւոր.	Շասլ.	Աւանոզ	Գործունենալ.	Յիչողամրա.	Առ զնասակարս.
Ե. Չափահաս..... 29.	Յորրոքեակ.	Առաձգական.	Անդր ու լիւ.	Շուպտ.	Հեշտակ.	Առատասիրտ.	Լեղուայ.	Աչուցմ.	Առ զտանդաւ. որս.	Առ զտանդաւ. որս.
Զ. Երեսասարզ..... 53.	Յոսանդուն.	Ջղպին.	Ջրաւոր.	Որովայնապարար.	Անբարտաւան.	Քաջասիրտ.	Հմտագեակ.	Չեաներէց.	Կատոզ.	Առ անհնարինս.
<b>Գ. ՇՐՋԱՆ</b>										
Առանձին սխեմայի, կանխաձեռնության և ստորագրության:										
Է. Այլ մարզ... 53. 45. 49.	Բարեխառն.	Կորովի.	Գօտեմարտիկ.	Անկանոն.	Խաղաղացուցիչ.	Բարեխարզ.	Հնորոզ.	Պատասոզ.	Հեատոզ.	Առ մեծազործու.
Ը. Առատաստակ..... 49.	Գաղջացեակ.	Անբացեակ.	Պնդաման.	Չափաւոր.	Անձին քայցր.	Քաղաքաւար.	Խոհեմ.	Աչխատոզ.	Հարցափորձ.	Առ չափաւար.
Թ. Դեկտր..... 49. 58. 65.	Ջոխացեակ.	Հնդարմացեակ.	Յուչիկ.	Կանոնաւորեակ.	Մեղմացեակ.	Ջղատա.	Աչալուրջ.	Թայկացեակ.	Խրատասու.	Առ քաղմախո.
<b>Դ. ՇՐՋԱՆ</b>										
Առանձին սխեմայի, կանխաձեռնության և ստորագրության:										
Ժ. Անջեակ աւարդ... 65.	Գողոջուն.	Պնդացեակ.	Յամբ.	Ժուժկալ.	Խխա.	Հողացոզ.	Մտացոզ.	Խոնջեակ.	Խմատասիրոզ.	Առ բացասական.
ԺԱ. Երբ..... 75. 84.	Յրտացեակ.	Կարծրացեակ.	Երբուն.	Պահեցոզ.	Տիրաման.	Ազան.	Լուս.	Ճնչեակ.	Շչնջոզ.	Փոփոխական.
ԺԲ. Ջառանեակ..... 84. 90.	Ստացեակ.	Դիւրաթէկ.	Կծկեակ.	Կորացեակ.	Նրտազան.	Ռիչա.	Ջատանջեակ.	Կիւն.	Ճատատոզ.	Առ ոչինչ.
			Կորացեակ.			Երկրորդ մանկու.	Բանդազուչոզ.	Անկանոզ.	Անբարատ.	
						թիւն.			Լաիկ.	

Պատկերս այս ըստ դիւտին ոչ է յօրինուած մեր, այլ մեր առեակ այլուտեք մուծաք 'ի նմա փոխօտւթիւնս ինչ. Մատենագիրն սորա կարգեակ էր զճաշիւ իւր ըստ եօթանաւ սուն ամաց, մեք փոխանակ եօթանանին պատշաճազոյն զաստեղաք դնել զիննսուն, ոչ առանց պատճառի, զի զիննսուն ստուգազոյն համարի՞ք ըստ բնականին ընդհանուր դիտողութեամբ:





# ՅԱՆԿ ՄԱՏԵՆԻՍ



## ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԵՐԵՍ


Ե

ԲԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ ՅՈՒՅԱԿԻ ՈՐ ԿՈՉԻ ԿԵՒՈՒ  
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹԵԱՆՅ

Ժ

### ՅՕԴՈՒԱՆ

- Ա. Յաղագս կենդանի մարդոյ և բանական յատկու-  
թեանց նորա. ԺԲ
- Բ. Յաղագս որպիսու թեան հաւատոյ, յուսոյ և սիրոյ,  
թէ որպիսի պարտին լինել սոքա 'ի մեզ, ԺԲ
- Գ. Յաղագս բաժանման հաւատոյ, յուսոյ և սիրոյ. ԺԳ
- Դ. Յաղագս շարազուգութեան հաւատոյ, յուսոյ և  
սիրոյ. ԺԴ
- Ե. Յաղագս նոցին իսկ շարազոյց թուանշանաց որ  
եղեալ կան 'ի ներքոյ թէութեանց հաւատոյ,  
յուսոյ և սիրոյ և ընդէ՞ր. ԺԵ
- Զ. Թէ զի՞նչ պարգեւեն հաւատք, յոյս և սէր. ԺԶ
- Է. Թէ ո՞րպիսի թէութեամբ մարթ իցէ ստանալ  
զբարիսն որ 'ի վերնոյն նշանակեցան. ԺԷ
- Ը. Յաղագս առարկայի ընդհանուր հաւատոյ, յուսոյ  
և սիրոյ. Ի
- Թ. Յաղագս նշանաց ընդհանուր հաւատոյ, յուսոյ և  
սիրոյ. ԻԱ
- Ժ. Յաղագս ճանաչման ընդհանուր հաւատոյ, յուսոյ  
և սիրոյ. ԻԲ
- ԺԱ. Յաղագս յատկութեան ընդհանուր հաւատոյ, յու-  
սոյ և սիրոյ. ԻԲ
- ԺԲ. Յաղագս արդասեսաց ընդհանուր հաւատոյ, յուսոյ  
և սիրոյ. ԻԳ



## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

### ԳԼՈՒԽ

- Ա. Յաղագս թէ զինչ իցէ կենդանին. 1
- Բ. Թէ զինչ իցէ սահման մարդոյ և յորում կայա-  
նայցէ բանականութիւն նորա. 5
- Գ. Յաղագս հոգւոյ թէ զինչ իցէ և քանի՞օճ. 5

Դ.	Թէ զինչ իցեն միտք և զինչ պաշտօն նորա.	8
Ե.	Թէ զինչ իցեն կամք.	11
Զ.	Յաղագս թէ զինչ իցէ ճանաչումն և քանիօն.	12
Է.	Թէ զինչ գատեւն իցէ և ոյք գործք նորա.	15
Ը.	Թէ զինչ իցէ կշռելն, քանիօն և որպիսի.	16
Թ.	Թէ զինչ իցէ առնելն, և զինչ պարտիմք առնել.	17
Ժ.	Թէ զինչ իցէ կրել և իւ իւրք հնար իցէ մեզ ազատ լինել 'ի կրելոյ զփեսասկարս.	20
ԺԱ.	Թէ զինչ իցէ ունելն և զինչ միջոցք կամ եղաւնակք նորա.	24
ԺԲ.	Թէ զինչ են հաւատք և ոյք իցեն աղբիւրք նորա.	50
ԺԳ.	Թէ զիարդ ծագին հաւատք և զինչ զհետ գայ ծագման հաւատոյ.	58
ԺԴ.	Յաղագս որպիսութեան ուղիղ և ճշմարիտ հաւատոց, թէ քանիօն են և իւ իւրք լինին կատարեալ.	50
ԺԵ.	Յաղագս պէս պէս բաժանմանց հաւատոյ և մեկնութիւն նոցա.	56
ԺԶ.	Յաղագս յուսոյ.	65
ԺԷ.	Յաղագս ծագման յուսոյ թէ ուստի իցէ.	66
ԺԸ.	Յաղագս թէ որպիսի պարտի լինել յուսոյ.	66
ԺԹ.	Յաղագս բաժանման յուսոյ.	68
Ի.	Յաղագս սիրոյ, և սահմանի նորա.	68
ԻԱ.	Յաղագս ծագման սիրոյ.	70
ԻԲ.	Յաղագս որպիսութեանց ճշմարիտ սիրոյ.	75
ԻԳ.	Յաղագս բաժանման սիրոյ, և զգուշութիւնք.	74
ԻԴ.	Համառօտ բովանդակութիւն նախընթաց գլխոց որ զհաւատոյ, զյուսոյ և զսիրոյ.	86
ԻԵ.	Յաղագս թէ որն յերեցունց, 'ի հաւատոյ, 'ի յուսոյ և 'ի սիրոյ իցէ նախամեծար.	91
ԻԶ.	Յաղագս պատճառաց վասն որոց հաւատք են նախամեծար, և բովանդակութիւն այնք ամենայնի որ ասացաւ յայտմ մասին գրոցս.	105

—○○—

### ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Ա.	Յաղագս թէութեան թէ զինչ իցէ.	109
Բ.	Յաղագս ժրութեան թէ զինչ իցէ և քանիօն.	111
Գ.	Յաղագս խոհեմութեան թէ զինչ իցէ և քանիօն.	114
Դ.	Յաղագս արութեան թէ զինչ իցէ և քանիօն.	117

Ե.	Թէ որն յերկից աստի պատշաճի 'ի քաղաքական, 'ի բնական և 'ի վերացեալ հաւատս.	122
Ձ.	Յաղագս թէ ութեանց ընդհանուր յուսոյ.	124
Է.	Յաղագս համակրութեան թէ զինչ իցէ.	125
Ը.	Յաղագս յարմարութեան երկրի թէ զինչ իցէ.	129
Թ.	Յաղագս հոլովման ժամանակաց թէ զինչ իցէ, և չք իցեն ազդեցութիւնք նորա յէս և 'ի գոյս.	152
Ժ.	Թէ որն 'ի թէ ութեանց աստի ընդհանուր յուսոյ պատշաճի մասնաւորաց.	155
ԺԱ.	Թէ զինչ իցէ թէ ութիւն բնական յուսոյ.	157
ԺԲ.	Թէ զինչ իցէ թէ ութիւն բարոյական յուսոյ.	159
ԺԳ.	Էջրակացութիւն թէ ութեանց ընդհանուր յուսոյ.	145
ԺԴ.	Յաղագս թէ ութեանց ընդհանուր սիրոյ.	144
ԺԵ.	Յաղագս արդարութեան.	145
ԺԶ.	Յաղագս թէ քանի ազդք են արդարութեան, և քանի օրինակաւ գործի արդարութիւն.	146
ԺԷ.	Յաղագս թէ ութեան սիրոյ որ 'ի յուսոյ քաղաքա- կան հաւատոց.	148
ԺԸ.	Յաղագս սրբութեան որ է թէ ութիւն բնական սիրոյ, և թէ զհարզ բաժանի սրբութիւն.	150
ԺԹ.	Յաղագս թէ ութեան սիրոյ որ 'ի բնական հաւատոց.	152
Ի.	Յաղագս ճշմարտութեան.	155
ԻԱ.	Յաղագս թէ ութեան սիրոյ որ յիմացական կամ 'ի բարոյական հաւատոց.	156
ԻԲ.	Յաղագս շարազուգութեան և տարազուգութեան ինն թէ ութեանց ընդհանուր հաւատոյ, յուսոյ և սիրոյ.	158
ԻԳ.	Յաղագս առարկայի և սահմանի նորա.	162
ԻԴ.	Յաղագս առարկայից ընդհանուր հաւատոյ, յուսոյ և սիրոյ.	165
ԻԵ.	Յաղագս առարկայից մասնաւոր հաւատոյ, յուսոյ և սիրոյ.	165

— 000 —

Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Գ

Ա.	Յաղագս նշանի թէ զինչ իցէ.	171
Բ.	Թէ քանիսն բաժանիցի նշանն.	171
Գ.	Յաղագս ճանաչման թէ զինչ իցէ.	174
Դ.	Թէ քանիսն բաժանիցի ճանաչուի.	174

Ե.	Յաղագս յատկութեան.	176
Զ.	Ապացոյց նշանի, ճանաչման և յատկութեան հան- դերձ շարազուգութեամբ ընդ սիմեանս.	178
Է.	Յաղագս հաւատարմութեան.	182
Ը.	Թէ ընդէր հաւատարմութիւնն եղաւ նշան հա- ւատոյ 'ի ցուցակի.	185
Թ.	Յաղագս ողջախոհութեան.	184
Ժ.	Թէ ընդէր ողջախոհութիւնն եղաւ ճանաչումս հաւատոյ.	185
ԺԱ.	Յաղագս մեծանկնութեան.	186
ԺԲ.	Թէ ընդէր մեծանկնութիւնն իցէ յատկութիւն հաւատոյ.	188
ԺԳ.	Յաղագս բերկրութեան.	189
ԺԴ.	Թէ ընդէր բերկրութիւնն իցէ նշան յուսոյ.	192
ԺԵ.	Յաղագս համբերութեան.	194
ԺԶ.	Թէ ընդէր համբերութիւնն եղաւ լինել ճանա- չումս յուսոյ.	195
ԺԷ.	Թէ զինչ իցէ պատրաստութիւն.	196
ԺԸ.	Թէ ընդէր պատրաստութիւն եղաւ յատկութիւն յուսոյ.	198
ԺԹ.	Յաղագս զթութեան.	200
Ի.	Թէ ընդէր եղաւ զթութիւնն նշան սիրոյ.	200
ԻԱ.	Յաղագս թողութեան.	204
ԻԲ.	Թէ վասն էր թողութիւնն եղաւ ճանաչումս սիրոյ.	202
ԻԳ.	Յաղագս ողորմութեան.	204
ԻԴ.	Թէ վասն էր եղաւ ողորմութիւնն յատկութիւն սիրոյ.	205



### ԳԻՐԻՔ ԶՈՐՐՈՐԴ

Ա.	Յաղագս արգասեաց թէ զինչ իցեն.	207
Բ.	Յաղագս արգասեաց քաղաքական հաւատոյ, յուսոյ և սիրոյ.	208
Գ.	Յաղագս անդորրութեան մտաց.	208
Դ.	Յաղագս երկարութեան կենաց թէ զինչ իցէ.	209
Ե.	Յաղագս արգար ստացուածոց թէ զինչ իցեն.	210
Զ.	Թէ զինչ իցեն պատճառք արգասեաց քաղաքական հաւատոյ, յուսոյ և սիրոյ.	212
Է.	Յաղագս արգասեաց բնական հաւատոյ, յուսոյ և սիրոյ.	217

Ը.	Թե զինչ իցէ արիութիւն և հանճար.	217
Թ.	Թե զինչ իցէ բերկրութիւն սրտի.	218
Ժ.	Թե զինչ իցէ իշխանութիւն երկրի ազգէ յազգ.	219
ԺԱ.	Թե զինչ են պատճառք արգասեաց բնական հաւատոյ, յուսոյ և սիրոյ.	222
ԺԲ.	Յաղագս արգասեաց իմացական կամ բարոյական հաւատոյ, յուսոյ և սիրոյ.	224
ԺԳ.	Յաղագս երանաւէտ ձայնի.	225
ԺԴ.	Յաղագս տեսութեան Աստուծոյ.	225
ԺԵ.	Յաղագս վայելման անզրաւ փառաց.	226
ԺԶ.	Թե զինչ են պատճառք արգասեաց իմացական կամ բարոյական հաւատոյ, յուսոյ և սիրոյ.	227
ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐՁ.		229

—:—

### Վ Ր Ի Պ Ա Կ Ք

ԵՐԵՍ	ՏՈՂ	ՍԻԱԼ	ՈՒՂԻՂ
32.	49.	Ես.	Եւս.
50.	23.	հատոց.	հաւատոց .
72.	9.	առանց.	արանց .
93.	17.	բարձրագոյն.	ստորին .
98.	12.	կանոնաւոր.	անկանոն.
98.	13.	3 } կանոնաւոր.	3 } անկանոն.
		2 }	4 }
		1 }	2 }
195.	2.	սիրոյ.	յուսոյ.

—:—

ԱՆՈՒԱՆՔ

ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԲԱՐԵՐԱՐԱՅ ՈՐ ՆՊԱՍՏ ԵՂԵՆ  
ԵԱԽՈՒՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԻՍ

ԲԱԺԻՆՔ

1. Նարվերցի Պօղոս աղա Զաքարեան .
1. Սերաստացի Նշան աղա Խաչատուրեան Թաշ-  
ճիկանց .
1. » Մարտիրոս աղա Մ. Մանուկեան Մեծ-  
մօրուքեանց .
1. » Յովհաննէս աղա Աղապապեան Եաղը-  
ճիկանց .
1. » Յան աղա Պալիկեան տէր Պապեանց .
1. » Յովակիմ աղա տէր Յովհաննէսեան Վար-  
ժապետեանց .
2. » Գերապատիւ Պետրոս վարդապետ Թաշ-  
միզճեանց .
1. » Մ. Ոսկեան աղա Մ. Յարութիւնեան  
Մեծմօրուքեանց .
1. » Խաչատուր աղա Մ. Յովսէփեան Փանիկ-  
եանց .
1. » Արժանապատիւ Յովհաննէս վարդապետ  
Մեսիկեանց .
1. » Արժանապատիւ Կարապետ վարդապետ  
Յովհաննէսեան .
1. » Նշան եւ Կարապետ աղաք Զատրճիկանց .
1. » Սարգիս աղա Կարապետեան Պէնիկէօլեանց .
1. » Կիւրեղ աղա Մ. Աղապապեան Յտապաշ-  
եանց .
3. Կ. Պօլսեցի Մ. Ճանիկ աղա Մ. Սարգիսեան .
4. » Ալիքսան աղա Համբարձումեան .

1. Կ. Պօլսեցի Յովհաննէս ազա Միքայէլեան .

1. » Բարեբար ոմն .

1. » Պուչագճեան Յարութիւն աղայի որդի  
'ի տէր հանգուցեալ Եղիազար աղայի  
կտակն .

1. Տէվէքսեցի պարոն Սարգիս Տէրտէրեանց .

1. Թօտօրակցի տիրացու Մուրատ տէր Առաքելեան  
ճոխօշեանց .

1. Արմուտանցի կարապետ ազա Գաբրիէլեան Մա-  
ղիկեանց .

1. Թօտօրակցի Մ. Գալուստ Մ. Յարութիւնեան .

1. Թօտօրակցի պարոն կարապետ Դաւթեան .

1. Թուղլասարցի պարոն Վարդան Յովհաննէսեան .

1. Թուղլասարցի պարոն Յովհաննէս Մկրտիչեան .

1. Ակնեցի Ստեփան աղա Դաւիթեան Մ. Դաւթեանց .

2. Քարհատու Ս. Աստուածածնի լճնկերութիւնն .

1. Սերաստացի Մ. Յարութիւն Մուրատեան Զօփա-  
պուսունեանց .

1. Ակնեցի Աւետիս եւ Մարտիրոս աղայք Քօլօլեանց .

1. Սերաստացի Յակոբ եւ Օհան աղայք Մ. Շահին-  
եան .

1. Եւզոկիացի կարապետ եւ Յովհաննէս աղայք  
Սարգիսեան Խէտէմեանց .

1. Սերաստացի պարոն Անդրանիկ Վարդանեան .

1. Սերաստացի պարոն Տիգրան Յակօբեան Ահարոն-  
եանց .

1. Քարհատցի կարապետ Անդրէասեան .

1. Պինկէօլու Ս. Յակօբայ եկեղեցւոյն ընկերութիւնն .

1. Քարհատցի պարոն Մարգար Պարսամեան .

1. Խօրսանացի պարոն Պարսամ Յարութիւնեան .

1. Զարայի կարապետ աղա Տէրպատեան Յարիկեանց .
1. Թաւաացի Արրահամ աղա Վարդանեան Վարդեանց .
1. Ակնեցի Յակոբ աղա ձանիկեանց .
1. » Միքայէլ աղա Պէշիրեանց .
1. » Պօղոս աղա Պէլլիկ Տէմիրճեան .
1. » Յարութիւն աղա Էսկիճեանց .
1. » Դաւիթ աղա Նաուրուեանց .
1. » Օհան աղա Յարութիւնեան Տապախեանց .
1. » Արժանապատիւ Յակոբ վարդապետ Յորեան .
1. Կ.—Պօլսեցի պարոն Պօղոս Ադամեան Արծրունի .
2. Եւզոկիացի Գ. Յակոբ վարդապետ ձգնաւորեանց .
1. Եւզոկիացի Մ. Մարտիրոս աղա Հիւսիսեանց .
1. Եւզոկիացի կարապետ աղա Պօնճուխճիեան .
1. Ակնեցի Պետրոս աղա Մ. Կէորդեան Փչիկեանց .
1. » Աւետիս աղա Գասպարեան Պարոնեանց .
1. Սեբաստացի պարոն Խաչատուր Մատթէոսեան Քէօսէեանց .
1. Կամարկապցի պարոն Աւետիս Սրապեան Պէշիրեանց .
1. Կառուացի Սերոբ աղա Մովսէսեան Տէրաթրեանց .
1. Կ.—Պօլսեցի պարոն Քրիս Գրիգորեան Խաբամաճեանց .
1. Վանցի Մ. Գասպար Արրահամեան Խալֆայեանց .
1. » Պարոն Յովհաննէս Զաքարեան Մուշեանց .
1. Արմուտանցի պարոն Մատթէոս Մինասեան Կիրակոսեանց .



